

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

ԱՎԱՆԳԱՐԴ

ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Դ. ՏԱՐԻ

ԱՆՁՆՈՒԹԵԿԱ
Института
ВОСТОЧНОВЕДЧЕСКИХ
Наук
Академии Наук
СССР



ԽԵՂԱԿԱՆ ՀԸՆ.ՏԱՐԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ—ԹԻՍՄԱՆԿԱՐԱՏԲԱԺԻՆ

ՏՐԵՎԱՆ

1 9 3 2

1005-10
25

491.99.8

7-19

ԱՎԱՆԳԱՐԴ

ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Դ. ՏԱՐԻ

Կազմեցին՝ Վ. Նադրյան, Լ. Խուդյան, Մ. Մկրտչյան

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТОНОВЛЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՀ-24482

ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ՈՒՍՄԱԿՀՐԱՏԱՐԱԿԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1932

09.07.2013

9097

I. ԲԱԺԻՆ

ԿՐՈՒՊՍԿԱՅԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ

Սիրելի յերեխաներ, դուք արդեն կարդացել եք Կոմկուսի կենտկոմի վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցի մասին: Դուք արդեն մշակած կլինեք կոնկրետ միջոցառումներ, թե ինչպես իրականացնեք կենտկոմի վորոշումը: Յես ուղում եմ ձեզ հետ խոսել մի շարք խնդիրների մասին: Առաջին խընդիրը դպրոց հաճախելու մասին է, թե ինչպես կանոնավորել հաճախումը: Դուք վորոշում եք պայքարել ուշացումները և բացակայումների դեմ: Դա ճիշտ է. յեթե դուք պիոներ եք՝ պարտավոր եք անել այդ բայց ի՞նչպես:


Նախ և առաջ տանել լայն բացատրական աշխատանք, թե ինչպիսի մեծ վնաս և բերում աշակերտին ուշացումը և բացակայումը դասերից:

Դուք կարող եք պատմել ձեր ընկերներին, թե ինչպես եր աշխատում լենինը. ինչպես նա միշտ ուղիղ ժամին, թեկուզ ինչպես ել հոգնած լիներ, գնում եր ժողովի, զեկուցման: 1918 թ., յերբ լենինը վիրավորված եր, նա շատ եր անհանգըստանում, վոր ինքը հնարավորություն չուներ ներկա գունվելու ժողկոմխորհի նիստերին, վորտեղ քննվում են մի շարք կարևոր խնդիրներ: Հենց վոր մի քիչ առողջացավ, այլ ևս հանդիսատ չեր մնում, շարունակ խնդրում եր բժիշկներից, վոր նրան չուտով թույլ տան վեր կենալու և գնալու ժողկոմխորհի նիստերին: Վերջապես նրան թույլ տվին անցնելու իր դրծին:

Լենինը վոչ մի ժամանակ չեր բացակայում ժողկոմխորհի նիստերից: Նիստերը սովորական սկսվում եյին ժամը 6-ին: Հենց վոր ժամի 6-ն եր խփում, նա անմիջապես զանգահարում եր քարտուղարին: «Լսո՞ւմ ես, դեռ վոչ վոք չի յեկել: Վոչ վոք: Լավ, հենց վոր 2 հոգի գան՝ անմիջապես ինձ զանգահարիր»:

Հենց վոր քարտուղարը զանգահարում եր, թե յերկու կամ յերեք հոգի յեկել են, նա անմիջապես հավաքելով այդ որդա նիստի համար անհրաժեշտ թղթերը, արագ քայլերով կղեմեր դեպի ժողկոմխորհը: Նա չեր սպասի, վորպեսզի բո-

59705-66



լորը հավաքվեն. ինքը միշտ պետք է լիներ ժամանակին: Հետեւ կեցվ կենինի որինակին, բոլորն սկսեցին զալ նիստերին՝ առանց ուշանալու: Այս պատմությունից հետո յուրաքանչյուր պիտիներ և դպրոցական կուզենա անել այնպես, ինչպես կենիը: Բայց կարող ե պատահել այնպես, վոր մի քանիսը սկզբում կուղղվեն, դպրոցի և կոլեկտիվի պարապմունքներին կզան ժամանակին, բայց կանցնի մի քանի որ և դարձյալ ուշացում, բացակայում:

Լինում են դեպքեր, վոր ծնողները թույլ չեն տալիս յերեխաներին դպրոց գալու: Ընտանեկան վատ պայմանները հաճախ ստիպում են աղջկան աղախին մտնելու, կամ տանը նստելու, յերեխային խնամելու, և այսպիսի մի շարք պատճառներ, վորոնք խանդարում են յերեխաներին կանոնավոր դպրոց հաճախելու: Ընկերները պետք ե պարզեն և ոգնության դան:

Կարող են նաև մեղավոր լինի հենց ինքն աշակերտը, վոր ժամանակին տանից դուրս դալով, առանց շտապելու, կանդ ե առնում այստեղ, այստեղ. նայում ե խանութների ցուցանակներին, կամ մի տեղ կովի յե բռնվում մեկի հետ, կամ թե մի խումբ ընկերների հետ խոսակցության ե բռնվում և ուշանում դասից: Այդ գեղգումն ել ողնության պետք ե դան լավ ընկերները. մի քանի ժամանակ հարկավոր ե, վորպեսզի ամենաօրինակելի աշակերտներից, պիոներներից կցվեն այդ աշակերտներին, վորոնք պարտավոր են առավոտներն անց- նել նրանց մոտ և միասին դան դպրոց, ողնեն նրանց դասե- րին. և աշխատանքներին և այսպիսով պայքարեն ուշացում- ների գեմ: Քննեցեք այս նամակը և ուղարկեցեք ձեր կար- ծիքները:

Պատանի լենինցիներ, բանվոր դաստկարուի պայքարում
յեղեք պատրաստ:

— Բննության առեջ ընկլ. Կրուպսկայայի այս նամակում և անմիջապես մոռոք, կողեր, թէ ինչպէս կատարե ոնկի. Կոռւպսիակի ուսումնական օնկոս:

— Պատասխանեցեք ընկի . Կրուպսկայայի նամակին դպրոցի վերակառուցման մարտական գործերով . ուզարկեցեք ձեր ուազորտը Ն . Կրուպսկայային :

ՊԱՐԴ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մուսլիմանի անվան հոկտեմբերի կների կողեւելումի համարույթն է; Կոլլարը խոսում է պարտադիր ուսուցման մասին.

— Պարտադիր ուսուցումը մեծ նշանակություն ունի մեր
յերկրի համար, վոր այլնս մեր յերկրում չենք ունենա ան-
գրագետներ։ Մեր մեծ ուսուցիչն ասել ե, վոր անդրագիտու-
թյունը դժվարացնում է ոսցիալիզմի կառուցման գործը և
դրա համար ել սրանից հետո մեր յերկրում դպրոցում սովո-
րելը լինելու յե պարտադիր։ Պարտադիր ուսուցման ու ան-
գրագիտության ասպարիզում մեծ գործ ունեն անելու պիտ-
ներները, դրա հետ միասին և մենք՝ հոկտեմբերիկներս։ Բա-
ցի այդ, հունվարին լրանում ե մեր սիրելի պապի՝ Լենինի
մահվան 9-րդ տարին։ Նրա հիշատակը հավերժացնելու հա-
մար մեր խմբակը պետք է կատարի վորեւե աշխատանք, որի-
նակ՝ մինչ այդ պետք է կը կնապատկենք մեր շարքերը, իսկ
մեր լավ և մեծահասակ հոկտեմբերիկներից նվիրենք պիտոներ
կուեկտիվին։ Հիմա յուրաքանչյուրը Բող ասի, թե ի՞նչ կա-
րող ե անել մեր խմբակը։

— Յես ուզում եմ խոսել, ընկեր Աստղիկ, — ձայն ե
խնդրում Նորիկը:

— Վորաբեսպի գործ կատարած լինենք և իրագործած մեր սիրելի պապի պատղամները, դրա համար պետք է աշխատենք բոլորս։ Այ, որինակ՝ իմ մայրիկը տառերը շատ քիչ ե ճանաչում։ յես արդեն սկսել եմ նրա հետ պարապել։ այսպես պետք է սովորեցնեմ, վոր մինչև 1932 թվի վերջը «Պիոներ կանչ»-ը կարողանա հեշտությամբ կարդալ։ Մըրցման եմ հրավիրում Գուրգենին և Սուրենին, վորոնց մայրիկներն ել անդրադեռ են։ տեսնենք ում մայրիկը շուտ կսովորի կարդալ։ Ում մայրիկը վոր սովորի՝ գա ու մեր հավաքույթում «Պիոներ կանչը» մեզ համար կարդա։

Ծափահարություն...

Խոսում են և ուրիշները, վոր տալիս են աճման և անդրագիտության մասին մի շարք առաջարկություններ։ Խոսում ե և փոքրիկ Քնարիկը.

— Դուք գիտեք մեր հարևան Հակոբին և Արտաշեն,
բայց վոչ մեկդ ել լավ չեք ճանաչում։ Հակոբը և Արտաշեն
ծնողներ չունեն։ Նրանք ապրում են իրենց բարեկամների
մոտ, վորոնք նրանց վրա այնքան ել ուշադրություն չեն
դարձնում։ Նրանք 9 տարեկան են. գեռ դպրոց չեն գնում և
հոկտեմբերիկներ չեն։ Բացի այդ, նրանք հնարավորություն
չունեն զրքեր ու տեսրակներ զնելու։ Յես առաջարկում եմ
մինչև հունվար նրանց տեղավորել դպրոցում, խնդրել պիո-
ներ կոլեկտիվին, վորպեսզի ողնի Հակոբին և Արտաշեն։ Ե՞՛՛
վոր նրանք ել պետք ե մեզ նման սովորեն, հոկտեմբերիկ
դառնան։

Հասմիկի առաջարկությունը խմբակն ընդունում ե մեծ

վոգեռությամբ։ Բացի այդ՝ խմբակը վորոշում է լենինի մահվան 9-րդ տարեդարձին յուրաքանչյուր հոկտեմբերի բերի մի նոր հոկտեմբերիկի։

Խմբակն անցնում է յեռուն աշխատանքի։

Հակոբն ու Արտաշն ընդունվում են դպրոց։

Հոկտեմբերիկների խմբակն իր լավ աշխատանքների համար վորոշ ժամանակից հետո բազմորհրդից ստացավ հետևյալ թուղթը։ — «Զեր խմբակն իր լավ աշխատանքների և նախաձեռնության համար բազմորհրդի կողմից արժանանում ե գովասանքի»։

— Ի՞նչ նշանակություն ունի պարտադիր ուսուցումը։

— Արտադրեցեք լենինի կարծիքը՝ պարտադիր ուսուցման նշանակության մասին։

— Ցուցակադրեք ձեր դյուլում (թաղամասում) դպրոցից դուրս մնացած 8—11 տարեկան յերեխաներին և ցուցակը հանձնեք ուսուցչին։

— Կարդացե՛ք հետեւյալ տողերը։

Մոռավյանի անվան հոկտեմբերիկների կոլեկտիվի հավաքույթն է։ Կոլվարը խոսում է պարտադիր ուսուցման մասին։

Հակոբը և Արտաշը ծնողներ չունեն։

Նրանի հոկտեմբերիկ չեն և դպրոց չեն գնում։

— Քանի՞ ամբողջական միտք է արտահայտված այս տողերում։

— Վո՞ր ամբողջական մտքերն են հաստատվում (դրական արտահայտվում), վորո՞նք՝ մերժվում (բացասական արտահայտվում)։

ՀԻՇԵՑԵ՛Ք

Խոսելիս կամ դրելիս մենք մի բան հաստատում, ժխտում կամ հարցնում ենք։ Այդ հաստատումը, ժխտումը կամ հարցումը և բառերով արտահայտված ամբողջական մտքերով։ Հաստատումը, ժխտումը կամ հարցումն արտահայտում են խոսդի վերաբերմունքը գեղի խոսածը։ Բառերով արտահայտված այդ վերաբերմունքը կոչվում է խոս (կամ նախադասություն, ինչպես հնում ասում եյին)։

— Դուք բերեք այս հոդվածից միքանի դրական, բացասական և հարցական խոսքեր։

— Ինքներ կազմեցեք մի քանի այդպիսի խոսքեր։

ՊԱՏԱՆԻ ՌԱԶՄԻԿՆԵՐ

Պիոներ ենք մենք զգաստ
ուզմի գործին միշտ արթուն.
պիոներ ենք մենք պատրաստ

կերթանք դեպի հաղթություն։

Պետք է մեկնեն հուր ձեռքեր,

պետք է հորդեն նոր տարափի,

մինչեւ ընկնեն գոռ կուռքեր։

Պետք է վառեն հրդեհներ

աշխատանքի վերելքի,

պետք է յերգեն միլիոներ

շուրջն ընդհանուր խարույշի։

— Այժմ լսե՛ք ընկերնե՛ր, —

դարձավ նրանց կոլվարը

և սկսեց նա պատմել

վոնց և տանջվում աշխարհը...

Յերդ ու կատակ լոռում են.

և լոռում են նրանք լուռ.

մատաղ սրտեր տարվում են,

վառվում են ինչպես հուր:

— Յերբ մենք այստեղ ճամբարում

ուրախ շրջան բոլորած՝

ազատություն ենք տոնում

աշխատանքով թև առած,

գիտե՞ք՝ վորքան բանվորներ

յերկրներում շատ հեռու

զեռ կրում են շղթաներ

մեծ տերերի վաշխառու։

Բանվորների յերեխայք

այնտեղ ճնշված են ապրում.

ձեզ պես ազատ, ուրախ կյանք

նրանք դեռ չեն վայելում։

Նրանց հայրերը փորում են

վոսկիները հանքերում։

Ծմբոստները տանջվում են

շղթայակապ բանտերում։

Հարուստները ապրում են

նրանց հաշվով պալատում։

բանվորները հեծում են,

նկուղներում տառապում։

Մարտնչում են նրանք դեռ,

բռնության դեմ մարտնչում,

վոր խորտակեն արյունիեր

կապիտալը անկշտում...

— Յերբ վոր փորձը ճամբարի

կկատարենք մենք պատվով,
կդա որը մեծ կռվի,
մենք ել կերթանք նոր թափով,
մենք ել կերթանք կռվելու,
յերբ հրղեհվի աշխարհը...
Հե՛յ ջա՞ն, հե՛յ ջա՞ն, ջանե՛ ջա՞ն
մեծ ե յերթը, թափը մեր,
վողջ գյուղերը քրտնաջան
պետք ե դառնան կոլխոզներ։
Կատակներ չեն փսփսում
նրանք իրար ականջի...
Հերթով գնում են, ըրջում
շուրջը մատաղ բանակի։
Ու գրկում ե ամենքին
զգաստ քունը ճամբարում.
չեյին քնում անմեկին
պահակները դիրքերում։
Պահպանում ե ընկերը
հանդիստ քունը ընկերի,
մինչեւ կանցնի գիշերը
խորհրդավոր ճամբարի։
Միայն գետն ե շփշփում,
անվերջ խաղում ափերով,
կարծես նա յել ե հոկում՝
քնած ճամբարն աչքերով։

— Ինչք՞ մասին եր պատմում կոլլարը պիոներներին խարույկի շուրջը ճամբարում։
— Նկարագրեցեք «Դիշերը ճամբարում» և գրի առեք.
ա) խարույկի պատկերը.
բ) զրույցը խարույկի շուրջը.
դ) պահակները գիշերվա լուսթյան մեջ։

ՄՇՈՒՇԱՊԱՏ ԳԱԳԱԹՆԵՐԻ ՎՐԱ

Վաղորդյան մութն եր: Ճամբարը քաղցր ու հանգիստ քնած եր սպիտակ վրանների տակ: Այդ ահազին քաղաքը լուռ եր, չեր լսվում վոչ չների հաջոց, վոչ աքաղաղների կանչ: Միայն մեր թիկունքից բարձրացող սաղաթախիտ անտառները, դիշերային զով քամուց յերերվում ու սփսփում:

Եյին, կարծես որոր եյին ասում սպիտակ քաղաքի բնակիչներին։ Ելեկտրական լապտերների տակ նշմարվում եյին կենդանի ստվերներ, վորոնց հանձնված եր քաղաքի ու բնակիչների պաշտպանությունը...

ပြေားလဲ ပြေားလဲ ပြေားလဲ ... မာော်လဲ ပြေားလဲ ပြေားလဲ ... မာော်-မာော် မာော်လားလားလားလားလဲ ...

Լսվեց շեփորի քաղցր ու դուրեկան ձայնը

Արևելքն արդեն շառագունել եր: Խնդիրը մի որ առաջ բացատրված եր: այժմ ել յուրաքանչյուր հրամանատար իր միավորին եր, բացատրում: Բոլոր միավորներն ու առանձին բանակայիններն ունեյին սոցմբցման պայմանագրեր որվա պարապմունքի համար: Շարժվելուց առաջ դիվիզիայի շտա- բի պետն ամբողջ դիվիզիայի մարտիկներին ասաց.

— Ընկերնե՞ր, մեր դիմումի արդեն համարվում է լեռ-
նային գորամաս, և վողջ կարմիր բանակի պատմության մեջ
առաջին անգամն է, վոր հայկական դիմումի անդիր ե
ստացել կատարել յերթ ամենաբարձր լիոների գա-
գաթներով։ Պրոլետարական դասակարգը պահանջում է յու-
րաքանչյուր մարտիկից ցուցաբերել մարտական բարձր կո-
րով, համառություն և դիմացկանություն։ Այս ուղեղծի հա-
ջող կատարումը մեր ամենալավագույն նվերը կլինի մեր
մըցակից Բագվի վիշկաների հերոսներին և Անդրկենտգործ-
կոմին—նրա փոխանդիկ դրոշն ստանալու համար։

— Զգացա՞սո՞ ... Լովեց յերթային շարժման պետի
հրահանդը, — բա՛յլովի մարչ:

Թնդաց յերաժշտախումբն ու ամբողջ զորացյունը շարժվեց առաջ: Հօրիզոնը ջինջ եր ու պայծառ: Համդաչիմանի լեռան թիկունքից արեգակը նայեց Լոռվա սքանչելի ու ծաղկավիթ սարալանջերին և կարծես նա յել վողջունեց մեր յերթը: Վարդանլիլի մութ կածանով և, ապա Մայմեզ լեռան լանջերով սկսեցինք բարձրանալ դեպի վեր, բարձրաբերձ ու անառիկ լեռների ծերպերը: Հրամանատարությունը գնում եր առջեից: Մենք բարձրացանք Մայմեզ լեռան կատարը. նրանից այն կողմ գնալը՝ չափազանդ դժվարանում եր, ուստի զբեթե բոլորս հագանք «կողտիներ» (մագլցող), իսկ հրանոթներն ու գնդացիրները քանդեցինք և առանձին մասերով բարձեցինք ու շարժումը շարունակեցինք. Մայմեյիրն անդան: Կանաչագարդ անտառները, ցորենի կարմրած

ու ծփացող դաշտերը և կղմինդրի տանիքներն անհետացան սպիտակ մշուշի մեջ։ Զորասյունը շատ եր յերկար։ Մենք պատվեցինք հեացող ամպերով, վորոնք լցվում եյին ձորերը։ Քսան քայլ շառավիդով դժվար եր տեսնել վորեւ բան, ուստի առաջապահ ու թիկունքի զորամասերը կորիզի հետ կապ պաշտպանելու համար գործածում եյին սուլիչներ և ուսմբեր, իսկ նոսր տեղերում՝ դրոշակներ և ռակետներ։ Հանխակի լինում եյին դազային տաղնասլներ. մարտիկներն իսկույն հազնում եյին հակագազային դիմակներ։ Յերբեմն մշուշը նոսրանում եր. արեգակն իր չողերով ժպտում եր մեղ ու նորից ծածկում մշուշի մեջ։ Անձրև չեր դալիս ու մինչև վերջն ել չեկավ, սակայն մեր վերնազդեստներն ամբողջովին խոնավացավ—կարծես հորդ անձեի տակ եյինք մնացել։

Մենք համառությամբ մագլցում եյինք ու մագլցում։ Նվաճում եյինք նորանոր դագաթներ, վորոնց հեղհեղատներում դեռ ձյան ահագին շերտեր կային, ու մեր առջև բացվում եյին լուսվա կուսական լեռների նոր ծերպերն՝ իրենց ամբողջ հմայքով, իսկ լանջերից, վորոնք շղարշված եյին մշուշով, լսվում եր լեռնական հովվի սրնդի ձայնը։ Կոդտին ընկերոջս վոտքը խփում եր. նա կանդ առավ վոր ամրացնի։ Զախ կողքիս ընկերը կատակելով ասաց—«Հը, չինի թե հետ ես մնում, ամոթ ե. չե՞ս լսել, ընկ. Ստալինն ասում ե՝ չկա մի բերդ, վոր բայլշեկիները չնվաճեն»։ Նա կոդտին ամրացրեց ու ծիծաղելով ասաց—«Իսկ յես բայլշեկիների բանակումն եմ, արխային կաց»։ Մշուշը կամաց-կամաց փարատվում. եր։ Նորից յերեաց արեգակի աղոտ փայլը։

Հանկարծ յերեացին յերկու սավառնակներ, վորոնք, ոգտվելով մշուշից, բավականին մոտեցել եյին մեղ։ Մենք նախապես լսել եյինք նրանց ձայնը և շարժվում եյինք առանց աղմուկի՝ աննկատելի մնալու համար։ Այդ պահին մեր գիտողներն ազգանշան տվին։ Հրաման յեղավ խրամատավորվել։ Սավառնակները մեզ արդեն նկատել եյին և ոկսել եյին նոնակներ (վոչ մարտական) նետել։ Մերոնք խրամատներից դեպի վեր բարձրացրին զենիտային գնդացիրներն ու ոկսվեց կատաղի դիմամարտն ողային «թշնամու» հետ։ Սավառնակները չեխմանալով մեր գնդացիրների տարափին՝ քիչ հետո փախան ու անհետացան հեռու մշուշում։

Մեծ հանդես յեղավ Հաջի Ղարա գյուղում։ Գյուղի հարավային կողմում գտնվող ապառաժ ժայռի վրա նստած ե մի կիսավեր վանք։ Նրա ներքեռու խնձորենու պարտեզի մեջ բարձրանում ե մանկական մսուրի աղմկալի շենքը, վորպես հեղնանք հազարամյա վանքի ղեմ։

Ճաշից ու հանդստից հետո յեղավ մերձեցման յերեկո

կոլխոզների հետ։ Դպրոցի պատի վրա ցուցադրեցինք կինոն։ Խրճիթում քաղցեկը զրույց կազմակերպեց մսի մթերման մասին։ Կապավորներն իսկույն կարգի ցցեցին վաղուց լռածուադրածրախոսը։ Պատերին փակցված եյին բազմաթիվ վաշտային թերթիկներ, վորոնք լույս եյին տեսել փոքրիկ հանգիստների ժամանակ։ Գյուղի մեծ փողոցում, ուր նվագում եր նվազախոսմբը, շուրջապար եյին բռնել։

Ուշ գիշերին հրաման յեղավ «տեղերում»։ Ժամի 23-ին մենք շարժվեցինք գեղի ճամբար։

Արևածագին մենք հասանք ճամբար։ Տեղի ունեցավ հանդիսավոր զորանց։ Դիվիզիայի հրամանատարը, խոսելով լեռնային յերթի գերազանց հաջողությունների մասին, ավելացրեց—

— Դուք ապացուցեցիք, ընկերներ, վողջ բանակի հրամանատարությանը, վոր արժանանալու յեք փոխանցցիկ դրոշին։ Հուսով եմ, վոր այդ դրոշը բարձր ու կանգուն կպահեց ձեր ձեռքում, իրու ձեր հերոսական աշխատանքների մարտական նշանը։

— Համեմատեցեք սիրոներական ճամբարի կյանքը կարմիր բանակայինների ճամբարի կյանքի հետ։

— Նկարդրեք և դրեք կարմիր բանակայինների գյուղում կատարած կուտուրական աշխատանքների մասին։

— Ինչպե՞ս են նկարդրված բնության տեսարաններն այս գրվածքում։

— Կարդացե՞ք առաջին պարբերությունը և նշեցե՞ք՝ քանի՞ խոսք կա այսնեղ։

— Քանի՞ բառից ե բաղկացած ամեն մի խոսքը։

— Վերցրե՞ք ամեն մի խոսք և դիտեցեք՝ խոսքը կազմող բոլո՞ր բառերն են հաստատող, բացասող կամ հարցնող։ Վո՞ր բառն ե, վոր հեղինակի վերաբերմունքն ե ցույց տալիս դեպի իր ասածը։

ՀԻՇԵՑԵՐԵՐ

Խոսքը բաղկացած ե բառերից։ Այդ բառերից նրանք, վորոնցով մի բան պնդում (հաստատում կամ ժխտում) կամ հարցնում ենք, կոչվում են բայց։ Բայց խոսքի առանցքն ե։ Առանց բայի խոսք չի կազմվի։ Յեթե բայն արտահայտված ել չե, միշտ մտքով հասկացվում ե։ Բայց մենակ կարող ե խոսք կազմել։

— Ընդդեցեցե՞ք վերջին տաս տողի բայերը։

— Փորձեցե՞ք խոսքերը կարդալ առանց բայերի և տեսե՞ք՝ միտք կհասկացվի։

—Փորձեցեք մեկառմեկ կրծատել մյուս բառերը և խոսքն աշնաբեն կարդալ . ելի վորոշ միտք կստացվի՞ :

—Բերեք որինակներ , յերբ բայլ չի գրված , բայց մտքով հասկաց-
վում ե :

ԳՆՈՒՄ ԵՆՔ ԼԱԳԵՐ

Շեփո՛ր , թմբուկնե՛ր . . .
Ա՛լ զբոշակը վե՛ր . . .
—Դե պիոներներ ,
Գնում ենք լագեր :
Կտրում ենք սարեր ,
Թուչում առուներ ,
Թիթեռների պես
Թուչում ենք մենք վեր :
Ճամբեն կես արինք . . .
Հանկարծ մի նշան՝
Հանգստի հրահանգ . . .
Ու մի շունչ առած
Իսկույն կանդ առանք ,
Ճամբից դուրս յեկանք :
Յրվել ենք դաշտում ,
Վոնց վոր մի բանակ . . .
Մի խումբը պառկել
Խոտը գլխի տակ . . .
Շատը նստել ե ,
Կոշիկն ե հանել . . .
Ու թմբուկ փողեր ,
Սառ ջրի կարոտ՝
Առուն են իշել՝
Լվացվում են արագ ,
Խմում անհամբեր . . .
Հանկարծ մի նշան՝
շարվելու հրահանգ . . .
Շատերն ել փոշոտ
Ու թմբուկ փողեր ,
Պատրաստ են շարքեր . . .
Կանչում են , հնչում . . .
— Դե , պիոներներ ,
Յեղեք միշտ պատրաստ—
Ալ դբոշակը վե՛ր ,
Գնում ենք լագեր :

1. Պատմեցեք ձեր հիշողությունները լագերի մասին .
- ա) ինչպես հավաքվեցիք և գնացիք .
- բ) կյանքը լագերում .
- գ) վերադարձը լագերից :

ԴԵՊԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

I

Բամ , բա-բա , բամ , —թնդում եր թմբուկը և նրա հետ վորոտում եր նորակոչիկների ձայնը :

Նրանք հավաքվել եյին գյուղի ծայրին գտնվող բլրի գլխին , ամբողջ գիշերը հրաժեշտի ուրախություն կազմակերպել , վոր առավոտյան ճանապարհ ընկնեն շրջանի կենտրոնը , իսկ այնտեղից—կարմիր բանակ :

Հրավառ արեւը վոսկեղոծ վարսերն արձակած , գլուխը հանեց սարի հետեւից և ջերմագին ժպտաց աշխարհին :

Կարմիր բանակ գնացողների մայրերն ու քույրերը , վոմանց ել նշանածներն ու նորահարսները , ձեռ ու վոտ ընկած ճամպի պաշար եյին պատրաստում , վոր իրենց ազիդների հետ դնեն : Իսկ գյուղամեջ դուրս յեկած տղամարդիկ , աշխուժ խոսք ու զրույց եյին բաց արել զինվորական ծառայության մասին , իրարից խոսք խլելով ու պատմելով ցարկան սալլաթի կյանքից :

— Ե՛հ , ինչ ե հիմիկվա ծառայությունը : Հիմի հաճույք ե , բավականություն , —պատմում եր մեկը : — Շատ հեռու տեղը Յերևանն ե կամ Լենինականը , Ղարաքիլիսան կամ Դիլիջանը . . . Մեր ժամանակն ուրիշ եր . . . Լցնում եյին վագոնը . . . ու հայդե՞ , քշում դեպի Ռուսաստանի խորքերը :

— Ել ասում ես , —վրա բերեց մեկ ուրիշը : — Սարին ապրած չորան եյի , ոռուսերեն վոչ մի խոսք չեյի լսել , քշեցին տարան Տամբովի նահանգը . դեղի համար վոր ման զայիր , հայերեն իմացող չեյիր գտնի : Լցրին զորանոցները , խողի պես իրար գլխի ածեցին , հետեւյալ որը դուրս բերեցին և հրամայեցին՝ ա՛ջ , ձա՛խ , ա՛ջ , ձա՛խ . . . Վոչ յես եյի նրանց ասածը հասկանում , վոչ ել նրանք՝ իմ լեզուն : Լավ թակում եյին :

— Ինձ ել տարան Լոձ , —մեջ ընկամը յերբորդը , — շատ տանջեցին , վոր վոտներս ուղիղ ման ածեմ , չեղալ , չկարողացաւ : Ամբողջ որը կամ կոշիկ եյի սրբում կամ հատակ : Չորս տարի գլուխս թակել տվի ու տուն գալիս հաշիվ արի ու տեսա , վոր ոռուսերեն միայն հայհոյել եմ սովորել : Իմ ուղուտն ել ե՛ս եր :

— Կարգին խոսքը գլուխց կտրվե՞լ ե, չե՞ս կարող կարգին զրույց անել, — տրտնջաց մեկը:

— Կարգին բան տեսե՞լ եմ, վոր կարգին խոսեմ... Կարգին բանը թող իմ տղեն պատմի, վոր հրեն կարմիր բանակիցն ե յեկել ու տանս ճրագի պես լույս ե տալիս: Անդրագետ ուղարկեցի, զնաց, ու մի տարի դեռ չեր անցել՝ իր ձեռքովը նամակ գրեց: Հիմա յել աշխարհիս ամեն կողմից խարար ունի, լրագիր ե ստանում, կարդում ե, մինմին ե ինքն ե գրում մեր գյուղի դրությունից: Են որն ել գետի կողքին կանգնել ե ու գլուխը շարժում, ախ քաշում թե՝ եսքան ջուրն ինչո՞ւ յե զուր տեղը կորչում: «Ես ջրի զորությունը գու չես իմանում, ասում ե, — վոր ելեկտրական կայրան շինենք, ամբողջ գյուղը կլուսավորվի, նավթի հոտից ու մրից ել կազատվենք»: Եսքան բանը վո՞րտեղ ե սովորել: Իհարկե, կարմիր բանակումը:

Մինչեռ գյուղացիները պատմում եյին իրենց հիշողությունները և կարմիր բանակից վերագրածների արարքները, նորակոչիկների խումբը պարելով ու յերգելով գյուղը մտավ: Յերեխանները շրջապատել եյին նրանց և իրենց զիլ, ժանկական ձայներով ձայնակցում եյին նորակոչիկներին:

Վողջ գյուղը խնճույքի տրամադրության մեջ եր:

II

Նորակոչիկները յերգով ու պարով այցելում եյին տները, «մնաս բարով» ասում ու ճամբի համար պաշար վերցնում աշնան լիառատ բերքից: Դոներից անցնելիս, բարեկամ և ազգական նորակոչիկների գրապանները լցնում եյին մրգեղենով և կամ նախշուն գուլպաներ նվիրում:

Նորակոչիկների խումբը, գրեթե կազմ ու պատրաստ, գյուղամիջի լայն հրապարակում պարի ու յերգի հերթ երբաց արել: Քաշում եյին սրա-նրա թեկից և շրջանի մեջ առած՝ ստիլում եյին պարել: Յերբեմն ել պարն ընդհատում եյին և սկսում խմբական յերգ:

— Մարոյի յերգն ածա, Մարոյի յերգը, — ձայն տվեց նորակոչիկներից մեկը:

Արեւիան յերաժեշտը՝ զուռնաշին պարի յեղանակը վուխց յերգի և սկսեց փչել: Խմբի հաջողակ ձայն ունեցողներից մեկն սկսեց յերգել, վորին ձայնակցեցին մյուսները:

«Ախատես կոմսոմոլա, բեղը նոր մրած,
բեղը նոր մրած:

«Կարմիր բանակ տարան, եղակես եր գրած,
եղակես եր գրած:

«Գարնան կը գա ախատերս, վար ու ցան կանի,
վար ու ցան կանի:

Լենկոմյերիտ ախատերս ինձ ել կտանի,
ինձ ել կտանի:

«Խորհուրդների պաշտպան, իգիթ ախատեր ջան,
իգիթ ախատեր ջան:

«Դիրքու ամուր պահի, ջանս քեզ զուրբան,
ջանս քեզ զուրբան»:

Այս յերգ ու խաղի, ծափ ու պարի տաք միջոցին հանկարծ լավեց գյուղը ծածկող բլրի հետեւից մի ուրիշ զուռնա-թմբուկի ձայն:

Հարեան գյուղի նորակոչիկներն եյին, վորոնք գյուղին եյին մտնում, վոր միանան տեղացիներին ու մեկնեն ըրջանի կենտրոնը:

— Ուստա, փչի, ուստա, փչի, գնանք յեկողների առաջը:

Զուռնան զլեց իր ձայնը, թմբուկը դղբաց: Բլրի հետեւից յերեաց նոր խումբը, վորին դիմավորելու գնացին նորակոչիկները:

— Ուստա... — թնդաց յեկողների միահամուռ ուրախաղակը:

— Ուստա... — նույնպիսի վոգեսորությամբ պատասխանցին դիմավորողները:

Միացան:

Ցնծագին աղաղակները դղբացնում եյին վողջ գյուղը: Մեծ ու փոքր դուրս եյին յեկել տներից, բարձրացել կտուրները և դիտում եյին, կարծես մի ընդհանուր, մեծ հանդես լիներ:

Զուռնան փչեց հրաժեշտի յեղանակը, և խումբը շարժվեց դեպի կենտրոն, դեպի կարմիր բանակը:

ԿԱՐԴԱՅԵՐՔ ՀԵՏԵՎՅԱԼ ԽՈՍՔԸ

— Զուռնան փչեց հրաժեշտի յեղանակը, և խումբը շարժվեց դեպի կենտրոն, դեպի կարմիր բանակը:

— Այս խոսքերը, վորոնք միքանի բայով են կազմված, կոչվում են բարդ խոսքեր, իսկ մի բայով կազմվածները կոչվում են պարզ:

— Հաշվեցեք թե այս բարդ խոսքը քանի՞ պարզ խոսքերից ե կազմված:

— Բարդության վերջին խոսքի բայը վո՞րն ե:

ՍՍՀՄԱՆՈՒՄ

— Խոսքի մեջ բայը յերեմն կարող ե չգրվել, բայց մտքով հասկացվել:

— Կարգին խոսքը գլուխց կտրվե՞լ ե, չե՞ս կարող կար-
չին զրույց անել, — տրտնջաց մեկը:

— Կարգին բան տեսե՞լ եմ, վոր կարգին խոսեմ...
Կարգին բանը թող իմ տղեն պատմի, վոր հրեն կարմիր բա-
նակիցն ե յեկել ու տանս ճրադի պես լույս ե տալիս: Անդրա-
գետ ուղարկեցի, զնաց, ու մի տարի դեռ չեր անցել՝ իր
ձեռքովը նամակ գրեց: Հիմա յել աշխարհիս ամեն կողմից
խարար ունի, լրադիր ե ստանում, կարդում ե, մինմին ել
ինքն ե զրում մեր գյուղի դրությունից: Են որն ել գետի
կողքին կանգնել ե ու դլուխը շարժում, ախ քաշում թե
եսքան ջուրն ինչո՞ւ յե զուր տեղը կորչում: «Ես ջրի զորու-
թյունը դու չես իմանում, ասում ե, — վոր ելեկտրական կա-
յարան շինենք, ամբողջ գյուղը կլուսավորվի, նավթի հո-
տից ու մրից ել կազատվենք»: Եսքան բանը վո՞րտեղ ե սո-
վորել: Իհարկե, կարմիր բանակումը:

Մինչեռ գյուղացիները պատմում եյին իրենց հիշողու-
թյունները և կարմիր բանակից վերադրածածների արարք-
ները, նորակոչիկների խումբը պարելով ու յերգելով գյուղը
մտավ: Յերեխաները շրջապատել եյին նրանց և իրենց զիլ,
մանկական ձայներով ձայնակցում եյին նորակոչիկներին:
Վողջ գյուղը խնճույքի տրամադրության մեջ եր:

II

Նորակոչիկները յերգով ու պարով այցելում եյին անե-
րը, «մնաս բարով» ասում ու ճամբի համար պաշար վերց-
նում աշնան լիառատ բերքից: Դռներից անցնելիս, բարեկամ
և ազգական նորակոչիկների գրանները լցնում եյին մրգե-
ղենով և կամ նախշուն գուլպաներ նվիրում:

Նորակոչիկների խումբը, գրեթե կազմ ու պատրաստ,
գյուղամիջի լայն հարպարակում պարի ու յերգի հերթ եր
բաց արել: Քաշում եյին սրանքան թևից և շրջանի մեջ ա-
ռած՝ ստիլում եյին պարել: Յերբեմն ել պարն ընդհատում
եյին և սկսում խմբական յերգ:

— Մարոյի յերգն ածա, Մարոյի յերգը, — ձայն տվեց
նորակոչիկներից մեկը:

Սըսելյան յերաժիշտը՝ զուռնաչին պարի յեղանակը փո-
խեց յերգի և սկսեց փչել: Խմբի հաջողակ ձայն ունեցողնե-
րից մեկն սկսեց յերգել, վորին ձայնակցեցին մյուսները:

«Ախարերս կոմսոմոլ ա, բեղը նոր մրած,
բեղը նոր մրած:

«Կարմիր բանակ տարան, եղապես եր գրած,
եղապես եր գրած:

«Գարնան կըդա ախարերս, վար ու ցան կանի,
վար ու ցան կանի:

Լենկոմյերիու ախարերս ինձ ել կտանի,
ինձ ել կտանի:

«Խորհուրդների պաշտպան, իդիթ ախարեր ջան,
իդիթ ախարեր ջան:
«Դիրքդ ամուր պահի, ջանս քեզ զուրբան,
ջանս քեզ զուրբան»:

Այս յերգ ու խաղի, ծափ ու պարի տաք միջոցին հանկարծ
լովեց գյուղը ծածկող բլրի հետևից մի ուրիշ զուռնա-թմբու-
կի ձայն:

Հարեան գյուղի նորակոչիկներն եյին, վորոնք գյուղն
եյին մտնում, վոր միանան տեղացիներին ու մեկնեն շրջանի
կենտրոնը:

— Ուստա, փչի, ուստա, փչի, գնանք յեկողների ա-
ռաջը:

Զուռնան զլեց իր ձայնը, թմբուկը դղբդաց: Բլրի հե-
տեւից յերեաց նոր խումբը, վորին դիմավորելու գնացին նո-
րակոչիկները:

— Ուռուա՛... — թնդաց յեկվորների միահամուռ ուրախ
աղաղակը:

— Ուռուա՛... — նույնպիսի վողեսորությամբ պատա-
խանցին դիմավորողները:

Միացան:

Ցնծագին աղաղակները դղբդացնում եյին վողջ գյուղը:
Մեծ ու փոքր դուրս եյին յեկել տներից, բարձրացել կտուր-
ները և դիտում եյին, կարծես մի ընդհանուր, մեծ հանդես
լիներ:

Զուռնան փչեց հրաժեշտի յեղանակը, և խումբը շարժ-
վեց դեպի կենտրոն, դեպի կարմիր բանակ:

ԿԱՐԴԱՅԵՐՔ ՀԵՏԵՎՅԱԼ ԽՈՍՔԸ

— Զուռնան փչեց հրաժեշտի յեղանակը, և խումբը շարժվեց դեպի
կենտրոն, դեպի կարմիր բանակը:

— Այս խոսքի մեջ քանի՞ բայ կա:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

— Այս խոսքերը, վորոնք միքանի բայով են կազմված, կոչում են
բարդ խոսքեր, իսկ մի բայով կազմվածները կոչում են պարզ:

— Հաշվեցեք թե այս բարդ խոսքը քանի՞ պարզ խոսքերից ե կազմ-
ված:

— Բարդության վերջին խոսքի բայը վո՞րն ե:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

— Խոսքի մեջ բայը յերբեմն կարող ե չգրվել, բայց մոքով հոս-
կացվել:

—«Լոիր, այ փոքրիկ,
 քանի՞ տարեկան ես,—
 Հարցը նրան,—
 յեվ վորտեղ ես տեսել
 գեներալ կամ վոստիկան...»:
 —Յե՞ս, հաղիկ տասը տարեկան:
 Յեղբայրս եր նրանց ատում
 ու հենց նրանց դեմ ընկալ
 կովի մեջ, խրամատում...
 Յեղբայրս ատել ե,
 ատում եմ յես ել,
 յես չեմ տեսել գեներալ ու յար
 հենց դրանից եմ ուրախ,
 վոր յես չեմ տեսել...»:
 Յեվ թնդացին ծափեր ու ծիծաղ:
 «Զուր խառնվեցին»—
 խորունկ խոհերով
 ինքս ինձ ասի
 ու վերադարձա
 հպարտ խորհելով
 Հոկտեմբերի այս
 սերնդի մասին:

ՀԱԶԻ ՔԵՆԴ

Յերկաթուղու կայտանից այն կողմը փովել և Գյան-
 ջան: Յերբեմնի արյան և կոտորածի, ազգամիջյան ջարդե-
 րի այս որրանը, աշխատանքի հոկայտական մեղվանոցի յե-
 փոխվել:

Հին Գանձակն ել չկա: Հոկտեմբեկան կամուրջով հայն ու
 թուրքն իրարից բաժանող Գանձակն ել չկա:

Բարձրանում ենոր, ստեղծագործող ու շինարար Գյան-
 ջան:

*Այստեղ վիթխարահասակ չինարիներն են ձգվում, բայց
 չինարիներից ավելի հաստատ ու փառավոր, յերեմնի ար-
 նալվա այս հարթավայրում, բարձրանում են ձեթ-ոճառ գործ-
 արանի, մահուդի գործարանի, սերմազտիչ կայանի, բան-
 վորական բնակարանների նորակառուց ու ժայռագործություն-
 քերը:

Նրա բորբոսնած մզկիթների ու ժանտաղեմ յեկեղեցի-
 ների դիմաց բարձրանում են աշխատանքի և սոցիալիստա-

կան փառավոր պայտաները:

Գանձակում, կավաշար ու քարակոփ պատերի ուսե-
 րից ժպտում են արնագույն նոնենիները: Նույն կարմրավառ
 ժպիտը բակերում, այդիներում:

Գյանջան ժպտում ե նուան կարմրավառ ծաղիկներով.—

Ո՞ւր ցարական անհետացող Յելիզավետապոլը, ո՞ւր
 մուսավաթական արնախում Գյանջան, ո՞ւր բայլլեկիյան
 ստեղծագործ ու բարձրացող Գյանջան:

Նոնենիները ժպտում են: Նոնենիները կարմիր դրոշակի
 պես փողփողում են վողջ Գյանջայի վրա, իսկ այտեղ բան-
 վոր դասակարգը կերտում ե նոր ու փառավոր աշխարհը:

Խաղողի այդիները փովում են Գյանջայի շուրջը, ու-
 ղեկցում ճանապարհի յերկայնքով:

Խաղողի թփերն ուղեկցում են: Մեր մեքենաները թող-
 նում են Գյանջան և անցնում գերմանական փոքրիկ ավանի,
 ասիկին Յելենգորֆի, այժմյան Լենինգորֆի միջով:

Հասարակական փոքրիկ պարտեզի անհանգիստ շատը-
 վանի ջրե ճառագայթների միջից, ժպտում ե հանձարեղ ա-
 ռաջնորդի կիսանդրին:

Միանման ու գեղեցիկ տները շարվել են լայն փողոց-
 ներից աջ ու ձախ:

Մեքենաները թողնում են և Լենինգորֆը:

Հաջի-Քենդ ենք զնում: Աղբբեշանի կարմիր դիվեղիա-
 մի ճամբարը:

Դարձյալ վերելք և սկսվում ե ծայր են առնում անտառ-
 ների կանաչ փեշերը:

Թուրք, ոռու, հայ կարմիր բանակայինները, հրամա-
 նատարները չերմագինորեն վողջունում են Հայաստանի
 Սորհորդացին գրական բանակին, վորը զնացել եր նրանց այ-
 ցելության:

Խանդավառությունը ծավարլում ե և թնդանոթները
 կարմիր բանակայինների հաղարավոր բերանների հետ միա-
 սին վորատում են—ուռուա՛... կեցցե՛... յաշա՛սըն...

Կատարվում ե զորահանդես:

Հայաստանի գրողները շարքով կանդնած ընդունում են
 վողջ դիվեղիայի հանդիսավոր զորահանդեսը: Նրանց մար-
 տական լողունգները հրահրում են կարմիր բանակայինների
 խանդավառությունը:

Վերագառնում ենք: Անտառների կանաչ ծփանքը—լեռ-
 ների կապույտ պարը, սպիտակ վրանաշխարհը մեզ ճամբու-
 յեն զնում:

Մեքենաները միաբնվում են անտառի մեջ։ Տպավորություններով ծանրացած զնում ենք։

—Նկարագրեցէ՞ք, ինչո՞վ են տարրերիվում իրարից ցարական ՅԵ մղավետպուր, մուսաֆաթիստների և դաշնակների Գանձակը և Խորհը դային Գյանջան։

—Կրկնել բայի մասին անցած զիտելիքները։

—Փորձեք պատասխանել այն հարցին, թե ինչո՞ւ բայերը մենախոսք են կազմում։

—Ի՞նչ տարրերություն կա, որ տուն հգնում եմ կամ գնացի բառերի իմաստի մեջ։

—Գնացի բառը (բայը) միաժամանակ քանի՞ դաղակար և արտահայտում։

—Գնացող առարկայի դաղակարն արտահայտվում ե՞ զնացի բառ մեջ, թե՞ վոչ։

ՎՈՐՈՇՈՒՄ

—Անող կամ յեղող առարկայի դաղակարը կոչվում ե դեմք։ Բայ դեմքը յերեք տեսակ ե։

1. Անող կամ յեղող առարկան կարող ե լինել ինքը՝ խոսող անձեր կոչվում և առաջին դեմք։ որինակ՝ գնացի, յեկա, կարդացի։

2. Անող կամ յեղող առարկան կարող ե լինել խոսակից անձը, վոհովում ե յերկրորդ դեմք։ որինակ՝ գնացիր, յեկար, կարդացիր։

3. Անող կամ յեղող առարկան կարող ե լինել վոչ խոսողը և վխոսակիցը, այլ մի ուրիշ առարկա, վոր և կոչվում ե յերրորդ դեմք՝ որինակ՝ գնաց, յեկալ, կարդաց։

—Դիտեք՝ թվի դաղակարը ցույց տալի՞ս ե բայը, թե՞ վոչ։ Որինակը տարբերություն կա գնաց և գնացին բայերի մեջ։

ԳԱՐՈՒՆ

1.

Ահա կրկին մեղ մոտ դարուն,
Յերեանում ահա կրկին
դարունն անմար բույր ե վառում
և բորբոքում աշխուժ գրդիս։
Յոթր դարուն ահա արդեն
հեռու սրից, ահից, մահից
բացվում են վառ, աճում այսպես
մանկիկները խորհրդային։
Յոթր դարուն արդեն ահա
բոյ են քաշում ծառերն այս մեր։
վորբեր եյին նրանք առաջ—
հիմա կայտառ պիոներներ։
Ֆեռ ինչպես են նրանք քայլում։

2.

Գարուն, դարուն Յերեանում,
Յերեանում ահա նորից
չնչում ե խոր, թնդում անհուն
մի խնդություն վոսկեվորիկ։
Ահա կանգնած իբար կողքի
Արովյանի յերկայնքն ի վեր՝
լույս են խմում դարնան շողքից
ու կանաչում ծառերը մերկ։
Հիշո՞ւմ ես, սիրտ, գարուն մի այլ,
յերբ տնկվեցին ծառերն այս նոր,
յերբ մեր բորբիկ մանկանց նման
նրանք դեռ մերկ, նրանք տկլոր—
յերբ մեր լուսե մանկանց նման
այնպես վտիտ, այնպես բարակ—
դեռ շուրջը, սով, դեռ շուրջը մահ—
շարք կանգնեցին այստեղ նրանք.
մեր մանկանց պես տկլոր, վտիտ
ծառերն այս, յերբ կեցան յերթի
շտու՞րն արդյոք հավատացին
նրանց պայծառ առավոտին։
Ծե՛ս՝ ինչպես են փթթել հիմա,
հասակ առել ու կանաչել—
տես՝ ինչպես են նրանք աճել,
մեր լուսեղեն մանկանց նման։

3.

Ահա կրկին մեղ մոտ դարուն,
Յերեանում ահա կրկին
դարունն անմար բույր ե վառում
և բորբոքում աշխուժ գրդիս։
Յոթր դարուն ահա արդեն
հեռու սրից, ահից, մահից
բացվում են վառ, աճում այսպես
մանկիկները խորհրդային։
Յոթր դարուն արդեն ահա
բոյ են քաշում ծառերն այս մեր։
վորբեր եյին նրանք առաջ—
հիմա կայտառ պիոներներ։
Ֆեռ ինչպես են նրանք քայլում։

Մայիսմեկյան յելած յերթի.
Նրանց դեմքին—խինդր փայլուն,
չըթունքներին—վառքը վարդի:
Տես՝ ինչքա՞ն և քայլը հաստատ,
ինչքա՞ն նրանց յերթը աշխուժ.
Նրանք անդուլ, նրանք փստահ,
նրանց սրտում կորով և ուժ...

- Այդ վոտանավորը բաժանեցեք մասերի և վերնազրեր դրեք այս
մասերին:
— Ի՞նչ համեմատություններ ե տալիս բանաստեղծը:
— Ի՞նչ յեղակացությունների յե դալիս բանաստեղծը:
— Գրեցե՞ք դրավոր ավաստանք՝ «Գարունը քաղաքում և դարունքուղարավ»:

Ի Լ Յ Ի Զ Ի Ս Ո Տ

Յերիտասարդական Միության համագումարը վորոշեց համագումարի պատվավոր անդամ ընտրել մեր ղեկավար, մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր լենինին: Խանդավառությամբ վորոշեցինք ներկայացուցիչներ ուղարկել նրան վող ջունելու:

Այդ պատվավոր դերը բաժին ընկավ համագումարի նախադահությանը:

Պարզ կերպով հիշում եմ, թե ի՞նչպես եյինք հուզված մենք, նախադահության անդամներս: Հավաքվեցինք և սկսեցինք քննել, թե ինչպես գլուխ բերենք այս մեծ գործը:

— Բայց ի՞նչպես պիտի մոտենանք նրան, ի՞նչպես պիտի խոսենք նրա հետ, — հուզված ասաց մեկը:

Ո՞վ պետք ե խոսի համագումարի անունից—բոլո՞րս, թե՞ մեկը:

Ո՞վ պետք ե ասի առաջին խոսքը: Ի՞նչ պետք ե ասի:

Այս հարցերը մեզ շատ եյին զբաղեցնում:

Վերջապես վորոշեցինք զեկուցողի պաշտոնը համձնել ընկ. Մերգեյին:

— Ամբողջ գիշերը չպիտի քնեմ, — հայտարարեց նա: Հետեյալ որը գնացինք: Բայց պարզվեց, վոր այսոր իշխը մեզ ընդունել չի կարող: Կուսակցության կենտկոմից կրեմի հետ հեռախոսելով իմացանք, վոր պետք ե զնալ վառը, ժամի 12-ին:

Դարձյալ մի անհանդիստ որ ու դիշեր:

Համագումարի առավոտյան նիստից հետո գնում ենք վերջապես, կրեմ: Կատակում, ծիծաղում ենք իրար հետ, բայց, ինչպես ասում են, ծնկներս դողում են: Գնացինք, մտանք ընդունարանը: Այնտեղ մեզ հայտնեցին, թե մի ընկերոջ զեկուցումից հետո ընկ. Լենինը կընդունի մեզ:

Սպասում ենք... Հուզված ենք...

— Վոչինչ, — ասում ե լաղարը Մերգեյին, — յես քո կողքին եմ լինելու: Հենց վոր հիմարություն դուրս տաս, վուրեղի կսեղմեմ, ինչքան չլինի՝ կողնի...

Ծիծաղում, հուզվում ենք...

Վերջապես... իրար հետեից Իլյիչի առանձնասենյակն ենք մտնում:

Ընկ. Լենինը մեզ ընդունում է սիրավել: Ժպտում, վող ջունում ե: Մենք նստում ենք:

Իլյիչը յերեի հասկանում ե մեր դրությունը: Մերգեյը հազիվ եր մի քանի խոսք մի կերպ իրար կապել, յերբ լենինը ընդմիջեց:

Զանցավ մի բոպե—և մեր հուզմունքի հետքն անդամ չմնաց: Նա, համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ, այնպես մոտիկ և ուշագիր եր ղեկի մեզ: Մերգեյը հպարտությամբ հայտարարում ե, վոր համագումարը վորոշել ե Միությունը կոմունիստական անվանել:

— Բանն անունը չի, — նկատում ե Իլյիչը:

— Բայց մենք կարդարացնենք այդ անունը, — դուրս ե թոշում Յեֆիմովի բերանից:

Ընկ. Լենինը ժպտում ե:

Հարցնում ե Միության անդամների թվի, համագումարի կազմի մասին:

— Քանի՞ աղջիկ կա համագումարում, — հարցնում ե Իլյիչը, մեզանից մեկին դառնալով:

Այստեղ կարծես մեկը բերանս լեզու դրեց:

— Իննը, — ասացի յես:

Բոլորն ել ծիծաղեցին:

Ընկեր լենինն ելի շատ ուրիշ գործնական հարցեր ե տալիս:

— Իսկ ի՞նչ վիճակում են ձեր դրամական միջոցները:

— Մրազը նախատեսնված են, բայց առձեռն վոչինչ չկա:

Ընկ. Լենինը թուղթ ե առնում և ինչ-վոր բան ե գրում:

— Սա Միերգյովին կտաք, — ասում ե նա:

Վոտքի յենք յենում, հրաժեշտ տալիս ու դուրս դնում մեծ մարդու մեծ հոգուց զգացված:

Նա առաջինն եր, վոր բարոյական և նյութական ողջուռ թյան ձեռք մեկնեց մեզ: Նա հասկացավ յերիտասարդության մեծ ձգումները:

Ո՛, թող ամսն մի յերիտասարդ բանով հիշի ընկ. Լեռնինի այս խոսքը.

Բանն անունը չի:

— Նկարագրեցնք կոմյերիտների հողեկան դրությունը լեռնին ներկայանալուց առաջ և հետո:

— Ի՞նչ ազդեցության տակ առաջ յեկավ այդ փոփոխությունը:

— Ի՞նչո՞վ պետք է Յերիտասարդական Միության անդամներն ապացուցնեն, թե նվիրված են կոմունիզմին:

Ո Ւ Զ Ո

Խճուղին կեռմաններով բարձրանում եր վեր:

Փխրուն, քարքարոււտ ե. խանձված: Յերբեմն-յերբեմն աշջովզ և ընկնում վորեն կանաչ թերթիկ քարարույսի, վոր արսից փախս տված, զլուխը կոխել ե քարի տակ, ապրում ե: Փայուը կյանք և առնում կարծես, զվարթանում: Փայուը ժպտում ե:

Ճամբան ծանօթ ե. վտանգավոր. անցնում ե անդունդների յեզրով. աննշան անզգուշություն, կղլորվես: Ալտուրուսը գոռալով կտրում ե ճամբան. բռուը ծանր ե. մեքենան յուրահատուկ ձեռվ տնքում ե ամեն անգամ կեռմանը շրջելիս, քնազդաբար բռնում ես ավտոբուսի կողքից. վա՛յ թե հանկարծ զլորվի...

Քաղաքի տոթն այլևս չկա. դեմքդ չոյում ե լեռնային քամին, խաղում մաղերիդ հետ. գուրեկան ե: Վորքան բարձրանում ենք, այնքան ողը խստանում ե կարծես: Վերջին կեռմանն ենք պտտում: Հարեւանս հազար վերաբերեն. ցուրտ ե:

Կոջոր: Առաջ թիֆլիսի առեւրական դասի ամառանոցը: Այժմ մանկական քաղաք: Վերացել ե առեւրական դասը, վերացել ե և նրա ամառանոցն իր հին կյանքով ու կենցաղով: Աշխատավորության մանուկներն են այժմ ծլվլում այստեղ: Կոջորը մանուկների առողջության վրա շատ բարերար, շատ լավ ե ազդում ամառը:

Մեքենան կանգ առավ: Իջանք: Ռւղեկիցս—ընկեր Սոկրատը մի աշխուժ ու զվարթ կոմյերիտական, պիոներական խներնացիոնալ լագերի կոլվարներից ե: Ծովում ենք զեսի աշ, բարձրանում քիչ վեր, զնում ենք լագեր:

Առաջներս տնտառ ե, իիտ, բայց յերիտասարդ անտառ ։ Մատղաշ կաղնի ծառերը, բոխին, հաճարին, թղկին քամու թեթև հպումից որորում են գլուխները, վողջունում: Անտառի միջն նեղ ճամբով իջնում ենք ցած: Զով ե; քիչ խոսնավ: Յերեկվա անձրեից և այդ ախորժելի խոնավությունը:

Ֆաներայից շինած տնակ—բուտկա: Կարմիր կտոր—կամարածե կապած, վրան դրված տառերը հայտնում են, վոր դա լագերի մուտքն ե:

Պիոներ պահակ: Յերկու հողի յեն. հսկում են մուտքին: Ճանաչեցին Սոկրատին և այնպիսի հըմվանքով մուտքան ու փաթաթվեցին, կարծես տարիներով տեսած չլինեն: Մինչդեռ Սոկրատը յերկրորդ որն ե, ինչ բացակայում ե լագերից:

Ծովում ենք դեպի աշ, կարմիր կամարի տակից անցնում և նեղ կածանով իջնում ցած: Ուժո:

Անտառի մեջ ցրված տնակներ—մուգ-կանաչ գույնով ներկված. փեթակներ լինեն կարծես:

Փեթակներ:

Դուրս են թափվում այդ փեթակներից մեր ժրաջան մեղուները—պիոներները, վաղում, դիմավորում մեզ. ճիշտ կլինի տսել՝ ընկ. Սոկրատին: Անտառն աղմկում ե, ժպտուն զեմքեր, ծիծաղկոտ, վառ աշքեր, առույդ դեմքեր, զիլ ձայն, ամուր, բրոնզե մերկ թեր ու սրունքներ: Ի՞նչքան սազում ե այս ամենին կարմիր վզկապը պիոներական:

* * *

Եեփոր: Արձագանքը բռնում ե անտառը: Պիոներները հավաքվում են գծին: Յերեկոյան հաշվետվություն ե: Որվա ուժիմը կատարված և ստուգումը: Յուրաքանչյուր կոլեկտիվի նախագահ, զեկուցում ե պահապանին, թե իր կոլեկտիվում քանի հողի կա, ո՞վ ե բացակա, ի՞նչ պատճառով, և ով ե հիվանդ: Ապա կլարան հայտաբրում ե, թե որվա ուժիմը կատարված ե լիովին, միայն յեղել են անկարգներ, վորոնք «մեռյալ ժամը» խանգարել են: Կարդում ե անկարգների անունը, հրավիրում իր մոտ, վոր բոլորը տեսնեն:

Եեփոր: Իջեցնում ե զըռչակը:

«Պիոներ, բանվոր գասակարդի ալայքարի համար յեղիք պատրաստ»:

«Միշտ պատրաստ ենք»:

Թնդում ե միահամուռ, վորոտալից «միշտ պատրաստ»-ը:

Կրկնվում ե բոլոր լեզուներով—ոռուսերեն, վրացերեն,
թուրքերեն, հայերեն, գերմաներեն...

Ինտերնացիոնալ լազեր:

Պիոներները գնում են ընթրիքի, վորից հետո վիճելու յև
կինո-նկարի ցուցադրում:

Յոյուն-Յուլ:

Եղաղաքեր: Կիսամոնղոլային թուխ դեմք, այսոսկերեք
գուրս ցցված: Ժիր, կայտառ մի աղա: բասկետ-բոլի վողին:
Այստեղ նրան ասում են—Վիկտոր-Շե: Կորեայից ե յեկել:
Վորը ե: Աոլրում ե Վլադիվոստոկի ինտերնատներից մեկում:
Ազատ խոսում ե ոռուսերեն: Ամենքը սիրում են, փայտայում,
զուրգուրում: Յոյուն-Յուլն յերգում ե իր լեզվով.

«Յյանըն ցըմուրը սոցան նոմլուե

Նայի Խյալիիրըն կըըդոյին դոյլը,

Նայի բումոնըն նարըլ բարիկո

Ղոյուն ցանցոգ ե ցամտըրը իտաողա»:

Յոյուն-Յուլի կյանքն ե սա թերես: Կորեացի վորը,
վորը յերեխաւ կորել եր անտառում, նրան գտան բարի մար-
դիկ և պատսպարեցին:

Յոյուն-Յուլի կյանք ե, սա թերես: Կորեացի վորը,
կորած իմպերիալիստների «անտառում», ուր գաղաները կա-
րող ելին նրան հօշտել: Յեկել ե «բարի մարդը»—խորհրդա-
յին իշխանությունը, պատսպարել իր ինտերնատում, հիմի
յել ուղարկել Ուձո: Վլադիվոստոկից—Ուձո:

Զգիտեմ ինչու, գերմանացիներն իմ յերկակայության
մեջ միշտ յեղել են կարմիր, գեր, ծանրաշարժ, հաստլիկ,
անշնորհք կազմվածքով: Սխալված եմ. 14 տարեկան մի աղ-
ջիկ ե վազում ֆիզկուլտուրայի պարապմունքի: Վազում ե
ծառերի միջով:

Աղջիկ... Տարիքին անհամապատասխան բոյով, նուրը,
համաշափ կաղմվածքով, գեմքի ու մարմնի գծերը միալ-շի-
տակ, բաց շիկահեր դիլով:

Գերմանուհի պիոներ:

Ոտար լեզու չգիտե, չգիտեն ե նրա լեզուն: Թվում ե, թե
պիտի տիրի աղջիկը: Բայց...

Բայց լեզու չգիտենալը բնավլ արգելք չի հանդիսանում,
վոր պիոներները միմյանց հասկանան:

Յեկ հասկանում են...

Կոմինտերնի լեզուն:

Ծառից կախած տախտակ: Վրան իրար տակ նկարած—
աերպալան, ավտո, շողեշարժ, վազող տղա, եշ, սայլ, կրյա:

Նկարների գիմացը կպցը կաղը են Նո-ներ: Առաջին ողակ,
յերկրորդ ողակ և այլն: Վերեկի մասում տեղավորված ե ամ-
սաթիվը: Սա ցուցադրական հաշվետվություն ե ամբողջ լա-
զերի առաջ, թե այսինչ կոլեկտիվի, այսինչ ողակն ինչպես
ե աշխատում: Թվանշաններն, իհարկե, փոխվում են համա-
ձայն կատարված աշխատանքի:

Կրեայի գիմաց ողակ չկա: Ջի յել յեղել: Սա լավ ե, ու-
րախալի յե: Հաճախ միմյանց սպառնում են ողակի անդամ-
ները.—«Ուզո՞ւմ ես կրեյա դառնանք»...

Ո՞վ կուզի կրյա դառնալ, յեր աերովլանն ե ստվառ-
նում: Վոչ վոք: Ահա և մի ուրիշ տախտակ: Սոցմբցման պայ-
մանադիր ե կնքված ողակների մեջ. այդ պայմանադիրն ե, վա՞յ նրան, ով թերացավ:

Ուձո—ինտերնացիոնալ լազեր:

Սա—մեր Խըրհրդային Միությունն ե վոքքիկ ձեռվ ներ-
կայացրած: Բազմատարը, բազմակեզու:

Նոր մարդիկ են այստեղ, նոր հոգերանությամբ, նոր
կենցաղով, նոր հարաբերություններով, նոր դաստիարակու-
թյամբ:

Այստեղ ծանոթանում են միմյանց հետ, ապրում մի
կյանքով, մի գործի համար, մի աշխատանքի համար, սո-
ցիալիզմի կառուցման աշխատանքով տարիված:

Վաղը մեծանալու յեն իբրև հարազատներ, իբրև վաղե-
մի ծանոթ-բարեկամներ, ընկերներ ու յեղացր-քույրեր,
ձեռք-ձեռքի տված արշավելու յեն առաջ, գրավելու համար
նորանոր բարձունքներ, նվաճելու նորանոր դիրքեր:

Վողջո՞ւյն ձեր նոր յերթին:

— Բաժանեցիք մասերի և համապատասխան վերնադիր դրեք:

— Ինչի՞ յի նմանեցնում հեղինակը լազերը և լազերի աշխատանքը?

— Ո՞վ եր Յոյուն-Յուլ, նկարադրեցիք նրա կյանքը մինչեւ Ուձո-ին-
տերնացիոնալ լազեր դալը:

— Վորտե՞ղ ե զանվում Ուձո-լազերը և ովքե՞ր ելին ցարի ժամա-
նակ ամառանոց գնում այստեղ:

— Շարադրություն դրեք—Պիոներական աշխատանքը լազերում—
նյութի չուրջը:

ԻՆՉՐԵՍ ՄԵՆՔ ԶԵՐՄՈՅՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆՔ

I

Վորոշեցինք գոլորոշում ջերմոց պատրաստել շիթիների համար:

Կոլխոզը տվեց տախտակներ և գերաններ, իսկ դոլրոշում կային պատուհանի շրջանակներ, վորոնք մնացի եյին քանդված նախասենյակից:

Տղերքը հաշվեցին, վոր ունեցած նյութը բավական և 3 մետր յերկարությամբ և 1 մետր լայնությամբ մի արկղ չենելու համար:

— Այժմ տեղ ընտրենք, — ասաց գյուղատնտեսը, վոր յեկել եր ողներու աշակերտներին:

— Ահա այստեղ, — կանչեցին տղերքը, — մառանի կողքին, նրա հարավային կողմը պաշտպանված ե արեկլյան կողմից ցանկապատով:

— Ճիշտ ե, այստեղ շատ հարմար ե, — ասաց գյուղատնտեսը, չափենք փոսի յերկարությունն ու լայնությունը: Փոսը պետք ե փորենք մեկ մետր խորությամբ:

II

Վարպետը մեղ արկղ շինել սովորեցրեց:

Արկղի յետելի կողմն առաջինի կողմից $\frac{1}{4}$ մետր ավելի բարձր շինեցինք, և յերկու կողմն ել հարթեցրենք:

— Ինչո՞ւ արկղի կողմերը հավասար չեն, — հարցրեց Սենիկը:

— Զերմոցը պետք ե մի քիչ թեքված լինի արեկի կողմը, — պատասխանեց նրան Վահանը, — այդպես նա ավելի լավ կտաքանա:

— Ուրեմն բանջարանոցն ել ավելի լավ ե շինել թեք տեղում, — հարցրեց Սենիկը:

— Վո՛չ, բանջարանոցը պետք ե շինել հարթ տեղում, հակառակ դեպքում ջրելիս ջուրը կարող ե վողողել և անցնել:

Բայց հուսիսային կողմից պաշտպանված լինելը բանջարանոցի համար նույնպես լավ ե, — բացարեց նրանց Վահանը:

III

Աշակերտները բերեն ձիերի թարմ աղը, լցրեն փոսը չինչե բերանը և պջանակով ծածկեցին:

— Ինչո՞ւ համար աղը լցրեք զերմոցը, — հարցրեց Հոկտեմբերիկ Շուշիկը:

— Այս աղը թե՛ տաքաշնում, թե՛ գոլորշիով խոնավացնում ե հողը, հենց այդ ե կարեռը, — բացատրեցին մեծը: Գյուղատնտեսը յեկավ նայելու, ճիշտ են յերեխաներն աշխատում, թե՞ վոչ:

— Կեցցեք տղերք, — ասաց նա, — մի շարաթից ձեր ջերմոցը պատրաստ կլինի: Կոլխոզում արդեն սերմեր կան, յեկեք վերցրեք:

IV

Յերեք որից հնոր աշակերտները վերցրին շրջանակները և կոխոտեցին աղը: Նույնը կըկնեցին 3 որ ևս անցնելուց հետո:

— Այժմ տղերք, աղը տաքացավ, կարելի յէ հողով ծածկել, — ասաց Վահանը:

Զերմոցի մոտ պատրաստել եյին բանջարանոցի համար շատ լավ հող: Աղը կօխոտեցին, հավասարեցրին, այնպես, վոր քիչ թեքված լինի դեպի հարավային կողմը, վերևից ծածկեցին մաղած հողով մոտավորապես $\frac{1}{4}$ մետր հաստությամբ; մինչև շրջանակները մնաց մի դեցիմետրից վոչ ավելի տարածություն:

V

Յերբ չերմոցը պատրաստ եր՝ ցանեցին ծխախոտի սերմեր:

— Լոեք տղերք, սկզբում շատ ջրել պետք չե, թե չե սերմերը կարող են փոել: Զե՞ վոր աղը ից շատ գոլորշի յէ արձակվում, — զգուշացրեց Վահանը:

Յեկ իսկապես, ամեն առավոտ ապակիների ցածի յերեսը միշտ խոնավ եր: Տաք գոլորշին նստում եր սառը ապակուն և իսկույն գառնում ջրի կաթիներ:

Բերին մի քանի խսիրներ, վորպեսզի գիշերները չերմոցը ծածկեն:

ՄԱՌԱՏՈՒՆԿ

— Տա՛, տա՛ տա՛ ... Տա՛, տա՛ ...

— Տա-տա-րա-տ տի-տա տա ...

— Տրա՛, տա՛, տա՛ ...

Մեղ ծանոթ ու սիրելի պիտներական փողի ձայնն ե, վոր յերեկոյան դեմ ընկել ե գյուղամեջ:

Հավաքվում են պիտներներն այս ու այն կողմից: Զույղեր:

— Զախ, աջ, ձախ...

— Զախ, աջ, ձախ...

Շարքերը կաղմված են, արդեն կոլվարներն իրենց տեղերում, հրամանը մեկ է, պատասխանը նույնը. —

«Միշտ պատրաստ»:

Մենքը դիմում են գեպի խրճիթ-ընթերցարան:

Ժողով ե, դասախոսելու յե գյուղատնտեսը:

«Ո՞վ կարող ե առանց մաքուր ողի ու պարզ ջրի առքել, — հարցնում ե գյուղատնտեսը և շարունակում, — իսկ կարո՞ղ եք մի բոպե յերեակայել, վոր վոչ մի ծառ չլինի մեր չորս ըոլորը... Ամառն ոդը խեղղում ե, գլուխդ չես կարող մի ստվերի տակ դնել. չորացել-խանձվել ե ամեն ինչ, քամի յե բարձրացել, փոշին չորացած կոկորդդ ե լցնում, աչքերիդ ջուրը վաղում ե. տրորում ես ու տրորում կոպերդ... Ա՛խ, գոնե մի փոսի մեջ քիչ ջուր ճարմի... Զկա: Տանջվում ես շողից, վոտիդ տակ խանձված խոտն ե փշրվում, հողն այնքան ե կեծացել, վոր վոտներդ այրում ե:

Մժեղներ, մժեղներ, անվերջ մժեղներ... բգեզներ...

Իսկ ո՞ւր են կորել մեր թռչունները...

Զկան, թռել են, հեռացել: Նրանք չեն սիրում անծառ ու անջուր դաշտեր: Նրանք անտառի ծլվլան հյուրերն են, վոր ամեն գարնան գալիս են, յերգում, թռվում, կյանք տալիս անտառին, ձագեր հանում, խաղում, ուրախանում և մեղ ու ըախացնում:

Յեթե չկա անտառ, չկա և ջուր, չկա և մաքուր ոդ, չկան և ծլվլան ու խատուտիկ թռչուններ, ել չեմ խոսում վայրի մըզերի ու դույնզգույն և հոտավետ ծաղիկների մասին:

Իսկ կարկաչող առո՞ւն.. ինչպես ե քչքչալով հոսում դաշլար ծառերի արանքով. ջուրը-պարզ, սառը... վո՞նց կուկես փոշու մեջ կորած յերեսդ լվանաս, չոփ-չոփ անես, աչքերդ պարզ ջրի նման բացվեն, չորերդ դեն չպրտես, ընկնես մեջը, շողից, կեղտից ու փոշուց քոր յեկող մարմինդ հովացնես»...

— Ո՞ֆ... Ոխա՛յ...

Հանկարծ բացականչեց պստիկ Արմիկը, վորին թվաց, թե իրօք ինքը մի ամայի դաշտի մեջ շողի ու փոշու ձեռին տանջվում ե՝ լեզուն ցամաքած, կոկորդը չորացած, շունչը մոլորած, ջանը քոր և զալիս, և հիմի անտառի միջով հոսող առվակի մեջ լող և տալիս, հովանում:

Ամենքը շուր եկան նրա կողմը:

Ի՞նչ պատահեց, Արմիկ:

Արմիկն ամաչեց, կարմըեց. վոչինչ չկարողացավ պատասխանել:

«Այսպես ե, ընկերներ, — շարունակեց գյուղատնտեսը, — Արմիկը քիչ եր մնում չոգից այրվի, լողացավ ու հիմի հանգիստ ե: Դուք, փոքրիկներ, շատ եք սիրում կտրտել գալար ծառերի ճյուղեր կամ նոր բուսած ճիպոտներ. չե՞ վոր այդ ճիպոտներից ե գոյանում հովաչունչ անտառը, չե՞ վոր ինչպես գուք եք մեծանում և զառնում մեծ մարդ, այնպես ել այդ ճիպոտներն են մեծանում, զառնում ծառեր, մեծ-մեծ ծառեր: Խո՞սք եք տալիս, վոր այլիս անտեղի չկոտորեք մատադ ճիպոտները, ծառերի դալար ճյուղերը»...

— Խոսք ենք տալիս:

Միաբերան թնդաց դահլիճը:

«Լավ, — ասաց գյուղատնտեսը, — բայց այդքանը բավական չե, գուք դեռ շատ բան ունեք անելու անտառ ստեղծելու և պահելու համար: Մեր իշխանությունն անտառի ամենամեծ բարեկամն ե: Մեզ մոտ ամեն տարի ծառատունկի կամպանիա յե անցկացվում: Գիտեք սա ինչ ե նշանակում: Սա նշանակում ե, վոր բոլոր հոկտեմբերիկները, պիոներները և կոմյերիտականները մեծերի հետ միասին պետք ե ծառեր տնկեն, ապագա անտառն իրենց ձեռքով չինեն: Վաղվանից սկսվում ե ծառատունկի ամիսը. մեծերը նշանակված հողամասը կշինենք, վոր անտունները չփչացնեն, իսկ հետո, ամեն մեկը պետք ե իր տնկած շուրջ ինամի, ջրի, տակի հողը փորի, փափկացնի, վոր շուրջը լավ մեծանա, լավ ծառ դառնա: Պատրաստ եք»:

«Միշտ պատրաստ»:

Ժողովը ցըվեց: Ամբողջ գիշերը պիտներների քունը չեր տանում. նրանք յերեակայում եյին, թե ինչպիսի անտառ են շինելու: Շատերը յերազում լողանում եյին անտառով հոսող առվակի մեջ, սառը ջուր խմում, նստում ծառերի ստվերի տակ, լուսմ թռչունների քաղցր յերդն ու ծլվլոցը...

— Տա՛, տա՛, տա՛...

— Տրամ տա-բա-տամ, տա-բա-բա-բա-բա-տամ-տամ..

Արեց նոր եր ծագել: Պիոներական շեփորն ու թմբուկը հնչում են գյուղամիջում:

Գյուղը վոտքի յե: Պիոներներն ու հոկտեմբերիկները, դաշտում փոված գույնզգյուն ծաղիկների պես, շարժվում են առաջ: Տրակտորը հեռվում դռուալով հերկում ե ապագա անտառին հատկացված հողամասը. մեծերը բահ, թի, քլունդ ուսերին շտապում են ծառերի տեղերը նշանակելու, փոսիկներ անելու:

Հոկտեմբերի կների ու պիոներների շարքերը գյուղատնտեսի գլխավորությամբ առաջ են շարժվում դեպի մոտակա շնուռաց:

Այ թե թամաշա յե հա'... ի՞նչ բան ե. — Շարժական անտառ, փոքրիկ, շարժական շնուռ: Հոկտեմբերի կներն ու պիոներներն ուսել են մի-մի դույլ, մի-մի ճիպոտ, վորոնց աչքերը նոր են բացվում ու ժպտում: Վո՞նց են վազում...

Ծառատունեն սկսվեց: Ամեն մեկն իր ճիպոտը թաղեց փոսիկում, փափուկ հողով ծածկեց արմատները, մոտն ել մի չոր չոփ տնկեց ու թելով կապեց նրանց, վոր քամին չծոփ, չկոտրի, մատղաշ, դալար շյուղ:

Առայժմ միայն ճիպոտներ են ցցված շարքով: Մի քանի թերահավատ մարդիկ կամկածում են, թե անտառ դոյան: Բայց գյուղատնտեսը հաստատ ու համոզված պնդում է, վոր անտառի հիմքն արդեն դրված է:

— Վաղը նույն ժամին բոլորդ այստեղ լինեք, վոր ցանկապատելու յենք անտառը, — լսվում է հրահանգը:

«Միշտ պատրաստ»: — Հնչում է պիոներների զիլ և ուժեղ ձայնը:

— Նկարագրեցե՛ք անտառի գեղեցկությունները և ողտակարությունը:

— Ծրագրեցեք և կատարեք, թե ի՞նչ կարող են անել մանուկները ըուսականությունը պաշտպանելու գործում:

ԿԱՐԴԱՅԵՔ

— Հնչում է պիոներների զիլ և ուժեղ ձայնը:

— Գիտել, թե այս խոսքի մեջ բայի ցրացի—մնացած բառերն ի՞նչ պաշտոն են կատարում, ի՞նչ նշանակություն ունին:

— Ցեթե խոսքը ձևափոխենք այսպես—պիոներների ուժեղ ձայնը զիլ հնչում է— այն ժամանակ վո՞ր բառերը վո՞ր բառերի իմաստը կը լրացննեն:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

— Բացի բայից խոսքի մեջ կարող են լինել նաև լրացումներ, վորոնք այս կամ այն տեսակետից լրացնում են խոսքի իմաստը:

— Գիտել թե մեր զրած նախաղատության մեջ միտք լրացնող բառերն իրենց նշանակությամբ քանի տեսակ են—կա՞ն արդյոք նրանց մեջ առարկա ցույց տվող և վորալիսություն ցույց տվող բառեր:

— Կազմեք լրացումներ անեցող միքանի խոսքեր և զրեք մեր տեսքալում:

ՏԵՍՊԵՐ

Հեվում ե հուժկու Մակեյեվկայի
Ծետալուրդիական գործարանն ահա,
Դարպասների մոտ հեղեղ մարդկային,
Հեղեղում կանգնած մի ծերուկ պահակ:
Դեմը, կենտրոնում ընդարձակ բակի,
Կախված ե մի լայն վիթխարի տախտակ.
Տառեր կան վրան այնքան ահազին,
Վոր հարյուր քայլից կարող ես կարդալ:
Այդ հսկայական տախտակի Փոնին
Վերևից ներքե նկարված ե վառ.

Այերոպլան,
Ավտո,
Գնացք,
Հեծանիվ,
Հեծյալ,
Վոտավոր,
Ֆուրդոն,
Արարա,
Ծանրաբեռ մի եշ,
Կրիա,
Խեցգետին,
Ամենից ներքե,
Խխունջ մի հետին:

Ամեն մի նկարն այդ տեսարանի
Ներկայացնում ե մի ցեխ, մի ճակատ:
Հանդիսանում ե տեմպերի չափանիշ,
Չափանիշ փառքի և հերոսության:

Վարպետ կովալչուկն իր նորեկներին
Կանգնեցրեց ահա այդ տախտակի դեմ.
— Նայեցեք այստեղ, մերոնց տեմպերին:
Սա դոմնաների ցեխն ե իբր թե,
Եսակես և գնում, վոտավոր, դանդաղ,
Կուչ յեկած կուզիկ ծանր բեռան տակ,
Ես բեռն ել ահա պարտքն ե չուզունի:

60.000 տոնն ցեխը պարտք ունի:
 Նշանակում ե՝ ճեղքվածք ահազին,
 Թերակատարում անցյալ կվարտալի,
 Ո՛, ծանր հարված ե հնդամյակին,
 Յերբ դոմնաները ճեղքվածք են տալի:
 Յերբ չուզուն չկա, չի լինի պողպատ,
 Պողպատ ել չկա, չկա ունա, անիլ,
 Չկա տրակոր, չկա և կոմբայն.
 Կմնաս կպած պապիդ գութանին:
 Ու առաջ անցավ վարպետ կովալչուկն,
 Ինչուն քաջարի, հմուտ, զորավար,
 Վոր համառությամբ զորք ե հավաքում
 Բերդեր, ամրոցներ տանելու համար:

—

— Մեր յերկրի վերակառուցման վերեւի ընթացքում ի՞նչ նշանաւություն ունին տեմպերը:
 — Ի՞նչ մեթոդներ են զործադրում աշխատանքի արտադրողակառնության բարձրացման համար արդյունաբերության մեջ:
 — Զեր զպրոցում ինչպէ՞ս եք զործադրում աշխատանքի այդ նոր մեթոդներն ու ձեւերը:
 — Դպրոցի պլանների կատարման համար ի՞նչ տեմպեր եք վերցրել և խմբի բոլոր աշակերտությունն արդյոք մասնակցում ե,

—

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՄԵՐԸ

— Այերոպան, ալտո, գնացք, հեծանիվ, հեծյալ, վոտավոր...
 — Կազմեք խոսքեր, վորոնց մեջ զործածվեն այս բառերը, միաժամանակ դիտելով թե ի՞նչ նշանակությամբ են զործածվում նրանք խոսք մեջ:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

— Ով և ինչ ցույց տվող բառերը կոչվում են գոյական անուններ՝ Դիտել թե ինչու՞ Մակեյեվկա անունը գրված ե մեծատառով իսկ գործարան անունը՝ վոչ:
 — Վորոշում. — Գոյական անունները լինում են յերկու տեսակ հատուկ և հասրակ. հատուկ անունները գրվում են մեծատառով:
 — Զեր կարծիքով առողջություն, հարցածայնություն, կարգապահություն բառերը գոյականներ ե՞ն, թե՞ վոչ:
 — Զեր կարդացած վատանավորից ընարեք միքանի գոյականներ ոգրեք ձեր տեսրակում:

—

ՅԵՐԲ ԹԱՓՎՈՒՄ ԵՅԻՆ ԶՐԵՐԸ (ՀԱՏՎԱԾ ՎԻՊԱԿԻՑ)

— Մեր բրիդադ՝ եստե՛ղ...
 — Հավաքվեք տղերք...
 — Հեյ Ներսես, վազիր...
 — Եսոր ել ամոթով դուրս չդանք հա՛, թե չե սարը կծի-ծաղի...
 — Թեղ ոլ ջանըմ, ե...
 — Ընկերներ, ջուհարը սառավ...
 — Բրիդադների ջոկվեք...
 — Մեր բրիդադ՝ առա՞ջ...
 — Առա՞ջ...

Յերկու վիթխարի ժայռեր, ասես կախ ընկած ողից, մէ հոյակապ կամար եյին կապել լեռնանցքի մուտքի վրա:

Այդտեղ հավաքվել եյին զորչ հանքահագուստներով, պղնձի լեռան հետ անվերջ մարտնչող պղնձի նման գեղին, ամուր մկանունքներով, հանքափորների խմբեր:

Այդտեղից բացվում եր լեռան յերախը:

Այդտեղից ճյուղառատ յեղեվնու նման անցքերը յերկայ-նածիդ ունելսերով նետվում են դեպի լեռան աժդահա կրծքա-վանդակը:

Խումբ առ խումբ յերգելով կռվի վոգեշուն յերգեր, զնում եյին հանքափորները զորչ հանքահագուստներով, բահերով ու քլունգներով զինված: Գնում եյին կռիվ լեռան գեմ: Գնում եյին, վոր քլունգով պոկոտեն լեռան մարմինը: Զե՞ վոր յերկիրը պղնձի ուղում:

Ուղիները բաժանվեցին:

Քեռի Ղեվոնդի զեկավարությամբ Մարտունու անվան հարվածային բրիդադը յերրորդ վերստի վրա թեքվեց դեպի ձախ ու կանդ առավ Նոյեմբերյան նախամուտքի առաջ:

Հետեւից շարքերը սեղմվեցին առաջիններին: Կանդ առան:

Նույն այդ ժամանակ հոսող ջրերի հետ փլվեցին յերկու պհապին հաղթաթմբեր և լճացած ջրերը ճողիացին ուժգին թրմփոցներից:

— Դե, ի՞նչ եք կանգնել, առա՞ջ...
 Հետեւից շարքերից սրան ու նրան հրելով, կոմյերիտին աստուկ աշխատմությամբ, առաջ յեկավ Հրանտը: Գորչ կմքի վրա, միայն աչքերն եյին, վոր փայլում եյին խան-

- դավառ և վորոնց մեջ եր գտնվում նրա ամբողջ յեռանդը:
- Վտանգավոր ե...
 - Պահո՛...եղ ինչ վտանդ ե...
 - Փուլ կդա...
 - Դե, տղերք...
 - Առա՞ջ...

Քեռի Ղեկոնդն աջ ձեռքում կարբիտի պլալացող լամպը, ծախում յերկաթյա բրիչ, առաջինն ինքը ճեղքեց ահազին ցեխաջուրը, իսկ նրանից հետո քոլեցի ներսոն, Հրանտը, Սեյֆուլլան, հետո մյուս ջլապինդ հանքափորները՝ յերիտասարդ քանդողները բրոնդե դեմքերով:

Նոյեմբերյան նախամուտքը, քսան մետր յերկարությամբ, ծածկված եր ցեխարելուներով ու ջրով: Նրանցից հետո ամուր պատճեններն արգելում եյին ջրերի հոսանքը դեպի հանքահորերը:

Բրիգադները պայքարելով ջրի հոսանքի դեմ, անցան իրենց հանքահորերը:

Երբեմն-յերբեմն նախամուտքից ահռելի թրմփոցներ եյին հասնում հորերում աշխատողների ականջներին. բանվորներից վոմանք կանդ եյին առնում մի պահ և գոչում քրտնաթոր ճակատները սրբելով:

- Պահ քու տերը մեռնի...
- Փլելու յե անտերը...
- Վախիլ մի...

Զթուլանաք, տղերք...— զնչում եր քեռի Ղեկոնդի վողերիչ ձայնը, վորից հետո բարձրանում եյին հարվածող քլունդներն ու պոկոտում պղինձը լեռան հեացող կըրծքից:

Մուտքի առաջ անհանդիստ եյին ջրերը: Ստորերկրյա առվակներով թափվում եյին նրանք, թափվում եյին ճողովունով պատերից ու վերից և իրենց հոսանքների հետ նույնպես վար թափում, քար, ավաղ հողաթմբեր:

Ու յերբ թափվում եյին ջրերը, յերբ ահագին հողաթմբերը պոկոտվելով շրփում եյին ջրերի մեջ, չոքած տեքից յելնում եր «սարի բանաստեղծ» Հրանտ Ջուհարենցն ու իր վառվուն աչքերը փայլեցնելով դողում վողերված:

- Ե՛խ, տղերք, և այսպես, թափվում են ջրերը, և հողն և քանդվում, և քարը, ու յերդում են ջրերը, նրանք ել մեր յերգի հակառակն են յերդում...

Թող թափվեն ջրերը, նրանք մեզ այսպես հաղթել չեն կարող, մենք կբարձրացնենք մեր քլունդները և այսպես նրանց հակառակ յերգը կերպենք...

Եեվ նրա բարձրացած քլունդն իջնում եր ժայռի կրծքին, զինդում, յերդում ինչ-վոր յերգ:

- Այդ պղնձի յերգն եր միլիոնավոր յեղանակներով:
- Նախամուտքից լվող թրմփոցների հետ, մի պահ հանքափորների մտքով անցնում եր, վոր նախամուտքը կարող եր փուլ գալ և իրենց հավիտյան զրկել լույս աշխարհից... Յեվ ելի բաներ, սակայն մի պահ միայն, իսկ յերբ բարձրանում եր «սարի բանաստեղծ» Հրանտ Ջուհարենցի քլունդը՝

 - Վագոնետկա դալայ...
 - Լցրեք տղերք...
 - Հոռ'պ... ստո'յ...
 - Դռու, հայդա...

- Յեվ պղնձով լցված վագոնետկան դուրս եր սլանում պղնձահանքից դեպի լույս աշխարհ, դեպի ձուլարան: Իսկ հանքահորերում զբնդացող քլունդների հետ միասին՝

 - Առա՞ջ, ընկեր, մի վհատիր,
 - Անվախ նետվենք դեպի կոխվ...

Ու յերգը հնչում եր միլիոնավոր յեղանակներով:

Այդ պղնձի յերգն եր:

II ԲԱԺԻՆ

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Նորից յեկա այցելության
Գործարանի պարիսպներին,
Յերկաթակուռ այն շենքերին,
Վորոնք մի որ
Շունչ տվեցին իմ յերդերին:

Ահա մտա նրա շեմքով—
Ինձ վողջունեց արթուն սուլիչ.
Մեքենաներն ուրախացած
Ու խենթացած՝
Արձակեցին յերկաթե ճիչ:

Իրար անցան ճախարակներ,
Ժիր փոկերն ու պտուտակներ,
Շողեմուրճը հպարտ թնդաց
Ու վորոտաց
— Դեռ չեմ հոգնել, դեռ չեմ հոգնել:

Նրան խմբով ճայնակցեցին
Զարաճճի հազար մուրճեր.
Ծլլալով զրնդացին,
Կլկլացին
Վորպես ուրախ դեղձանիկներ:

Յեվ այս ժխոր-համերդի մեջ
Մեծ քուրայից ժայթքեց վոստնում.
Այդ անհանդիստ կայծն եր անշեց—
Առավոտյան՝
Նոր կյանքի յերդն եր պատրաստում:

— Ինչը շունչ տվեց բանաստեղծի յերդերին:
— Այս վոտանավորի մեջ բանաստեղծն ի՞նչ է նկարագրում:
— Ի՞նչն է համերդ համարում բանաստեղծը և ինչո՞ւ:

Յերեանի փողոցներում
Աշխատանքն ե աշխուժ յեռում
Ավտո, ֆուրգոն, սայլ անդադար
Կրում են խիճ, շալալ ու քար:

Բանվորները վողեռիված
Հողն են քանդում հարված-հարված,
Հողն են քանդում, գցում ուղիղ
Փողոցներում յերկաթուղի:

Ամրացնում են շպալ ու ռելս,
Աշխատանքն ե յեռում այսպես,
Գիծ են շինում, վոր փողոցով
Տրամվայը գա զնդոցով:

Աշխուժանա ու աղմկի
Յեռ ու զեռը մեր քաղաքի:
Վոր հայրիկը դործի գնա
Տրամվայով ու չուշանա,
Տրամվայով տուն գա նորից
Աշխատանքից, դործարանից:

Տրամվայով դպրոց գնանք,
Պիոներական աշխուժ հավաք,
Տրամվայով դպրոցից զանք:
Տրամվայով գնանք ու դանք
Արագ-արագ, արագ-արագ:

Դրա համար փողոցներում
Աշխատանքն ե աշխուժ յեռում,
Ավտո, ֆուրգոն, սայլ անդադար
Կրում են ռելս, շալալ ու քար:

— Նկարադրեցեք տրամվայի նշանակությունը մեր առորյա կյան
— Սրտադրեք այս վոտանավորի առաջին տունը ձեր տետրակում
Ընդդեռք գոյական բառերը:
— Ի՞նչ թիվ են ցույց տալիս փողոցներում և սայլ բառերը:
— Ի՞նչ մասնիկ ե ավելացրած փողոց բառի վերջին այդ անսակի՝
էկից ավելի առարկաներ ցույց տալու համար:

— Աբոտագրեք տեսրակում աշխատանք, ավտո, սայլ, իիհ, չպաւ քառերը դարձնելով այնպես, վոր նրանք այդ տեսակի՝ մեկից ավել առարկաներ ցույց տան:

— Դիտեք և վորոշեցեք, թե ինչո՞ւ դրա համար այս բառերի վեր մին մի դեպքում ավելանում է «եր» մյուս դեպքում «ներ»:

ՍՍՀՄԱՆՈՒՄ

— Գոյականներն ունենում են յերկու թիվ՝ յեզակի կամ հոգիակի շոգնակի թիվ ցույց տալու համար բազմավանկ բառերի վերջում ավելանում է «ներ», իսկ միավանկ բառերի՝ «եր», բացառությամբ դու մուկ, յեղ և այլն բառերի:

ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

ա.

Ուրալում գործարանների դեպի յերկինք բարձրացած ծխնելույզները ճիշտ և ճիշտ անտառի տեսք ունեն: Մոտակա բարձրությունից դեպի ցած նայելիս այդ ամենն այնքան պարզ ե յերեսում, վոր կարծես ամբողջ գործարանն ափի մեջ լինի:

Յերեկը գործարանը ծածկված ե խողովակներից քուլա քուլա դուրս ժայթքած ծխի ու գուլորշու քողով, իսկ դիշեր պատած ե բոսորային ուժեղ լուսով, վոր կարծես ամբողջ գործարանը բոցավաված լինի:

Հանքերի և գործարանների նախկին շահամոլ ու ապիկալ տերերը բանվորների բնակարանների մասին յերբեք չեն հոգացել. բանվորներն ստիպված են յեղել իրենք իրենց բնակարանի մասին մտածել ու հոգալ մի փոքրիկ խրճիթ կամ հյուղ շինել ու պատսպարվել: Սա յեպ պատճառը, վոր այդ գործարանն իր խրճիթներով և հյուղերով գյուղի յե նման:

բ.

Եթո դնում եյի նեղ յերկաթդժով, վորն ինձ հասցրեց մը ընդարձակ ծածկի տակ: Ծածկի մի կողմում գտնվում ել հակա հաւոցի փիթխարի աշտարակը:

Այդ հնոցի վառարանը շինված եր աղյուսից: Սա շարու նակ, առանց փայրկյան անդամ կանդ առնելու, ծխում եր:

Հնոցի վերեկի կողմից փոքրիկ վագոններով բերում է հալոցն եյին ածում հանք և քարածուխ:

Իսկ նրա ներքեկի մասից—հալոցից պարբերաբար, վորու ժամանակամիջոցից հետո, բաց եյին թողնում շիկացած մետաղի հալվածքը:

Վաղոնեատկաներով բերված հանքը հնոցի մեջ ածելուց առաջ նախ և առաջ հատուկ մեքենայով մանրացնում են, ապա նրան խառնում ածուխի բնափայտ և կիր: Այս բոլոր խառնությունը թափում են հնոցի մեջ և սկսում են հատուկ փողով մեքենայով վառարանի մեջ ողի ուժեղ հոսանք բաց թողնել, վորի չնորհիվ այնտեղ յեղած ածուխն սկսում և վառվել: Տաքության աստիճանը կամաց-կամաց սկսում և բարձրանալ, վորի հետեանքով հանքն աստիճանաբար հալվում, բաժանվում և քարից, ապա հոսում և ներքե ու առանձին անցքով դուրս և գալիս:

Հանքի հալոցքը սառչելով դառնում է չուղուն:

Ցես վրա հասա շատ հետաքրքիր մոմենտին—հենց այն ըոպեյին, յերբ մի փորձված բանվոր հնոցի ապակե «աչքից» ներս նայելով՝ բոցի գույնից կարողացավ հասկանալ, վոր մետաղն արդեն հալվել ե—«յեփվել» ե:

— Ժամանակն և հալվածքը դուրս թողնելու, — բարձր ձայնով ասաց նա, — չուղունն արդեն զողվել ե—նա իր իսկական գույնն և ստացել:

Յերկաթե կրակ խառնիչով բացեցին հնոցի դուռը, և մետաղի վառ կարմիր գույն ստացած հալվածքը դուրս թափվեց, վորին սովորական աչքով անհնար եր նայել: Գետնի մեջ շինված կիսախողովակներով հալվածքը սահեց և լցվեց պատրաստված հատուկ փոսերի մեջ, վորոնք կաղապարի դեր եյին կատարում: Այս փոսերի մեջ թափված չուղունի կառուների յուրաքանչյուրի քաշը 50 կելոյից չեր անցնում: Փոսերի մեջ թափված չուղունի գույնն սկզբում լինում և սպիտակ, ապա հետզհետե սկսում և կարմրել և աստիճանաբար սառչելով՝ իր իսկական գույնն և ստանում, — դառնում և մոխրագույն: Սառչելուց հետո այդ կտորները տանում են նորից մշակման յենթարկելու:

Հալվածքը դատարկելուց հետո հնոցը կրկին լցրին հանքով և, առանց ըոպե անդամ կորցնելու, կրակը նորից բորբոքեցին, վորովհետեւ վառարանի սառչելու դեպքում նորից տաքացնելը շատ դժվար կլինի:

Գործարանի անցյան ինձ հետաքրքրեց, և յես վերոհիշյալ ծերունի բանվորին, վորը յերեսուն տարի շարունակ աշխատել և այդտեղ, ինդրեցի պատմել այդ մասին իր գիտացածը:

գ.

— Մենք ցեղովին հանքափոր ենք, — սկսեց նա: — Իմ նախկինները, չկարողանալով տանել իրենց կալվածատեր տերերի պատճառած տանջանքն ու չարչարանքը, շատ վաղուց փախել և ապաստանել են Ուրալի անտառներում: Հեղուց վախել և

տաղայում աստիճանաբար իջել և բնակվել են քաղաքներում, իրենց շահագործողներից հեռու:

Ուրալի բնակիչները հետագայում տեսան, վոր իրենց հայրենիքը վոչ միայն փայտով ու ձկներով և հարուստ, այլև հանքով—վուկով, պղնձով, յերկաթով և այլն:

Եւրբ այս մասին լսեցին Ռուսաստանի վաճառականներն ու կալվածատերերը, աղահ չների նման համագլեցին և իրենց թաթը Ուրալի այդ հարստությունների վրա դրին:

Ցարից խնդրեցին և ստացան այս հարուստ հողերը: Բացեցին հանքերը և հիմնեցին գործարաններ և սկսեցին քամել բանվորներիս արյունը:

Գյուղացիներից հաղարավորներին զբկում եյին աղատությունից, կապում եյին գործարանին և ստիպում եյին աշխատել: Շատերը փորձեցին փախչել, բայց իզուր—բոլոր տեղերը պահապան եյին դրել ու ճանապարհները փակել:

Գործարանի կյանքն ու աշխատանքի պայմաններն այնքան ծանր եյին, վոր բանվորության անբավականության ու տրատունջների առիթ եյին ծառայում, դրա համար ել նրանք մարդ ուղարկեցին Պուգաչովի մոտ և ցանկություն հայտնեցին մասնակցել նրա ապատամ բությանը և կուել մինչև վերը:

Այստեղ ծերունին լոեց, արագ քայլերով մոտեցավ հնոցին, հալոցքի «աչքով» ներս նայեց ու ժպտաց:

— Տեսնո՞ւմ ես ինչ սիրուն տակտով աշխատում ե իմ հնոցը: Սա ամեն որ Խորհրդային իշխանությանը մեծ քանակությամբ չուղուն ե տալիս, իսկ չուղունից մենք յերկաթ և ամուր պողպատ ենք պատրաստում: Ուրալն իր հանքային հարստություններով խիստ ողտակար և ամբողջ Խորհրդային Միությանը: Այլևս նա առաջլա նման հարուստ անբաներին չի կշտացնում:

— Վորտեղ և գտնվում Ուրալը:

— Ի՞նչ նշանակություն ունի Ուրալը մեր արդյունաբերության արդացման համար:

— Նկարագրեցեք—ի՞նչպես են չուղուն ստանում:

— Բանվորներն ինչպես եյին ապրում ցարի ժամանակ. այն համեմատեք մեր բանվորների կյանքի հետ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԳԸ

Մի յերդ դիտեմ յես աննման—
Հզոր մուրճի թափի նմտն,
Վորոտի պես հատու՛ւ, խրո՛խտ—
Մի յերդ դիտեմ յես աննման:

Ծնվել ե նա մութ հանքերի
Մետաղակուռ յերակներից,
Ու ձայն առել քլունգների,
Ցասկոտ ու շեշտ հուր գարկերից:

Մնունդ առել, ջիղ ու արյուն՝
Բանուկ, ուժեղ բաղուկներից,
Գործարանը խանդ ու ավյուն
Շնչել նրան իր ժխորից:

Հմայք ունի յերդս այնպես,
Հողսի ժամին թե վոր յերդես՝
Թախիծ ու վիշտ կչքանա—
Լքված հողուն նեցուկ ե նա:

Հե՛յ, իմ յերդը միշտ աննման—
Հզոր մուրճի թափի նման,
Վորոտի պես հատու՛ւ, խրո՛խտ
Մի յերդ դիտեմ յես աննման:

— Վո՞րն ե բանաստեղծի «աննման յերդը»:

— Ինչո՞ւմն ե այդ յերդի հմայքը:

— Այս վոտանալորի նախավերջին տան մեջ դիտեք, թե նա բառ ինչո՞ւ ե վո՞ր բառի փոխարեն ե գործածված:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

— Այն բառերը, վորոնք դրվում են առարկաների անունների փոխարեն՝ այդ անունները նորից չկրկնելու համար—կոչվում են դերանուն:

— Դերանունները թիվ ցույց տալիս են, թե վոչ:

— Զեր կարծիքով յես, զու, նա, մենք, զուք, նրանք բառերը դերանուններ են, յեթե դերանուններ են, ի՞նչ անվան փոխարեն են դըրվում:

— Կաղմեք գրավոր խոռքեր, վորոնց մեջ գործածվեն այս դերանունները:

Դործարանի սուլիչը սուլում և բա՛րձր-բա՛րձր... Քաղաքի հեռավոր բարձրաբերձ չենքերն արձադանքում են նրան, նոր բացվող արեկի առաջին շողջերի տակ...

Դործարանի մուտքի առաջ կանգ են առնում բոլորը՝ կայտառ ու արևախաչ դեմքերին խաղում և արտասովոր ժպիտը, պայծառ, իմաստալից հայացքներ:

— Ձեզ տեսնենք, — առաջ ե գալիս գործարանի դիրեկտորը, վորի դեմքը պատել ե կեպիկ լայն կողիրյոկի սովերը, իսկ իրանը կքվել կաշվե սինջակի տակ:

Դեմքին ակոսներ և յերկաթե ժպիտ:

— Ձեզ տեսնենք, ամոթով չե՞ք թողնի... Այ, տեսնում եք, բոլորս հարգում ենք ձեզ... իսկ դուք վճռական յեղեք, իսկական բանվոր կազմակերպիչ-պրոպագանդիստներ.

Խճածածկ փողոցով սահում և ավտոբուսը և կանգ առնում գործարանի մուտքի առաջ... սուլիչը սուլում և բա՛րձր-բա՛րձր...

Կաշվե կեպիկ ու պահանջկոտ հայացքների ուղղությամբ Արփիկը շարժում ե գլուխը վճռականորեն ու նստում ավտորուսը չորս բանվորի հետ...

— Մեր վողջույնը կոլխոզնիկներին. յեղեք իսկական հարվածող—ուղարնիկ...

Ավտոն սլանում և ու սլանում առաջ...

— Նրանց տեղն ազատ չենք թողնի, կքերենք նորերին, թերը վեր և քաշում մի բանվոր:

— Այո՛, սոցիալիստական արտադրությունը մի բոպեանդամ չպիտի դանդաղի, ծոր և տալիս մի ուրիշը, իսկ դիմուրը շարժում ե ծանրացած գլուխը:

Գործարանում սկսվում ե աշխատանքային առորյան...

||

Հեռվում, արեկի պայծառ շողերի տակ ժպտում ե գյուղը: Պատերին թառել են կարմիր խալիները... կարմիրների վրա լինին... Շահումյան ու կարմրագույն դրոշները: Պատերի տակ արևակող տված ջահելներ, ծերեր, մանուկներ, վորոնց հայացքո հետեւմ ե դյուղի ուղղածիդ ուղիով սլացող ավտոբուսին...

Ո՛ւ... ո՛ւ...

Դյուղացիք ճամբար յեն տալիս նրան, իսկ նա կանգ և առնում դպրոցի շենքի առաջ:

— Բարեւ, — ասացին բանվորները:

— Բարեւ, — առաջ յեկալ կոլխոզի նախադահը՝ վառվուն ժի յերիտասարդ:

Սեղմում ե նրանց բոլորի ձեռքն ամուր ու կարծես նլեկ-տրական հոսանք և անցնում նրանց միջով... ժպիտ, վողջույն ու բերկրանք:

Բըիգադան անցնում ե աշխատանքի:

— Ընկերներ, մենք հարվածայիններ ենք, ուղարնիկուեր...

Ժպտում են յերիտասարդները, կարդացել են նրանց մասին, բայց չեյին տեսել. ծերերը խորախորհուրդ իրար են նայում, իսկ փոքրիկ մանուկները «հարվածից» վախեցած յետ-յետ են քաշվում...

— Մենք հարվածայիններ ենք... մենք ձեզ հետ սոցիալիզմ ենք կառուցում...

Թռչում են բառերն ու ընկնում, մեխվում են ուղեղներում... գարնանացան, գյուղկոսպ, կովսող, սովխո՞զ... առաջ պիտի գնանք, յրկա՞թ և հարկավոր, կտա՞նք:

Կտա՞նք:

— Իսկը մեր սրտից են խոսում... ձեզ նման աշխատանքի մարդիկ են... բա՛ս...

Մեր թևերի տակ սյուն են տալիս, իսկ մենք կբարձրանք:

Աշխատանքի գարունը կարկաչում ե դաշտերո՞ւմ... խինդ ու յեռանդ կա, աշխատանքի ուժեղ հեք կա գարնան փաշտերում... նորից գալիս ե ավտոբուսը. յետեկց յերկաթե մեքենան—տրակտորը...

Նվեր են բերել:

Նվե՛ր...

Կոլխոզին նվեր են բերե՛լ...

Վազում ե տրակտորը գեպի դաշտերը, անվար աբանը գարնան... բոլորի սրտերը լցնում են խնդությամբ:

— Հաջողություն գարնանացանին,— թռչում ե վերջին խոսքն ու ավտոբուսը հեռանում ե, թողնելով յետեւում բարեկ փոշի:

— Նկարագրեցիք, թե ինչպես են ոգնում բանվորները դարնանացանին:

— Շարադրություն գրեք «Մի որ կոլտնաեսության մեջ վերաբերում»:

ՀԱՐՎԱԾԱՅԻՆԵՐԻ ՔԱՅԼԵՐԳՅԵ

Շշում ե նա ժայռ փորելով
աշխատանքը հարվածային,
տարածվում ե կարմիր յերգով
աշխատանքը հարվածային:

աշխատանքը քլունդների
պատռում են կոչտ կուրծքը յերկրի,
տրակտորները հանդում, գաշտում
հանդում են, բարձր յերգում.

ամենուր, ամենուր, ամենուր
իլլիչի
ծրագիրը տուր:

Ամեն մի փորվածք բահի—
աշխատանքը հարվածային,
թշնամուն և մատնում ահի,—
աշխատանքը հարվածային:

Հինը կորչում եւ պայթում,
նոր կենցաղն եւ ճամբար հարթում,
մի նոր աշխարհ մեզ կըերի
աշխատանքը հարվածային:

ամենուր, ամենուր, ամենուր
իլլիչի
ծրագիրը տուր:

Կնեպրոստրոյի հարուստ հանքում
աշխատանք եւ հարվածային,
քորություն, ուժ ենք կոփում
աշխատանքով հարվածային:

Իսկ բուրժույն իր սահմանից
նոր թալանի ահ եւ տալիս.
բայց ածուխով ու պողպատով
մենք կիսեղենք նրան շուտով:

ամենուր, ամենուր, ամենուր
իլլիչի
ծրագիրը տուր:

Մարտի դաշտում ինայել չկա
աշխատանքն եւ հարվածային,
գուսակարգն ամբողջովին
մի քրիզադ եւ հարվածային:

Մի կետի յեն զարկում նրանք,
վոր հրդեհեն կարմիր բոցով,
վոր ածուխը լավայի պես
հոսի, անցնի ամբողջ յերկրով:

ամենուր, ամենուր, ամենուր
իլլիչի
ծրագիրը տուր:

— Վո՞ր աշխատանքը մենք հարվածային ենք համարում:
— Վո՞րն ե իլլիչի ծրագիրը:
— Դոլրոցականներն ի՞նչպես կարող են իրադորել իլլիչի ծրագիրը:
— Ինչպե՞ս կարտահայտվի հարվածայնությունը դոլրոցական աշխատանքներում:

«ԲՈՒԽՏԱ ԻԼՅԻԶԱ»

Այսպես ե կոչվում նավթաշխարհի այն մասը, ուր Կասպիականը հետ են տվել, նրա մագիլներից իւլել ցամաքը և վիշկաներ են «աճեցնում» այնտեղ:

Դեռ տասը տարի առաջ, այստեղ ծովն ե տարածվել ու ձկների պարը: Իսկ հիմա հաղթահասակ վիշկաներն են ծովափին, ցամաքի վրա, ջրերում:

Ծովը նավթի բույրով ե շնչում: Ծովը լվանում ե վիշկաների վոտները:

Ծովի ջուրը քամում են և կաչալկան նավթ ե քաշում ծովից:

Ծտանգը.—Յերկաթե «անսկիզը ու անվերջ» այս խողովակ'ին ահա իջել ե 518 մետր, ծակոտել հողի կուրծքը. ցեխախառն ավաղ, հող ու քար գուրս շպրտում: Հոտոտում, վորոնում ե նավթը և նրա համար ճանապարհ հարթում:

Անընդհատ կատարելագործում, անընդհատ առաջխաղում: Այսպես ե պայքարում Բագիկ պրոլետարիատը բնության գեմ: Ամերիկյան վերջին մեթոդովն ե նավթը գուրս գալիս հողից, ծովից: Միայն այսպես կարելի յե արդարացնել իլլիչի անունը: Միայն այս կերպ ե կարելի նրա պատղամները կատարել:

Ֆշում ե նավթահամ ծովը: Մերթ թշնամաբար իր ափների հարվածներով հարձակվում ե աշխատանքի այս բերդերի ու աշտարակների վրա ու պարտված հետ նահանջում և մերթ հանդարտ ու սիրալիր շոյում նրանց պատվանդանները:

Փայտե կամքջակները կապում են վիշկաները ցամաքին։
Փայտե կամքջակները դորշ ու նավթու են։ Իսկ ցամաքում
ժանգակալած ու նավթածածկ ջրեր կան, ծիածանի դույնե-
րով, ուր ուրվագծվում են վիշկաների հասակները։

Վիշկաները՝ ցամաքում, վիշկաները՝ ժանգաջրերում,
վիշկաները՝ ծովում, բանվորական ջլուտ բազուկների պես
վեր բռունցքված։

Այդ բազուկները սանձել են ծովը, հետ շպրտել նրան,
նվաճել ցամաքը։ Փամում են հողի թանկագին արյունը։ Մա-
կոտում յերկրի կուրծքը։ Անխնա, անխնա։

Կերտում են նոր աշխարհ։ Այդ հաղթական բազուկները։

ՏՈՆՆԵԼԻ ՃԱՄԲԻՆ

1

Զորագեսում սովորություն եր դարձել, բոլոր վտանգա-
վոր աշխատանքներում առաջին հերթին հանդես եր դաշիտ
իվանը։ Մահն արհամարհելով՝ նա մտնում եր վտանգի ծովն
ու կուռ բազուկներով ամեն մի դժվարություն հաղթահա-
րում։

Ուրբաթ յերեկոյան եր։ Մութը դեռ չեր պատել։

Իվանը հենց այդ գեղեցիկ մայրամուտին վիթխարի
ժայռի մնջքով գոտիանման նուրբ փորձած մի նեղ գծում
կանգնած՝ դիտում եր վար անդունդը։

Իվանի մոտ բարձրացան տեխնիկ ֆյորովը և բանվոր
Ալեքսանը։

Ֆյորովը լուռ եր. նրա ոռւսական վճիռ, լազուրաշող
աչքերում կարելի յեր կարդալ այն ամենը, ինչ վոր մտա-
ծում եր, կարծես թե նրա աչքերը լեզու առած աղաղակում
եյին։

— Ի՞նչ անենք, վոր անվտանգ, առանց մարդկային զո-
ւերի դուրս գանք այս փակուղուց։ Յերբ կլինի, վոր ահար-
կու այս խութը պոկենք։

Մերթ ընդ մերթ ծտերի քնքուշ ծլլլոց եր բարձրանում։
Մոտակա գյուղերից չների հաջոց եր լսվում։ Չորը հետզհետե
խավարով լցվում եր։

— Սարդիս, Հանես, Մուքել, Թեան—տեղի լությունը
խախտելով բարձրաձայն կանչեց իվանը—յեկեք ընկերներ,
դե յեկեք ե՛։

Չորս բոպե չանցած՝ մոտ քսան հողի խճուղու կողմից
բարձրացան վեր։

Նրանք բարձրանում եյին և սարսափով նայում դեպի

ձորն ու վիթխարի պատնեշաձև ժայռին, վորի կուրծքը
պետք ե պատովիր։

Յերբ բանվորները հավաքվեցին, Ֆյործորովը հազար,
կոկորդը մաքրեց ու դիմեց բանվորներին։

— Ընկերներ, ինչպես զիտեք, տեխնիկական հետազո-
տությունը յեկել ե այն յեղակացության, վոր առաջ զնա-
լու միակ յելքը ձորի վրա ուղղահայաց պատնեշ կանգնած
ժայռի կուրծքը պատուելն ե։ Յեթե փորձենք ներքեւից պատ
կանգնեցնել, հազար հոգով յերեք ամսում չենք վերջացնի։
Փորձը կդանդաղի։ Դիտեք, վոր այդ շատ թանգ կնսաի մեզ
վրա։ Մենք պետք ե բարեխղճորեն մտածենք։ Մեզ համար
ենք աշխատում։ Ձո՞րագեսը մեր սեփականությունն ե։ Շատ
վտանգավոր կետի յենք հասել, բայց հույսունեմ և համոզ-
ված եմ, յեթե զգուշությամբ շարժվենք, վոչինչ չի լինի,
անփորձ դուրս կդանք այդ անպիտան փակուղուց։ Յես դըժ-
վարանում եմ մեկ կամ յերկու ընկերոջ առաջարկել, թե վար
իջեք։ Մենք բոլորս ել պետք ե շահագրգոված լինենք մեր
պետական գործերով։ Ընդամենը պետք ե տասը լազում պայ-
թեցնենք։ Ընկերներ, նրանից հետո աշխատանքը կթեթեա-
նա։ Կարիք չի զգացվի վերից մարդ կախելու։ Ո՞վ ե համա-
ձայն ինձ հետ իջնելու։

Մի քանի հոգի մոտեցան պատնեշին, ներքեւ նայեցին ու
յետ դարձան։

Իվանը մուայլ, ունքերը խոժոռած, պոռշներն ատամնե-
րի տակ կրծոտելով կանգնեց ու յերկու ձեռքը մեջ դնելով՝
բղավեց։

— Ընկերներ, խայտառակվեցինք… Այ, մենք սրանով
շանց ենք տալիս, վոր տղամարդ չենք։

Իվանի ձայնը թրի պես կտոր-կտոր եր անում լսողների
սրտերը։ Նրանք բոլորն ել ամբողջ մարմնով դողում եյին։
Նրանց վրա ազգում եր իվանի կապտած դեմքը, բառերի
դրդյունը, նրա հուժկու ձայնը։ Իվանը մի քիչ հանգիստ
շարունակեց։

— Ընկերներ, գործը խաթալու յե, համա չպետք ե վա-
խնանք։ Եգուց պետք ա են քարափի սիրտը հանենք։ Մենք
ընկեր տեխնիկին թողալ չենք կախ ըլի։ Եգուց առավոտը
ո՞վ ե ինձ հետ։

Նա ասաց ու թափանցող հայացքներով փորձեց ընկերնե-
րին մեկ-մեկ բռնել։ Բոլորն ել խուսափում եյին իվանի հա-
րացքներից, միայն Ալեքսանն եր, վոր ժպտաց ու տեղիցը
ցատկեց։

— Յես։ Իվան, յես քեզ մենակ չեմ թողնի։
Հետո մյուսները բարձրաձայն աղաղակեցին։ Մինչ այդ

Նրանք մի տեսակ քարացած եյին: Ալեքսանի «յեսը» քարացած վիճակից նրանց հանեց:

— Յես—ձայն տվագլ յերկորդը:

— Յես—բղավեց յերրորդը:

Յեվ բոլորն ել «յես» կանչեցին ու ժպտացին:

— Յես ու Ալեքսանը—վորոտաց իվանի ձայնը:

— Ուռա՛, ուռա՛, ուռա՛:—Խրոխտ ու հպարտ հնչեց

Ալեքսանի ձայնը:

— Ուռուա՛, ուռուա՛—լոմանք մեքենաբար, վոմանք գիտակցաբար ու խնդասիրտ գոչեցին մյուս բանվորները:

Տեխնիկ Ֆյոդորովը քաղցր ժպիտը շրթունքներին, մոտեցավ, իվանի գլուխը գրկեց: Իվանը կիսախավարի մեջ հաղիվ նկատեց տեխնիկի ժպիտը:

— Ընկերնե՛ր, մութն ընկնում ե, խավարը պատում ե, ել չենք կարող զնալ, շուտ արեք—նեղ արահետը բռնելով ասաց մի բանվոր:

— Հա, տղերք ջան, զնանք,—ասաց Ֆյոդորովը, —միմիայն խնդրում եմ զգուշ:

||

Պարաններով իվանի, Ալեքսանի թևերի տակից կապեցին ու բարձր ժայռից՝ պատնեշի ճակատով վար կախեցին: Նրանք հետները վերցրել եյին լոմ, մուրճ ու դինամիտի պայթեցման փոս փորելու համար այլ պարագաները: Վերից վեց մարդ զավված ե ուշադրությամբ հերթով պարանները պահում եյին: Իսկ այդ պարանները միաժամանակ կապված եյին և վերի քարերից:

Գետը ձորում վորոտում եր, արձաթաշող փրփուրն ու կոհակները ցրում կողերի քարերին: Գետն անչափ գեղեցիկ եր, հրապուրիչ: Բայց նրանք տերեկի պես դողում եյին: Իվանն ու Ալեքսանը վորոշված տեղերում հաղիվ վոտք դնելու նեղ քարի սրունքներ գտան ու վորպես թե ամրացան:

Վար նայելիս նրանց թվում եր, թե գլորվում են անդունդը, կործանվում են: Իվանը հասկանում եր, վոր գերեզման մտնելու համար միայն մի քայլ ե մնացել կատարելու:

Արյունն Ալեքսանի յերակներում հետզհետե սառչում եր: Բոլորովին անծանոթ ու խիստ ցուրտ քրտնքի կաթիւներ եյին հոսում նրա թշներով:

Իվանը յերբ Ալեքսանին նայեց, ցնցվեց, նրան թվաց, թե, դիմացինը գիտակ ե:

— Ալեքսա՛ն, Ալեքսա՛ն, վախիւ մի, ընկեր, վախիւ մի...

Նրանք գործում եյին: Գետք և ժայռի կրծքին փորվեր տասը փոս:

— Ես ա հա՛, ես ա հա՛, բան չի մնացել, պրծել ենք.— Ալեքսանին միշտ սիրու եր տալիս իվանը:

Նրանք բնավ ներքեւ չեյին նայում: Վախենում եյին, վոր շեղվեն:

|||

Մինչեւ խողովակները փորել-վերջացնելը նրանք յերկու անդամ վեր բարձրացան հանգստանալու: Յերբ ամեն անդամ հասնում եյին վեր, ընկերներին, ջերմ փարվում եյին նրանց: Կարծում եյին, թե գերեզմանից են դուրս յեկել: Ժայռի պարանոցը, ուր հանդիստ նստելու տեղ կար, իվանին թվում եր, վորպես «հընկեր լենինի շանց տված կոմունիզմի շեն ու պատ աշխարհը»: Իսկ վար իջնելիս կարծում եյին, թե վողջ-վողջ գերեզման են իջնում: Այդպես եր թվում և վերել վում մնացողներին: Նրանք սարսափի մեջ եյին, թե ահա ժեկն ու մեկը՝ իվանը կամ Ալեքսանը կընկնեն, ջարդ ու հշուղ կլինեն:

Տեխնիկն ամբողջ ժամանակը ցնորվածի պես, անհանդիստ ու ժայռի կատարից, պարանների մոտից մի քայլ հեռու չեր գնում: Մատները բերանումը դրած կրծոտում եր, հեռում:

— Ի՞նչպես կվերջանա... Յե՞րբ կվերջանա...

Տասներորդ խողովակի փորումը, յերբ վերջացավ, ժամի մինչդն եր արդեն:

Ավելի վտանգավոր րոպեները հետզհետե մոտենում էին: Իրիկնազեմի վոսկեշող արեւ գեղեցիկ եր: Ալեքսանն երեն այնքան հանդիստ եր զգում, վոր քիչ եր մնում ծիծավակի: Նայում եր ժպտում: Զե՞ վոր չորս ժամ առաջ նա միայն կարծիւն յեր նման: Ի՞նչպես փոխվեց, ի՞նչպես սովորեց: Յերբ յալտարու պատճառ ու կարեք չկար, Ալեքսանը ժպտում եր: Ի՞նչո՞ւ:

Իվանը վոչ միայն չեր ժպտում, այլև շատ անհանդիստ եր: Նրա կրակու խոչոր աչքերը դալիկանում եյին, անհրաշկույր դառնում: Շնչել չեր կարողանում, շրթունքները չունչույր եյին: Շրթունքներից, մի քանի տեղերից արյան կաթիւներ եյին գլուրվում: Շնոտները շարժվում եյին, իրար կիսչում, չխչակում: Իվանին թվում եր, թե ժայռն ամբողջովին իր կրծքին ե նստած:

Պարանը քաշելը նշան եր: Դինամիտն իջեցրին: Իվանին թվաց, թե չուրջը հրդեհ է վառված, ու բոցերը վիզում են երեն:

Ալեքսանը հիմարացած հա ծիծաղում եր: Իվանը կատարած կամ կածում եր Ալեքսանի մտքի առողջության վրա: Բայց նեղ տեղ եր, պետք եր նրան ել ոգտագործել:

Իվանը դինամիտները պայթեցման համար ամրացնում եր փողերում: Նա խնդրեց Ալեքսանին, վոր յերբ ինքը վերջին դինամիտը կդնի, թող նա առաջինը պատրույզը վառի և պարանը քաշի: Խնդրեց ու շարժվեց:

Ալեքսանն շտապեց: Իվանը դեռ ութերորդ դինամիտը չեր դրել, յերբ ընկերը յերկուսի պատրույզները միասին վառեց: Խոկ այդ յերկու պատրույզից պետք է պայթեյին բոլորը: Ալեքսանը պատրույզները վառեց ու մոռացավ պարանը քաշել՝ վերև ձգելու նշան տալ: Իվանը, յերբ վերջին դինամիտը դրեց ու յետ նայեց, կրակն արդեն հասել եր:

— Կորա'նք—ճշաց նա ու պարանը քաշեց:

— Կրա'կը... կրա'կը... շուտ, քաշեցե՛ք... կորա'ն... աղաղակեց Ֆյուլորովը խելացարի նման:

Դինամիտները դղրդացին... Ժայռակող ձորը հինգ բոլե անընդհատ վորոտում, դղրդում, մոնչում եր:

Մայրամուտին հասած արևը սովորական ժպտով նայում, ծիծաղում եր: Ծտերը ծլվալով ողում ճախրում եյին ուրախ թռչկոտում: Փրփրաբերան գետափին տեխնիկը ծընկաչոք հեռական մահով ընկած բանվորների ջարդված, այլանդակված դիակների առաջ:

Յերեք հարյուրի չափ բանվորներ, հուզված հրհրով եյին իրար, առաջ շարժվում: Նրանք առաջ եյին հոսում ընկերների տրորված դիակը տեսնելու:

Պատնեշածե ժայռը՝ կուրծքն անձոռնի ճեղքված՝ դիտում եր տրորվածներին ու հուզվածներին:

IV

Իվանի և Ալեքսանի յեղբայրական մահվանից յերկու շաբաթ չանցած՝ տոննելի բերանը բացվեց: Սընստ պատները կործանված ե, աշխատանքը հոսում ե, գարնան հեղեղ պես առաջ եր մոնչում: Յերկու շաբաթվա ընթացքում քարհատ թևանը, Սարգիսը, Հանեսը և մյուսներն այնքան սրտություն ու հմտություն են ցուցաբերել, վոր զոհված ընկերներից նրանց համբավը մի քիչ ել անցել ե:

— Տղերք ջան, դե հա, ջան. տոննելը բանանք, եղ տոննելը մեր մեռած ընկերների գերեզմանաքարն ե:

Նրանք ասում են ու քարերը կրծում, պոկում, ցրում:

— Ի՞նչ անում կտայիք զուք Իվանի և Ալեքսանի վարժումքնեւ:

— Գտե՛ք պատմվածքում այն հատվածները, վորանցաւմ հեղինակը պալիս և հերոսների ասլրումները:

— Եժբախտության դլխավոր պատճառը վո՞րն եր:

ԶՈՐԱԳԵՍ

Վայրեջքով վազում ե մեքենան: Չորի հակառակ ավին, հսկայական ու կանոնավոր, բերդի պարիսպների նման շարված պղնձագույն ժայռերի ուսերի հարթության վրա, փրուկել և կուրդանը և դիտում ե հեռուները:

Բարձրակառար ժայռերի ստորոտներին ծվարած ահա տախտակյա տներ—հիղը կայանի կառուցման դրասենյակն են բանվորների ու ծառայողների կացարանները: Սակայն այնպես հանգիստ վուված այս վողորմելի «տներն» ավելի ուժեղ են, քան դիմացի կարծը ու բարձր ժայռերը: Զե՞ր պոր այս տներում ապրող մարդիկ անդամահատում են հսկայական ժայռերը, խախտում նրանց պատվանդանը, ծակում նրանց կուրծքը և դարերով ստրկորեն նրանց վոտքերը լիզող կետի հունը փոխում:

Մենք այցելում ենք այդ տախտակե «տները»:

Միանման այս բարակներում, ապրում են բանվորներն ու ծառայողները, այստեղ ե տեղավորված գրասենյակը, բանակումբը, ընթերցարանը:

* *

Պրոլետարական դինամիտի հարվածներից վիրտվոր ժայռերի միջով անցնող նորակառույց ճանապարհով, յերշեմն ել տախտակաշեն, յերկարածիգ աստիճաններով բարձրանում ենք, շրջում բոլոր կողմերը, դիտում ենք Զորագեսն եր բոլոր աշխատանքներով:

Ներքեւում, ժայռերի սուր ժանիքներում, խցում ե փըրփըրուն Զորագետը:

Խցում ու անցնում ե անտարբեր, սակայն նրա հանդեպ, այդ բարձրաբերձ վիթխարի լեռան ստորոտում, մերոնք արդեն փորել են յերկարածիգ թունելը:

Խտացած խավարում կուտակված քարերի վրայով լուց կու աղոս և Հաճախ հանդչող լույսի առաջնորդությամբ, յերշեմն չորեքթաթ, անցնում ենք թունելի մի ծայրից մինչև մյուսը:

Հսկայական աշխատանք ե կատարված: Արդյունքները վերազանցապես խոստմնալից են:

Յեկ շուտով, շատ շուտով ուժի և լույսի փառավոր հաղթանակը կտոնվի, ժայռակուտակ այս ձորերում:

Սակայն բնության դեմ մզվող այս անհավասար պայքարում, զոհեր ել են յեղել: Ժայռերը հեշտորեն չեն հանձնել իրենց դարավոր դիրքերը:

Ընկել են մարտիկներ, սոցիալիստական շինարարության այս փառավոր ճակատում:

Հարդա՞նք նրանց:

Բայց դասակարգը շարունակել է իր գործը: Մարտիկների խտացված նորանոր շարքերը, կարող հրամանատարների առաջնորդությամբ, տարել են պայքարը և տանու են, մինչև նրա լիակատար հաղթանակը:

Վողջույն նրանց:

Բարակ անձրեի ուղեկցությամբ բռնում ենք վերադարձի ճամբան:

Յերկինքն սպառնական վորոտներով և ճամբու դնում մեղ:

Սարերից կաթնաղույն հեղեղով իջնում և մառախուղը: Նա փարզել է լեռնագաղաթներին ու նաղանքով իջնում, լցնում է ձորերը:

Դվարի բարձունքներում նա խիտ ամպի յե վերածվում ու սպառնում կտրել մեր ճանապարհը և մոլորեցնել ավտոմեքենան:

Սակայն փորձված շոֆերն իր գործը դիտե:

Առանց փոքրիկ իսկ դանդաղեցման՝ մեքենան շարունակում է իր ճանապարհը:

Գնում ենք կաթի հեղեղի միջով:

Դվարի ամենաբարձր դադաթին, չորս կողմից փովոյ հեռակարը փակվել է:

Սպիտակ և ուրիշ վոչինչ:

Շրջվում ենք Դվարլով:

Վայրեջի հետ անհետանում և մառախուղը:

Մութը նստում է արդեն:

Կտրում ենք Դվարի ձորը և ուղիղ շոսեյով արշավել սկսում ավտոմեքենան:

— Բաժանեցեք այդ հոդվածն առանձին մասերի և յուրաքանչյուր մասին դրեք համապատասխան վերնագիր:

— Այս և ձեր կարդացած մյուս հոդվածների հիման վրա նկարագրեցեք Զորագեսի շինարարության պատկերը:

— Նշանեցեք հոդվածում այն մասերը, վորտեղ հեղինակը նկարագրում և Զորագետը:

ԿԱՐԳԱՅՑԵՔ ԱՅՍ ԽՈՍՔԸ

Ներքեում ժայռերի սուր ժանիքներում, խշում և փրփրուն ջորակացներում:

— Այս խոսքի մեջ սուր և փրփրուն բառերը ի՞նչ նանակությամբ և գործածված:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

— Այն բառերը, վորոնք գրվում են բայերի, գոյականների և ածականների վրա—տարբեր կողմերից լրացնելով նրանց իմաստը— կոչվում էն ածական:

— Կազմեք ինքնուրույն միքանի խոսքեր, վորոնց մեջ գործածվեն ածականներ:

— Գրեք այնպիսի ածականներ, վորոնք ցույց տան իրենց հետ գործածվող բառերի վորպիսությունը—վորակը, քանակը և դասավորությունը: Այդ ածականներով կազմեք խոսքեր և գրեք ձեր տետրակում:

ԶՈՐԱԳԵՍՈՒՄ

Ախորժալուր ձենիդ մատա'ղ,
Զորագեսի ուրախ դիզե'լ,
Զվարթ յերդիցդ ուրախանում
Ու հրճվում եմ, ահա, յես ել:

Մի ժամանակ ես ձորերում
Հովվի շվին եր շընդշնդում,
Հիմա թնդուն գուղոկդ ե
Այս վայրերի մեջ զնդում:

Մի ժամանակ ես սարերին
Սոված գայլերն եյին վոռնում.
Հիմա նրանց ծմակներին
Հաղարաչյա լույսեր վառլում:

Ուժ ես տալիս Զորագեսի
Շենք ու չնորք բետոններին,
Կուչ ե գալիս ու գալարվում
Քո լույսերից մեր թշնամին:

Կլկացող ձենիդ մատա'ղ,
Զորագեսի յերգիչ, դիզե'լ,
Հաղթանքներիդ ուրախանում,
Ծա՛փ եմ տալիս յես ել, յես ել...

- «Զորագեսում» վոտանավորը համեմատեցեք «Ալազանի» «Զորագես» պատմվածքի հետ:
- Ի՞նչ նմանություն կա դրանց բովանդակության մեջ:
- Ի՞նչ տարբերություն եք դանում դրանց մեջ:
- Փորձեցեք այդ վոտանավորը վերածել արձակ պատմվածքի:

ՍիբիրուիՄ

Տեսա Սիբիրը յես,
Կուղնեցկատրոյը մեծ
Վիթխարի դոմնաներ
Ու մարդիկ,
Հաղթանակ տեսա յես,
Ու հալոցք մետաղի,
Մետաղի պես տոկուն
Բյուր մարտիկ:

Տեսա հերոսական
Այն մեծ բանակը մեր,
Խանդավառ տեսա յես
Պայքարում,
Նրանց կամքը հաղթող
Յեվ ուժը տեսա յես
Ամեն մի աղյուսում
Ու քարում:

Այնտեղ գիշերը յես
Ցերեկի պես տեսա,
Ցերեկը՝ նույնպես
Ցերեկի,
Աշխատանքը համառ,
Կյանքն անմար տեսա
Մոցիալիստական
Վերելքի:

Տայդաները կտրած
Մարդիկ տեսա այնտեղ,
Վորոնք յելել եյին
Պայքարի,
Վորոնք յեկել եյին
Իրենց ուժը տալու
Սիբիրի յերկաթին
Ու քարին:

Կիրդիղների հզոր
Բանակներ տեսա յես,
Քրտնած ճակատներով
Յեվ արի,
Աչքերի մեջ նրանց
Ուժի կրակ տեսա,
Զայների մեջ կամքը
Վիթխարի:

Յեվ այս բոլորի մեջ
Յես արել տեսա
Մոցիալիստական
Սիբիրի,
Սիբրս վառվեց նրանց
Կրակներով անմար,
Բարեները տվի
Իմ յերկրի:

ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԵՏԱԽՈՒՅՑՆԵՐԸ

Հարյուրավոր նոր քաղաքներ, հազարավոր գործարաններ—ասելը հեշտ է: Ալա ինչի՞ց: Ախար չե՞ վոր ողից չի կարելի չինների: Շենքերի համար եղքան աղյուս, ցեմենտ, ապակի կունենա՞նք: Մեքենաների համար եղքան յերկաթ կունենա՞նք:

Դատարկ տարածությունները—դրանք կավ են, ավագ, քար:

Անտառները—դրանք գերաններ են, տանիքներ, սյուներ, չպալներ: Տորֆի ճահիճները, ջրերը—դրանք ելեկտրական հոսանք են:

Կավից ու ավաղից աղյուս ենք շինում, կավից ու կրից ցեմենտ, յերկաթահանքից—յերկաթ:

Առաջին խնդիրը, վորից պետք ե սկսել, դա հետախուզությունն է: Առանց հետախուզության չի կարելի կոփին սկսել:

Ամեն տարի գիտական արշավախմբեր ենք ուղարկում հեռու յերկրները—բեկեռային ըրջանից ել դենը, կազմակըստանի անապատները, Ալույան և Պամիրի լեռները:

Հետախույզներն ասում են, վոր մենք դեռ ամենեին չենք ճանաչում մեր յերկիրը:

Կարելիայում, բևեռային շրջանակից են կողմը, տունդրաների մեջ նրանք դտել են ահաղին խիբնյան լեռները: Ու դիտե՞ք, թե ինչից են կազմված եղ լեռները: Ամենաարժեքավոր հումույթից—նեֆելինից ու ապատիտից: Նեֆելինը մեղ ապակի կտա, ապատիտը սուպեր-ֆոսֆորատպարարտանյութ մեր դաշտերի համար: Ես հումույթից են-տեղ տասնյակ հարյուրավոր տոնն կա:

Ղարազում անապատում հանդիպեցին տարորինակ բլուրների: Կարծես թե հսկաները խաղ են արել ու ավազից աղյուսներ են շինել: Յերբ քանդել են եղ բլուրները, բանից դուրս ե յեկել, վոր դա ավազ չի, այլ ավազի ծծումքի իսառնուրդ: Իսկ ծծումքը մենք գնում ենք իտալիայում, հեռվից ենք բերում և մեծ փող վճարում:

Ծծումքը մեզ պետք ե և թուղթ և ռետին պատրաստելու համար: Ծծումք են սրսկում բամբակի և խաղողի վրա, վնասատուներից նրանց ազատելու համար:

Ու հանկարծ բանից դուրս ե դամս, վոր մենք ինչքան ասես ծծումք ունենք:

Հետախույզները Սիբիրում մի լիճ դտան, վորի հատակին ինքն իրեն նստած սողա կա: Իսկ սողան ենպիսի մի նյութ ե, առանց վորի ոճառ չի կարելի յեփել. վոչ միայն ոճառ, այլ և ուրիշ շատ իրեր: Իսկ ենտեղ նստած ե լճի հատակին, ինչքան ուղում ես վերցրու:

Յակուտիայում մաքուր քարաղից վիթխարի ժայռեր են դտել, գիպսի հսկայական բյուրեղներ, կաղակստանումկառուկ և այլն և այլն:

Բայց հետախույզներն աշխատում են և մեր քիմիական լաբորատորիաներում:

Հումույթ մենք շատ ունենք, անհանդստանալու բան չկա, — տորֆը ելեկտրականություն ե, իսկ յեղենու անտառները՝ թուղթ:

Դետնի տակ մենք ածուխ, յերկաթ, ցինկ, պղինձ ու նենք: Կուղնեցիկ շրջանում (Սիբիր) 400 միլիարդ տոննից ավելի (յերեվակայելն ել դժվար ե) ածուխ ունենք:

Իսկ յերկաթ: Մի՞թե մի քանի տարի առաջ մենք դիտելինք, վոր ներքին-Պովոլժայում յերկաթ կա. իսկ հիմա ենտեղ շինվում ե Խոպերի մետաղաձրւական գործարանը, վոր տարեկան 650 հազար տոնն չուգուն կտա:

Նավթ ե գանվել Պերմից 40 կիլոմետրի վրա: Գիտնականներն ասում են, վոր մեր յերկրում նավթ պետք ե լինի Միջին Վոլգայից մինչև Ռուսական:

Մի խոսքով մեր յերկրի հանքային հարստություններն անսպառ են: Ու մենք այժմ աշխատում ենք ամեն տեսակ մեքենաներ շինող մեքենաներ պատրաստել, վոր ամեն ինչ ունենանք մեր յերկրում և ամբողջ հարստությունը գետնի տակից հանելով, բոլորինս դարձնենք:

— Հնդկամյակի վերջին — յեղափակման տարին և հետախուզական աշխատանքը:

— Ի՞նչ նշանակություն ունի հետախուզական աշխատանքի ծավալումը:

— Խորհրդային Հայաստանում, վո՞ր շրջաններում են հետախուզական աշխատանք կատարում:

— Շարադրություն դրեցեք «Արդյունաբերության զարգացումը» և հետախուզական աշխատանքը — վերնադրով:

ԼՈՒՅՍԵՐԸ

Ամեն յերեկո, յերբ խավարը սև քուլաներով սփուզում ե ձորում, հիդրոկայանի բանվորական շենքերի մոտ պայծառ ու զվարժ շարվում են լույսերը: Տարվում են ելեկտրական լույսերն ու ժամանակակից շենքերը, ասես կանչում են նայողներին գեպի ժամանակավոր շենքերը, ուր մինչքնելը լսվում ե բանվորների խոսք ու զրույցը, ծիծաղն ու յերաժշտությունը:

Բայց ահա հետզհետե մարում են ձայները բանվորական տներում ու համատարած լուսից յան մեջ սկսում ե իշխել գետի վշշոցը, կարծես գիշերները, ոգտվելով խավարից, գետը թագուն վարարում ե:

Յերեմն այդ միալար համերգը խանգարում է յերկաթուղու շոգեկառքի անհանդիսա սուլոցը, վոր կրկնվում է ձորում արձագանքելով ու հետզհետե հանգչում: Յերեմն ել մի մոլոր քամու կտոր ե գալիս ձորն ի վեր, թեթև սուլում ե ու պատեպատ ընկած ճամբար յե փնտում իր համար:

Իսկ ձորի յեղերին, ժայռերի վրա ձգվում են, պառկում հսկա ստվերները, նայում չարաշուք աչքերով ներքենի լույսերին ու մելամաղձ հոգով ականջ դնում գեպի հին, հին վշշոցին:

Գիշերվա այս հանգստյան ժամերին տոննելներում անընդհատ յեռում ե աշխատանքը: Այստեղ, լեռան ներսը, ինչ վոր խորհրդավոր մարդիկ, իրենց լարված մկանները միացած մեքենային, համառորեն պատռում են ժայռի կուրծքը, ուղի յեն բանում ջրի համար:

Գիշերվա այս ժամերին ձորալանջի կածաններով լույսեր են շարժվում, յերբեմն խումբ-խումբ, յերբեմն զատկատ: Տոննելի բանվորներն են դրանք, վոր վերջացրած իրենց հերթը, վերադառնում են մոտակա գյուղերը հանդըստանալու: Նրանք բոլորը լապտերներ ունեն ձեռներին—վտանգավոր նեղ կածանները լուսավորելու համար: Խորհրդավոր են թափառում այդ լույսերը, նրանք մերթ ծածկվում են ժայռերի հետեւում, մերթ նորից հայտնվում: Ութվում են հեռվից, թե մարդիկ չեն շարժվողները, այլ լույսերն իրենք են թուլում հսկա լուսատիտիկների նման—ոճապլատույտ կածանների վրայով:

Այս գիշեր Ակորն ել լապտերը ձեռքին բարձրանում են ձորամտի կածաննով: Նա մենակ ե, ինչ վոր գործով ուշացել ե, հետ մնացել ընկերներից:

Ծանր ե վերելքը, բայց նա սովոր ե, չի նկատում՝ նա քայլում ե, մտածում որվա դեպքերի շուրջը, ու այս ու այն թփի, ծառի նշանով սովոր աչքերով չափում ե մնացած տարածությունը: Յերբեմն նա կանգ ե առնում շունչը հետ բերում, նայում ներքեվի լույսերին: Ու միշտ այդ բոպեներին մի արտասովոր ուրախություն ե գալիս Ակորի մեջ, կարծես մի նոր, խանդակառ աշխարհ ե այնտեղ, ուր ընկնողը մոռանում եր իր անձնականն ու առորյան:

Բագից ե յեկել Ակորը, յեկել ե այնպիսի բուռն յեռանդով, ասես մի յերկու որում ուզում ե վերջացնել ամբողջ հիդրոկայանը: Տոննելի աշխատանքից հետո հանգստյան ժամերին ել նա հանգիստ չի նստում, գյուղում—կոլյսողին ե ծծվում ու իր թափով վարակում, շարժում ե բոլորին:

Կանգնում ե Ակորը, ճամբին շունչ առնում, նայում ներքեի լուսաշխարհին, մտածում ե, ահա կանցնի մի յերկու տարի, հիդրոկայանը կյանք կտա նոր գործարաններին, իսկ այնտեղ, ձորի լանջին, ժայռի վրա կրարձրանա լենինի հսկա արձանը, ու լույսերով վողողված աչքերը կրարձնի դեպի հեռուները...

Ու այն ժամանակ Ակորը, նայելով այդ բոլորին, կղզա, վոր ծանր աշխատանքի որերից միայն մի մեծ քաղցր հիշողություն ե մնացել մեջը...

Յերբ Ակորը մոտեցալ աղբյուրի ժայռին, հանկարծ ինչ վոր շփմոց ընկավ ականջը,—կարծես մեկը կածանի մի կողմից մյուսն անցավ, հետեւից շարժելով մանր քայլերը: Նա կանգ առավ ականջ դրեց: Լուռ եր չորս կողմը, հեռվից լսվում եր միայն դետի վշշոցը:

«Գուցե գայլ եր, կամ թափառական շուն», անցավ նրա ժառքով. բայց իսկույն նրան ցնցեց մի ուրիշ յենթաղբու-

թյուն.—«Իսկ յեթե թշնամիներից, գյուղի կուլակներից եր... չե՞ վոր ամենոր նրանք սպառնում են կոլյսողի պատճառով»...

Նա շարժվեց առաջ դանդաղ, զգույշ քայլերով: Արդեն մտածում եր, թե ինչպես պիտի անդեն պաշտպանվի հարձակման դեպքում.—գուցե հանգնի լապտերը և փոխի ճամբան...

Բայց մինչ այդ անելը, հանկարծ յետեկից,—թագստից դուրս թափվեցին յերկու հոգի ու հարձակվեցին նրա վրա: Պայման եյին գրել-լուռ մնալ, վոր չճանաչվեն. բայց մեկը նրանցից չհամբերեց, կատաղած ձայն տվեց:

— Ա՛յ յես քու յեկած ճամբեն անիծեմ:

Մի ակնթարթում Ակորը յետ դարձավ, նկատեց խանչալի փայլը, նույն վայրկյանին մյուս հարձակվողը փայտի հարվածով կոտրեց, փշրեց նրա լապտերը: Ու սկսվեր կոփվը մթության մեջ: Չնայած տեղացող հարվածներին, Ակորը վրա ընկավ ձեռքերն արյունոտելով բռնեց մեկի խանչալից, ու ճգնում ե խլել նրա ձեռքից, բայց այդ ժամանակ մյուս ընկերը մեկ—մեկու վրա խփում եր յետեկից խանչալի բերանով, վախենալով ծայրը խրել մարմնի մեջ, վոր սպանությունն իր վրա չընկնի: Յերբ Ակորը մի ուժեղ հարվածով դլորեց գետին իր դիմացինին, իսկույն յերեսը դարձրեց դեսպի մյուս ախոյանը, բայց վերջինս, նկատելով իր ընկերոջ անկումը, թողեց ու փախավ:

Ակորը նորից դիմեց գետի առաջին հարձակվողը, բայց սա յել անհետացել եր:

Նա մի փոքր առաջ անցավ, ականջը ձայնի պահած կանգառավ մի քանի բռպե, վոր թված մի յերկար ժամ, բայց ձայն-ծալտուն չկար: Վերջապես համոզելով, վոր վտանգ չկա, նա շարունակեց իր ճամբեն: Հանկարծ վոտքի տակը զբնդացին ապակու կտորներ: Նա խորը թախծով կանգնեց իր կոտրած լապտերի մոտ. ասես հրաժեշտ եր տալիս մեռած ընկերոջ ու վերցնելով լապտերի յերկաթե կմախքը, առաջ անցավ:

Հաղիվ մի քանի քայլ արած, նա զգաց, վոր արյունահոսությունն ուժեղանում ե: Վերքերը մժմժում եյին. արյունը ծծվում, սառչում եր շապիկի մեջ: Նստեց մի քարի վրա, հանեց շորերն ու պատառոտելով շապիկը, մի կերպ կապկաց վերքերը: Յերբ վեր կացավ տեղից, գլուխը պտտվում եր, թուլացած մարմինը հրաժարվում եր շարժվելուց: Խարխափելով մթնում, շարունակ դեմ ընկելով, քարերին, թփերին, նա յերկար շարչարանքից հետո ուժապառ տուն հասավ:

- Ո՞վ եր Ակոբը և վո՞րտեղից եր յեկել:
- Ի՞նչ աշխատանք եր կատարում նա գյուղի կոլխոզում:
- Ովքե՞ր եյին Ակոբի վրա գիշերով հարձակվողները և ինչո՞ւ յին ցանկանում նրան սպանել:
- Վորոշեցեք Ակոբի բնավորության գծերը:
- Ակոբի վրա գիշերով հարձակվելը—դասակարգային թշնամության պատճառով եր, թե՞ անհատական:
- Այս պատճվածքը հետաքրքրությամբ ե կարդացվում, թե՞ վոչ, յեթե հետաքրքրությամբ ե կարագցվում՝ կարո՞ղ եք բացատրել, թե ինչու:
- Ողտվեցեք հեղինակի նկարագրությունից և շարադրություն գրեցեք՝ «Գիշերը Զորագեսում»:

ԱՌԱՋԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Տաք քամին հալեցրեց դաշտերի ձյունը ու գրոհեց դեպի Մայմեխի լեռնալանջերը. առատ ձյան գերությունից ազատված գետինը չնչում եր հողի դուրալի հոտով, ուռել, փափկել եր:

Մի շաբաթ ե, ինչ հինգ բրիգադն ել մեղվի նման ներս ու դուրս եյին անում գյուղից դաշտ, պարարտանյութ շաղտալիս, ամեն մեկը գիտեր իր հողը, իր պարտականությունը:

Դանելանց Սերգոն շատ գոհ եր բրիգադների վերակազմությունից: Իր ձմեռը պահած յեղները համարյա ըստիսեցին և թողին իր գութանի վրա:

Իրիկունը, յերբ Սերգոն յեղների կերն եր տալիս, բրիգադավար Մաշակն յեկավ ու ասաց, թե առավոտը վարի յենք դուրս գալու, հենց վոր սիզնալ կլինի՝ գութանն ու յեղներն իրենց սարքով հաղիր լինեն, վոր հավաքվեն կոռպերատիվի առաջը:

Վողջ իրիկունը Սերգոն չքնեց:

Գնաց գոմ, յեղների առաջ խորոք մի-մի խորոմ ավելացրեց, դուրս յեկավ բրիգադավար Մաշակի բակը, ջոկեց իր գութանը, տնտղեց անիլիները, վինտերը, խոփը, դանակը, կանչեց Խորենին, գութանը նրա հետ բարձրացրեց, սայլի մեջ դրեց: Հետո նա խորենին պատվիրեց ամբողջ ողակը հավաքել գոմ, յետ դարձավ տուն:

Սերգոյի կինը կաթը նոր կթել, դարակի վրա յեր դրել: Սերեխեքը հորը տեսնելուն պես՝ յետ քաշվեցին կրակի առաջից. մեծ աղջիկը Հերիքնաղը ջուր բերեց, վոր հայրը ձեռները լվանա, հաց ուտի, քնի և շատ զարմաղավ, յերը

հայրը պատվիրեց աղն ու քրեղանը հանի, աղաջուր սարքի: Մի յերկու պատառ հաց ու պանիրը ուտելուց հետո, Սերդոն ճրագը մի ձեռին, աղաջուրը՝ մյուս, գոմ մտավ: Խորենն ու հոտաղներն արդեն սպասում եյին նրան:

Սերգոն թեկերը քշտեց ու ջահելներին գործի դրեց. մկնեցին յեղների ուսն աղաջրով տրորել մինչեւ ուշ գիշեր:

Թե յերբ մտավ անկողին և յերբ վեր կացավ Սերգոն եղիչեր, վոչ վոք չխմացավ: Գիշերը կուսրջիջի քարտուղար եմինը, կոլխողի նախագահ Հմայակը քաղաքից յեկած քարդկանց հետ նստել եյին միչեւ կես գիշեր: Միգնալն ուշանում եր, մինչդեռ յեղները կուշտ կերել սպասում եյին: Կուլակ Բարսամը Սերգոյի տան կողքից անցնելիս՝ խոր բարեմեց ու խոսքի բռնվեց, թե եղ ի՞նչ թաղարեքի մեջ եք, Սերգո, վար եք անելո՞ւ, կեսորից հետո:

— Հա, կոլխողի բրիգադներով հիմա զնում ենք վարի, — ասաց Սերգոն:

— Դե կոլխող ա, վարը կեսորին կոկսեք, գարնանցանն եւ աշնանը հազիվ պրծնեք, — կուշտ ծիծաղելով յեղրակացրեց Բարսամն ու ասաց, — ձեռ քաշի, ա՛յշի, կոլխողից, բրիգադս վորն ա, ողակս վորը, քանի կոլխողում մնաս, ենքան վատ:

Սերգոն հազիվ զսպեց իրեն ու նրա խոսքը կտրեց.

— Հա, ետենց ե մեր բանը, գնա, խրատներդ քեզ պահի, մենք լավ գիտենք, թե ում վերջն ա վատ:

Բարսամը թշնամական հայացքավ նայեց ու շուռ յեկավ:

Մինչդեռ Սերգոն մտքի մեջ հաշվում եր, թե ինչ եր անշրաժեշտ վարի համար ու ինչն ե ինքը մոռացել, թե ամեն ինչ իր տեղն ե արդյոք:

Հետո Սերգոն գոմ մտավ ու նրա յետեխց ողակը, դուրս երին տաս յեղն ել: Բուրչիկն ուրախությունից մկնեց տըրուինդ տալ, Ղարագյողը հեղ աչքերով Սերգոյին եր նայում: Լուծերը հագցրին ու հերթով կապեցին շղթայով: Հորիքի հմայակը նստեց սարքատակի լծին ու գլուխը շուռ տվեց ու կեղների զլուխը շուռ տվեց դեսի դեղամեջ: Սերգոն հանկարծ նոր հիշեց, վոր խոփը մաքրելու համար բահ չի վերցրել, մեկ ել ուրագը:

Մինչեւ Հերիքնաղին կանչելը, մինչեւ բահն ու ուրագը ձարելը, Սերգոն գութանից յետ ընկալ ու վախենալով, վոր յետ կընկնի հարվածային մաճկալներից՝ վաղեվազ, չնչալուր հաղիվ հասաւ:

Առաջինը գուրս եր յեկել Հակոբ Անտենյանի ողակը:
Հրապարակի մեջ կանգնել եյին Եմինը, Հմայակը, քա-
ղաքից յեկած բրիգադն ու կոլխոզնիկներ:

— Բարի լուս ձեղ,—ասաց Սերգոն ու դարձավ դեպի
Խորենը, վոր յեղնասայլով գութան եր բերում,—քշի՛ր գա-
քա՞ր դա, խա՛ռնիլ մի:

— Բարի լուս, քեռի Սերգո,—կանչեց Հմայակը:

— Մրցանակի յետ արժանի, Սերգո բիճա, 30 րոպ. եռ
գուրս յեկել, ամեն ինչ սարքին ա՞ , յեղները կուշտ ե՞ն, թի-
մարած ե՞ն,—սկսեց հարց ու փորձը Եմինը:

— Սարքինը, սարքին ա, համա մեզ շատ սպասեցնել
միք, ձեղ մատադ. գործը դայիմ բռնեք, Բարսամի հոգի՝
հանենք:

— Ուրագն ինչի համար ես վերցրել, կորիվ չպիտի գնա-
ցո, —մեջ ընկավ են կողմից վահանը, ծաղրանքով ցույց
տալով, թե ինչպես ուրագը Սերգոն խրել եր գոտին:

— Չե, քո գլուխը թուցնել պտեմ, բան ա, պատահմունք
ա, մի բան կիոտրի՝ կսարքենք, —խոսքի տակ չմնալով
պատասխանեց Սերգոն:

Մինչ դեռ, մինչ դեն, մի քանի րոպեյում հրապարակը
լցվեց մարդկանց, յեղների բազմությամբ, գութաններով,
սայլերով:

Ամենից վերջը հրապարակ հասան հինգերորդ բրիգադի
յերկու գութանները:

Տղերքն սկսեցին վերջին յեկողներին ձեռ տունել.

— Արա, կեռն, յեղներն ե շաշ, թե հորիքչին, Բեյրու-
թի ողակը ճամբեն շշկել ե, դրա համար ե ուշացել: Սկսեց
մեկը, ակնարկելով հորիքչուն, վորի աչքերը շիլ եյին:

— Բեյրութ, Բեյրութ, սելիդ ակը պտուտ ա գալիս,
իբրև թե անսովոր մի բան ե պատահել, գոռում եր մեկի
ծաղրանքով:

— Արա, յեղան նալը վեր ընկավ...

Խեղճ Բեյրութը գլուխը կորցրեց, ինքն իրեն վրա բար-
կանալով, թե ինչու յե ուշ յեկել:

Մինչեւ բոլորի հավաքվելը, Հմայակը դասավորեց բրի-
գադները ողակ-գութաններով հրապարկում և մոտակը
փողողներում:

Սիգնուից 40 րոպե անց ամեն ինչ պատրաստ եր, բո-
լորը հրապարակումն եյին:

— Հաղթել գութանները—դոռաց Հմայակը:

— Գութանը վեր բեր—կանչեց Սերգոն Խորենին, վոր

նստած եր սայլին. գութանները իջեցրին ու հազցրին անիվ-
ներին:

Քիչ եր մնում Խորենի խամության պատճառով գութա-
նը ամրացնելն ուշանար, շղթան կարճ եր, չեր հասնում:

— Ծոփ, թեքի գութանը ձախ, —պնդեց Սերգոն ու տըն-
քալով, գոռով հազցրեց շղթան:

— Բրիգադ առ բրիգադ, ըստ ողակների, դեպի խարա-
տի դաշտը մարշ...—գոռաց կոլխոզի նախադահ Հմայակը
ձիշտ այնպես, ինչպես կարմիր բանակում յեղած ժամանակ:

Գութանների վերստանոց շարքը ձգվեց դեպի դաշտ,
վողջ բազմությունն ել նրա հետեւից:

Համզաշիմանն այդպիսի բան իր որում չեր տեսել:
Սերգոն ուրախությունից արտասվում եր:

Վորոշեցին փորձնական վարն սկսել դպրոցի հողամա-
սում:

Հինգ բրիգադների առաջին ողակները բաց արին առա-
ջին սե ակոսները, տասն ու հինգ գութան մի քանի րոպե-
նում սեացրին դաշտը: Յեղները խամացել եյին ու դժվար
եյին լուծը քաշում, ծոռում եյին գութանն աջ ու ձախ, ենքան
չարացել եյին շատ յեղներ, վոր կոտրում եյին լուծն ու
փախչում: Դերձյանի գութանի անիվը դուրս յեկավ ու հա-
ջորդ գութաններն ել կանգնեցին:

Համզաշիմանի կոլխոզն առաջին քննությունը բռնեց.
Փորձնական վարն անցավ հաջող: Հրահանգ տրվեց վարը
դադարեցնել:

Սերգոն շուռ տվեց գութանն աջ, թափեց վերջին հողա-
կոշտերը խոփի բերնից ու պառկեցրեց ձախ կողմի վրա:

Գեղամիջում բացվեց բազմամարդ միտինգ. գութանա-
կորներին ընդունեցին ուռաներով: Յերբ կարդացին պար-
շելատրվողների ու խախուսանքի արժանացնողների ցու-
զակում Սերգոյի անունն ել. Սերգոն բարձրացավ սայլի վրա
ու ասաց:

— Ընկերներ, մենք հիմա չի, վոր մրցանակ-պիտի
ստանանք. յերբ ցանենք, հնձենք, կալսենք, շատ բերք ստա-
նանք, են վախտը տվեք իմ մրցանակը:

1. Նկարագրեք կոլխոզի աշխատանքային կյանքը:

2. Ինո՞ւ կոլեկտիվ-բրիգադային աշխատանքի ձևն ուրախ տրամա-
գրություն և առաջացնում աշխատողների մեջ:

3. Այս պատմվածքում ինչ բարբառային ասույթներ կան, փորձեք
դրանք գրականի վերածել:

ԿԱՐԴԱՑԵՔ ԱՅՍ ԽՈՍՔԵՐԸ

— Սերգոն մտի մեջ հաշվում եք, թե ինչ եք անհրաժեշտ վարի հոմաք ու ինչ եք ինքը մոռացել...

— Դիտեք այս խոսքերի մեջ թե բառը, այդ բառն իր նշանակությամբ չաղկապ ե՞, թե՞ վոչ:

— Ի՞նչ նշան է դրված խոսքի մեջ թե շաղկապից առաջ:

— Ու, և շաղկապներից առաջ ստորակետ դրվում ե՞, թե՞ վոչ:

— Ել, մանալանի, վոչ միայն—այլև, հետևաբար, վոչ թե—այլ բայց, սակայն իսկ, կամ, մինչեւ բառերը նույնական շաղկապներ են՝ գործածվելիս խոսքի մեջ նրանցից առաջ դրվում ե ստորակետ:

— Կազմենք մի քանի գրավոր խոսքեր, վորոնց մեջ այս շաղկապները գործածվեն:

ՀՆՁՎՈՐԸ

Տխուր և զնդում գերանդին,
Հասկերը շըշում են—«ուշ ե»—
Ինչքան ել յեռա յեռանդից՝
Գերանդին արդեն անուժ է:
Յերբ արդեն հնձող մաշինան
Շափշափում ե շախին յեռանդից
Շպրտում ե խուրձերը շինած,—
Ել ո՛ւր և զնդում գերանդին:
Ե՛յ, քոնն ե հունձը, մաշինա-
Տխո՞ւր և զնդում գերանդին:

— Ո՞ւմ բերանով ե այստեղ խոսում բանաստեղծը:

— Ինչի՞ կողմն ե հեղինակի համակրանքը՝ գերանդո՞ւ, թե մաշիննան:

— Ինչի՞ կողմն ե հեղինակի համակրանքը՝ գերանդո՞ւ, թե մաշինայի:

ԿՈՄԲԱՅՆ „ԴԱՇՏԵՐԻ ՆԱՎ“

Կար ժամանակ, յերբ Սալսկի տափաստանը նմանվում էր հանգիստ, խաղաղ անապատի: Այդ հանգստությունը խանգարեցին 40 կոմբայն, վորոնք սկսեցին աշխատել սովորող «Գիգանտ»-ում հացը հավաքելու ժամանակ: Իսկ այժմ հարյուրավոր կոմբայններ են աշխատում:

Ի՞նչ ե կոմբայնը:

Կոմբայնը գյուղատնտեսական մի բարդ մեքենա է: Նոր գյուտ չե: Նա մի քանի բոլորովին իքնուրույն և վաղուց հայտնի՝ խրճակապ կալսիչ և զտիչ մեքենաների միացում:

և: Խնդիրն այն է, վոր այդ յերեք մեքենաներն այժմ միասին և միաժամանակ աշխատում են վորպես մի բարդ մեքենա:

Կոմբայնը հնձում ե արտը, կալսում ե և ցորենը լցնում պարկերը: Այս ամենն անում ե շարժվելու, գնալու ժամանակ:

Տրակտորին կպած, նա արագ շարժվում ե դաշտի միջով. նրա կողքին ամբացած ե խրճակապի նման մի բան: Յերկար գերանդիները հնձում են հասկերը, վորոնք հետո տարվում են կոմբայնի ներսը: Այստեղ նրանք ընկնում են բարաբանի տակ. գորեն և ծղնոտ խառնվում են իրար:

Այստեղից հատիկներն ընկնում են զտիչ մասը, ապա վորպես մաքուր ցորեն թափվում ե հատուկ պահեստը: Այս պահեստն պարունակում է յերկու տոնն հացահատիկ: Ծղողը բարաբանի տակից դուրս գալով, կոնվեյերով հետեւ դուրս ե նետվում և դարսվում:

Կոմբայնը շատ ոգտավետ է, 10 ժամվա մեջ 12 հեկտար տեղ հնձում ե և կալսում: Կոմբայնով բերք ժողովելը յերկու արժան ե նստում, քան առանձին-առանձին մեքենաներով:

Խրձկապով ժողովելով մենք շատ հատիկ ենք կորցնում նրանք թափվում են զետին, իսկ կոմբայնը վոչ մի հատիկ չէ կորցնում:

Բայց կոմբայնը փոքրիկ տնտեսության մեջ չի կարող պշատել. նա խոչոր մեքենա յե և անհարմար աշխատելու փոքրիկ հողամասերի վրա: Միայն կոլխոզի դաշտերում կարող ե պետք դալ կոմբայնը:

Մեղ մոտ կառուցվել են արդեն միքանի կոմբայնի հոկանորդարաններ, վորոնք տարեկան արտադրում են տասնյակ հազարավոր կոմբայններ:

ԵԿՍԿՈՒՐՍԻԱ

I

Ս.ՀԱՆՐԵ VI խումբը եկակուրսիա կատարեց գեղի Վաշարշապատի շրջանը, ուր տարածվում են բամբակի դաշտերը սպիտակին եյին տալիս. լավ մշակված դաշտերում հավասար, ուղիղ շարքերով ձգված եյին բամբակի ցանքսերը: Ցողունի գլխին, աջ ու ձախ փոքրիկ տուփերի մեջ հասել են բամբակի սպիտակ, քնքուշ փաթիլները: Կոլխոզի կանայք ուրախ յերգերով հավաքում եյին հասած բամբակը, ցնում մեծ կողովները:

— Մրանք դեռ կանաչ են, — ցույց եր տալիս կոլտնտե-

սուհի Վարդուշը. — դեռ փակված են. յերբ հասնեն, բայց վեն, ելի կզանք ժողովելու:

— Ո՞ւր եք տանում բամբակը:

— Բամբակազտիչ կործարան. մենք կոնտրակտացիա յենք կապել 20 հեկտար բամբակ ցանելու, ցանել ենք 25 հեկտար, մշակել ենք զյուղատնտեսի խորհուրդով և բերք սպասածից ավել ենք ստացել, մրցանակ ենք ստանալու, մեր մսություն ու հրապարակը ենք հարստացնելու. մենք ենք մշակել բամբակի դաշտերը՝ կանայք. տղամարդիկ ցանել են, ջրելու հեռացել:

Ամբողջ որը արեի տակ ենք աշխատում, շատ ենք չարչարվում. բայց ուրախ ենք, վոր կոնտրակտացիայի պայմանները 100 տոկոսից դեռ ավել են կատարվել. մսություն ու հրապարակն ել մեզ շատ են ողնել. յերեխաների հոգսը մեկ վրայից վերցրված եր, լավ ել աշխատեցինք: Ստացել ենք մանուֆակտուրա, շաքար, հաղուստ, կոշիկներ:

Վաղոն նայում եր դաշտին, բամբակի թփերին, տեսնում եր՝ ինչպես արագ ու վարժ եյին ժողովում կանայք բամբակի փափուկ ճերմակ փաթիլները:

Յերեխաները դաշտից վերցրին բամբակի թփեր, կոլեկցիայի համար:

II

Վաղարշապատից յերեխաներն ավտոյով յեկան Յերևան բարմբակազտիչ գործարանը:

Ամայի դաշտում նոր կառուցված գործարանի ու բանվորների բնակելի շենքերն եյին ձգված:

Հատուկ թույլատվությամբ մտան գործարանի բակը:

Բամբակը դաշտերից նոր եյին բերում գործարան. բամբակի հսկայական կույտերը ծածկված եյին բրեզենտով:

Անցան ներս. ջրի մեքենաներն ամրացված եյին ուղիղ զուգահեռ շարքերով. բոլորն աշխատում եյին. բամբակը ջրի նման խողովակներով ներս եր հոսում, անցնում մեքենաների շարքերի միջով ու մյուս կողմից դուրս սողում. մի կողմից սպիտակ բամբակի շերտերն են իրար վրա ծալվում, մյուս կողմից հունդն եր հավաքվում ու խողովակներով անցնում ներքեւ հարկը:

Բամբակին անցնում եր կողքի շենքը, և այստեղ հատում մամուլի ճնշման տակ կապվում եյին հակերը:

Այդ հակերը տարվում եյին դուրս, հատուկ յերկաթուղարշումայի վրա դարսվում, վորտեղից ապրանքատար վագոնների մեջ դարսելով՝ ճանապարհում ելի գործարանները:

— Տար, տար, շուտ տար բամբակը, շուտ տար, վոր կոոր տանանք—ասում եր պահակը ժպտալով:

Յերթ գնացքը— շարժվեց, ու բամբակով բեռնված վագաններն արագ-արագ վազեցին դեպի կայարան, յերեխաներն ընկ. Լեռնի հետ մի քիչ ել բամբակազտիչ գործարանը դիտեցին ու անցան «Զեթ ոճառ» գործարանը:

III

«Զեթ-ոճառը» ամբողջապես աշխատում եր հունդով. հունդից ձեթ եյին ստանում, ձեթի լավ տեսակը տալիս բանկոպիին վաճառելու, իսկ վատ տեսակից ոճառ եյին պատրաստում:

Հունդից մնացած թեփը գործադրում եյին հենց նույն գործարանում վորպես վառելիք, իսկ բոված հունդից ձեթ ստանալուց հետո, մնացած քուսպն ել վաճառքի յեր հանդապիին վառելում. քուսպը շատ լավ կեր ե կենդանիների համար, վառելանյութ, պարարտանյութ:

— Բամբակից վոչինչ չի կորչում, — ասում եր «Զեթ-ոճառի»—վարիչը, — նույն իսկ այս թափվող ջրերից գլիցերին ենք պատրաստում:

Յերեխաները տեսան բանվորների մաքուր, հարմար բնակարանները, ակումբը, ճաշարանը, ամբուլատորիան ու վերադարձան Յերեխան հանգստանալու:

— Եղ բամբակի յետելից գնանք, տեսնենք վերջն ինչ և վիսում, — ասում եյին յերեխաները:

Կգնանք Լենինական, մի որ ել կմնանք այդտեղ, տեքստիլ գործարանը կտեսնենք ու կվերադառնանք տուն, — ասաց ընկ. Լեռնը:

Յերեխաների ուրախությանը չափ չկար. վորոշել եյին հավաքած նյութերով մի լավ կոլեկցիա կազմել, այնպես ինչպես վոր կար մանկավարժական թանգարանում:

IV

Յերեկոյան գնացքով ուղեվորվեցինք Լենինական:

Լենինականում շատ նոր տներ եյին կառուցվում. հենց կայարանի մոտ յերկաթուղայինների ակումբի նոր շենքներ:

Ակումբը լավ կահավորված եր ու շատ հարմարություններ ուներ-թատրոն, գրադարան-ընթերցարան մսուր, մանկապարտեղ, պարապելու սենյակներ:

Ակումբը դիտելուց հետո անցանք տեկստիլը:

— Շատ հաջող ժամանակ եք յեկել, եքսկուրսիայի որ ե.

այժմ անցել ենք հարվածային աշխատանքի և ամեն որ հյուրեր չենք ըստում,—ասացին դրասենյակում:

Տեկստի գործարանի բաղմաթիվ շենքերը, բանվորների բնակարանները—բոլորը նոր կառուցված շենքեր եյին: — Գնանք, դնանք մեր բամբակի յետելից, —ասաց վաղոն:

Այստեղ մանրամասն, քայլ առ քայլ հետեւեցին ու տեսան, թե ինչպես բամբակը մանում են, դանաղան հաստության թելեր դարձնում ու մանածից զանաղան գործվածքներ պատրաստում. մեքենաների յերկար շարքերի մեջ յերեվում եյին բանվորուհիների կարմիր թաշկինակները. բանվորներն ու բանվորուհիներն արագ ու վարժ, լուրջ հետեւվում եյին իրանց մեքենաներին. մեքենաներն ել հնաղանդ կատարում եյին մարդու պատվերը:

Լենինականի գործարանում պատրաստում եյին բյաղ, սպիտակ կտորներ, իսկ տրիկոտաժի բաժնում՝ գուլպա, ֆուֆայկա, տրուսիկներ ու այլ գործվածքներ: Վաղոն ամեն տեղ կտորներ եր հավաքում:

— Այ կոլեկցիա կկազմենք հա՛... թող ամենքն ել տեսնեն, թե ինչպես բամբակը դառնում ե սիրուն կտորներ... Վորքան շատ բամբակ — այնքան ել շատ կտոր կունենանք:

Եքսկուրսիան վերադարձավ գյուղ. մի շաբաթվա մեջ յերեխաները կարողացան դիտել բամբակի դաշտերը, բամբակագոտիչ ու տեքստիլ գործարանները:

— Ի՞նչ նշանակություն ունի բամբակի նշանակության համար պայքարելը:

— Բամբակը մշակման ինչպիսի պրոցեսներով ե անցնում:

— Ի՞նչպես պետք է ապահովել կանանց մասնակցությունը բամբակի մշակմանը:

— Զեր գյուղի կոլխոզում ի՞նչպիսի կուլտ-կրթական աշխատանք ե տարբում, դուք մասնակցում եք արդյո՞ք այդ աշխատանքներին:

— Ի՞նչպիսի տպավորությամբ վերադարձան աշակերտները եքսկուրսից:

ԲԱՅԼՇԵՎԻԿ Ե ՇԻՐ-ԿԱՆԱԼԸ (Նախերգան)

I

Յեկել եմ...

Յեկել եմ, վոր մի շնչում յերգեմ յերգդ այն զիւ-հնչուն, վոր ձուեցին պոյետներդ յոթհարյուր յոթ որվա միջում:

Յեկել եմ, վոր վողջունեմ այն վայրերին քո սիրառուն, Աւր դարերով յերբեմն միայն ծղրիդներն եյին խոսում...

Յեկել եմ...
Յեկել եմ համբույր տալու այն յերաշտած կոշտ-հողերիդ, Վորոնց միջից առատորեն կաթ ու մեղք ե այսոր հոսում: Դո՛ւ, Շի՛ր-կանալ, վոր հազարանց քրտինքների միջից բար, Երանց քրտինք գետեր շինած դարձար խորհուրդն աշխատանքի, Դո՛ւ, վոր հազարների քլուզ այսում մի նոր կյանքին: Առաջ կողջույնի և հրճվանքի յերդն եմ բերում քո դաշտերին Յեծ վողջույնի և հրճվանքի յերդն եմ բերում քո դաշտերին: Յեկ հիացմունք բոլոր աղջի, բոլոր յերկրի պոյետներին:

II

Բայլշեվիկ ե Շիր-կանալը... այն վայրերը լերկ ու բարբար վորոնք իրենց ծնված որից այրի եյին—մերկ-անապատ՝ Այսորից հետ հազնելու յեն սիրակարու հարսերի պես զուք-զարդաված խաս ու կանաչ, թավիչ, մետաքս, զառ ու զարբար: Մի հմայող վոլորտումով, արծաթափայլ գրավչությամբ շիմա հեռո՛ւ հեռուներն են ձգվել ցանցերն Շիր-կանալի. Այսպես գրկել, այնպես ծծում հողի շուրթը ազահությամբ, Վոր կասես թե հողն ե տնքում պինդ համբույրից սիրահարի: Վո՛չ մի թիզ հող, վո՛չ մի ավան և վո՛չ մի գյուղ խոչկանդ դաշտից Զուում ես վոր չի՛ տանջվելու այսուհետեւ բարկ յերաշտից:

III

Բայլշեվիկ ե Շիր-կանալը... և գյուղերը գիրկն առածունցել ե իր արյունատար յերակներով համատարած. Մեկը պիտի հազարների մասին հողա—մի զեկավար— հազարները խանդով վառված պիտի հողան մեկի համար... Հրեն կապսը սարին կանդնած հովականչի ձե՛ն ե տալիս, Թե՛ հե՛յ, լսե՛ք, հրես ջրիս ձե՛նն ե գալիս, ձե՛զ ե գալիս... Զանդ ե առել Պոլիդոնը և սիրահար կույսի նման Քրքջում ե ու սպասում, վոր գան գրկեն, սիրեն իրան. Անհամբեր ե Որթաքլիսան, բարախում ե սիրտը նրա, Ցնծությունից շունչը պահած քիչ ե մնում ճշա, պոռա. Յերազում ե թոփառլվան, աչքով անում Ղոնախրանին, Հասկանում ե Հայի-նազար ու կանչ անում հարեանին:

Մեր բայլշեիկ Շիր-Կանալը ուրիշ փահմ ու սամթ ել ունի. Ջիւլորի սանձը ձեռքին հսկա ուժով ելեկտրոնի Պիտի շարժի ու փոթորկի գործարաններ ու ֆարբիկներ. Ջրաղացներ, սղոցարան, ալեկոծի հող ու ցանքեր:

Այն յերկիրը, վոր դարերով քարացել եր ու ցամաքել՝ Այսորից յետ պիտի յերդի աշխատանքի հզոր յերդեր: Շատ ե լացել համը լացով Շիրակը իր դարդի մասին, իսկ այսորից նա լի թոքով թող ամենից բարձր խոսի: Շատ ե տանջվել ու տոկացել անհարազատ մարդոց ձեռքին, իսկ այսորից թող նվաճի ու տիրանա իր նոր կյանքին: Ու կտանջվեր նա ել նորից, թե չնվեր հաղթ պատանին, թե չհասներ Շիր-Կանալը—բայլշեիկը Հայաստանի:

— Թե՛ հե՛յ, լսե՛ք, հրես զրիս ձե՛նն ե գալիս, ձե՛զ ե գալիս: — Վոտանավորի այս տողում դիտեք այն բառերը, վորանց վրչտ, կամ յերկարացման նշան կա: — Այդ բառերը խոսքից ի՞նչ նշանով են բաժանվում: — Բոլո՞ր բառերն են խոսքից բաժանվում ստորակետով, յե՞րը նրանց վրա դրված մինում չեշտ կամ յերկարացման նշան. ձեր հանած վորոշումը գրեք տետրակում: — Կազմեք այնպիսի խոսքեր, վորոնց սկզբում կամ միջում գործած վեն ե՛ս, ա՛խ, վա՛յ, ըհը՛, ե՛յ, պա՛ պա՛ բառերը:

ՄՈՐԵՒԻ ԴԵՄ

Գարուն ե բացվել. ծիծաղկոտ գարուն: Նորածիլ արտն ու խոտը բոյ են քաշում. դաշտերը կանաչ մախմուրով են ծածկվել: Գյուղացիք ուրախ են. առատ բերք ե սպասվում: Մեկ ել դյուղում լուր տարածվեց, թե դաշտերում մորեխ ի յերեացել: Մորեխ ճանաչողներն ասում եյին, թե մորեխ ասիական տեսակի յե: Ի՞նչպիս են կովելու մորեխի դեմ. «Մորեխակուն» սկսվեց: Մարդիկ բահ ու թի առած՝ իջնում են դեպի դաշտային տեղերը, վորպեսդի յերկար ու ձիգ հորեր փորեն, արխեր կտրեն, վոր արշավող մորեխի առաջն առնեն. բայց այս պապենական ձեւ զդալի ոգուտ չի տալիս:

Գլուխները կորցրել են:

Հենց եղ նեղ ժամանակն եր, վոր մեկ ել են տեսան, յեր կընքի յերեսով մի հսկա «պողպատե թուչուն» մեծ աղմու կով—դռուալով—գալիս ե:

— Աերոպլան... աերոպլան...

Աղմուկ, իրարանցում... վազում են հա վազում...

Սավառնակն իջավ գյուղի ծայրին: Վողջ գյուղը գլխին թափվեց: «Պողպատե թուչունի» «փորից» դուրս յեկան մի քանի հոգի:

— Կանչեցե՛ք Ավիոքիմի սեկցիայի նախադահին: Կոմքջիջի անդամներից մեկի հետ ներկայացավ նաև վիոներ-սեկցիայի նախադահը, մեր Գուրգենը:

— Մեզ հետ թունավոր գեղեր ենք բերել, վոր թունավորենք արշավող մորեխին: Բացի սավառնակով թունավոր փոշի շաղ տալուց, անհրաժեշտ ե, վոր գեղը խառնենք նաև թեփի, փայտի թեփի, կենդանիների աղբից չորացած փոշու հետ, վոր ինքներդ ցրվելք ճանապարհին, ի՞նչ կարելի յե դանել ձեզ մոտ...

Գյուղացիք իրար յերեսի նայեցին, ի՞նչ կարող են տալ, շատ-շատ փեյին, են ել հիմի չորացած, փոշի դարձածը վո՞րտեղ ճարեն...

— Ընկեր,—խոսում ե Գուրգենը,—մեր կոլեկտիվն ամբողջ ձմեռը հավաքել և ամբարել ե սղոցարանի ամբողջ թեփը, հրենը, դպրոցի փայտանոցը լիքը, կարող՝ եք վերցնեք. փը, հրենը, դպրոցի փայտանոցը կիր ել կա. միայն պետք ե պարիզյան կանչ կամ միշյակա թթվուտային նատրի... բերե՞լ եք...

Սավառնակով յեկած ընկերն ուրախությունը չկարողավ գապել. նա գրկեց Գուրգենին:

— Իսկ դու վո՞րտեղից գիտես այդ գեղերի անունները. իմ քաջ տղա:

— Կարդացի:

— Այժմ մենք կհաղթենք վոչ միայն մորեխին, այլև մեր բոլոր թշնամիներին,—ուրախությամբ լի սրտով գոչեց նորելը:

— Միշտ պատրաստ,—բացականչեց Գուրգենը:

Գյուղամիջում թույն են պատրաստում մորեխի համար, ջուր են կրում, լցնում տակառները, չանգած կիր և փայտի թեփը պիոներական կոլեկտիվը և դպրոցի աշակերտները կրում են ու կրում:

Պատրաստ ե:

Այժմ գործը մեծերինն ե. գեղը սայլերով կրում են, տանում դեպի դաշտերը, հեռու, վոր շաղ տան: Բայց այս գեղը թունավոր ե նաև անսառների համար. կարող են կանչ հետ միասին ուտեն ու թունավորվեն:

Պիոներ-կոլեկտիվի անդամները հերթով պահակ են կանգնում ցերեկները, զգուշացնում հովիվներին ու հոտաղ-

ներին, վոր անասունները հեռու պահեն թունավորված դաշտերից ու արտատեղերից:

Սավառնակը հեռվում, գետնից մոտ 5—10 մետր բարձրության վրա թռչելով՝ թունավոր փոշի յեր ցրվում: Աշխատանքը յեռում է:

Դաշտերն աղատված են մորեխից:

Սղոցարանը չի աշխատում այլիս: Բալաբեկն ու իր ընդերն զբաղված են դաշտային աշխատանքներով. նրանք կրկին գերան են սղոցելու ձմեռը: Բալաբեկը հեռվից կանչում եր ընկերներին.

— Հը... Աղալո, եհե՛ Աղալո՛... գեղի աչքը լիս յեղի, լի-լի՛ս...

— Հա, ախպեր, քու ասածն ա, քու ասածն ա, Գուրութենը խելոք տղա յա...:

Ապա մոռանալով, վոր դաշտային աշխատանքի յեր, ավելացրեց:

— Քաշի, քաշենք, որը մթնեց:

— Քաշի, քաշենք, համա թեփիը դեն չածենք:

Հանդես ե: Ճառեր խոսեցին մորեխը վոչնչացնելու և Արվիոքիմի մասին: Խոսակցության առանցքը պիոներ-կոլեկտիվի տարած աշխատանքն ե: Ճառախոսը վերջացնում է ճառը.

— Պիոներ-կոլեկտիվ, համաշխարհային հեղափոխության համար պատրաստ:

— Միշտ պատրաստ,—թնդում ե պատասխանը:

Սավառնակը թռավ վորոտալից ծափերի ուղեկցությամբ:

1. Ի՞նչ վնասատուներ են յերեացել ձեր դյուլում և ինչպէս են պայքարում այդ վնասատուների դեմ:

2. Ի՞նչ մասնակցություն եք ցույց տալիս դուք այդ պայքարում:

ԹՐՅՈՒՐՆ ՈՒՏԻ ԶՈՐԱՆԱ, ԽԵՂԱ ԲՈՍՏԱՆՁԻՆ ԶՈՐԱՆԱ

Ա. բոստանչի,

բոստանչի,

բոստան դնել

մի բան չի,

բոստան դնել

ի՞նչ ոգուտ,

յեթե չտա

յեկամուտ.

ունես հաղար
խնամի,
հաղարն ել քեզ
թշնամի,
կարկուտ, խորշակ,
տոթ, քամի,
ել լոնչ հաշվեմ
մի առ մի.
յեկ ու քրտինք
դու թափի:
Բա թիթեռը
կաղամբի.
անպիտանը
թարսի պես,
քողը գըխին
հարսի պես,
գիշեր-ցերեկ
սուս ու փուս
մաղ ե շինում
ամեն բույս,
դեհ դու ցանի
կանաչի,
թիթեռն ուսոի
ու աճի
արի, ընկեր
բոստանչի,
խերդ ու շառդ
ճանաչի,
արի հինը
քո ծալի,
կարդա դիրքը
«Մաճկալի»:
«Վնասատուն
կաղամբի»:
Են աշխարհը
դու ճամպի,
տունդ քանդող
թրթուրին,
քո խնամի
թիթեռին,

նրա ածած
ձվերը—
եղ խնամուղ
նվերը,
թե չե, քո հին
հանճարը
տուն չի բերի
բանջարը:

ԼԵՐԱՆ ԱՐԾԻՎ

Եես Լենինի հետ առաջին անգամ ծանոթացա 1903 թ.՝ ձիչտ ե, այդ ծանոթությունն անձնական չեր, այլ հեռակա, զբաղբության կարդով։ Բայց նա իմ մեջ թողել ե անջինք տպավորություն, վորը յես չեմ մոռացել կուսակցության մեջ կատարած իմ աշխատանքի ամբողջ ընթացքում։ Յես այն ժամանակ Սիրիում աքսորական եյի։ 90-ական թվականների վերջերից սկսած և հատկապես 1901 թվից, «Իսկրա»-յի հրատարակությունից հետո, Լենինի գործունեյության հետ ունեցած ծանոթությունս ինձ հանդել եր տվել այն յեղակացությանը, վոր մենք հանձին Լենինի ունենք մի անսովոր մարդու։ Այն ժամանակ նա իմ աչքին սոսկ կուսակցության ղեկավար չեր։ Նա նրա փաստական ստեղծողն եր, վորովհետեւ միայն նա յեր, վոր հասկանում եր մեր կուսակցության ներքին եյությունը և անհետաձգելի կարիքները։ Յերբ յես նրան համեմատում եյի մեր կուսակցության մյուս ղեկավարների հետ, ինձ շարունակ թվում եր, վոր Լենինի զենակիցները—Պլեխանովը, Մարտովը, Ակսելը և մյուսները—Լենինից ամբողջ գլխով ցածր են կանգնած, վոր Լենինը նրանց համեմատությամբ սոսկ ղեկավարներից մեկը չե, այլ բարձրագույն տիպի ղեկավարը, լեռան արծիվ, վոր չգիտե ինչ ե վախը պայքարում և կուսակցությունը խիզախորեն առաջ ե վարում ուստական հեղափոխական շարժման անծանոթ ուղիներով։ Այդ տպավորությունն այնքան խորը նստեց իմ սրտում, վոր յես անհրաժեշտություն զգացի նրա մասին գըքել իմ մի մոտիկ ընկերոջ, վոր այն ժամանակ եմի զրացիայում եր գտնվում, նրանից կարծիք պահանջելով։ Մի քանի ժամանակ անց, յերբ յես արդեն Սիրիում աքսորական եյի, —այդ 1903 թ. վերջերքին եր, —յես ստացա իմ ընկերոջ խանդակառ պատասխանը և մի պարզ, բայց խորապես բովանդակալից նամակ Լենինից, վորին, ինչպես պարզվեց, ընկերոջ ծանոթացրել եր իմ նամակի հետ։ Լենինի նամակը համեմատաբար մեծ չեր, բայց նա տալիս եր մեր կու-

աղցության պրակտիկայի խիզախ, անվախ քննադատությունը և մոտակա շրջանի համար կուսակցության աշխատանքի ամբողջ պլանի զարմանալի հստակ ու սեղմ շարադրումը: Միայն Լենինը կարող եր ամենախճճված բաների մասին գրել այդքան պարզ ու հստակ, սեղմ ու համարձակ, իր յուրաքանչյուր նախադասությունը վոչ թե խոսում, այլ կրակում է: Այս պարզ և համարձակ նամակը ե'լ ավելի ամրապնդեց իմ այն կարծիքը, թե հանձին Լենինի մենք ու նենք մեր կուսակցության իռուն արծվին: Չեմ կարող ներել ինձ այն բանում, վոր Լենինի այդ նամակը, ինչպես շատ ուրիշ նամակներ, չին ընդհատակյա աշխատողի սովորության համաձայն կրակին հանձնեցի:

Այդ ժամանակվանից սկսվեց իմ ծանոթությունը Լենինի
հետ:

ՓՐԵՇՆԱԿԱՆ ՎԱԼՈԴՅԱՆ

Ընկեր Լենինի քույրը պատմում է.

«Ամառը Վալոդյան վազում եր բակում, այցում, բարձրանում եր ծառերի վրա, մեղ հետ զանազան խաղեր եր խաղում։ Առանձնապես սիրում եր կրոկետ խաղար։ Զմեռը սիրում եր փոքրիկ սահնակով սղղալ սառցե թլրակից, վոր շինված եր լինում մեր բակում, սիրում եր նաև ընկերների հետ ձնագնդի խաղալ։

Ամառը մենք մեր ծնողների հետ հաճախ հյուր ելինք
զնում կազանի նահանդի կոկուշկինո գյուղը, մեր ազգական-
ների մոտ։ Այստեղ Վալոդյան շարունակ գյուղի յերեխանե-
րի հետ եր լինում։ Նա քաղաքից իր հետ գյուղն եր բերում
դանապան գույնի կոճիներ և գյուղացի յերեխաների հետ կո-
ճի յեր խաղում և հաղիվ եր պատահում վոր տարբեր, և
այդ գյուղացի յերեխաներին մեծ ցալ եր պատճառում։

Յերբ հասակավորները զնում եյին դաշտ գիշերապահու-
թյան, Վալողյան նրանց խնդրում եր, վոր իրեն ել տանեն,
ասելով.—«Յես ձեզ համար պատրաստե լեմ թեյ, շաքար-
կրակ կանեմ, ճյուղեր կկտրտեմ»: Բայց նրանք մերժում եյին
ու ասում .—«Զե, Վալողյա, դու փոքր ես, ի՞նչպես կարող
ես մեզ հետ գիշերապահության դալ»:

Բայց Վալորդյան ինքն իրեն սրտապնդելով՝ հաճախ նրանց հետքը բռնած, գիշերապահության տեղն եր գնում:

Վալողյացի ամառային սիրելի զվարճություններից ե-
րին՝ ձկնորսությունը և լողալը, իսկ աշնանը սիրում եր

թուչուններ վորսալու այլ և այլ թուչուններ գնել։ Նա թուչուններին յերկար չեր պահում վանդակում, շատ շուտով արձակում եր։

Վալոդյայի հասակակից ընկերներից վոչ վոք չեխաներ սրա նման զվարճանալ և չարություն անել։ Նա շատ ուրախ և ընկերություն սիրող յերեխա յեր։

Վալոդյան սիրում եր չարություն անել, բայց և սիրում եր լավ սովորել։ Նա գրել-կարդալ և սովորել հինգ տարեկան հասակում, մեր մոր ոգնությամբ։ Վալոդյայի հետ միասին կարդալ և սովորել նաև քույրս—Ռիման։ Նրանք յերկուսն ել ընթերցասեր եյին։ Կարդում եյին մանէական դրֆեր, մանէական ամսագրեր։

Նրանք շուտով սկսեցին ուռւաց պատմությունից պատմվածքներ կարդալ, վոտանավորներ սովորել։ Ընթերցանությունը վերջացնելուց հետո քույր ու յեղբայր դուրս եյին վագում, գնում խաղալու։

Ինն ու կես տարեկան հասակում Վալոդյան մտավ գենախայի առաջին դասարանը։ Նա սովորում եր հեշտ և սիրով։ Նա շատ ընդունակ եր ու աշխատասեր։ Հայրս եր սովորեցրել թե՛ նրան և թե՛ մեզ բոլորիս—լինել ջանասեր և դասերն ու աշխատանքները կատարել ճիշտ և ուշադիր։ Վալոդյան թե՛ իր բացառիկ ընդունակությունների և թե՛ դասարանում դասերին ուշադիր լինելու շնորհիվ, տանը դասերի վրա շատ ժամանակ չեր դործ դնում։ Նա միայն թեթևակի վերստուգում եր դպրոցում անցածները։

Յերեկոները մենք յերեխաներս ու մեծերը նստում եյինք մեղանատան մեծ սեղանի շուրջը՝ մեկ ընդհանուր լապտերի տակ մեր դասերն ու աշխատանքները կատարելու։ Վալոդյանիր դասերն արդեն վերջացրած եր լինում և սկսում եր կատակներ անել։ Փոքրերին ծաղրել-բարկացնել։

— Վալոդյա, բավական ե, հանդիսա կաց։

— Մայրիկ, Վալոդյան խանգարում և պարապել։

Բայց Վալոդյան նստելուց ձանձրացած՝ սկսում եր չառություն անել, դես ու դեն պտտվել։

Վալոդյան բոլոր դասարաններումն ել սովորում եր լավ բոլոր առարկաներից ել հավասարաչափ առաջադեմ եր։

Նա չափազանց բարի յեր և ուրիշների կարիքների մասին մտածող։

Վալոդյան դեռ վաղ հասակից հետաքրքրվում եր քաղաքական կյանքով ու աքսորյալների վիճակով, վորոնց մասին նրան պատմում եր նրա մեծ յեղբայրն՝ Ալեքսանդրը։ Վալոդյան շատ եր հետաքրքրվում բանվորների ու գյուղացիներին։

Եթ վիճակով։ Նա իրեն հուզող բոլոր խնդիրները քննում եր իր մոտիկ բարեկամների, դպրոցի և խաղընկեր հասակակիցների հետ միասին։ Նա աչքի յեր ընկնում իր բացառիկ յեռնդով՝ կամքի ուժով և ընկերների վրա ազդելու հմտությամբ, համոզելով և ապացուցելով նրանց իր կարծիքների հշտությունը։

Յերբ նա ավելի մեծացավ, ամբողջ որերով գրքերից վուխը չեր բարձրացնում։ Նա վոչ միայն գիտեր գրքեր կարդալ, այլև գիտեր նրանց ուսումնառիրել-կազմում եր կոնսպեկտներ, արտադրում հատվածներ, վորպեսզի հիշի ամենակարևոր տեղերը։

Նա գրքերից բաժանվում եր միայն զբոսանքի կամ զրույթի ու վիճաբանության համար իր այն փոքրաթիվ ընկերների հետ, վորոնք նույնպես պատրաստվում եյին իրենց նվիրելու հեղափոխական գործունեյության։

Վալոդյան իր հարազատներին շատ եր սիրում, մանականդ մորս, վորի կարծիքներին շատ ուշադիր եր։ Վալոդյան սկսել եր ծխել. մայրս վախենալով, վոր ծխելն նրա առողջությունը կվնասի, սկսեց համոզել նրան, վոր ծխելը թողնի բայց մորս բերած պատճառաբանությունները ծխելու խնասակարության մասին չազդեցին Վալոդյայի վրա։ Այն ժամանակ մայրս հիշեցրեց նրան, վոր նա չունենալով սեփական աշխատանք, ավելորդ ծախս, թեկուղ կոպեկանոց, պետք ե թույլ տա իրեն (այդ ժամանակ մեր ամբողջ ընտանիքն ապրում եր մորս ստացած փոքրիկ կենսաթոշակով)։

Մորս այդ խոսքերից ազդված Վալոդյան ընդմիշտ թուեց ծխելը։

Վերջը փոքրիկ Վալոդյան փոխեց դարձավ ընկեր Լենին, բանվորների ու գյուղացիների առաջնորդը և ուսուցիչը։ Նա մեծամեծ գործերի հետ չմոռացավ առանձին մարդկանց կարիքը։ Նա իր ամբողջ կյանքը նվիրեց բանվորներին և գյուղացիներին, ողնելով նրանց մեծ թե փոքր կարիքների ժամանակ։ Նա մի առանձին ջերմ սիրով զրուցում եր նրանց հետ խորհուրդ տալիս, սովորեցնում եր նրանց հեխափոխական կովին, աշխատում եր ողնել ամեն մեկին, վորքան կառող եր։ Բայց միևնույն ժամանակ ել գիտեր ուրախ կատակեր անել։

ՅԵՐԿՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Առաջին անգամ յես Վաղիմիր իլյիչին հանդիպեցի նու արտասահմանից 1917 թվին Պետրոգրադ վերագրագավ։

Մենք նրան կայարանում ընդունեցինք: Ընկեր Լենինը
ժատրոսների դասակից բապորտ ընդունելիս, կարծ ճառով
մեզ գիմեց. կայարանում բազմաթիվ մարդիկ եյին հավաք-
վել:

— Այն, ինչ վոր Ռուսիայում կատարվեց, — ասաց ըն-
կեր Լենինը, — ուեւ այն չե, ինչ վոր սրոլետարիատին և հար-
կավոր, ժամանակավոր կառավարությունը բուրժուազիայի
կառավարություն ե: Բավարարվել սրանով, ինչ վոր ներկա-
յուս ե, չի կարելի: Մեզ հարկավոր ե բանվոր դասակարգի
հաղթանակը, մեզ բանվոր դասակարգի իշխանություն և
հարկավոր:

Նա իր ճառը հետեւյալ բառերով վերջացրեց.

— Կեցցե՛ միջազգային սոցիալիստական հեղափոխու-
թյունը:

Յերբ մենք այդ մի քանի բառերը լսեցինք, վորոնք ուժ
և վստահություն եյին արտահայտում, մեզանից ամեն մեկը
թե՛ կուսակցական և թե՛ անկուսակցական զգաց, վոր այդ
ժարդն ընդունակ ե հին կարգերը տապալել, վոչ թե միայն
Պետրոգրադում, Ռուսաստանում, այլև ամբողջ աշխար-
հում:

Լենինն իր ճառն արտասանեց զրահազնացքի վրայից.
Ճեռքին բռնած Պետրոգրադի կոմիտեյի դրոշակը: Նույն
զրահազնացքով, շրջապատված տասնյակ հազար մարդկան-
ցով, նա կայարանից քաղաք ուղերձվեց:

Յերկրորդ հանդիպումը նույնպես ապրիլ ամսին եր: Գե-
տրոգրադում բայլչեկիյան քաղաքային կազմակերպության
կոնֆերանսն եր: Կոնֆերանսի յերրորդ որը հանկարծ մեր
ընկերներից մեկը ներս մտավ և հայտարարեց, վոր զինվո-
րական գնդերից մեկում միտինդ ե: Միտինգում մենշևիկ-
ներն ու եսերները զինվորներին գրդում են լենինի դեմ:

Ընկեր Լենինը հանդիսատ վեր կացավ նախազահության
աթոռից ու ասաց.

— Ընկերներ, դուք շարունակեցեք, իսկ յես միտինդ
եմ զնալու:

Մենք բոլորս բողոքեցինք. մենք ասացինք, վոր նո-
չպետք ե զնա, վոր թշնամիներն առայժմ ուժեղ են, հաղար
մի տեսակ վտանգ կարող ե պատահել:

— Ի՞նչու յենք մենք Ռուսիա վերադարձել, — ասաց նա.
«մենք յեկել ենք հեղափոխությանը մասնակցենք, մենք յե-
կել ենք զեկավարելու. դա մեր բարձրագույն պարտականու-

թյունն ե. այստեղ ներկա յեղողներից շատերը կարող ե վոր
շոհվեն. մենք առայժմ միայն խոսում ենք ու ագիտացիա
անում: Տեսնենք ի՞նչ ե կատարվում մյուս յերկրներում.
Դերմանիայում կարլ լիբերնեխտն ու Ռոզա Լյուքսեմբուրգը
բանտումն են: Յեթե միտինգում կուսակցության համար
վատ գեղագեր ե պատրաստվում, վտանգավոր տրամադրու-
թյուններ են ստեղծվում, ի՞նչու չպետք ե նետվել հեղափո-
խության այդ պայքարին:

Լենինն սկսում ե խոսել հեղափոխության նպատակների
համեմ:

Հազարավոր զինվորներ ուշադրությունները լարած
առամ են նրան:

Վերջում ընկեր Լենինին զինվորները ձեռքներին բարձ-
րացրած՝ ուռա գոռալով նստացնում են ավտոն և լենինը նո-
րից վերադառնում ե կոնֆերանս:

— Պատմեցե՛ք, ի՞նչ եք լսել լենինի մասին:

— Ի՞նչ եք կարդացել լենինի մասին:

ՈՒՂԻՂ ԺԱՄԸ ԶՈՐՍԻՆ

Հունվարյան ցուրտ որ եր. փողոցում յեռում եր կյան-
քը: Քաղաքային բանկի դուռը դանդաղ բացվեց և դուրս յե-
կավ մի յերբոպական տարազով կոկիկ հագնված մարդ: Նա
զորտֆելը ձեռքին ինչ-վոր տեղ եր շտապում:

Դրսում նրան սպասում եր ավտոն. շոփերը նրան տեսնե-
լուն պես աշխատեցրեց մեքենան, իսկ պորտֆելավոր մար-
դը բարձրանալով ավտոյի վրա, շոփերին ինչ-վոր հասցե
զատվիթեց:

Այս պորտֆելավոր մարդը նեղն եր՝ անդլիական հայտնի
կոմմերսանտը:

Նա մեկնում եր մի ուրիշ քաղաք, վորտեղ պետք ե մաս-
նակցեր կոմմերսանտների խորհրդակցությանը:

Միտըը Խեզն այդ խորհրդակցությանն անպայման
շետք ե մասնակցեր, հակառակ դեմքում նրա առևտրական
չործերը կտանային վատ ընթացք: Պետք եր մեկնել ան-
զայման առաջին իսկ գնացքով:

Հիմա ժամը յերեքն ե, և ազատ կարելի յե տոմս զնել:
իսկ ավտոն արագընթաց սլանում եր յեվրոպական քա-
ղաքի հարթ փողոցներով:

Միտըը Խեզը, վորի գլուխը շատ մտածելուց ծանրա-
ցել եր, աչքերը հանդարտ փակած ննջում եր:

Հանկարծ մեքենան կանդ առավ փողոցի ափին. միստր Խեղը վեր թռչելով, աչքերը լայն բացեց:

Նրա դիմաց գլուխը բաց կանդնած եր շոֆերը:

Միստր Խեղն արագորեն մեկնեց թեր և նայեց ժամացույցին. ժամը չորսն եր:

— Ի՞նչ պատահեց, — հարց տվեց նա շոֆերին:

Շոֆերը գլխորաց, հանդարտ կանդնած ձայն չեր հանում:

— Համբ ես, ինչ ե, — վորոտաց սրտնեղված Խեղը, գնացքից ուշանում ենք:

— Հունվարի քսանութին, ուղիղ ժամը չորսին, հողին են հանձնում Լենինին, սեր:

Միստր Խեղը մի վայրկյան քարացավ, հաստ սիդարն ատամների միջև շուռ ու մուռ եր տալիս, և սիդարի ծայրին հավաքված մոխիրը թափվում եր նրա թանկագին վերաբերյալ և գեղեցիկ մորթե ոճիքի վրա:

Ապա գաղանացած վորոտաց.

— Վաղվանից կորի՞ր, ել աչքիս չերես:

Շոֆերը վոչինչ չպատասխանեց:

Նա հանդարտ կանդնած եր, և քամին խաղում եր նրա մաղերի հետ:

Խեղը չդիտեր, թե ինչ աներ. տասներկու տարվա ընթացքում նա վոչ մի անդամ չեր բացակայել կամ ուշացել իսկ հիմա... ուշանում եր և մեծ վնաս ել պետք ե կրեր:

— Հաղար Փունտ-ստերլինգ կտամ, միայն թե գնացքից ուշանում եմ, վոաղ գործ ունեմ:

Շոֆերը տեղից չշարժվեց անդամ:

Միստր Խեղը շատ լավ դիտեր, վոր յերկու, յերեք, հինգ, տասը հազար ֆունտ-ստերլինգ ել տալու լինի, վոչինչ չի դուրս դալու, ուստի և ձայն չհանեց. շոփերն ել լավ դիտեր, վոր վաղն առանց մի պատառ հացի յե մնալու, վաղը նրա կնոջը, յերեխաներին փողոց կնետեն, իսկ նա ավելացնելու յե գործազուրկների թիվը և մնալու յե քաղցած, բայց լուսմ եր նա և զեռ կանդնած եր անշարժ:

Միստր Խեղը հասկացավ, վոր նրան վոչնչով չի կարող դրավել — վոչ փողով և վոչ վոսկու փայլով. այդ ժամանակ ամեն տեղ կանդ են առել ավտոները, և ուղիղ ժամը չորսին, ծովերից այն իոդմը, հողին են հանձնում այն մարդուն, վորի հիշատակն ապրում է միլիոնավոր մարդկանց սրտում:

Նա պատկերացրեց, վոր հիմա ամբողջ հազարավոր ակտոներ, վորոնցով Խեղի նման միստրներ են գնում, կանգնած են դաշտերում, փողոցներում: Յեվ վոչ միստրները, վու

պետությունը վոչ միջոց չունեն ստիպելու կելիմին և հաղարավոր կելիմներին, վոր նրանք ծածկեն գլխարկները և աշխատեցնեն մեքենաները:

Խեղը ըբջկեց ավտոյի բազմոցի վրա և թաշկինակը հանելով մաքրեց վերաբերյալ վրա թափուած ծխախոտի մուիրը:

Ժամը չորսից հինգ րոպե անց կելիմը գլխարկը ծածկեց և նստեց զեկի առաջ:

Ավատն դողաց: Լույսերը վառվեցին և առաջ սլացավ:

Իսկ միստրը փաթաթվեց վերաբերյալ մեջ և հողված, նկավ մտածմունքի մեջ:

— Ինչո՞ւ կելիմը՝ ուղիղ ժամը 4-ին ավտոն կանգնեցրեց, գլխարկը հանեց և ինքն ել կանդնեց:

— Ինչո՞վ բացատրել Լենինի հմայքը և ժողովրդականությունը:

— Բնութագրեք միստր Խեղին և կելիմին վերպես տարբեր դաստիարգերի ներկայացուցիչների:

ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ը

— Մեզ կարմիր գրոշակ պետք չե, — ձայն տվեց ցույցին ժամանակցողներից մեկը:

Գրակը շարժելով նա գնում եր ամբոխի գլուխն անած և որորվում մարդկանց աչքի առջեւ:

— Մենք մեր հոր մոտ ենք գնում...

— Երան հպվատում ենք...

— Կարմիր գույնը մեր արյան գույնն ե, ընկերներ, — ամբոխի վրայով գոռաց առանձին, հնչուն մի ձայն:

— Զիա մի ուժ, վոր աղատե ժողովրդին, բացի ժողովրդի իր ուժից:

Յերբ ամբոխը փողոցներից թափվեց դետափի, կամ ընթառիչը և տեսավ, վոր զինվորները կտրել են կամուրջ տանող ճանապարհը, — յետ չկանգնեց: Զինվորների կերպարանքի մեջ վոչինչ սպառնալի բան չկար: Երանք թռչկոտում ելին, տաքացնում ելին սառչող վոտները, թափ ելին տալիս, ըրում ելին իրար...

Մեկը կարեկցող ձայնով ասաց:

— Զինվորները մրսում են...

— Հաա...

— Բայց պետք ե կանդնեն:

— Զինվորները կարգը պահելու համար են:

— Հանդիստ, տղերք... Զգաստ:

— Յե՛տ գնացե՛ք, —լսվեց սպայի ձայնը:

Մի քանիսը յետ նայեցին. նրանց յետևում խուռն բարձություն կար: Մի քանի մարդ առաջ անցան և սպիտակ թաշկինակները ծածանելով՝ ընդառաջ գնացին սպաներին: Չնույն եյին և գոռում:

— Մենք գնում ենք մեր թաղավորի մոտ...

— Յե՛տ դարձե՛ք: Յես կհրամայեմ կրակե՛լ...

— Կրակե՛լ: Չե՞ս համարձակվի...

Իրար հետ բացականչություններ փոխանակելով և յետելից յեկող ամբոխի ճնշմանը յենթարկվելով՝ մարդիկ առաջարժվեցին:

|||

Նրանք, վոր գնում եյին թաշկինակներով, ճամբաները ծուցին, կորան ամբոխի մեջ: Բայց առջեռում բոլորը՝ տղամարդիկ, կանայք, դեռահասները նույնպես ծածանում եյին սպիտակ թաշկինակները:

— Այն ի՞նչ կրակոցներ են: Ինչո՞ւ համար ե, —լուրի խոսում եր մի ալեսոր մարդ: Նրանք չեն թողնում կամուրջն անցնել... Ասել ե, ուզում են, վոր սառուցի վրայով անցնենք:

Յեկ հանկարծ ողի մեջ ինչ-վոր մի բան ցրիվ յեկավ, զարկվեց ամբոխին տասնյակ անտեսանելի մտրակների պես: Մի վայրկյան բոլոր ձայները հանկարծ կարծես մեռան: Մարդկային զանգվածը շարունակում եր հանդարա առաջարժվել:

— Դատարկ փամփուշտներ են, —խոսեց մի ձայն:

Բայց այս ու այն կողմից լսվեցին տնքոցներ, ամբոխի վոտների տակին թափալվեցին մի քանի մարմիններ...

Յեկ դարձյալ հրացանների համազարկի ճայթյուններ ավելի բարձր, ավելի անհավասար:

Մարդիկ յերկու-յերկու, յերեք-յերեք վայր եյին թափ վում, նստում եյին գետնի վրա, փորները բռնում, գես-գեն եյին փախչում կաղալով, սողում եյին, և ամեն կողմ ձյունի վրա առատ պոռթկում եյին պայծառ, կարմիր բծերը:

|||

Թաղավորի բնակարանի շուրջն ամուր շլթա կազմականգնած եյին զինվորները: Պալատի պատուհանների տակ անդավորվել եր ձիավոր զորքը:

— Յըրվեցե՛ք, պարոններ, —ասաց սպան:

— Ինչո՞ւ մեզ չեք թողնում, —հարցնում եյին նրան:

— Ո՞ւր:

— Թաղավորի մոտ:

Սպան մի բոպե կանգ առավ և հետո բացականչեց.

— Յես ձեզ ասում եմ ախր—նա չկա:

— Թաղավորը չկա:

— Հա՛, ելի: Ձեզ ասված ե՝ չկա, զուք ել հեռացե՛ք:

— Թաղավորը բոլորովի՞ն չկա, —համառորեն հարցու-իորձ եր անում հեզնող ձայնը:

Սպան դարձյալ կանգ առավ, բարձրացրեց ձեռքը:

— Հրամայում եմ ցրվել, —ասաց սպան ու սուրը հանեց պատյանից:

Ցրվել անհնարին եր, ամբոխը խիտ լցվել եր վողջ փոք-սիկ հրապարակը, իսկ փողոցներից նրա թիկունքում ժողովուրդը գալիս եր, հա գալիս...

Հանկարծ ձայն տվեց փողի չարագուշակ յերդը...

Զինվորները շարժեցին հրացանները, նշան բռնեցին և սուրը սառեցին միորինակ դիք կեցվածքում՝ սվինները յեկնած դեպի ամբոխը...

Մեկի ձայնը բարձր, սարսափով գոռաց.

— Ի՞նչ եք անում, մարդասպաններ...

Սվիններն ուժգին ցնցվեցին: Մարդիկ ընկան: Գետինն որյանով ներկվեց:

V

Հանկարծ փողոցի միջով անցավ անակնկալ մի իրարան-ցում:

— Վո՞րտեղ, վո՞րտեղ:

— Կղզում:

— Զենքի մաղաղինը ձեռ են դցել...

— Կտրել են հեռագրասյունները, բարբիկաղներ են դրել:

— Շատվո՞ր են:

— Շատվո՞ր:

— Ա՛խ... քոնե այնտեղ վրեժը հանեյին:

Ամբոխի գլուխվերեց բռնեց մի մարդկային կերպա-ռանք, և մթնաշաղի մեջ վորոտաց կոչը.

— Ո՞վ ե կամենում կովել ազատության համար, ժո-ղովրդի համար, մարդու կյանքի և իրավունքի համար, աշ-խատանքի համար: Ով կամենում ե մեռնել ապագայի հա-մար, թող գա ոգնության:

Ամբոխի միջից մարդիկ դուրս յեկան և գնացին սովորություն: Յեկ փողոցի մեջ կաղմվեց աղատասեր, անձնութաց մարդկանց մի սեղմ բանակ:

— Այս պատմվածքի մեջ Մ. Գորկին, վո՞ր թվականի հունվարի 9-ն նկարադրել:

— Այս ժամանակ Պետքը բուրդի (այժմ լենինցիադի) բանվորներն ի՞նչպիսի ցույց արին և ո՞ւմ մոտ ելին ուղարմ դնալ իրենց վիճակից գաղափառվելու:

— Յարի կառավարությունն ի՞նչպես վերաբերվեց այդ անմեղ անդեն ցուցարարներին:

Կարդացեք և գիտեք գոյականների այս ձևափոխությունները.

հայր	հայրեր	զենք	զենքեր
հոր	հայրերի	զենքի	զենքերի
հորից	հայրերից	զենքից	զենքերից
հորով	հայրերով	զենքով	զենքերով
(հոր միջոցով)	հայրերի մեջ	զենքում	զենքերում
հոր մեջ		(զենքի մեջ)	(զենքերի մեջ)
ին	մենք		
իմ, ինձ,	մեր, մեզ		
ինձնից,	մեզնից		
ինձնով,	մեզնով		
ինձնում,	մեզնում		

— Ի՞նչ հարցերի ելին պատասխանում դոյական այս ձևափոխությունները:

— Փորձեք նույն ձեռվ փոփոխել նաև տուն, ձի, ուժ, որ, քուր, ոռու, նա բառերի վերջավորությունները և գրել տետրակում:

Սահմանում — Գոյականների վերջավորությունների \ փոփոխությունը կոչվում է հոլովում:

ԱՊԱՍԱՄԲՈՒԹՅՈՒՆ

Ծովն անդադար աղմկում ե հին Սեվաստոպոլի և նրա բերդի շուրջը, ինչպո՞ք բաներ ե քչփչում ցարական տորմի դի ընդարձակ նավակայանում:

1905 թվի հունիսի 13-ին «Պատյոմկին» զրահանավը Սև վաստոպոլից ուղարկվեց Տենդը կղղու ծոցը, դրահանավի վրա նոր գրված թնդանոթները փորձելու համար:

Հունիսի 14-ի առավոտյան, յերբ տեղի յեր ունենում ահագին զրահանավի սովորական մաքրումը, նավաստիները նկատեցին, վոր ճաշի համար պատրաստված միսը հոտած է, վորդերով լի:

Այս լուրը տարածվեց բոլոր նավաստիների. Ճշշանում, զայրույթ բռնկեց և «կայծից առաջացավ բոց»:

— Սրիկա՛ սպաներ: Ձեն հետաքրքրվում, թե ինչ մոտի են մեզ կերակրում:

— Բժշկին պետք ե կանչել: Թող նավից դուրս շպրուի վորդնած միսը:

— Այդ միսը չենք ուտելու, բացականչում ելին ամեն կողմից:

Հայտնվեց գլխավոր բժիշկը և ինչպես սպասելի յեր, գտավ, վոր միսը հիանալի յե:

— Նավաստիներին յերես են տվել, — հայտարարեց նա, — ջրով պետք ե լվանա վորդերը, և պատվական բորչ կլինի:

Վրա հասավ նաև ատելի հրամանատարը և կարգադրեց. —

— Ճաշը պատրաստել, և ով վոր միսը զննի, անունը նշանակել և հետո ինձ զեկուցել:

Յերբ ճաշը պատրաստվեց և յերբ հրամայեցին ճաշել, վոչ վոք չմոտեցավ ճաշին, վոչ վոք չշարժվեց տեղից:

Անմիջապես հայտնեցին հրամանատարին, վոր գլխավոր սպայի հետ միասին շտապեց «կարգը վերականգնել»:

— Ի՞նչու բորչ չեք ուտում: Ի՞նչպես եք համարձակվում, անդպամներ:

Յեվ բազմության միջից հրամանատարին պատասխանեցին:

— Դո՞ւ կեր... իսկ մենք հաց ու ջրով ել կկտանանք:

— Պետք ե հնազանդեցնել, — վճռում ե հրամանատարը:

«Պատյոմկինի» նավաստիներին ամբողջ ջոկատը, 700 մարդուց ավելի, տախտակամածն են կանչում և հրամայում շարքի կանդնել:

Շարքի առաջ կանդնած գլխավոր սպան մի հանդուզն և որդոիչ ճառ ե ասում. —

— Յես քանի անդամ առել եմ ձեզ, վոր նման անկարգություններ զինվորական նավի վրա անթույլատրելի յեն: Այդ բանի համար ձեզ պեսներին ա՛յ թե վորտեղից են կախում, և նա մատնացուց ե անում կայմի ծայրը:

Ապա լսվում ե մի ահարկու հրաման.

— Ով ուզում ե բորչ ուտի, այս կողմը գա:

Շարքից դուրս են գալիս միայն նավի հին ծառայողները, յենթասպաները:

Ամբողջ շարքը քարացած կանդնել ե:

Այդ միջոցին վորոտում ե մի նոր հրաման.

— Պահակախումը, վե՛ր:

— Յեղբայրներ, ի՞նչ եք անում: Մտաբերեցե՛ք մեր յերակումը, վոր մերոնց վրա չպիտի կրակենք, կանչեց նավաստի Մատյուշենկոն առաջ վազելով:

Յեվ պահակախումը բռնկեց, վողը դեպի դետին:

Այդ նշանակում եր, թե չենք ուղում կրակել:

Իսկ Մատյուշենկոն նոր ուժով կտնչեց.

— Յեղբայրնե՛ր, մեր ընկերներին մենակ չթողնենք՝ վերցրե՛ք հրացանները, փամփուշտներ դրեցե՛ք: Զարկեցե՛ք ժողովրդի դահիճներին:

Յեվ կատարվեց հերոսական գործը: Այլևս չկայի՞ն ստրուկներ, այլևս չկար «խեղճ կենդանին»: Վախը և լությունը տեղի տվին:

Վայրկենապես նավաստիները ցրվեցին զրահանավի բռլոր անկյունները, վերցրին հրացանները, ազատեցին բանտարկյալներին, դեն չպրտեցին վարչությունը:

Ուռա՛, լսվում ե «Պատյոմկինի» վրա:

— Կեցցե՛ ազատությունը:

— Կորչի՛ կամայականությունը: Կորչի՛ ինքնակարգյունը:

— Մա՛կ բռնավորներին:

Յեվ հրացանները վորոտում են:

«Պատյոմկինի» հրամանատարը հարձակվում և Մատյուշենկոյի վրա:

— Անզգամ, հրացանը վայր դի՛ր:

Յեվ վորպես պատասխան լսում ե.

— Յես այն ժամանակ վայր կդնեմ հրացանը, յերբ գիտեցունամ... Հեռացի՛ր նավից, սա ժողովրդի նավն ե և. վոչ ըս նավը:

Ազստամբությունը տաքանում ե:

— Նկարադրեցե՞լ) ապստամբության պատճառները, 2) ընթացք և 3) վախճանը:

— Բնութագրեք նավաստի Մատյուշենկոյին:

— Համեմատեցեք այդ պատմվածքները՝ «Հունվարի 9-ը» պարվածքի հետ՝ և այդ յերկու պատմվածքներից մի համառոտ շարդրություն գրեցե՞լ «1905 թվի հեղափոխությունից» վերնադրով:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

... Գիշեր եր, տասից անց եր 40 րոպե...

Մեր առջև գտնվում եր Խորհուրդների ծփացող ու յեռուայերկրորդ համառուսական համագումարը:

Անմիիթար լուրեր հասան այն մասին, թե Կորնիլովը փախել է կալանքից, այն մասին ևս, թե գեներալ կալեղինը դալիս և Պետրովդրադի վրա: Բուրժուազիան ցնծում եր և անհամբեր սպասում բայց հեկների մոտալուս անկման: Այս բոլորը վախեցնում եր և քայքայիչ ազդեցություն ունենաւ

այլշնիկյան կուսակցության վորոշ մասի վրա ու ստիպում կան հակվել զիջումներ անելու մտքի կողմը, վորչափով նոռը վերաբերում եր սոցիալիստական միացյալ կառավարությունն ստեղծելուն:

«Մենք չենք կարող գիմանալ, — բացականչում եյին սրանք. — Հակառակորդի ուժը չափազանց մեծ է, մենք մարդիկ չունենք, մենք մենակ կմնանք, իսկ մենակ՝ մենք չենք կարող գլուխ հանել, և ամեն ինչ կկորչի»:

Այդպես եյին ապացուցում կամենեվը, Ռյազանովը և ուժները: Բայց Լենինն անսասան եր, ինչպես ժայռ:

Նվաճված իշխանության բախտը վճռվում եր Սմոլնուայրհուրդների շարունակվող համագումարում, ուր և սպանվել յես քայլերս:

Նիստի մեծ դահլիճում, վոր լեփ-լեցուն եր բանվոր հանհիստեսներով, յես տեղ գրավեցի: 9-ից պակաս եր 20 ըուներ, յերբ ծափահարությունների վորոտն ազդարարեց նաև ազահության գալուստը. նախագահության վորի անդամների մեջ եր լենինը, մեծ լենինը:

Վոչ բարձրահասակ, ամրապինդ մի կազմվածք՝ ուսերին մոտ գտնվող մեծ, ճաղատ և ուռուցիկ գլխով, վոչ մեծ «չքեր, լայն, ազնիվ ճակատ և ծանր կզակ: Հազին ուներ մի անփույթ կոստյում՝ լայն, յերկար անդրավարտիքով: Այսպես և ժողովրդական այդ տարրորինակ առաջնորդը, առաջնորդ՝ իր բացառիկ մեծ մտքի ուժով, առաջնորդ, վոր անհարող և համաձայնությունների մեջ մտնել, առաջնորդ, վոր ունի մեծ ընդունակություն՝ պարզ արտահայտություններով ացացարելու խոր մտքերը:

Նիստում հանդես յեկան համաձայնողական կուսակցություններին պատկանող հուսորները և պահանջում եյին այլշնիկներից զիջումներ անել, քննադատում եյին բայց միկներին և սպառնում հեղափոխության անկումով:

Բոլորն սպասում եյին, թե ինչ կասի լենինը:

Եերևաց լենինը:

Ծափահարությունների վորոտը ցնցեց դահլիճը:

Եերբ լոեցին մի քանի րոպե տևող ծափահարությունները, նաև պարզապես ասաց.

«Մենք այժմ ձեռնարկում ենք սոցիալիստական հաստակակարգի շինարարությունը»:

Յեվ այդ խոսքերը կրկին վողջունվեցին վոչ մտրգիավն գոռում-գոչումով:

«Առաջին հերթին պետք է ձեռք առնվեն գործնական միացներ՝ հաշտություն կնքելու: Մենք պետք ե հաշտություն

առաջարկենք բոլոր պատերազմող յերկրների ժողովուրդներին խորհրդային պայմանների հիման վրա, այսինքն՝ առանց աններսիայի (յերկրամասերի գրավման) և առանց կոնտրի-բուշիայի (պատերազմական տուղանքի), ժողովուրդների ինքնորոշման իրավունքով։ Միաժամանակ համաձայն մեր խոստումների՝ մենք պետք ենք հրապարակենք գաղտնի պայմանագրերը և հրաժարվենք պահպանելու այդպիսին։ Պատերազմի և հաշտության հարցն այնքան պարզ է, վոր կարծում եմ՝ կարելի յեն առանց առաջաբանների կարդալ դեկլարացիայի նախադիմը՝ ուղղված բոլոր պատերազմող յերկրներին։

Նրա ձայնը հնչում է այնքան հարթ, վոր ստացվում եր այն տպավորությունը, թե ասես, նա կարող է անվիրչ հնչել... Վորևէ միտք ընդգծելու համար՝ նա թեթևակի առաջ եր թեքվում։ Իսկ նրա առջեն նրան ուղղված հաղարակով պարզ դեմքերը նայում եյին նրան սիրով և խոնարհությամբ։ Լենինն սկսեց կարդալ։

«Դիմում բոլոր պատերազմող յերկրների ժողովուրդներին և կառավարություններին։

Բանվորա-գյուղացիական կառավարությունն առաջարկում է բոլոր պատերազմող ժողովուրդներին և նրանց կառավարություններին՝ անհապաղ բանակցություններ սկսել արդարացի դեմոկրատական հաշտություն կնքելու վերաբերմամբ, առանց ուրիշի ժողովուրդների բոնի միացման...»

... Բուռաստանի բանվորա-գյուղացիական կառավարությունն առանձնապես դիմում է Անդրայի, Ֆրանսիայի և Գերմանիայի գլուխակից բանվորներին։ Այդ յերկրների բանվորներն անցյալում մեծամեծ ծառայություններ են մատուցել պլողերեսի և սոցիալիզմի գործին։ Նրանց անցյալ հեղափոխական աշխատանքը մեզ յերաշխիք և ծառայում, վոր նրանք կհասկանան այժմ իրենց վրա ծանրացած պարտականությունները՝ ազատագրելու մարդկությունը պատերազմի սարսափներից։ Նրանք իրենց վճռական, անձնագույն պայքարով կողնեն մեզ՝ հաջողությամբ իր վախճանին հասցնելու հաշտության գործը և դրա հետ միասին բնակչության աշխատավոր և շահագործվող մասսաների ազատագրումն ամեն տեսակ ստրկությունից և ամեն տեսակ շահագործումից։»

Ծափահարությունների վորոտը վողջունեց հրապարակած դիմումը ժողովուրդներին։ Լենինի բոլոր ասածների մեջ կար մի ինչ-վոր հանդիսական գրավիչ բան, վորը խորապես տպավորվում էր մարդկանց հոգու մեջ։ Դժվար չեն հասկա-

նալ, թե ինչու մարդիկ հավատում եյին, յերբ Լենինն եր խոսում։

Հուժկու հնչյունները տարածվեցին դահլիճում՝ թափանցելով պատուհաններից ու դոներից դեպի յերկինքը։

«Պատերազմը վերջացել ե», — ասաց կողքիս յերիտասարդ բանվորը՝ ուրախությունից փայլող դեմքով։

Հեղափոխությունն անում եր իր դործը։

Այնուհետև լենինը կարգաց հողին վերաբերող դեկրետը, ուր ասված եր, թե հողի կալվածատիրական, ցարական և վանական սեփականությունն անհապաղ վերացվում է։ Հողն անցնում է տեղական հողային կոմիտեների տնօրինությանը։ Դեկրետը՝ քննելուց հետո՝ դրվեց քվեարկության միայն մի պատվիրակ դեմ ձայն տվավ. իսկ գյուղացիական պատվիրակները բուռն կերպով արտահայտեցին իրենց ուրախությունը։

Այդպես առաջ եյին ընթանում բայցեկիները, վերացնելով իրենց ճանապարհին յեղած բոլոր խոչընդոտները. բայցեկիները, միակ խմբակը մուսաստանում, վորն ուներ գործունեյության իր հաստատ ծրագիրը։

— Պատմեցե՞ք, թե ի՞նչ եր ներկայացնում իրենից Սմոլնին հոկտեմբերյան հեղափոխության որեղին։

— Ի՞նչ ուժեր եյին բախվում իբրու հետ այդ որերին։

— Ովքե՞ր եյին բայցեկիցան կուսակցության մեջ զիջումներ անելու կողմնակիցները։

— Լենինի դերը, վորպես կուսակցության և հեղափոխության դեկալարի։

— Ընդդեցեք հողվածում այն տեղերը, վորտեղ հեղինակը տալիս և լենինի պատկերը։

— Համազումարի վերաբերմունքը դեպի լենինը։

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ—ՀՈՒՆՎԱՐԻՆ

1.

Կովի տաք ժամանակն եր։ Մոսկովսկայա փողոցում արդեն այրվում եյին մի քանի խանութներ։ Խանութներում եյին դրել կաղակները։ Նրանք թնդանոթներով ու գընդացիրներով անդադար ոմբակում եյին ամբողջը։ Կարմիր գվարդիականներն ել իրենց հրացարաններից եյին կրակում։ Անդ թշնամիները թնդանոթներ ու գնդացիրներ ունեյին, իսկ մերոնք բոլորը հրացան ել չունեյին։

Նավահանգստի բանվորները նիզակներ եյին պատրաստում: Կոխվն սկսվեց 1918 թվի՝ հունվարի 12-ին, գիշերվա ժամի 3-ին:

Ամրոցի ցանկապատին պառկած կրակում եյին: 14-15 տարեկան յերեխաներ վազվղելով փամփուշտ եյին առվարկներից:

— Ե՛յ, Կողիա, շուտ, փամփուշտ տուր եստեղ, հրեն, յես մեկին դուրս քշեցի կտրիցը, տես վո՞նց և ընկնում:

Իսկապես, տանիքից գնդացիր դցող մի կազակ թռավ Յերեխաները կարմիր գվարդիականներին փամփուշտներ երին տալիս: Կեսորին մոտ կոխվը դադարեց. յերկու կազմն եւ հանդստանում եյին:

2.

Կորմիր գվարդիականներն ու յերեխաները խմբվեցին և պատեցին կաթսայից սև հացով շիլա ուտել:

— Տղե՛րք, — ասաց մի կորմիր գվարդիական, — յեկեք այդ խանութը, կազակներն եւ հետը, կրակ տանք:

Խանութն ամրոցի դիմացն եր: Նրա վերին հարկու գտնվում եր «Կայձ» կինո-թատրոնը:

— Ապա ո՞վ կդնա, ո՞վ սիրտ կանի կյանքը զոհել:

— Յես, — աղաղակեց ցարեկցի^{*)} Խասյանը, առանչորս տարեկան մի տղա:

Հրամանատարը խփեց Խասյանի թիկունքին, հետո համառը նրան և ասաց:

— Լավ, կդնաս, յես քեզ մի աման նավթ կտամ, դունքին հարկի դուռն ու պատշգամբն այրիր, իսկ մենք այսուղից մեքենայով նավթ կշղրտենք:

Գիշերն սկսեց իջնել, իսկ ամրոցից ամրողջ Աստրախան քաղաքը յերեսում եր: Նախկին Մոսկովսկայա (այժմ Խորչըրդային) փողոցում տներ և խանութներ եյին այրվում: Բոցը կարմիր լեզուներով բարձրանում եր դեպի յերկինք: Հավում եր, թե ինչպես ճարճատյունով փլլում եյին տները:

— Դե, Խասյան, առ, վերցրու, — ասաց հրամանատարը և մի աման նավթ տվեց նրան:

Խասյանը հանդիսու դուրս յեկավ ամրոցից: Ամրոցի դիմացի փողոցը լայն է. Խասյանն ստիպված եր անցնել: Դեռ չհասած այն էանութին, ուր դտնվում եյին կազակները, և վորը նա պետք ե այրեր, նա կանգ առավ փողոցի անկյունում:

«Առաջ վո՞րն այրեմ, դո՞ւ՛ւը, թե՞ պատշգամբը: Առաջ

^{*)} Ցարեւ-Առարտիան քաղաքի մի թաղն ե

զատշբամբը, հետո կիջնեմ և դուռը կվառեմ—մտածում եք նա:

Նա հազիվ կարողացավ լուցկին վերցնել, յերբ հանկարծ մի գնդակ սուլելով թռավ նրա ականջի մոտով: Նա դառկեց մայթի վրա, բայց հաջորդ գնդակը թոցը նրա դլխարկը: Նա շտապ վերցրեց նավթի ամանը և նավթի կեսք շաղ տվեց դռան վրա: Հետո ամանը վերցրեց և ձեռքին բըռնած սկսեց բարձրանալ պատշգամբը: Բարձրանալը շատ դժվար եր, մի կողմից ել գնդակներն եյին վզզում. հազիվ բարձրացավ, ամանը դրեց անկյունում, ինքն ուղում եր ճառշերի վրայով անցնել պատշգամբը, բայց հանկարծ պատշամբի դուռը բացվեց, ենտեղից դուրս յեկավ մի նիհար, բարձրահասակ կազակ սպա, կանաչ համազգեստը հաղին և ուսաղիներ կպցրած:

Սպան ատրճանակը հանեց և կրակեց Խասյանի վրա, բայց ատրճանակը չտրաքեց:

Խասյանը հանեց իր ատրճանակը և կրակեց ոպայշին: Վիրավոր սպան ընկավ պատշգամբում: Խասյանը շտապ վերցրեց նավթը, շաղ տվեց պատշգամբում ու պատշգամբի դռան վրա և լուծկով վառեց. Հետո ցած թռավ, ընկավ, վեր կարցավ, վերցրեց լուցկին և ներքեւի դուռը վառեց: Ինքը կազալով վաղեց դեպի ամրոցը: Յերկրորդ հարկից թռչելիս նա սառարկի ջարդել եր վոտքը:

3.

— Ե, Պետրով, հավանականաբար Խասյանին սպային, — ասաց հրամանատարը:

— Այո, շատ ուշացավ. լավ տղա յեր:

Կոկվը տաքացել եր. կազակների խումբը դիպավ ամրոցին, բայց շատ չվնասեց: Միայն մի քանի քար ընկավ:

— Տղերք, տղերք, մի նայեցեք, — աղաղակեցին միայն Հասանը և Ահմեդը, — խանութն ու կազակներն այրվում են:

— Կեցցե՛ Խասյանը, հրդեհել ե, — աղաղակեցին մյուսները:

— Տղե՛րք, — աղաղակեց հրամանատարը, — տակառից նավթ լցըք:

Իսկույն յերեք կարմիր գվարդիականներ սկսեցին մեքենայով նավթ չպրտել փողոցի մյուս կողմը յեղող այրվող խանութի վրա: Խանութի հատակն ու առաստաղը պահող իշերանները կրակից կարմրել եյին: Պատշգամբը բոցավառ վում եր ջահի նման: Բոցի լեզուներն արդեն հասնում եյին տան վերին հարկին: Պատուհաններում յերեւում եյին այրվող

կազակների կերպարանքները։ Նրանք կատաղած այս ու այն կողմն եյին վազում, վոմանք վազելիս ընկնում եյին մայթի վրա և ել վեր չեյին կենում։ Մի քիչ ժամանակից հետո պատը զամբը դղրդյունով շած թուավ։ Այրվող խանութից դեռ ելի կրակում եյին կազակները, ուղենալով վերջին բոպեյին ել սպանել իրենց թշնամիներին—կարմիրներին։

4.

Խասյանի ձեռքին գնդակ կպավ։ Նա ամբողջովին արյունաթաթախ ընկալ ամբոցի մոտ, մայթի վրա։

Սկսեց լուսանալ։ Տներից մի քանիսն այրվում եյին, մի քանիսը ծխում և դղրդյունով փլվում։

Առավոտն ամբոցից դուրս յեկան և Խասյանին գտան անգդա ընկած։ Նրան տարան ամբոց, վերքը կապեցին։ Կեսորին մոտ նա ուշքի յեկավ։ Սկսեցին հարցուափորձ անել նրան։ Կարմիր գվարդիականների շինելներն ու դլխարկներն ամբողջովին ծակծկված եյին կազակների գնդակներից։ Տան տերըն ասաց կարմիր գվարդիականին։

— Քեզնից հետո յերեք ընկերներ մեռան։ Կազակների գնդակներն սպանեցին Միշկային, կոլկային և ցարելցի թուրքին։ Միշկան մեռնելիս ասաց։ — «Կեցցե Խասյանը, մերոնց ազատում և կազակների գնդակներից»։ Իսկ կոլկան ասաց։ — «Բնկերներ, չհուսահատվեք, միահամուռ ուժերով տաջ գնացեք»։ Ես խոսքերն ասացին ու մեռան։

Խասյանը լսեց և լաց յեղավ, վորովհետեւ կոլկան եր նրան իր հետ ամբոցը բերել և նրա հետ միշտ լավ եր վար վում։

1918 թվի հունվարի 25-ին Աստրախան քաղաքը մաքրվեց կազակներից։

«ԿԱՐՄԻՐ ՈՐ»

«Կարմիր որ» մանկատանն ապրող յերեխաներն ուրախ զվարթ խաղում են գեղեցիկ և մաքուր սենյակներում։ Նրանց ժաղման մասին վոչ վոք յերեխաներին չի հիշեցնում։ Դրանցից ամենափոքրը 4 տարեկան ե, իսկ մեծը՝ 12։ Շատ բան դիտեն այդ յերեխաները։

Յեթե այդ աղմկոտ խմբից դուք կանչելու լինեք Լիւա կանդեյվային և հարց տաք, թե ո՞վքեր են նրա ծնողները, նա ձեզ կապատասխանի։

— Իմ հայրը հեղափոխական եր։ Նրան Բուլղարիայում 1923 թվին մահապատժի յենթարկեցին։

— Իմ հայրն ել հեղափոխական եր, նույնակես սպանված է Բուլղարիայում 1923 թ., մայրս հիմա Բուլղարիայից փախել ե և ապրում է Ռուսայում։ Նա աշխատում է գործարանում, — այսպես կասի ձեզ Լենա Կարաստոյանովան։

— Իմ հայրն ել Բուլղարիայումն ե սպանվել. . . — կավելացնի Մերի Տետարինկովան։

Իսկ վոքրիկ կարլ Ֆրինդմանդը կպատմի.

— Յես վեց տարեկան եմ. Հորս կախել են Ռումինիայում. մայբս բանվորուհի յե, նա աշխատում է Բուլղարիայի աքստիլ գործարանում, նա չի վախենում, աշխատում է շաղտնի կերպով բանվորական կաղմակերպություններում։

Յեթե շարունակելու լինեք, դուք կտեսնեք կապիտալիստական բոլոր յերկների վոքրիկ վարարանդիներին։

— Իմ հայրը հեղափոխության համար սպանվել ե Լեհաստանում, — կասի ձեզ վոքրիկ Վիտոլը։

Զինաստանի մասին կսկսի վոքրիկ Զի-Զուն, վորի հայրը՝ Շանխայում մատրոս և յեղել և զոհվել ե Զինաստանի բանվորների և գյուղացիների համար։

Ռուդոլֆ Մարգիսի հայրը կենդանի յե. բայց դատապարտված ե 10 տարվա բանտարկության Գերմանիայում։ Ռուդոլֆին «Կարմիր որ» մանկատանը տեղավորել ե Մթորը։

Կապլան Լանդերի հայրը Ռւնդարական բանտումն ե նըստած։

Այդ վոքրիկների շրջանում դուք կտեսնեք բոլոր ազգությունների յերեխաներին։

Միջազգային մանկական տանը, վոր կոչվում է «Կարմիր որ», 70 յերեխա յե ապրում։ Դրանց մեծամասնությունը հեղափոխության համար տուժածների յերեխաներն են։

Մանկատանը գտնվում ե գեղեցիկ տեղում՝ մի վոքրիկ բլրակի վրա, վորը յերեք կողմից շրջապատված ե ծառերով։ Ենքը մեծ և շատ սիրուն. առաջ պատկանելիս ե յեղել մի ենչ-վոր կալվածատերի։ Սենյակները մեծ են և լուսավոր, նշարանը մաքուր մահականերով։

Այստեղ ե և դպրոցը։ Աշխատանքներն ամբողջովին տանում են յերեխաները։

Յերեխաները մասնակցում են նաև մոտակա գյուղի հասարակական աշխատնքներին։

— Մենք հեղափոխականներ ենք, սիրում ե կրկնել միշտ Զի-Զուն; — կղնանք Զինաստան և հեղափոխությունը կտարարենք. Զանկաշուն ել ծովը կգցենք, — ծիծաղելով վերացնում ե նա։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՃՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Քսան թիվն եր. աշուն. այն գյուղը, ուր մենք ենք ապամ, չատ գեղեցիկ եր աշնանը:

Ոխտ անտառի տերևները դեղնել, կարմրել եյին. աւ պառը լիքն եր հասած պտուղներով. վայրի տանձը, ոտոքը, խնձորը, սիզը, զեկոը հասած թափվում, ծածկվում եյին տերևների շերտերով, մնում փտելու: Նույնը և կազնի ու հաճարի պտուղները: Վոչ վոք սիրտ չեր անում գյուղի հեռանա, գնա անտառը, ձմեռվա պաշար հավաքի: Վտանդավոր եր գյուղից դուրս գալը, թալանը, մահն ամենքի վախեցնում եյին:

Դաշնակների տիրապետության վերջին որերն եյին Ազգամիջյան կոխվները մաշել եյին յերկիրը, ամեն ո՛վ փոքրանում ու փոքրանում եր դաշնակցական Հայաստանը՝ սվելի ու ավելի կատաղի եյին դառնում դաշնակները: Մեր գյուղը Աղրբեջանից մոտ եր ևայնտեղից յեկող լուրերն եյին մի փոքր հանգստացնում տանջված գյուղացիներին Շատերը սարերն եյին փախել, գյուղ չեյին դալիս, մայրայան ապստամբություններից հետո փախել եյին Աղրբեջան: միացել կարմիր բանակին:

Սրտատրոփ սպասում եյինք կարմիր բանակի դռնու բայլշելիկները գաղտնի աշխատում եյին:

— Դուրս, — գոռաց սպան, հրելով հորս, — դու ինչ չո՞ւ ես, վոր խոսում ես:

— Ինչ դպրոց. կոիվ ե, հասկանո՞ւմ ես, ապո՛ւշ, — դում եր, քայլում ջղայնացած մտրակը ձեռքին:

Նրա հրամանով բակն են նետում մեր դպրոցի նստաբանները, գրքերը, քարտեղները, աթոռները: Հայրս, վոր այդ դպրոցի ծառան եր և միշտ իր աչքի լույսի պես եր խնամու դպրոցական իրերը, չեր կարողանում հեռանալ. արտասունը աչքերին, կովում եր, խնդրում, աղերսում, վոր դպրոցի չդրավեն, իրերը չիչացնեն: :

— Ախր Ամերազովանց տանը հենց ոթախ կա, գնացեն նաեղ ելի, բա դպրոցը վոնց...

— Ա՛, դու բայլշելիկ ես, — հարձակվեց սպան ու մի յեր կուտ հասցրեց հորս: Հայրս վազեց դպրոցի վարիչի մոտ. նո լոչինչ չարավ, վորովհետեւ ինքը դաշնակցական եր: Նո չիսանվեց, յերբ նույնիսկ յերեկոյան զինվորները բակը դպրոցի նստարանները կոտրտելով խարույկ վառեցին:

— Քավթա՛ռ, ի՞նչ ես մըթմթում, արի տաքացի, ու

համար ես պահում, — հոհուալով գոռում եր սպան դպրոցի պատուհանից: Դպրոցը փակվեց. իմ սրտում ծնվեց մի մեծ առելություն դեպի դաշնակները:

Մի քանի որից հետո սպային ու զինվորներին քշեցին ֆրոնտ. դպրոցը գրավեց հայտնի խմբապետ Սեպուհն իր առղաներով»: Սեպուհին յես առաջ ել եյի տեսել:

Մեր գյուղում նրանից սարսափում եյին. կասկածելով, վոր մեր գյուղը բայլշելիկների բուն ե, նա համարյա ավերել եր մեր գյուղը: Ում բոնում, ֆրոնտ եր ուղարկում: նա տարիքը չեր հարցնում, 15 ե թէ հիսունհինգ: Թալանը հո կար ու կար. նրա «տղերքը» լավ ուտել եյին սիրում, ու թալանները լցնում իրենց անկուշտ փորերն ու անդամ դրապանները: Կոմում անսասուն չեր մնացել, տներում հաց, յուղ ու պանիր մնացել: Կանայք մենակ վախենում եյին ջրի գնալ, Սեպուհի հարբած տղերքը կեռ թրերը կապած, մառզերներով միշտ կարող եյին պատահել ու վիրավորել:

Միայն գյուղի զորբաններն եյին ուրախ. նրանց ունեցածը յառագերիստների ոգնությամբ բազմանում եր. զգվելի թանն որհնում եր տերտերը:

Այդ որերին Սեպուհը կատաղել եր: Դեմքը խոժուած, կազանի աչքերն արյունով լի, նա չեր խոսում — մոնչում եր, կոտրում, հարվածում՝ ինչ ձեռքն ընկնի:

Հայրս կուչ եր յեկել. արդեն դպրոցի ներսում ամեն որ կրակ եյին անում, հատակն այրվել եր. որեր, ժամեր եմ աշվում, վոր բայլշելիկները դան. յես ել թեպետ փոքր եյի վոչ մի գործ չեյի արել, բայց ինձ բայլշելիկ եյի համարում և ուղում եյի ամեն բան տեսնեմ, լսեմ, իմանամ մերոնց, հայտնեմ գոնե:

Մտնում եյի Սեպուհի գրաված սենյակի կողքի միջանցք, նստարանների հետեւ և ականջ դնում. այդտեղ պատը վեղքածք ուներ և յես վոչ միայն լսում եյի, այլ կարողանում եյի դեմքերն ել տեսնել:

— Սեպուհը կատաղած հեռախոսով խոսում եր, հրաններ տալիս՝ փրփուրը բերանին, հայհոյանք թափում... իսկ դաշնակները ձղում եյին. մի ինչ-վոր մինիստը յեկավ, իսկույն ավտոյով փախավ: Վորը կառքով, վորը ձիով, Փայտոնով ձղում են, վոնց են ձղում դեպի Յերեան: Յես մեկ փողոց եյի վազում փախչողներին դիտում գյուղացիք կանգնած նայում են, բեղի տակ ծիծաղում, մեկ ել գալիս եմ նիրքս մտնում, լսում:

— Վեցերորդ գունդն անցավ բայլշելիկների կողմը — և կհաւ ասաց ֆրոնտից փախած մառզերիստը՝ Սեպուհին.

Սեպուհը վեր թռավ տեղից և այդ մասով երիստին վոր չհասցրեց, մասով երիստը գետին փռվեց...

Յես դուրս պրծաւ. Հորս հայտնեցի ուրախալի լուրը:

Սեպուհն ել ճղեց ավտոյով: Իսկ «աղերքը» հեծան ձիերը և ավտոյի հետեւից թռած դնալով, նրանք ել անհետացան մեր գյուղից:

Դեռ նրանք գյուղից չեյին հեռացել, գյուղացիներն ուրախ զուռնով, յերգելով դուրս յեկան կարմիրներին դիմավորելու:

Շուտով մեր գյուղը մտավ կարմիր բանակի: Կարմիր բանակի հետ եյին մեր գյուղի և շրջանի ապստամք կարմիր պարտիզանները. ի՞նչ ուրախություն եր:

Անմիջապես դուրս յեկան մեր գյուղի կոմունիստները, կազմակերպեցին հեղկոմ և անցան աշխատանքի:

Դա նոյեմբերի 29-ին եր, 1920 թվի: Յես, վոր այրէ ժամանակ փոքր եյի, հիմա զարմանում եմ, թե ինչպես այս կարծ ժամանակամիջոցում և ի՞նչ ուժով հաջողվեց քանդված, ավերված յերկիրը վերականգնել, վերակառուցել զործարաններ, ելեկտրուկայաններ, սովորողներ, կոլխոզներ, հիմնել և այսպիսի ուժեղ տեմպով սոցիալիստական շինարարությունն առաջ տանել:

Ինչպես, ի՞նչ ուժով—այդ ել դուք ասեք:

— Վորտեղ և կատարվում գործողությունը:

— Նկարագրեցք այդ գյուղի դրությունը՝ դաշնակների իշխանության օրերին:

— Ինչու զորքի և աղջաբնակության համականքը քայլելիկների կողմն եր:

ԴԱՐԱՄԱԳՅԱՉԻ ՍԱՐԵՐՈՒՄ

Զրդ վաշտը դասավորված եր Հասանքյանդ և Ալայով գյուղերում, ապահովելու բրիգադի ձախ թեր: Վաշտի հրամանատարությունը տեղեկություններ եր ստացել, վոր դաշնակցական խմբերը պատրաստություններ են տեսնում հարձակելու մեր բրիգադի վրա:

Վաշտն այդ որն անհամբեր սպասում եր հակոռակորդի հարձակմանը. գնդացիրները, հրացանները և նոնակները՝ պատրաստված եյին գործելու համար,

Վաղ առավոտյան լսվեց հրամանատարի հրամանը «առաջ»:

Կանաչազարդ ձորերով առաջ են շարժվում կարմիր բանակայինները՝ դեպի հակառակորդի հետախույզները, վորոնք քողարկված են կանաչ ընկույնիների տակ:

Հնչեց գնդացը տրաք-տրաքոցը և մարտիկների ուռան: Հակառակորդի հետախույզը հետ նահանջեց դեպի Ղուղուղանքի բարձրունքները: Կարմիր վաշտը հետապնդում եր հակառակորդի նահանջը:

Սարերի վրա չոքել եր գիշերային դաժան մթությունը, իրք վաշտը գրավեց բարձրունքները:

Վաշտի կապը կտրվել եր գնդից: Դաշնակցական խմբերը քրջապատել եյին վաշտին: Մնացել եր մի յելք, մեղքել հակառակորդի շղթան և անցել դեպի Գյոկչա:

Վորոշեցինք շարժվել Սաալու գյուղի ուղղությամբ՝ բարձրանալ դեպի Քարագլուխ:

Գյուղում անսովոր յեռ ու գեռ եր: Գյուղացիներն ել պատրաստվում եյին մեղ հետ նահանջել: Ճանապարհը չափազանց գժվար եր: Միմիայն մի շավիղ եր, վոր գիշեր ժամանակ միշտ կորչում եր աչքից և դժվար եր գնդացիրները տանել:

Փամը Յ-ն եր, յերք վաշտը սարից իջնում եր խոր ձորերի նեղ շավիղներով դեպի գյուղը: Վաշտի առաջից շարժվում եր հայկի ջոկը, վոր նա ապահովում եր վաշտի գիշերային յերթը:

Լսվեց ուժեղ գոռոց, վորից թնդաց խոր ձորը: Ապա յերեվաց մի բուռ կրակ՝ մթան մեջ՝ և լսվեց հրացանի տրաքոցի ձայնը: Գյուղը խառնվեց իրար: Դաշնակների զինվորները խուճապի մատնվեցին: Ուժեղացավ համազարկերի ձայնը: Դաշնակցական զումարտակը կորցրել եր իր գլուխը և գյուղից դուրս գալու ճանապարհը:

Վաշտի պահպանող ջոկը մտավ գյուղը:

Կովի տաք ժամանակն եր: Գնդակների պայթյունից դուռմ եյին տերեւները: Մշուշապատ արշալույն սկսում եր լուսավորել Դարալյագազի բարձր սարերի կատարները, յերք կարմիր բանակային Սեդրակը բարձրանալով սարի կատարը կրակ բացեց դաշնակների աջ թեին:

Բարձրացող արեվի ճառագայթները խանգարում եյին տարբերել բարձած եշերը թամքած ձիերից, և դաշնակների խումբը Սեդրակի գումակի բարձած եշերին ընդունելով հեծալաղորի տեղ՝ գլուխները կորցրած փախչում եյին դեպի Քեշիշյանդ, ուր նրանց գլխավոր ուժն եր տեղավորված:

Այդ պահին կարմիր բանակային Սեդրակը կանգնած սարի կատարին, հատուկ բավականությամբ չու յեր տալիս խուճապի մատնված «հերոսներին»: Վաշտը շարունակում եր

իր ճանապարհը՝ խոր ձորով բարձրանալով ճնոտ սարք դադարի:

Լովեց հրացանի տրաքոց և հատ-հատ թրիսկոցները փոխ վեցին համազարկերի: Արփայի կողմից լավում եր հրետանու խուլ վորոտը:

Խնդիր եր, պարզելովքը են սարի կատարում: Հետախույզ ուղարկեցինք յերեք մարտիկ: Անմիջապես պարզվեց, 3-րդ գնդի 3-րդ զումարտակն ե, վորը մեզ եր սպասում:

Վաշտը միացավ 3-րդ զումարտակին—խնդիր ունենալով պատռել դաշնակների շղթան Սելլմի կիրճի ուղղությամբ և անցնել Գյոկչա:

Արեւը մայր մտավ. ամեն ինչ աղոտ գույն ստացավ: Յերեվացին կապույտ յերկնքում լուսավոր աստղեր: Լովում եր լեռնային առվակների քչքչոցը, ծառերի խորհրդավոր խշոցը: Գումարտակն առանց ձայնի, վորպես մի անձ, շարժվում եր մթության մեջ՝ սպիտակին տվող բարակ շավիդով:

Ճանապարհը յերկար եր ու անծանոթ: Մեզ հետ եյին գյուղերից յեկած կոմունիստները, վորոնց Դարալագյազի ամեն մի ժայռ, մի ձոր ծանոթ եր:

Հասանք Սելիմի կիրճը:

Չնայած ամառային ամիսներին, սառը քամին փչում եր մեր տկլոր մարմիններին և հիշեցնում Ղամարլվի մեր հերոս սամարտերը:

Կիրճը գրավված եր դաշնակների կողմից: Զոկատի հրամատար ընկ. Գեվորգյանը հրամայեց ջոկին՝ հետ շողբուկ հակառակորդի հրաձգային դասակը և ապահովել ջոկատի ալթերը: Խնդիրը բարդ եր, բայց պետք եր լուծել մի ջոկով: Զոկի կարմիր բանակայինների մեծամասնությունը կոմունիստներ եյին: Բայց լեվիկյան գրոհով, հերոսական մարտով դրավեցինք բլրակը և հաջողությամբ կատարեցինք մեր առաջ դրված խնդիրը:

Վերջալույսի մարփող ճառագայթների տակ՝ ջոկատն առանց կորստի անցավ կիրճը:

Լուսինը լուռ սահում եր լեռների վրայով: Զոկատի հրամատարը հեծյալներ եր ուղարկում 11-րդ բանակի 20-րդ հեծդղնդի հետ կապ հաստատելու համար: Անհանդիստ քամին որորում եր հեռախոսային սյուները և դժվարացնում կապ հաստատելը գավառի հետ: Հեծյալները տեղ հասան:

20-րդ քաջարի հեծդղունդը դիմավորեց իրեն կրտսեր զինակցին: Նա ճաշ և թեյ եր պատրաստել հոգնած մարտիկների համար: Մի յերկու ժամ հանգստից հետո մենք հրաժեշտ

ովինք մեր մարտական յեղբայրներին և շարժվեցինք գեղակ կարանլում: Գյուղացիները մեզ եյին սպասում: Նրանք վախենում եյին դաշնակների վերադարձից:

Գյուղի կուլակները գնացել եյին դաշնակցական խմբերին միանալու:

Մենք անցանք վերջին և վճռական մարտի:

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Թող ընկած սերանդների վագրենք կրա կանգնի վրիտառն անողս:

1903 թվին եր, մոտավորապես նոյեմբերի վերջին կամ գեկտեմբերի սկզբին: Ինձ մոտ յեկալ, իմ զաղտնի բնակարանը՝ թիֆլոսում, ուշ յերեկոյան՝ ընկ. Արշակ Զուրաբյանը: Յես դրա համար մի քիչ «ՀՀպոեցի», վորովհետեւ այն որերին ու շաբաթներին նրան միշտ հետեւում եյին ցարական կրտեսները: Նա ինձ առաջարկեց.—«Միենույն և հիմա, Միիսա, քանի վոր յես արգեն յեկել եմ, կարելի կլիներ այս տեղ բերել և մի շատ հետաքրքիր յերիտասարդ ընկերոջ, վորը յեկել ե արտասահմանից: Նա ինչ-վոր հանձնարարություններ ունի ընկ. Լենինից: Շուտով նա պիտի յետ վերադառնա, և մենք կարող ենք նրան տալ մեր անհրաժեշտ հանձնարարությունները»:

Իսկ մենք, իրոք, մի շատ կարեռ գրեկան-ժուրնալային գործ պիտի գլուխ բերեյինք:

Մենք մտածում եյինք՝ կովկասի (հետագայում՝ Անդրբոկովկասի) մեր Միութենական կուսակցական որգան՝ «Պրոբյանտարիատի պայյարը» փոխադրել արտասահման, հանձնելով նրա խմբագրությունը յերկու ընկերների՝ մեկ վրացու և մեկ հայի, ընկ. Լենինի վերահսկողության և զեկավարության տակ: Բայց մեզ շատ պակասում եյին պատասխանատու պահապողներ, մանավանդ հայերից, ել ինչ խոսք այն մասին, վոր թուրքեր բոլորովին չկային: Հասկանալի յեռական, թե ինչու յես մեծ հաճույքով լսեցի ընկ. Արշակի առաջն, թե ինչու յես մեծ հաճույքով այդ յերիտասարդին այժմեեթածը, բայց խորհուրդ տվի՝ այդ յերիտասարդին այժմեեթին մոտ չըերեւ, «Հարատավորել» նրան, բարձր գնահատելով նրա առաջման անհայտ լինելը լրտեսների և ժանդարմների համար: Պայմանավորվեցինք՝ հետեւյալ որը, յերբ (ժամը) և վորտեղ հանդիպել իրար:

Ենք իրոք, մենք հանդիպեցինք իրար պայմանավորված ուեղում, բայց վոչ յերկու ու յերեք, այլ հինգ-վեց հոգով: Նա Միութենական կոմիտեյի նիստն եր: Մենք հինգ հոգին

կոմիտեյի անդամներն եյինք, իսկ վեցերորդը—արտասահմանից նոր յեկած ընկերն եր: Դա ընկ. Ստեփան Շահումյանն եր: Բալականին վայելուշ հազնված՝ յեվրոպական տարազով, բարձրահասակ տղամարդ եր նա: Մենք բոլորս հենց առաջին ծանոթությունից միաձայն ընդունեցինք, վոր նաշատ խելոք, ինտելիգենտ դեմք ունի: Հենց այդ որը կոմիտեյի նիստի որակարգում դրված եր և «Պրոլետարիատի պայքարն» արտասահման փոխադրելու վերոհիշյալ հարցը: «Մ. Կ.»-ի նիստի որակարգի մյուս բոլոր հարցերին նա ականջ եր դնում մեծ ուշադրությամբ, չմասնակցելով վիճարանություններին: Բայց յերբ մենք հասանք արտասահմանում ժուրնալ հրատարակելու հարցին, նա ձայն խնդրեց, ավելացնելով համեստաբար՝ «յեթե կարելի յե»:

Նա մի քիչ գանգատվեց «գլխացավից» և հոգնածությունից, բայց իսկույն անցավ իր «զեկուցման»: Նա մեզ պատմեց Արևմտյան Յեվրոպայի՝ Ռուսաստանից յեկած հեղափոխական եմիգրանտների խմբավորումների մասին, նրանց տրամադրությունների ու տենդենցների մասին: Հետո նա անցավ հատկապես ժնեի այն «մարդկանց», վորոնք չըջապատում են Իլյիչին, և նրա անսաստ կամքին՝ հաղթահարելու պառակտումը մինչև հաջորդ կուսակցական համագումարը, կամ համենայն դեպս այդ համագումարում: Նա հավանություն տվավ «Պրոլետարիատի պայքարն» արտասահման փոխադրելու մեր ծրադրին, հանձնարարելով, վորպես խմբագրի յերկու ոգնականների՝ վրացի ժորդանիային և հայ Նազարեդյանին, վորոնք պրոֆեսիոնալ գրականագետներ եյին: Մենք մի քիչ գլուխներս շարժեցինք, հենց այն ժամանակ ել մեծ հավատ չընծայելով նրանց, վորպես վոչ մեր ասած սոցիալիստների: Սակայն նա մեզ հավաստիացրեց, վոր, քանի ընկ. Լենինն ե կանդնած լինելու նրանց գլխին, նրանք անկարող կլինեն «փչացնելու» (իդեոլոգիապես) ժուրնալը: Յեկ խոստացավ, վոր նա ինքն ել և ժնեում ու Արևմտյան Յեվրոպայում գտնվող մի քանի այլ կովկասցի ընկերներ կողնեն խմբագրությանը:

Բայց յես առարկեցի.—«Թանգարին ընկեր Սուրեն, քանի վոր դու մեր ձեռն ես ընկել այստեղ, թիֆլիսում,— մենք քեզ չենք թողնի, վոր յետ դառնաս: Զափազանց մեծ կարիք ունենք մենք հայ աշխատողների: Ահա, բացի Արշակից (մատնանշելով ընկ. Զուրաբյանին), մի հատ հայ չկա, վորին կարողակայինք հանձնարարել պրոպագանդի, աղիտացիայի և Անդրկովկասի պրոլետարիատի ու բազմազան ազգությունների չքավոր գյուղացիության ավանդաբորի կազմա-

կերպության պատասխանատու աշխատանքը»: «Բնկ. Միխա, պատասխանեց նա, —յես շատ գոհ եմ, վոր դու ինձ ոդտակար ես համարում այստեղի աշխատանքի համար: Կաշխատեմ արդարացնել այդ: Շատ շուտով յես կմիանամ ձեզ: Միայն թե առաջ պիտի վերադառնամ Իլյիչի մոտ. չե՞ վոր պարտավոր եմ նրան ել իրազեկ դարձնել, թե վորպիսի աշխատանք ե այստեղ յեռում մեզ մոտ: Նա ամբողջապես կթե վագորիի, վորպես լեռնային արծիվ և կծախրի ձեզ վրա, կովկասի վրա, ապրելով և վոգեորվելով ձեր անձնվեր աշխատանքով այսպիսի դժվար պայմաններում: Յես ինքս ել ձեր շրջանում, հինգտամյա նիստից հետո, բոլորովին առողջացած, մինչեւ անդամության մեջ անդամ գլուխս ել չի ցավում:

Ահա ինչպես եր մեր առաջին հանդիպումը:

Յեկ իսկապես, ընդունել խորը պոդպոլիայում մեր գաղտնի նիստում մի անձանոթ արտասահմանյան ուսանողի, ուրն անձամբ մեղանից վոչ մեկիս մինչ այդ գրեթե հայտնի չեր, հավատալ նրան ամեն ինչ, դա մի ինչ-վոր անհավատալի բան եր: Անհավատալի յեր մեր պրոֆեսիոնալ հեղափոխականներ-պոդպոլչչիկների համար:

Սակայն այդ այդպես եր, —դա փաստ ե: Անմռռանալի Սաեփանը, այն ժամանակվանից ամբողջ 1905, 1906 և 1907 թվերին, թողնելով իր ուսումը Բերլինում և Արևմտյան Յել-բոպայի այլ վայրերում, ինքնուրաց և անձնազոհ կերպով կետվեց դեպի բազմացեղ և բազմազդի Անդրկովկասի բոլոր ձորերը, բոլոր յերկաթուղային գծերը, խճուղիները, լեռնալին կածանները մարզսիզմի գաղափարներն առանց աղարտական իլյիչի վոգով տարածելու համար:

Այո՛, բայց կեկների կուսակցությունը և 1905 թ. հեղափոխությունը, և 1917 թ. հեղափոխությունները՝ թե՛ փեղը-ըրվար—մարտյանը և թե՛ ինքը մեծ զոկտեմբերը—շատ բանով են պարտական նրան: Նա ավարտեց հերոսաբար եր մատաղ, հարուստ կյանքը մյուս ամենալավ և մտերիմ ընկերների հետ (26 կոմունարներից), զոհ դառնալով անդիսական իմպերիալիստների նենդ և գաղանաբարու քաղաքականության և դաշնակ-եսեր-մենչեւ կիսերի գծած քաղաքական իսարդավանքների և հեղափոխության ու սոցիալիզմի Կավաճանության:

Այո՛, մենք մեր Ստեփանին—Սուրենին չենք մոռանա, չի մոռանա նրան յերբեք և յերիտասարդությունը, վոգեորվելով թանգարին, անմռռանալի մեր բարեկամ-ընկեր բայլ-

չեկ—Ստեփան Շահումյանի հերոսական կյանքով և նրա կատարած հեղափոխական աշխատանքով...

Յեվ արդեն նրա և նրա զինակիցների վոսկրների վրա կանգնել են ահեղ վրիժառուները, վորոնք տապալեցին վերջնականապես բուրժուական իրավակարգը նավթի թագավորության մեջ—Բազմում և ամբողջ Անդրկովկասում, ինչպես և ամբողջ ԽՍՀՄ-ում...

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Սպիտակների հեծելազորը շղթայեց գյուղը: Աչալուրի հետևում եյին ներս ու դուրս անողներին:

Խուզարկում եյին տները. տակն ու վրա եյին անում ամենինչ:

Նրանց հեռանալուց հետո, տունն ավերակի յե վերածվում, կարծես ամեն ինչ գլխիվայր եր շուռ տված. իսկ յերկաթապատ ծաղկավոր սնդուկները դատարկվում եյին խուզարկության ժամանակ. նրանց միջից կտորեղենը, սփոռութեն ու շալերն անհետանում եյին...

Հերթը հասավ Վանյայի տանը:

—Ահա, այ թե վորտեղ ե:

Վանյուշան չկարողացավ տեսնել՝ ով եր այդ ասողը, նրա վրա հարձակվեցին, բռնեցին ու քարշ տվին:

— Մայրը վրա վազեց, ուզում եր պաշտպանել, չժողնել վոր տանեն, սակայն չարագեմ սպան թափահարեց ձեռքն ու ատրճանակի կոթով խփեց մոր գլխին: Մայրը ճշաց. աչքերը դուրս թռան կոպերից. ցնցվեց. ընկալ հատակին: Արյան առ չիթերը ներկեցին հատակը:

Վանյուշային բերին վարչություն: Բազկաթոռի վրա նըստել եր հրամանատարը, սաթե ծխամորճը բերնին, բեղերն եր վոլորում: Նրա կողքին կանգնած եյին յերկու քաղաքացիներին:

Վանյան նայեց ու ճանաչեց յերեկվա հետապնդողներին:

Վաշտապետն ակնոցները քթին դրեց, վոտից գլուխ չափեց Վանյային և դիմելով մյուս յերկուսին, հարցրեց.

— Սա յե, այնպես չե՞:

— Ճիշտ այդպես, ձերդ ազնվություն:

— Մոտեցիր. լսիր. մենք գիտենք, վոր դու թոռոցիկներ եյիր տարածում: Գիտե՞ս՝ ինչ են նշանակում այդ:

— Գիտեմ, համարձակ պատասխանեց Վանյան, կարծես նրան հարցնում եյին գյուղի ճանապարհը:

— Դե, ուրեմն, պատմիր ամեն ինչ անկեղծորեն:

— Իսկ ինչն ե ձեզ հետաքրքրում:

— Լուիր, ավել պակաս մի խօսիր, զայրացավ վաշտապետը:

Մենք գիտենք, վոր դու բայլշեվիկի տղա յես, գիտենք, վոր հայրդ թագնված ե...

— Ավելի լավ. ել ինձնից ի՞նչ եք ուզում:

— Դու պետք ե ասես վո՞րտեղ ե հայրդ:

— Զե՞ վոր դուք գիտեք; ել ինչո՞ւ յեք ինձ հարցնում:

— Սրիկա, ասա, վո՞րտեղ ե հայրդ:

— Զգիտեմ, հանգիստ պատասխանեց Վանյան. իսկ ժտքում շարունակ կրկնում եր.—

«Դու բանվորների ու գյուղացիների բարեկամն ես»:

— Թե չես ասիլ, քեզ կթակենք.

— Իսկ մենք չենք ուզում ձեզ պատասխանել:

— Այդ ով ե «մենք», թույլ տվեք հարցնել, նենդությամբ վրա բերեց վաշտապետը:

— Մենք, կոմսոմոլներս ու կարմիր հետախույզներս, մենք չենք դավաճանիլ աշխատավոր ժողովրդին:

— Իսկ շա՞տ եք դուք, զորաց վաշտապետը:

— Շա՞տ, ամբողջ աշխարհը:

— Այս դու... քեզ ցույց կտանք վողջ աշխարհ, եսոր եգուց Մոսկան կվերցնենք... Ամբողջ աշխարհը...

— Վո՞նց չե. գորտը փքվեց, բայց տրաքվեց:

— Ինչ ասացի՞ր լակոտ, — ու ձեռքի մտրակը շրիկաց, ձաղկելով Վանյայի այտը:

Վանյուշան հեղներով ժպտաց:

— Ուժը ձեր կողմն ե, հետո՞ւ, հարցրեց նա:

— Հետո-կտեսնես. եյ՛, պատրաստ ե:

— Հրաման քեզ, պատրաստ ե:

— Դուրս տարեք:

Վանյային դուրս տարան. բերին պարտեզը. կանգնեցրին ժառի տակ. ճյուղից կախված եր պարանը:

— Հագցրեք ողակը:

Վանյայի վիզն անցկացրին ողակը:

— Եթե չես ասի՞լ վորտեղ են ձեր բայլշեվիկները, կկանգնք. տալիս ենք յերեք րոպե ժամանակ:

Վանյան լուռ եր.

— Մի րոպե...

Վանյան նայեց չուրջը. կաղակներն ու սպաները խառնված եյին այդտեղ. ահա և բանվորներ—նրանց գոռով եյին քերել, վոր ներկա լինեն վանյայի մահապատճին...

Յերբ նա աչքերը բարձրացրեց, տանիքների վրայով տե-

սավ իր ծանոթ անտառը հեռվում, ուր նա գնում եր կաղին հավաքելու:

Լեռան կանաչազարդ գաղաթն աշնան արևի շողերից գուրգուրված, վոսկեղոծվել ու ժպտում եր:

Այս բոլորը՝ արևը, լեռները, թուշուններն այս խոսում եյին, կանչում վանյային:

— Ինչպէ՞ս լավ ե ապրելը, տես, իսկ դու, վանյուշա, ուզում ես մեռնել. ինչո՞ւ. ասա, հայտնիր նրանց և դու կապրես, կաշխատես, կշրջես, և այդ բոլորը քեզ հաճույք կպատճառի. գե, ասա, ասա նրանց ամեն բան:

— Յերկու բոպե, — Հնչեց լոււթյան մեջ, ասես զանդի դողանջ լիներ:

Վանյան սթափվեց. բերանը բաց արեց, վոր խոսի, կարծես մեկը հուպ եր տվել կոկորդը:

— Ընկերներիդ մահը քո մահն ե. ելի պիտի մանես հանքերը և այնտեղ քո գերեզմանը գտնես: Ո՞վ ես դու. աշխատավոր ժողովրդի զավակ: Ինչ են մտածում քո բախտակից ընկերները:

— Կարմիր հետախույզը կմեռնի, բայց թշնամու յերեսին ճշմարտությունը կասի. — Հիշիր, ինչ ե ասել լենինը:

ԼԵՆԻՆ

Նա ինքը շարեց այդ բառը տպարանում, դետնի տակ. Ի՞նչ, այժմ մատնելո՞ւ յէ այդ տպարանը:

Մտքերն արագ սրանում եյին վանյայի դլխում, մեկը ժյուսին տեղի տալիս:

— Կմատնես—ամեն ինչ կորած ե. այն ժամանակ մահքանվորներին, թողարկեն կառավարիչի կուչտ յերեխաները:

— Յերեք...

Կարծես ելեհտրական հոսանքն անցավ վանյայի մարմառվ. նա սթափվեց, բացեց աչքերն ու դոռաց.

— Սպասեցեք, կասեմ:

— Հապա, — ծուխը բաց թողնելով, խոսեց վաշտապետը: Վանյուշան աչքը զցեց կաղնած ամբոխի վրա. նա տեսավ եր մոտիկներին, վորոնք ահն աչքներին սպասում եյին ու կարծես ասում. —

«Վանյուշա, մի՞թե կմատնես»...

Նրա հայացքն ընկավ տներին, դտավլ իր խրճիթը, վորի կտրին նկատեց յեռանկյունի կարմիր դրոշակ՝ աղվեսի սև դնչով. այդ իր վաշտի դրոշակն եր, վոր սպիտակներին զայրացնելու համար կախել եյին ընկերները:

Դրոշակը նոր ուժ տվեց վանյային, աչքերը վառվեցին: — Ե՛յ, ընկերներ, — ուղեց գոռալ նա: Յեվ մտածեց, «մեռնեմ, բայց մեր դործը թող ապրի»:

— Դե, վերջին խոսքդ, — կանչեց վաշտապետը:

Վանյան աչք ածեց շուրջը, մեկ ել նայեց դրոշակին ու բարձր ձայնով գոռաց...

— Լսեցե՞ք...

Ամբոխը ցնցվեց. կազակները բարձրացան առվանդակներին կանգնած. վաշտապետն աչքերը համեց վանյայի գեմքին:

Իսկ նա խոբը շունչ առավ, թափահարեց գլուխն ու բարձրը կանչեց.

— Կեցցե լենինը:

— Կեցցե կոմսոմոլը.

— Կեցցե...

Սև, մազոտ բռունցքն իջավ վանյայի գլխին, աշքերը մթնեցին. նա ցնցվեց. ողակը սեղմեց կոկորդը:

Լուռ եր ամբոխը. լուռ եր ամեն ինչ:

Յեվ միայն արձագանգը հնչում եր հեռվում, լեռներում. և այդ արձագանդն եր.

— Լե ... լե ... նի ... նի ... ն ... ն

Յեվ մեռնում եյին այդ ձայները լեռներում, ձուրվելով մի բառում.

— Լենին:

Յերեք որ կախված եր մնալու դիմակը:

— Թող աեսնեն ու սովորեն, — Հրամայել եր վաշտապետը:

Սակայն մյուս որը վանյայի դիմակը չկար. նրան գիշերը տարել ու թաղել եյին Մատվեյն ու ընկերները:

Զորքը մի շարաթ մնաց գյուղում. տակն ու վրա արագ

ամեն ինչ. Հերթը հասալ հանքահորին:

Իջան յերեքը. բայց փոտած սանդուխքները չդիմացան, և իրենք ել ջարդուփուր յեղան հանքերի խորքում:

Ամբողջ յերկու շարաթ բանվորները դետնի տակ եյին, առանց հացի, սնվում եյին միայն ջրով:

Յերբ զորքը հեռացավ, Մատվեյն իջալ, կերակուր տարակ նրանց:

Լեռներում արդեն կոխին սկսվել եր. պարտիզանները մոտեցել եյին. Վոլդայի ափերից նոր ուժեր յեկան, սպիտակներին քչելով դեպի լեռները:

Դարնանային մի որ կարմիրներն անցան լեռներով, քշեցին սպիտակներին, և նաղալիխը նորից խորհրդայնացավ։
Վանյուշայի դիակը հանեցին ու թաղեցին հրապարակի մեջտեղում։

Յերբ Մատվեյն անցնում եր իր նոր վաշտի հետ, գլուխ նյին իջնում պատանի հերոսի գերեզմանի առաջ։

Աշնան ցերեկով, արեի գուրգուրող ճառագայթների տակ Ուրալը տոնում եր իր ազատագրման տարեդարձը։

Ահա պիոներներն անցնում են քայլերթով, հրապարակում շինած ամբիոնի կողքով։

Նրանց կարմիր փողկապները վառվում են ամբոխի գորշ շորերի մեջ։ Արեւ գունավորում եր կարմրին իր վոսկեժիրանի չողերով։

Յերբ պիոներները մոտեցան ամբիոնին, հարյուր աչքեր ուղղվեցին դեպի վերև կանգնած ծերունին։

Խորհրդի նախագահն եր այն, վանյայի հայրը։

Յերբ տեսավ պիոներներին, պայծառացավ ծերուկի դեմքը. նա ուղղեց իր կորացած մեջքն ու կանչեց, բոցավառված աչքերը ներքեվ հառելով։

— Կեցցե՛ կոմսոմոլը։ Պիոներներ, հեղափոխության գործի համար պատրաստ։

Յեկ հարյուրակոր մատաղ ձայներ գարնան շնչով կանչեցին միաբերան։

— Միշտ պատրաստ ենք։

Զգարթացավ ծերունու դեմքը, ժպտում եր արեւ, ծիստաղում եր ալեգարդ Ուրալ։

— Այս հողվածում նկարագրած դեպքերը վո՞ր շրջանին են վերաբերվում։

— Ինչո՞ւ համար սպիտակները վանյային բանտարկեցին։

— Ի՞նչ եյին պահանջում նրանք վանյուշայից և ի՞նչ միջոցներ եյին գործադրում։

— Ի՞նչ ապրումներ ունեցավ վանյուշան։

— Ինչո՞ւ վանյուշան չմատնեց իր ընկերներին և գերադասեց մահը։

— Վանյայի վերջին ապրումները և խոսքերը։

— Ի՞նչ եք կարգացել կամ լսել պատանի հեղափոխականների հերությունների մասին։

— Կարդացեք «Պատանի հեղափոխականներ» ժողովածույից Հոդվածը։

ՔՍԱՆՎԵՑԻՆ

Անապատում նրանք ընկան, Դասակարգի աչքից հեռու։ Անդրկատպյան ավաղներում, Անապատում նրանք ընկան։ Լիբր բորենին բրիտանական վոխից վոռնում եր, հրհոռում, Անապատում նրանք ընկան, Դասակարգի աչքից հեռու։

Միշտ նույն կրակն ե ինձ հուզում— Կովել ձեղ պես հերոսաբար. Անմարելի ու անդադար Միշտ նույն կրակն ե ինձ հուզում։ Մահն ընդունել ձեղ պես հզոր Ու թշնամուն նայել հպարտ— Միշտ նույն կրակն ե ինձ հուզում— Մեռնել ձեղ պես հերոսաբար։

Նրանք ապրում են կենդանի Ամենորյա մեր պայքարում. Թարմ ու վառման, վորպես արյուն. Նրանք ապրում են կենդանի։ Ըմբռուտ վոգին Շահումյանի Ծրջում ե դեռ, զեկավարում. Նրանք ապրում են կենդանի Ամենորյա մեր պայքարում։

Կարմրակրակ լուսաբացի, Լույսի համար նրանք ընկան Այն վիթխարի հերոսական Կարմրակրակ լուսաբացին։ Յեկ արյունով ֆանվեցի Լուսաբացը ալներկ հաղավ, Դրա համար նրանք ընկան Կարմրակրակ լուսաբացին։

ԱՄՈՒՐԻ ԱՓԵՐԸ ՀՐԵՏԱՆՈՒ ԾԽԻ ՄԵՋ

Ամուր գետի ուազմական նավատորմի նավատիները 2.500 կիլոմետր յերկարությամբ, չինական սահմանի ուղղությամբ, արթուն հսկում եյին խորհրդային սահմանները։

Նքանք հաճախ լոռմ եյին չին սպաների և դինվորների բացականչությունները.

— Հե՞յ, մատրոս, շուտով սոված կմեռնես:

Պնդագլուխ չին սպաները չեյին կարող և չեյին ուղում հասկանալ, վոր Ասրհրդային Հեռավոր Արևելքում նոր կյանք ե ամրանում, և այդ կյանքի չինարարությունը խանձարելն այնքան ել հեշտ բան չե:

Ամուրի նավատորմի շոգենավերը գիշեր ու ցերեկ ճեղքում եյին Ամուրի և Ուսուրի ջրերը, և չինացիների կրակոցներին չեյին պատասխանում:

Սպիտակ չինացիների վոտնձգություններն ուժեղացան: Մեր համբերության վերջն ել յեկավ: Հեռավոր Արևելքի Հատուկ բանակն ստիպված յեղավ դիմելու ակտիվ պաշտպանության:

Հակահարված տալու անհրաժեշտությունը շուտով դպացվեց: Չինական Պոլին քաղաքի մոտից, Սունգարի գետաբերանի մոտ սպիտակ գլաւրդիականները և սպիտակ չինացիները հարձակվեցին խորհրդային հողի վրա: Նավաստիներն ու կարմիր բանակայինները վոչ միայն յետ մղեցին հանդուգն թշնամուն, այլև ստիպված յեղան ժամանակավորապես դրսովել չինական այդ քաղաքը:

Առաջին գերիները, վոր ընկան նավաստիների ճեռքը, սարսափի մեջ եյին: Նրանց մեջ տարածել եյին այն լուրը, թէ բայլշեիները գերի չեն վերցնում: Ամենալավագույնը, վոր գերիներին սպասում ե, զա մահն ե Ամուրի ջրերում:

Այդ վախը յերկար չեր տեսում: Իսկ հետո «ընկեր», «բայլշեիկ», «բանվոր» բառերը հնչում եյին ամեն խոսքից հետո:

Բնակչությունն սկզբում փախչում եր խուճապի մատնված, պահվում թփերի մեջ և բանջարանոցներում: Մեր ճեռքըն ընկած ընակիչը պատկերացնում եր, վոր իրեն տանում են մահվան դատապարտելու: Բայց այդ ել յերկար չեր տեսվում: Իսկ հետո... Կարճ ժամանակից հետո յուրաքանչյուր աշխատավոր չինացի իր պարտքն եր համարում պատմել Չինաստանի բանվորների և գյուղացիների ծանր կյանքի մասին:

Հետազայում բոլոր ընդհարումների ժամանակ, յուրաքանչյուր աշխատավոր չինացի առաջին հերթին ցույց եր տալիս իր բուռը—մազոլները, վորպես «անցագրեր», վորպես ապացույց նրանց դասակարգային համերաշխության:

Այդպիսի «անցագիր» փորձեցին ցույց տալ նաև չինական սպաները: Գերի՛ բռնված չինական շոգենավերից մեկում

սպան ածուխով սկացրել եր իր գեմքը, ձեռքերը, բանվոր յերեվալու համար: Սակայն չենց չին զինվորները նրա ովլինելը հայտնեցին:

Հոկտեմբերի 12-ին չինական ուղմական նավերը կրակ բաց արին մեր առևտրական նավերի վրա: Սակայն թանգ նստեց նրանց վրա այդ բանը:

Հեռավոր Արևելքի Հատուկ բանակն այդ սրը տվեց իր առաջին հարվածը: Ամուրի նավատորմիդի համազարկերով գեպի չինական նավերն ու ամրությունները, կարմիր զորամասերի համերաշխ գրոհով պատասխանեց կարմիր բանակը զագազած չին գեներալներին:

Սպիտակ չինացիներն առաջինն սկսեցին կոխվը: Հազարավոր աբկեր նետեցին նրանք դեպի մեր նավերը: Հրետանու, գնդացրային ուժեղ կրակ բաց արին դեպի կարմիր բանակի շարքերը:

Մի քանի ժամ կովից հետո, Սունգարիի չինական նավատորմի նավերն իջել եյին Սունգարիի հատակը, կամ լոզում եյին կրակի մեջ կորած: Չինական կայազորը ջախջախած եր, թողել եր բազմաթիվ գերիներ և իր ամբողջ ունեցվածքը:

Լախասուսու քաղաքում աշխատավոր բնակչությունը, հատկապես չքավորությունը, շատ լավ ընդունեց կարմիր զորքերին: Յեղան միտինգներ, յեղավ իսկական զոդում կարմիր մարտիկների և ճնշված չինական բանվորների միջև:

— Ո՞ւմ շահերն ե պաշտպանում կարմիր բանակը:

— Ի՞նչպես եյին վարվում մեր բանակայինները թշնամուց դերի մեկած զինվորների հետ:

Կարդացիք այս բառերը և դիտեք նրա ձևափոխությունները			
հմ	ելի	զրեմ	զրելի
գրում	ես	ելիր	զրես
գրելիս	ի	եր	զրե
գրելու	ենք	ելինք	զրենք
գրած	եք	ելիք	զրեք
	են	ելրն	զրեն
		զրեցի	զրեր, մի զրիր.
		զրեցիր	զրեցեք (զրեք) մի զրեք
		զրեց	
		զրեցինք	
		զրեցիք	
		զրեցիք	
		զրեցինք	
		զրեցիք	

— Դիտեցիք թե այս բառի ձևափոխությունները ի՞նչպես, ի՞նչ կողմերով են ազդում նրա արտահայտած մտքի փոփոխության վրա:

— Սահմանում .— Խորքի մեջ բառերի ձևակիրխությունը կոչվում է խօսարիում :

— Խոնարհման ժամանակ . Եմ, ես, ե, ոժանդակ բառերին ավելանում ե «յ», յեթե նրա հետ արտասնվող նախորդ բառը վերջանում է ձայնավորով . որինակ՝ գրելու յեմ, գրելու յես, գրելու յեն, գրելու յենք, գրելու յեֆ, գրելու յեն :

— Մի քանի բայխոնարհեք վերևում ցույց տված ձեերով և գրեանուրակում :

ԼԲՏԵՍԸ

1. ԳՅՈՒՂԻ ԳՐԱՎՈՒԻՄԸ

Յերկինքն ամպած եր : Սուր, կրակի պես այրող քամին խփում եր մարդու յերեսին : Շղթայում պառկած կարմիր բանակայիններն իրենց մեջքեւը դեմ եյին արել քամուն, միայն գումարտակի հրամանատարը, գլուխը ոճիքի մեջ թաղած, ձեռները գրապանում զրած, անց ու դարձ եր անում շղթայի յերկարությամբ :

Սպասում եյին հետախույզներին :

Վերջապես նրանք վերադարձան և հայտնեցին, վորթջնամու ուժերը գտնվում են դյուզում և բաղկացած են յերկու վաշտ հետեւակից . կա և հեծելազոր :

Գումարտակի հրամանատարը վորոշեց հարձակում գործել : Կա իր մոտ կանչեց վաշտերի հրամանատարներին և յուրաքանչյուրին խնդիր տվեց :

Վազքն սկսվեց :

Մոտ հարյուր քայլ առաջ գտնվող տարածությունից շղթան ուռա գոչելով բարձրացավ և գումարտակը հարձակվեց զրոհի վրա : Լուս եր : Կրակոցների ձայներ չկային : Հեռվից հազիվ նշմարվում եր փախչող սպիտակների ոճաձև շղթան :

Պահակներ գնելուց հետո, գումարտակը տեղավորվեց գյուղում՝ հանգստանալու համար :

2. ՊԱՅՈՒՄԱԿԻ ԱՆՀԵՏԱՆԱԼԸ

Սենյակում տոթ ե :

Հրամանատարական կազմը, գրատներով ծածկված, խորը քուն եր մտել :

Սենյակի մի անկյունում ինչ վոր մեկը շարժվում եր : Նա գլուխը բարձրացրեց, և աչքերը չուած, սկսեց դիտեց սենյակը : Լսվում եր միայն քնածների խոմփոցը :

Նա զգուշ կանգնեց, գրատը հագավ : Հանդարտ, վորվոչ վոք չզարթնի, նա սկսեց շարժվել դեպի պատուհանը : Մոտենալով պատուհանին, ձեռքը պարզեց : Ելեկտրական լապտերիկի բարակ շողը վազվացեց սենյակի պատերի վրա : Խովով ու մարեց :

Մարդը վերցրեց պատից կախված պայուսակը :

3. ԽՈՐՀՈՂԱՎՈՐ ԿՐԱԿՆԵՐ

Սկսվեց փոթորիկը :

Քամին մերթ ուժեղանում, մերթ հանգստանում եր : Ողում խաղում եյին ձյունի փաթիլները : Մի քանի ժամում նսինովկա գյուղը մնաց ձյունի շերտերի յետեւում և ել չեր յերեւում :

Գյուղի ծայրին, խորը ձյունի մեջ, անցուղարձ եր անում ժամապահը : Նրա ոձիքը, ցրտից, քամուց և աչք ծառկող ձյունի փաթիլներից, վատ եր պաշտպանում : Վուները սառել եյին : Հրացանը փամփուշտի պայուսակի վրա դնելով, ձեռքերը դրեց գրապանում և սկսեց պարել : Նա նախանձով եր նայում ձյունի տակ ծածկված տնակներին : Իսկ քամին քանի գնում ուժեղանում եր :

Հեռվից յերեւաց մի պարզ, ինչպես ասող, լույս, ու մարեց :

Շուտով լույսը կրկին յերեւաց :

Ժամապահը կանգնեց և սկսեց ուշադրությամբ նայել : Լույսը մերթ փայլում եր, մերթ մարում : Հուղված ժամապահը զգուշությամբ գնաց դեպի լույսը : Նա հասավ զանգակատանը : Շունչը քաշած, սվինն առաջ պարզած, սկսեց սանդուխտներով վեր բարձրանալով, նա լապտեր յերկար զրատ հագած մի մարդ, վորը մերթ վառեսավ յերկար զրատ հագած մի մարդ եր ելեկտրական լապտերիկը :

— Կանգնի՞ր, կկրակե՞մ, — հրացանի փականքը չխկացնելով, ասաց ժամապահը :

Լույսի նեղ շերտն ուղղվեց ժամապահի վրա : Կարմիր բանակայինը և լապտեր բռնած մարդն իրար ճանաչեցին :

— Ա՛, ընկեր հրամ...

Պահակն իր խոսքը չվերջացրեց, վորովհետեւ գլխին խփեցին :

Հրացանը չխչխկալով ու թխթիկալով, սանդուխտներից ցած գլորվեց :

4. ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ

Քամին հանդարտվեց: Սկսեց բացվել մոխրագույն ու մոռայլ արշալույսը: Բարձր հրացանաձկությունը քնած գյուղին զարթեցրեց: Քնատ կարմիր բանակայինները, չիմանալով, թե ինչ ե պատահել, կիսահազնված փողոց վաղեցին: Գյուղի միջով հրացան արձակելով սլանում յին ձիավորներ: Տարուբերելով թթերը, նրանք դոչում եյին.

— Տներից մի' դուրս յեկեք:

— Անձնատուր յեղեք:

— Զենքերդ ցած դրեք:

Գյուղի ծայրին, յեկեղեցու բակում, հավաքվել եյին հիսունի չափ կարմիր բանակայիններ: Նազանը ձեռքին կարմիր բանակայիններին շղթայի ցըելով, գես ու զեն եր վազում հրամանատարներից մեկը և հրաման արձակում.

— Զերակե՛լ: Սպասել հրամանի: Հանդարտ, ընկերներ. մի հուզվեք:

Շղթայի ցըլեցին: Հրամանատարը պառկեց շղթայի յետեկին:

Զզզ՝, զզզ՝… Յերդում եյին շղթայի վրայից սլացող գնդակները:

Զիավորներն շտապում եյին յեկեղեցու բակը մտնել:

— Գումարտա՛կ, —մի ծնկան վրա չոքելով և նազանն առաջ պարզելով, բարձրածայն հրամայեց հրամանատարը: Զիավորները մոտենում եյին: Նրանց թիվը հինգ-վեց անգամ ավելի չատ եր, քան շղթայում պառկած կարմիր բանակայինները:

— Կրա՛կ, —հանդիստ ձայնով հրամայեց հրամանատարը:

Համազարկը պայթեց: Զյունի քուլաները ծածկեցին ձիավորներին:

— Կրա՛կ:

Կրկին ձյունի քուլաներ:

Զիավորները, նման գիմադրության չսպասելով, բազմաթիվ զոհեր տալով, հետ դարձան: Պատուհաններից ու գուներից անհամար գնդակներ արձակվեցին նրանց հետեւից, նրանց առաջից, ձիաների վոտների տակ, ուժեղ ճայթունով պայթեց գցված նոնակը, ապա հետեւ յերկրորդը:

— Ուռուա՛, —լսվեց ձիավորների չքանալուց հետո:

5. Ո՞Վ Ե ԼՐՏԵՍԼ

Սպիտակների գիշերային հարձակումը գումարտակին թանգ նստեց: Շատ սպանվածներ և վիրավորներ կային:

Քննություն կատարելով պարզեցին, վոր սպիտակները գերի յեն վերցրել ժամապահներին և գյուղը խուժել:

Լուս, գլուխը կախ զցած, հրամանատարն անց եր կենում շարվող կարմիր բանակայինների մոտով: Անսպասելի կերպով հիշեց պայտսակը, բայց պայտսակը չկար: Վոչ վոքի վոչինչ չասելով, նա վազեց գեղի այն տունը, վորտեղ գիշերել եր: Վողջ տունը տակն ու վրա արագ, բայց պայտսակը չգտավ: Նրա մեջ կարեռ գաղտնի փաստաթղթեր կային: Հրամանատարն ընկալ նոտարանի վրա և սկսեց մտածել:

«Ո՞վ ե գողացել պայտսակը: Ո՞վ ե վերջին ժամանակներս տեղեկություն տալիս դումարտակի շարժման ճանապարհների մասին: Ո՞վ ե գողացել շտաբից ստացված հրամանը»:

— Ո՛ւս, —ատամները կրծտացնելով ասաց նա, —կը ըռնեմ —վատ կլինի:

6. ԿՐԿԻՆ ԿՐԱԿՆԵՐ

Ցերեկով բանրերը մի հաստ ծրար բերեց ու հանձնեց գումարտակի հրամանատարին: — Կարևոր գրություններ եմ ստացել, ընկերներ, —ճաշի ժամանակ ասաց հրամանատարը: Մեր գումարտակը պետք է մի լուրջ գործողություն կատարի:

Բոլորը հետաքրքրվեցին:

— Ինչպիսի՞ գործողություն, —հարցրեց առաջին վաշտի հրամանատարը:

— Այո՛, այո՛, հայտնեցեք մեղ, —միաբերան ձայն տվին մյուս հրամանատարները:

— Դեռ ջահել եք: Գաղտնիք ե, ընկերներ, գաղտնիք ե: Կասեմ, բայց վոչ այժմ, —ժպտաց գումարտակի հրամանատարը:

Սկսեց մթնել: Պահակները կրկնապատկեցին: Սենյակում հանդատություն եր տիրում: Բոլորը քնած եյին: Այն քան տաք եր, վոր չունչ քաշելը դժվար եր: Քնածներից շատերն անհանդիստ կերպով մի կողքից մյուսն եյին չուռ գալիս:

Մի կերպարանք բարձրացավ և սկսեց զգուշ մոտենալ քնած հրամանատարին: Մոտենալով, մարդն սկսեց նրա կիսատակից քաշել պայտսակի փոկերը: Գումարտակի հրամանատարը շարժվեց: Մարդը չունչն իրեն քաշեց: Դժվարությամբ հանելով պայտսակը, նա հանդարտ քայլերով

սենյակից դուրս յեկավ։ Գումարտակի հրամանատարը վեր կացավ, տնտղեց ատրճանակը, դրեց գրպանը և նույնպես դուրս յեկավ սենյակից։

Դուրսը ցուրտ եր։ Մթության մեջ հրամանատարը նկատեց հեռացող մարդուն և հետևեց նրան։ Մարդը մտավ յեկեցու բակը և մոտեցավ զանգակատանը։

Զանգակատան դռան մոտ մի մարդ եր կանգնած։ Նրանք ցածր ձայնով իրար հետ խոսեցին, ապա դես ու դեն նայեցին ու ներս մտան։

Գումարտակի հրամանատարը, բռնելով գրատի փեշերը, մոտեցավ դռանը և սկսեց ականջ դնել։

Լսելի յեր, վոր մեկը ման եր գալիս և կամաց խոսում մի ուրիշի հետ։ Տեսնելով, վոր լսելուց ողուտ չկա, հրամանատարը յեկեցու բակից դուրս յեկավ և թագնվելով մոտիկ տան հետեւը, սկսեց նայել զանգակատանը։ Շուտով նաև նկատեց, վոր զանգակատնից լույսի մի շող փայլեց, նրա հետեւից յերկրորդը, յերրորդը……

— Շո՛ւն, շան վորդի, Մորդեյի այրուբենով և հաղորդում, — քՓրեց հրամանատարը։

Քիչ ել սպասելով, նա արագ վազեց դեպի բնակարանը և բռլոր քնածներին զարթեցրեց։

— Ընկե՛ր հրամանատարներ, — զոչեց նա, — դումարտակն անհապաղ մարտական կարդի բերեք և պատրաստ կացեք։

Իսկ յերբ հրամանատարները վազեցին իրենց վաշտերի մոտ, մի խումբ մարտիկների ձայն տվեց։

— Ընկեր բանակայիններ, յեկեք իմ հետեից։

Գումարտակի հրամանատարը և մարտիկները կուզեկուդ չքացան խալարի մեջ։

Նրանք մոտեցան զանգակատանը, վորի վրա լույսը դժո փայլատակում եր։

— Կանգնեցեք այստեղ։ Զկրակեք։ Կենդանի բռնեցեք, — զանգակատան շուրջը պահակներ դնելով, հրամայեց հրամանատարը։

Յերկար սպասեցին։ Վերջապես վոտնաձայն լսեցին։ Հրամանատարը կանգնեց զանգակատան դռան մոտ և նաշունը պարզեց։

Դուռը բացվեց։

— Կանգնի՛ր, ձեռքերդ վե՛ր։

Զանգակատնից իջնողներից մեկը հանեց ատրճանակը և արձակեց հրամանատարի վրա։

— Մի՛ կրակիր. սպանել չես կարող։ — Նկատելով դեպի

իրենց ուղղված հրացանների փողերը, զանգակատնից իջնողներն իրենց ատրճանակները դեն գցեցին։

Տեսնելով իրենց հրամանատարին, կարմիր բանակայինները զարմացան։

— Գումարտակի հրամանատարի ոգնականն ե, — զոչեց մեկը։

— Վո՛չ, ընկերներ, սա իմ ոգնականը չե, այլ շորերը փոխած սպա, լրտես։ Իմ ոգնականին սպիտակները բռնել, սպանել են, շորերը սրան հազցրել, և տվել սպանվածի փաստաթղթերը։

— Վա՞յ յես քու . . . — ասաց հրամանատարներից մեկը և վազեց դեպի լրտեսը։

— Կանգ առ, — հրամայեց գումարտակի հրամանատարը։ Զեռք չտաս։ Ուղարկենք շտաբը, այնտեղ գործը կը ընեն։

7. ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հենց վոր գումարտակը դիրքեր գրավեց ու ամրացավ, յերեաց շարժվող բազմություն։

Կամաց ձայնով հրաման տրվեց և կարմիր բանակայիններն ավելի խորը մտան ձյունի մեջ։

Հեռադիտակով պարզ յերեւմ եր, թե ինչպես արագ առաջանում եր սպիտակների հեծելազորը։

Յերկարացնելով իր թևերը, հեծելազորն սկսեց ձրապատել գյուղը։

— Ուշադրություն։

Կարմիր բանակայինները զգաստացան։

Իսկ յերբ ձիաներն ու ձիավորները, նկատելի դարձան, գումարտակը կրակ բացեց։

«Ճա-տակ-տա», — տկտկացին գնդացիրները և հնձեցին հեծելազորը։

Թշնամին, վոր այդպիսի հանդիպման չեր սպասում, առաջանում եր հանդարտ։

«Ճա-տա-տա», — արձագանք տվին գյուղի մյուս կողմի գնդացիրները։

Յեկեցու հետեւից վորոտացին համազարկերը։

Կարմիր բանակայինների գնդացիրներն ու հրացանները շեշտակի կերպով նպատակին եյին խփում։ Վողջ գաշտը ծխում եր։ Ձիաները, կորցնելով նստողներին, պտտվում եյին գաշտում։ Սպիտակ ձյունի վրա սևին եյին տալիս սպանվածները։ Սպիտակների մնացորդները սարսափած

Հետ փախան: Բայց մի դասակ կարմիր բանակայիններ գընդացիքներով գյուղի մյուս ծայրում դիմավորեցին փախչող հեծելազորին: Սպիտակներն ընկան ողակի մեջ: Գնդացիքներն անխնա կերպով հնձում եին:

Շուտով ամեն ինչ վերջացավ և կարմիր բանակայիններն սկսեցին բռնել ձիաները, հավաքել զենքերը:

— Լավ ե, — ասաց հրամանատարը դիտելով դաշտը: Այս կոիվը նրանց գիշերային հարձակման փոխարեն եր: Այս անդամ մենք նրանցից խորամանկ դուրս յեկանք: Ել չեն համարձակվի հարձակվել, մանավանդ, վոր մեր զումարտակի մասին այլևս վոչ վոք տեղեկություն չպետք ե տանրանց:

ՀՐԱՄԱՆ

1

— 1919 թվականի աշնանն եր այդ: Մենք վոնդել եյինք Պետլյուրային Ուկրայինայից, իսկ այժմ Դոնբասում նեղում եր մեզ Դենիկինը: Այդ ժամանակ յես կարմիր բանակային եյի և կոիվներից մեկում վիրավորվել եյի: Սանիտարական գնացքով ինձ ուղարկեցին Մոսկվա, հիվանդանոց... Առողջացրին: Մտածում եյի ընկնել նորից Դենիկինի ճակատը, սակայն բոլորովին այլ բան ստացվեց: Ինձ ուղարկեցին վոլգա, պահեստի գումարտակ, իսկ այնտեղից Արխանգելսկի ճակատը, կովելու անտառներում և ճահիճնեռում...

Բնությունն այնտեղ բոլորովին այնպես չե, ինչպես այսուղ ե, վոչ սարեր կան, վոչ խորը ձորեր—հարթ տեղ ե, ուրիշ վոչինչ... Չորս կողմու անտառ ե, խիտ անտառ:

Իսկ յեթե անտառում բաց տեղ դուրս գաս, անպատճառ ճահճի կհանդիպես:

Մեր թշնամիներն ել այլ եյին, անգլիացիներ, ամերիկացիներ, ֆրանսիացիներ և ել ով դիտե, ինչ ազգից: Ռուս սպիտակներն ել քիչ չեյին: Մթերքներ շատ ունեյին, գընդացիքներ, թնդանոթներ—ինչքան տաեն, հագնված եյին կարծես զորահանդեսի համար: Իսկ մերոնք—մերկ, սնունդը սակավ, զենքերս քիչ, տաք հագուստի պաշար չունեյինք... Թվով ել քչփոր եյինք: Վո՞րաբերից կարող եյինք ձեռք բերել, ինչ վոր հարկավոր եր մեզ: Մեր հանրապետությունն այն ժամանակ շրջապատված եր թշնամիներով և մենք կը զում եյինք ամեն ուղղությամբ:

Յեկա յես գունդը և պաշտոն ստացա կապի զորաբաժնի մեջ: Գունդը կանգնած եր լայն ճակատում: Նրա աջ թեվը հասնում եր Հյուսիսային Դվինային, (այս տեսակ զետ կա այնտեղ), իսկ ձախ թեվը հենված եր անանցանելի ճահճին: Գետի մյուս կողմում գտնվում եր մեր դիվիզիայի հարեան գունդը, վորի հետ մենք պետք ե կապ պահպանեյինք գետի վրայով... Այնտեղ եր գտնվում նաև դիվիզիայի շտաբը:

Մի անգամ ամերիկացիները և անգլիացիներն անցան մեր թիկունքը և մենք ստիպված յեղանք թողնել մեր դիրքը, այն ել վոչ թե թողնել, այլ ուղղակի փախչել, թե չե կսեղմեյին մեղ գետին և նահանջի ճանապարհ կկտրելին: Գործի տաք ժամանակը բոլորովին մոռացել եյինք գետի մյուս ափին գտնվող մեր հարեվանների մասին: Վերջին բոպեյին կանչում ե ինձ մեր հրամանատարը և հրաման և տալիս գնալ դիվիզայի շտաբը և հայտնել, վոր գունդը թողել ե իր դիրքերը և յետ ե նահանջում:

Կրկնեցի յես, ինչպես կարգն ե, հրամանը և ուղղվեցի գեպի գետափը: Մոտենում եմ այն տեղին, վորտեղ առաջ կապի պահակ կար, իսկ այժմ այնտեղ մի մարդ անգամ չկար: Սկսեցի փնտրել նավակը, բայց նրա հետքն անգամ չերեւում: Ուղում եյի գնդի յետեվից գնալ, բայց մտածեցի, վոր դրանով գործին ողնած չեմ լինի: Հրամանը տրված ե կպետք ե կատարել այն, ինչ գնով ուզում ե լինի: Փորձեցի գետի մյուս ափում գտնվող կապի պահակի հետ հարաբերության մտնել, — չե՞ վոր այնտեղ ել նավակ կար: Կապեցի ծառի ճյուղից թաշկինակս, սկսեցի կանչել... պատասխան չկար: Նորից կրկնեցի, — նույն անհաջողությունը: Մտածում եմ, ի՞նչ անեմ:

Նայեցի չորս կողմու — տեսնեմ ափին մի ահազին ծառ և վայր ընկած: Ճյուղերի կեսը կտրված ե: «Ը՞՛ը, — մտածում եմ, — ահա իմ նավակս: Գերանի վրա կանցնեմ մյուս ափը»:

Կապի հին պահակի տեղում զտա մի կոտրած թիակը վորը հետո ինձ շատ պետք յեկալ: Քարչ տվի ծառն ուղիղ մինչեւ գետի ափը, մերկացա, շորերից շինեցի կապոց, դրին մեջ պատրսները և կապեցի մեջքիս: Հրացանը նույն պես մեջքիս ցցեցի: Հետո ծառը ձգեցի ջրի մեջ, նստեցի վրան, հրեցի և սկսեցի լողալ:

Գետի հոսանքը միանգամից տարավ ինձ: Սկզբում յես նստած եյի ամուր և ուժգին դործում եյի թիակով: Բայց զարմանալի բան: Ինչքան թիավարում եմ, գետի ափից չեմ հեռանում, վոչ մի կերպ չեմ կարողանում կտրվել գետափից: ափի ուղղությամբ ուժեղ եր գետի հոսանքը:

Այդ ժամանակ սկսեցի յես գործել ձեռներով, վոտնե-
րով։ Մի կերպ անցա գետի մեջ տեղը և շունչ քաշեցի,
վոտներս մրսում եյին։

Սկսեցի յես հերթով բարձրացնել վոտներս և թիակի
յերեսով խփել նրանց, վոր տաքանան։ Այդ ձեվով քաշքվեցի
յես ջրի մեջ մի ամբողջ ժամ և այնուամենայնիվ չկարողացա
պահվել գերանի վրա... ուղիղ ափի մոտ գլորվեցի գետը,
բարեբախտաբար ընկա ծանծաղ տեղ, վոտի կանգնեցի և
քարշ յեկա մինչեվ ափը։

Հագուստոս թրջվել եր, ատամներս որթսրթում եյին, իսկ
տաքանալու վոչինչ չկար։ Սկսեցի չորս կողմս նայել։ Տես-
նեմ՝ գետի հոսանքն ամբողջ վեց վերստ քշել-տարել և ինձ,
ուրեմն յես դատնվում եյի ճակատի յետեվը, թիկունքում։
Մտածում եմ, դրությունս վատ ե, ինչպե՞ս գնամ մերոնց
մոտ։

Տեսնում եմ, անտառը հեռու յե, իսկ ափի ուղղությամբ
ձգված ե մարգագետինը։ Վճռեցի ամենից առաջ հասնել ան-
տառին, թե չե թշնամին կնկատի, կրանի և վերջ կտա կյան-
քիս... Հագա շորերս, բրրր... թաց են և ցուրտ։ Բայց ուրիշ
յելք չկա, պետք ե համբերել։ Ուղղվեցի դեպի անտառը,
գնում եմ և չարունակ չորս կողմս նայում։

Միայն հանկարծ զգում եմ, վոր վոտներիս տակ ջուր կա։
Յած եմ նայում, կարծես ճահիճ լինի... Մի քիչ դենն եմ
գնում, նորից ջուր։ Ըհը, մտածում եմ, ընկել եմ ճահիճ մեջ։
Փոխում եմ քայլերս դեպի աջ—միենույն պատկերն ե, դեպի
ճախ-ելի նույնը։ Զննեցի բոլոր չորս կողմս, ինչպես հարկա-
վոր ե, դուրս յեկա մի չոր տեղ, կարծես կղզու վրա ընկա։
Չորս բոլորս ճահիճ ե...։

Վեր կացա և ուղղակի ճահիճ վրայով գնացի։ Այն ժամա-
նակ դեռևս յես այդ անիծված ճահիճները չեյի ճանաչում։
Չուրը լիկլիսկում ե վոտներիս տակ, բայց ինձ ներս չի քա-
շում, այնպես վոր առանձին դժվարություն չեյի զգում, աշ-
խատում եմ վոտս զնել հողի կոշտի վրա, վորը թեև դողում
ե տակս, կարծես զսպանակի վրա ամրացած լինի, բայց գոնե-
պինդ ե։

Հանկարծ վոտս միանգամից կես արշին խրվեց։ Յես
միշտ ասած, վախեցա, ամբողջ ուժով վեր քաշեցի վոտս և
դուրս հանեցի։ Մի տասը քայլ ելի առաջ գնացի և մինչև
ծնկներս յերկու վոտով թաղվեցի ճահիճ մեջ։ Մոտս թուփ
կար, բոնեցի նրանից և աշխատեցի դուրս բերել վոտներս։
Բայց անհնարին եր, մի վոտս հանում եմ, մյուսն ե խրվում,

հանում եմ յերկրորդ վոտս, առաջինը նորից թաղվում և
ճահիճի մեջ։ Քաշքվեցի այս ձեռվ յերեք բոպեյի չափ, տես-
նում եմ, հնար չկա գուրս գալու... Յեվ ուղղակի զգում եմ
գոր ճահիճը ինձ ներս և քաշում ամբողջովին, ծծում ե,
ասես։ Այստեղ սառն քրայնքը պատեց ինձ, հասկացա, վոր
կորչում եմ...։

Նայեցի, հրացանս ընկած եր կողքիս կոչտի վրա, ձեռ-
քից բաց եյի թողել, յերբ խրվել եյի ճահիճ մեջ։ Ձեռքս
մեկնեցի, բոնեցի սվինից և քաշեցի դեպի ինձ։ Ամբողջ ուժով
խրեցի հրացանը ճահիճ մեջ, բոնեցի սվինի ծայրից, աշխա-
տելով ճահիճի տակ մի ամուր բան չոշափել։ Հրացանի կոթը
գիպավ և հենվեց մի ճահճային կոճղի։ Այսպիսով յես կար-
ծես թե հենման կետ ստացա, ավելի ամուր բոնեցի թփից, մի
վոտս գուրս քաշեցի, իսկ մյուսը կիսով չափ վեր բարձրա-
ցավ... Հարգածից յես բոլորովին կորցրի իմ նեցուկը և
ուղղակի յերեսնիվայր ընկա լպրծուն հեղուկի մեջ... ամ-
բողջ գեմքս ազտոտվեց-մտածում եմ, սատանայի յեմ նման
չիմա, բայց զոնե վոտներս ճահիճ միջից բոլորովին հանել
եյի։

Այդ ժամանակ յես գլխի ընկա, ինչումն ե բանը։ Յերբ
մարդ կանգնանձ ե յեվ հենվում ե փոքրիկ տարածության
վրա, այդ տարածությունը նրա ծանրությանը չի դիմանում,
իսկ յես, յերեսիս վրա ընկած, ավելի մեծ տարածություն
եյի բոնել և ճահիճը դրա համար ել պահում եր ինձ։

Սկսեցի ավելի համարձակորեն շարժել ձեռքերս և վոտ-
ներս, աշխատում եմ այնպես առաջ շարժվեմ, վոր մարմինս
ավելի լայն տարածություն բոնի և ճահիճ վրա ավելի մեծ
տեղի հենվեմ։ Սկզբում չեր հաջողվում այդ, իսկ հետո կա-
մաց-կամաց, խխունջի նման սկսեցի սողալ առաջ։

Հասա առաջին մեծ հողակույտին, բարձրացա նրա վրա
պառկեցի և սկսեցի հանգստանալ սարսափելի հոգնած ե-
յի... հանեցի կոշիկներս, վուրս թափեցի միջից ճահճային
թանձը հեղուկը, դեռ չպրացի պատրոններս—ինչի՞ս եյին
հարկավոր նրանք։ Հրացանս մնացել եր ճահիճ մեջ, պատ-
րոնների պետք չկար։

Իսկ մինչև անտառ դեռ մոտ հարյուր քայլաչափ եր
մնացել։ Կարծես թե, յեթե ձեռքդ մեկնես կհասնի, բայց
փորձիր անցնել այդ տարածությունը։

Մութն արգեն ընկել եր, յերբ հասա անտառին։
Բայց վորքան ուրախացա, յերբ զգացի ինձ ամուր հողի
վրա, կարծես նորից ծնվեցի։ Վայր ընկա մեջքիս վրա և քեփ

Եյի քաջում։ Այնքան եյի սողացել փորիս վրա, վոր փորս
անզգայացել, փայտ եր դարձել...

Շարունակեցի ճանապարհս, վոր արդեն շատ ավելի
հեշտ եր առաջիկանից: Գնում եմ անոտառի յեզերքով, հողը
չոր է, զնում եմ ողիղ գծով, վստահությամբ... Ականց
աստիկ մթնել:

Հանկարծ ճյուղերն սկսեցին չրթչրթալ :

Անտառի միջից միանդամից վեց հոգի հարձակվեցին ինձ վրա: Ժամանակ իսկ չափին մտածելու, թե բանն ինչումն ե, կապեցին ձեռներս մեջքիս վրա ե. Հերթով իրենց առաջը զցեցին: Իրենք մեր լեզվով չեցին խոսում, միայն մի խոսք եցի հասկանում. «Քայլչիկ, բայլչիկ»: Ինչպես յերեվում ե, այդ խոսքը բոլոր լեզուներումն ել միատեսակ ե:

Բերին ինձ իրենց սպայի մոտ : Նա ինչ վոր մի բան
մըթմբթաց և ձեռքով ցույց տվեց հեռուն : Յերեք հոգի մնա-
ցին նրա մոտ, իսկ մյուս յերեք հոգին ինձ քշեցին ավելի
հեռուն . . . Բերին մի գյուղ, մտցրին խրճիթ, — այնտեղ ել մի
ապա կար : Կոտրաված ուստերեն լինգվով հարցնում ե . — «Կար-
միր բանակիցն եմ, թե վոչ» : — «Վո՞չ, — ասում եմ, — յես
գյուղացի յեմ, գետի մյուս ափից» և տալիս եմ գյուղի ա-
նունը, վորտեղ մեր զնոպի շատրն եր զանվում . . . Այն ժամա-
նակ, ցարական պատերազմից հետո չե՞ վոր համարյա բո-
լորն ել պինդորական բաճկոնտկներ ելին հագնում . . . «Իսկ
թունչ ես անում այսուղ, — հարցնում ե, — ինչո՞ւ այսպես
թըջված և աղտոտված ես» :

Պատասխանում եմ, վոր պառւզներ հավաքելիս ընկել եմ Ճաշճի մեջ... ել ուրիշ բան այդ ժամանակ մտքովս չանցավ։ Ծիծաղելով ասում ե «սուայթմո կացիր այստեղ, իսկ վաղը մենք կալարգենք, թե ինչ պառը են ոռո»։

Տարան ինձ փակեցին մտուանում և զռան մոտ ել պոհապան դրին:

Մոթն եր մասանում... Գլուխ չի գործում: Ստա-
մոքս ել սկսել եր բողոքի: չե՞ վոր առաջոտից վոչինչ չեյի
կերել: Մթության միջ նատած մնացի յերկու ժամ, բոլոր
պատերը տնտղեցի—շինությունն ամուր ե, ինչպես բոլոր շի-
նությունները հյուսիսում, կառուցված ե գերաններից: Հան-
կարծ լուս եմ, պահապանին փոխում են: Դուռը բացվեց,
լազուերով լուսավորեցին մասոնիներոը, միամտվեցին, վոր
յես այստեղ եմ, ինչպես մուկը թակարդի մեջ, նատած

եմ, և նորից ծածկեցին դռները։ Մի հինգ ըսպեցից հետո
նորից լսվեց դռան ձայնը։ Յերեխ ուտելիք են բերել,
մտածում եմ յես։ Իսկ դռան միջից մաքուր ոռուերեն լիզ-
վով ինձ հարցնում են։ —«Եյ, ընկեր, վո՞րտեղ ես . . .», —
«Այստեղ եմ, —պատասխանում եմ, —ի՞նչ կա վոր։ Դո՞ւ ինչ
մարդ ես», իսկ նա ինձ պատասխանում է։ —«Յես ոռու եմ,
թեև ամերիկական հագուստ ե վրաս։ Կամաց խոսիր—զրու-
ցենք մի քիչ, խոսելու բան կճարվի»։ Դուռը մի քիչ բացել ե
և խոսում ե դռան ճեղքից . . .

Յես չքաշվեցի, սկզբում խնդրեցի մի բան տալ ուտել-
լու: Պահապանը տվեց ինձ պաքսիմու և յերկու կտոր շաքար,
վոր յես մի վայրկյանում կուլ տվի: Սկսեցինք խօսել: Պարզ-
վեց, վոր նա հրեա յէ, արևմտյան նահանգներից, ցարի ժա-
մանակ գաղթած ե յեղել Ամերիկա: Բայց թեև այստեղ թա-
գավոր չկա, կյանքը քաղցր չե, տերերն այնպես են սեղմում
բանվորներին, վոր չես կարողանում չունչ քաշել: Հենց վոր
իմանում ե Խորհրդային Խշանության մասին, վճռում ե
վերադառնալ Հայրենիք, այդ նպատակով մտնում ե, վորպես
կամալոր այն գունդը, վորը նշանակված եր Արխանդելսկը
գրավելու համար: Այժմ Հնարներ ե վինարում, թե ինչպես
փախչի կարմիրների մոտ, բայց դա դժվար է. ամեն մի
քայլափոխում հետեւում են այդպիսիներին: Իշխանությունը
նրան բայլչեիկ ե համարում և չի հավատում: Մանավանդ
սպաները հանդստություն չեն տալիս: Յերեկ խուզարկել:
Ելին նրա իրերը և, իհարկե, վոչինչ չեյին դտել:

Ճիշտն առած, սկզբում մտածեցի, պրովակատոր Հո
չի⁰, վոր ուղում ե խնձանիդ խոսք քաշել, խոկ հետո վճռեցի.
Ի՞նչ եմ կորցնում վոր, միևնույն ե, չեն համատալու, վոր
յես գյուղացի եմ. շատ կարելի յե, Առողջութային իշխանու-
թյան համակրողներից մեկն ե դա: Այն ժամանակ այդ տե-
սակներին հաջախ ե յինք պատահում... .

Սկսեցի ամելի անկեղծորեն խոսել հետք. պատմեցի,
թե ինչպիս են ապրում Կարմիր բանակում, բացատրեցի,
վոր մենք վոչ վորի վրա չենք հարձակվում, այլ միայն
պաշտպանում ենք Հոկտեմբեռյան հեղափոխության նվա-
ճումները նրանցից, վորոնք փորձում են այդ նվաճումները
վոչչացնել։ Նա յէլ սկսեց պատմել իրենց բանակի մասին։
Ասում ե, վոր համարաւ բոլոր զինվորները համակրում են
Կարմիր բանակայիններին, բայց սպանները նրանց խռովու-
թյամբ պահում են իրենց ձեռքերի մեջ և ամեն մի չնչին բա-
նի համար պատժում են և այն ել ինչպիս են պատժում. կար-

գապահության ամենափոքրիկ խախտման համար հրացանազարկ են անում։ Միայն դրա շնորհիլ ե, վոր զորքը չի քայլում։

Խոսքով բռնված՝ վոգեվորվեցինք։ Հանկարծ մյուս կողմից ներս ե թռչում մեկը և սկսում ե գոռգոռալ պահապանի վրա և այն ել ինչպես ե գոռում, ուղղակի կատաղածի նման։ Բղավում ե իրենց լեզվով, վոչինչ չեմ հասկանում, պարզ ե միայն, վոր հայհոյում ե պահապանին բանտարկյալի հետ խոսելու համար։ Զայնից ճանաչում եմ, վոր դա ինձ հարց ու փորձ անող սպան ե։ Տեսնեմ՝ դռան ճեղքը բաց ե մնացել, նշանակում ե, պահապանն այնպես եր սարսափել սղայի անակնկալ կերպով հայտնվելուց, վոր չեր կարողացել դուռը կողպեքով փակել։

Մի խելառ միտք անցավ գլխովս։ Քաշեցի դուռը, դուրս թռա բակը, խլեցի պահապանի ձեռքից հրացանը և մի ակընթարթում սվինը խրեցի սղայի մեջքը… Գոչեցի. — «Վազիր յետելից» — և ոլացա դեպի անտառ։ Այստեղ պահապանն այլ ևս ուրիշ յելք չուներ, նա յել վագեց իմ յետելից։

Ամբողջ գիշերը թափառում եյինք անտառում։ Առաջոտյան դեմ դուրս յեկանք մերոնց մոտ և յես մտա դիվիզիայի շտարը։ Այստեղ վոչինչ չգիտեյին այն մասին, վոր մեր դունդը նահանջել ե և շատ զարմացան իմ հայտնած տեղեկության վրա։ Հաղորդեցի նաև այն, վոր վոչ մի կերպ հարողացան նշաններով կանչել կապի պահակը, վոր յիս և նվում եյի գետի մյուս ափում։

Կատարվեց քննություն։ Պարզվեց, վոր պահակի ծառայողներն անվստահելի մարդիկ են… Գերի ընկած ամերիկացիներից խլել են սպիրտ, խմել, հարրել ու քնել։ Դիվիզիայի հրամանատարը նրանց դատի տվեց։ Տեղն եր։ Յեթե ինձ չհաջողվեր գերությունից փախչել, ամերիկացիները կը քրջապատեյին մեզ և կիտրեյին Մոսկվայից։ Ամբողջ դիվիզիան կարող եր վոչնչանալ մի քանի մարդկանց պատճառով։ Ռազմական ծառայությունը կատակ բան չե. մի կարմիր բանակային յեթե խախտե զինվորական կարգը, դրանից կարող են տուժել հարյուրավոր մարդիկ։ Յեթե գործի յեն դրել քեզ, պիտի հետեւս այդ գործին։ Ուզում ես տրաքիր, բայց հրամանը պիտի կատարես։ Ով վոր այդ հրամանը տվել ե, նա հույս ունի, վոր դա կատարվելու յեւ զործում ե այնպես, վոր կարծես հրամանն արդեն կատարված ե…

— Բնութագրեք պատմվածքի հերոս կարմիր բանակայինի տիպը։
— Ի՞նչ կլիներ գետի մյուս ափում մնացած կարմիր բանակայինների վիճակը, յեթե հրամանը չկատարվեր։

— Ինչո՞ւ բուրժուական բանակի զինվորները քաղաքացիական կախված ժամանակ անցնում եյին մերոնց կողմը։

— Այս պատմվածքն ավելի փոքր մասերի բաժանեք և առանձին վերագրեք դրեք։

— Աշխատեք բովանդակությունը համոռոտ պատմել. իսկ հետօնակ տետրակում գրել։

ՆՈՏԱ ԶԻՆԱՍՏԱՆԻՆ

Գցում եմ

Հաճախ

աչքերս հեռաստան—

Դեպի

անարդված,
խղճուկ Զինաստան…

Նայում եմ

Դեպի

հեռու հորիզոն—
Տեսնեմ, չի՞ հարվում
չորսհարյուր միլիոն։

Դազաններն արդյոք
կտիրե՞ն յերկար,

Զինաց աշխարհին
հոշոտված, տկար։

Եմիդրանտները
հին Ռուսաստանի

Կոխ կտա՞ն հոգը
խեղճ Զինաստանի։

Անդիմայի հոկա
դրեգնուուաները

Շա՞տ պիտի կոծեն
չինաց ափերը։

Մեկնե՞ր ինձ
ձեռդ

գործի
բարեկամական,

բազմամիլիոն
բանվոր Զինաստան։

Իմպէրիալիզմին
 վերջ տանք միասին,
 Յերկիրը
 դարձնենք
 փորպես բուրաստան:
 Բայց թող չսոսկա
 յերիք Զինաստան,
 Զինաց սահմանից
 բելող վարդիական
 բանդաներ թե դան—
 Հրացանը կառնենք, գեներալական
 Զինաստանի դեմ՝ մենք կովի
 կելնենք:

„ՀԱՆՑԱԳՈՐԾԵԼ“

Լուին փոքր ե, ժանը՝ մեծ:
 Ամեն առավոտ Լուին կապում եր իր կապույտ գողնոցը,
 Գլխին գնում կլոր գլխարկը և շտապում ուսումնարան:
 Ժանը հակնում եր լայն շալվար և բլուզ: Նա աշխա-
 տում եր գործարանում:
 Լուին գիտեր, թե ինչ է կատարվում ժանենց գործա-
 րանում, ժանն ել գիտեր, թե ինչ է կատարվում Լուենց
 գպրոցում:

Բայց այս առավոտ Լուին նկատեց, վոր ժանն ուշացել
 ե, ինչ վոր բան և թագցնում:

— Ինչո՞ւ աշխատանքի չես գնում, ժան, — հարցրեց
 մայրը:

— Կգնամ, մայրիկ, — պատասխանեց ժանը:

Մայրը հագնվեց ու գնաց գործի:

Լուին ու ժանը մնացին մենակ: Ժանը մի կապոց բաց
 արավ: Նրա մեջ իրար վրա գարսված ելին տպված թերթեր,
 վորոնց ճակատին գրված եր «Փարիզի 16-րդ շրջանի բան-
 վորներ»:

Ժանն ասաց:

— Վոստիկանները հսկում են... պետք ե կպցնել... Զիա-
 րողացա...

— Լսիր, ժան, — մոտենալով նրան շնչաց Լուին, — յես
 քեզ կողնեմ, փոքրերին գժվար կնկատեն...

Լուիի մատները գողում ելին: Նա կամաց վերցրեց մի
 թերթ: Նրա տակը կար յերկրորդը, յերրորդը, չորրորդը...
 Յերեխայի աչքերն ուրախությունից փայլեցին, սիրան
 սկսեց արագ խիել:

— Մի քիչ վերցրու, — ասաց ժանը, — ավելի չես կարող
 կպցնել: Հերիք ե:
 Նրանք միասին դուրս յեկան վողոց:
 — Հաջողության եմ ցանկանում, — ասաց ժանը և Լու-
 ին ծովեց դեպի ձախ:

2.

Լուին հեռու գնաց: Հասավ մի անծանոթ փողոցի: Ա-
 վելի լավ. այստեղ վոչ վոք իրեն չի ճանաչվ: Փողոցի ծայ-
 րին մի մեծ յեկեղեցի կար: Յեկեղեցին չինված եր չորս
 փողոցի մեջտեղում:

— Այս յեկեղեցու չորս կողմին ել կկպցնեմ, — մտածեց
 Լուին:

Նա բարձրացավ լայն սանդուխքներով ու դես ու դեն
 նայեց. փողոցներում մարդ չկար: Հեռվում յերվում եր մի-
 այն սպիտակ գողնոց հագած մի յերեխա, վորը քաշ եր տա-
 լիս իր ձեռնասայլը:

Լուին կռացավ, կապոցից մի թերթիկ հանեց, ըրե
 քսեց, կպցրեց պատին, ձեռքով հուպ տվեց:

Հանկարծ նա իր հետեւից ձայն լսեց... Առանց հետ նա-
 յելու ականջ դրեց...

— Զե՞... բան չկա:

Լուին քարե սանդուխքներով գնաց, հասավ յեկեղեցու
 գյուտ անկյունին և դես ու դեն նայեց:

— Վախենալու կարիք չկա: Վոստիկաններ վոչ մի տեղ
 չեն յերեւում:

Կռացավ, մի թերթ վերցրեց, ըրե քսեց...

Սյնուամենայնիվ մեկն այստեղ կանգնած ե, չնչում
 ե... հենց կողքիս...

Ուզեց հետ նայել, բայց չկարողացավ...

— Իհարկե, կանգնած ե... նույնիսկ յերեւում են նրա
 գեղին բեխերը և ինչ-վոր կապույտ բան:

Լուին հանկարծ արագ շուռ յեկավ և գլուխը բարձրա-
 ցրեց: Կապույտ գլխարկի տակից ուղիղ նրա վրա ելին նա-
 յում վոստիկանի սուր, սև աչքերը:

— Բոնվեցի: Ել վախչել չեմ կարող, — մտածեց Լուին:
 Զեռքերն ու վրձինը դողացին, բայց մի վայրկյան մի-
 այն:

Յերեխան ուրախ դեմք ընդունեց և ասաց:

— Բարե, պարոն:

— Դու այստեղ ի՞նչ ես անում:

— Պարոն, յեթե դուք հետաքրքրվում եք, նեղություն
 պրեք, մոտեցեք անկյունին: Ահա այստեղ, դեպի աջ յես

կպցը ել եմ, կարող եք կարդալ: Դրանցից յես բան չեմ հաս-
կանում, պարոն:

Վոստիկանը կամաց-կամաց առաջ գնաց: Լուին կատվի արագությամբ հետ դարձավ, չանթեց
կապոցը և պո՛ւկ...

Այդ ժամանակ լսվեց սուլիչի բարձր ձայն: Լուին վաղում եր:

— Աչա, ահա կհասնի ու կրոնի, — մտածում եր նա: Փողոցի անկյունում, փուան մոտ, կանգնած եր սպիտակ
գողնոց կապած — ճեռնասալլ քաշող յերեխան:

— Առ, պահի՛ր, — գոչեց լուին ու կապոցը գցեց հա-
ցով լիքը ճեռնասալլի մեջ:

Սպիտակ գողնոց հազած յերեխան վախեցած հետ նա-
յեց և վոստիկանին տեսնելով իսկույն հասկացավ, թե բանն
ինչումն ե:

Նա հանդարտ տեղավորեց կապոցը ճեռնասալլի ան-
կյունում և վրան հացեր դրեց: Հետո հանգիստ սկսեց քաշ
ար սալակը, շվշվացնելով մի ուրախ յեղանակ:

Լուին վաղում եր առաջփանից ավելի արագ:

Վոստիկանը շարունակում եր սուլել: Լուին հոգնել եր. նրա շնչառությունը ծանրացել եր,
վոտները դժվար եր կարողանում շարժել:

Իսկ փողոցը յերկար եր, վաղում եր, վաղում, ծայրին
չեր հասնում: Վորտե՞ղ թագնի:

3.

Վերջապես հասավ փողոցի ծայրին:
Հեռվից յերեվում եր մի կարմիր շենք:
"Դպրոց", կարդաց լուին կապույտ ցուցանակը:
Իսկ վոստիկանը մոտ եր:

— Ի՞նչ կա, — հարցրեց վախեցած վարժուհին:
Լուին վազելով ներս նվատ դպրոցի բակը և կպավ կա-
պույտ գողնոց կապած ջահել վարժուհուն:

— Ծանոթ աչքեր են, — մտածեց վարժուհին... հա՛...
Սա այն բանվորի քույրն ե...

— Թագցրե՞ք ինձ, փրկեցե՞ք... վոստիկանը մոտ ե. Հքեռ
կրոնի ինձ, — աղաքեց լուին:

— Դու ո՞վ ես, ի՞նչ ես արել:

— Իսկանում եք. յես... նա... թերթիկներ...

Վարժուհին բո՞նեց նրա ձեռքը:

— Հասկանում եմ... գիտե՞մ... գնանք... .

Ուսուցչուհին յերեխային տարավ դասարան:

— Նորեկ, նորեկ, — գոչեցին աշակերտները ծափ տալով ու
թռչոտելով:

— Կամաց, կամաց, մի՛ աղմկեք, — ասաց վարժուհին և
լուին տարավ, նստացը զառարանի մոտ:

— Հանեցեք տետրակները, թերթրություն պետք է
դրենք: Մի տետրակ ել նորեկին տվեք:

Վարժուհին բարձր ձայնով թերթրում եր և շուտ-շուտ
վեպի դուռը նայում:

Լսվեց նախասենյակի-դռան ճռնչոցը յեվ մոտեցող վոտ-
նաձայն:

Հանկարծ գուռը բացվեց և ներս մտավ դպրոցի դիրեկ-
տորը յեվ նրա յետեվից՝ վոստիկանը:

Դասարանը լուռ եր:

— Տեսնո՞ւմ եք, այստեղ ել ամեն ինչ կարդին ե: Ինձ
մոտ այդպիսի բան լինել չի կարող: Յես իմ ոգնականներին
շատ լավ եմ ճանաչում: Յտեսություն, յերեխաներ, ցտեսու-
թյուն, տիկին Սյուզան, — ասաց դիրեկտորը և դուրս դնաց:
Նրա յետեկից ել վոստիկանը:

Դասը վերջացավ:

Վարժուհին բռնեց լուիի ձեռքը և դիմեց գեղի դըպ-
րոցի յետեկի դուռը:

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, — շնչացած լուին, ու-
ղում եր դուրս գալ փողոց, բայց հանկարծ յետ դարձավ:

— Մի հատ ծոցումս մնացել ե: Վերցրեք իբրև հիշա-
տակ, — ասաց յերեխան և վարժուհուն մի թերթիկ տվավ,
վորի ճակատին տպված եր. «Փարիզի 16-րդ շրջանի բանվոր-
ներ»...

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յելի՛ր, ում կյանքը անիծել ե,
ով ճորտ ե, մերկ և ստրուկ:

Արդեն վառվում են մեր սրտերը,
արդեն կովի ենք մենք ձգտում:

Այս հին աշխարհը կիորենը մենք
մինչեւ հիմքը և հետո

մեր նոր աշխարհը կշինենք մենք,
ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Մա յե վերջին կոփկը
և պայքարը մեծ:

Ինտերնացիոնալը
աշխարհը կիրկե:

Վոչ վոք չի տա մեր փրկությունը,
վոչ խենթ հերոսը, վոչ արքան.
մենք պետք ե մեր ազատությունը
կունք ձեռքով մեր սեփական:
Վորպեսզի շուտ փշրենք մեր լուծը
և յետ խլենք վողջ հողը մեր—
խիենք մուլճերը, տանք մեր ուժը,
քանի յերկաթը տաք ե դեռ:

Սա՛ յե վերջին կոփվը
և պայքարը մեծ:
ինտերնացիոնալը
աշխարհը կիրկե:

Լոկ մենք, ճորտեր ու բանվորներս
ունենք անխախտ մի իրավունք՝
ասել, վոր հողը մե՞րն ե , մերն ե ,
կորչի հարուստը թող տղրուկ:
Յեկ յերբ պայթի մեծ փոթորիկը
և կուշտ չները չքանան,
նորից յերկիրը և յերկինքը
մերն են ու մերը կմնան:

Սա՛ յե վերջին կոփվը
և պայքարը մեծ:
ինտերնացիոնալը
աշխարհը կիրկե:

ԸՆԿԵՐՆԵՐԻ

Նրանք փոքրիկ եյին՝ յերեխան ու կատուն,
մեկտեղ խաղում եյին ատախտակների վրա.
մինչև մութն իջներ, մինչև հայրը գար տուն
ու հողագույն հացով կերակրեր նրանց:
Հայրը բանվոր եր: Միշտ առավոտ ծեղին,
նա գործարան կերթար ու յետ կղար մութին.
Հաց կերեր իրա յերեխային մի քիչ.

յերեխան ել կտար՝ կեսը կտուն ուտի:
Եսոյես ապրում եյին: Հայրը նրանց մեկտեղի
բան կպատմեր դրսի, հարուստների մասին,
վոր կուշտ են միշտ նրանք, բայց չեն հոգնում

յերեք, —
ինտերնացիոնալ կերպեր՝ յերեխան լսի:
Ու կպատմեր, վոր միշտ ինքը հոգնի պիտի,
ախտի արյուն թքե, վոր չոր փշրանք գա տուն.
ու լություն դարձած՝ իրիկնային մութին

կլսեյին նրան՝ յերեխան ու կատուն...
Բայց մի որ-մի որ կարմիր-
դործարան չգնաց ել հայրը.
աչքերում վճիռ կար մի,
ժպիտը հաստատ ու անծայր եր:
Փողոցում-մարդիկ, մարդիկ,
դրոշները ալվան, կարծես տոն եր...
ու նման եր մայիսյան վարդի,
որերում այդ-հոր խնդությունը:
Յեկ մի որ համբուրեց զավակին
բանվոր հայրը՝ ձեռքին հրացան.
Համբուրեց աչքերը կատվի
ու գնաց անձայն...

Բայց դարձավ դռնից բանվոր հայրը,
Համբուրեց նրանց վերստին.
— «Համկանում եք, — ասավ, — Ժամանակն ե
զարկելու ենք եսոր հարստին»:

Ու յելավ: Փողոցում կրակոց եր:
Փողոցում չոքեց բանվոր հայրը:
Զորքերով լեցուն եր փողոցը.

փողոցում կոփվ ու պայքար եր:
Զարկեցին... ձչաց բանվոր հայրը.
Հարվածը կրծքին եր հատու:

Բայց հառաչը խոր ու անծայր այն

լսեցին յերեխան ու կատուն...

Վազեց, վազեց փողոց փոքրիկ յերեխան.
կատուն վազեց հետքից իր ընկերով փոքրիկ,
նրանց գլխին-կարկուտ կարմիր գնդակ տեղաց
և յերկուսն ել ընկան հայր-բանվորի կողքին:
Զիաղացին նրանք ել հատակի վրա,
չսպասեցին ել՝ զուր, վոր հայրիկը գա տուն.
նրանք փոքրիկ-փոքրիկ նահատակներ յեղան-
յերեխան ու կատուն...

- Յերը ե կատարվել հեղինակի նկարագրած դեպքը:
— Ինչպես բաժանվեց հայրը վորդուց և նրա վերջին խոսքերը:
— Ի՞նչ պատահեց հոր հետ և ի՞նչ պայմաններում:
— Ի՞նչ պատահեց յերեխայի և կատվի հետ:
— Կարգացեք նախադասությունները.
նրանք փոքրիկ եյին՝ յերեխան ու կատուն...
նտերնացիոնալ կերպեր յերեխան լսի...
— Դիտեք այս խոսքերի մեջ բուք (։) նշանի գործածությունը:

— Այս խոսքերի մեջ ի՞նչ բառեր են գեղջված—վորոնց փոխարեն դրված ե բուք :

— Խոսքի մեջ բութ դրվում ենակ բարեկությունից առաջ, որինակ՝ կոլխոզամ շատ մեժնաներ կան՝ տրակոր, կոմբայն, սերմազուի և այլն :

— Կաղմեք ինքնուրույն դրավոր խոսքեր, վորոնց մեջ գործածիք բուք նշանը :

— Դիտեք, թէ այս վոտանավորի մեջ ուրիշ վորտեղ ե բութ գործածված և աշխատեք բացատրել թե ինչու :

ՄԻՏԻՆԳ

Մոտ յերեք հազար հոգի ածխագործներ եյին հավաքվել: Կային նայե կանայք և յերեխաներ: Գալիս եյին և նորունոր խմբեր: Մթնաշաղով ժողոված գլուխների մի ծով երդա, վոր գնալով մեծանում եր: Անշարժ, քարացած անտառում լսվում եր փոթորկի վորոտը հիշեցնող ձայների խոռվարույն:

Ետյենը ցատկեց կոճղի վրա և ճշաց.

— Ընկերներ, ընկերներ:

Բանվորների ձայները քիչ-քիչ հանգստացան: Ետյենը շարունակեց զիլ ձայնով:

— Ընկերներ, մեզ արդելում են հավաքվել. մեզ վրա ժանդարմներ են ուղարկում, ինչովես ավազակների վրա: Այսուղ խոսենք, վորովհետեւ այստեղ մենք ազատ ենք: Այստեղ վոչվոք չի կարող ստիպել մեզ լուել, ինչպես չի կարող ստիպել թուուններին ու գաղաններին:

Նրան պատասխանեցին զիլ կանչերով ու բացականչություններով:

— Այո՛, այո՛. անտառը մեզ ե պատկանում: Մենք իրավունք ունենք այստեղի խոսելու:

Ետյենը մի քիչ լուց: Լուսինը լուսավորում եր միայն ծառերի կատարները: Բազմությունն այժմ լուս թաղված եր մթության մեջ: Ետյենը համառոտակի պատմեց գործադույլ սկզբնավորությունը և ձայնը բարձրացնելով վերջացրեց այսպես:

— Այսոր մենք պիտի հանգենք վերջնական վորոշման: Ուզո՞ւմ եք գործադույլը շարունակել. յեթե ուզում եք, ի՞նչ եք մտադիր տնել, վորպեսզի հաղթենք բութուաղիային:

Աստղալից յերկնքի տակ տիրեց խոր լուսություն: Բազմ մությունը թաղված եր մութի մեջ: Վերջում արտասանված

խոսքերից ամենքի սիրտը ճմլվեց: Լովում եյին հուսալքության հառաջանքներ:

Ետյենը նորից խոսեց: Հիմա խոսում եր իբրև զեկավար.

— Մի՞թե կդանվեն վախկոտներ, վորոնք կդալաճանեն արված խոստումին: Մի՞թե նրանք ամբողջ մի ամիս իզուր տանջվեցին: Մի՞թե նորից պիտի սկսվի նրանց մուրացիկ գոյությունը: Լավ չե՞ արդյոք մեռնել՝ ջանալով քանդել կապիտալի բերդը, վորի հարստահարության հետևանքով բանավորները մատնված են սովի: Հանքը ձեզ պիտի պատկանի: Դուք և ձեր նախահայրերը հանքը զնել եք ձեր դարավոր տանջանքների զնովի: Միայն չնորհիվ ստոր անարդարության հանքը պատկանում է բութուաներին: Արտադրության բոլոր գործիքները, մեքենաները պիտի պատկանեն բոլորին: Խոկ կատարյալ ազատության հասնելու համար պետք ե տիրող պետական կարգերը կործանել:

Ետյենը խոսքը վերջացրեց հետեւյալ բառերով.

— Իշխանությունը նվաճելու հարցն այժմ մեզ և հասել:

Ծափահարությունները թնդացըին անտառը: Սառն ողում մարդկանց գեմքերն այրվում եյին, աչքերը փայլում: Սովի մատնված բանվորները վճռեցին յետ խլել իրանցից զուղացված հարստությունները: Նրանք այլուս ցուրտ չեյին զգում: Կրակոտ խոսքերը նրանց տաքացըրին: Ի՞նչ վաեմ յերազ: Լինել գրության տեր, այլևս չտանջվել և վերջապես կյանքը վայելել:

Դե՛մ, հերթը մերն ե... Մա՛կ հարստահարիչներին:

— Գործադույլի միջոցով բանվորներն ո՞ւմ դեմ են պայքարում և ինչպես:

— Ո՞ւմ շահերն են պաշտպանում բութուական պետությունները:

— Խորհրդային Միության մեջ ո՞ւմ են պատկանում արտադրության գործիքներն ու մեքենաները:

— Ո՞վ եր Ետյենը:

ԿԱՅԾԵՐԸ ԹՌՉՈՒՄ ԵՆ

(Յապոնական բանվորական շարժման կյանքից)

I

Յերեխաները կարմրած յերեսներով զարնում եյին փայտերով չոր խոտերին:

— Տե՛ս, տե՛ս, զարձյալ լիքը վագոն, — գոչում եյին յերեխաները և թափ եյին տալիս ձեռքերնին:

Տարոբինակ ե, այսոք ինչքան շատ են լեփ—լեցուն
տրամվայները:

Վագոնների մեջ ասեղ ձգելու տեղ չկար: Զայրալից դեմքեր, խոռվալ դեմքեր, բանվորական բլուզներ, մաշված վերաբկու, սև շալեր, վորոնք կիսով չափ ծածկում եյին բանվորութիների դեմքերը:

Տրամվայի վագոնները կանգ են առնում սարի ստորոտում: Յուրաքանչյուր տրամվայ հանդիպում եր «Բանզայ»* բացականչությունների:

Դարձյալ տրամվայ, մի ուրիշն ել, յերրորդը: Նրանք մարդկային մասսան հասցնում եյին. Ասկայամա լեռան մոտ գտնված վերջին կայանը:

Մարդիկ գալիս եյին լուռ, կարծես բարկացած եյին, իջնում եյին սարից և ուղղվում Ոյիի արվարձանը: Տղամարդիկ, կանայք և յերեխանները, ինչպես ոտարներ, գնում եյին առանց շտապելու, հեղեղելով արվարձանի աղջամղջային փողոցները:

Վ'ոչ վոք չեր իմանում, թե ուր են նրանք գնում:

«Ի՞նչ ե տեղի ունենում այնտեղ»: Քաղաքամասի բնաշկիչները տարակուանքով նայում եյին անծանոթ բանվորների խմբերի վրա:

Գլխավոր փողոցի անկյունից վոստիկանը շտապով դահուարեց հեռախոսը:

Բայց բանվորներն իրենց դիտավորության մասին վոչնչով ցույց չեյին տալիս: Թանձրացող խավարի հետ միասին ամբոխը, կարծես թե, հրաշքով աճում եր: Նրանք գնում եյին յերկու-յերկու, յերեք-յերեք, վոմանք աչքերը գետնին հառած, վոմանք գլուխնին բարձր պահած:

Բանվորական բլուզները, բաճկոնները, վերաբկուները, աշխատավորուհիների սև շալերը— փողփողում եյին քամու առաջ:

Բնակիչները դուրս եյին յեկել փողոց և զարմացած զրուցում եյին:

— Բողոքը ցույցի նման չե՞:

Քաղաքի արևելյան կողմերն այդ գիշեր ժողովի յերնատել Ոյիի թղթի Փարբիկայի արտաքսված բանվորների կոմիտեն: Այդ մարդիկ գնում եյին տրամվայի վերջին կայանից:

Բնակիչների մեջ հուզմունքն ուժեղանում եր:

— Նայի՛ր, ինչպե՞ս նրանք բոլորը մռայլ են, բարկաց-

կոտ, — ասաց գինու խանութ ունեցող մարդը՝ իր հարևան հրուշակարանի ամրոցը:

— Ծատ կարելի յէ, վոր այդ Փարբիկայի դե՛մ ե:

Անթափանցելի խավարն իջավ հորիզոնի վրա. տներում առկայծում եյին լամպարիկները: Ոյիի թղթի Փարբիկան նատած եր թիկունքը դեպի սարը դարձրած:

Լսկեց մոտոցիկլի ճայթյուն. բնակիչները հավաքվել եյին գոների մոտ, հուզումնալից փափալով միմյանց հետ: Ահա գալիս ե վոստիկանական սպան, — բանվորական ժողովը վերջացավ: Ճայթյունը մոտենում եր: Մոտոցիկլատի կառքում նստած եր փայլուն մունդիրով, դուրս ցցված կրծքով վոստիկանական սպան:

Ամբոխի միջից նշմարվում եյին մի քանի դրոշակներ՝ փայլուն ծայրերով:

Բազմությունը զայրալից գոտում եր, — վո՛չ, նա յերգում եր, բայց խոսքերը ջոկել չեր լինում, նրանք բավական շատ եյին, իսկ զիլ ձայները, ինչպես շարժվող փոկերի ձայներ, ըսդհատում եյին նրանց: Հանկարծ միանդամից հանդավագլեկտրականությունը:

Հանկարծակի ճիչը, վորոտը, նման լեռան խորտակման վորոտին, դղրգացըց Փարբիկայի շուրջը, զարնվեց սարին, յետ դարձավ Ոյիկավայի գետի վրայով, լինելով ամբողջ վրջակայքը: Եկերգեստ կանգնածները դեպի պատը դիմեցին ինչպես բոնկվածներ: Ամբոխի խլացուցիչ վայնասունը, ինչպես մըրիկ, ճեղքեց գիշերային խաղաղությունը և ելեկտրական հոսանքի արագությամբ ըջապատեց Փարբիկայի չորս կողմը...

Վերեսում, բետոնե պատի վրա աղմկում և փողփողում եյին դրոշակները:

II

ԿՈՒԽԱՅԻ ՖԱԲՐԻԿԱՅՈՒՄ

Սկ ստվերները վայր ցատկեցին, հսկայական զրահակերն ընկղթվեց սև ալիքների մեջ: Մութ կորպուսներում լիալի յեր ժանդուտած յերկաթի և քիմիական-կալիայի հոտը: Մարդիկ շարժվում եյին յերեք-յերեք, չորս-չորս, մարդկանցից բաղկացած խմբակներով: Դրոշակները ծառաւում եյին իրեն կողմնացույց: Նրանք ճանապարհն եյին ցույց ուալիս: Սկ ստվերները ծլկվեցին պատի յերկայնությամբ: Յուրաքանչյուր վայրկյան սպասում եյին թշնամու հանկարծակի յերեալուն:

*) Բառացի 10,000 ամրի, այսինքն՝ կեցցել:

Ամենուրեք խավարն եր իշխում : Թշնամին չերևաց . նա
թագնվել եր մթության մեջ և ծպտուն չեր հանում , իրեն չեր
մատնում : Ֆարբիկայի բակում սև ստվերները խառնվեցին
յեռացող ջրապտույտին . . .

Մարդկային հեղեղը բաժանվեց մասերի , և նրա մի մասը
գոռզուալով ներխուժեց գրասենյակի շենքը : Չորրորդ հարկի
լուսամուտում միայնակ վառվում եր մոմը , ինչ վոր տեղից
գաղաղած հնչում եր հեռախոսը :

— Խնդրում ենք դիրեկտորին , — կանչում եր այն բանվո-
րը , վորն առաջինը վաղելով հասել եր մինչև ապակյա դոնե-
րը : Ծառայողները , դժույն , ինչպես քաթանը , կուտակվե-
ցին գրասեղանի շուրջը և վրդովված գլուխներն եյին շար-
ժում :

— Ո՞վ ե մեղ արտաքսել :

Սանդուխքը դողում եր ամբոխի ահարկու քայլերից .

— Բաց արեք :

Ապակյա զուռը թռավ , և բեկորների վրա յերեացին
բանվորների զայրացկոտ դեմքերը :

— Հանգստացե՛ք , դիրեկտորն այստեղ չե՛ , — մի միջու-
քավոր մարդ , յերկյուղից դողալով , մոտեցավ անկիզելի
պահարանին :

Բայց բանվորները պատասխանեցին բղավելով .

— Ո՞վ ե մեղ արձակել :

Միենույն ծառայողը պատասխանեց :

— Անձնական սեղանի վարիչը , բայց նա յել այստեղ չե՛ :

Հավատացնում եմ ձեզ , վոր նա իրոք այստեղ չե՛ :

Մի քանի մոմեր սեղանից վայր ընկան , մոմի հալվածքը
հոսում եր գորդի վրայով : Մյուս ծառայողը զդուշությամբ
շոշափեց դռան կոթն իր մեջքով : Միրուքավորն աշխատում
եր խարելով հանգստացնել բանվորներին :

— Ստում ես , դու ինքդ հենց վարիչն ես : — Բանվորնե-
րից մեկը առանց գլխարկի , ցույց տվեց նրան մատով : Մի-
րուքավորի դեմքը յերկյուղից այլափոխվել եր , նա ճանա-
չեց իր կողմից արտաքսված բանվորին :

Սեղանը շուռ յեկավ , մոմերը վայր ընկան , շիրման
ԴԱՐԴՈՒԿ տապալվեց : Ամեն կողմից մարդիկ հավաքվեցին :

Հանկարծ յետեի դուռը բացվեց , մերկացած սրերը փայ-
լեցին խավարի մեջ . հինգ վարձկան Փաշխտներ , վորոնք
վիթխարի հասակ ունեյին , սենյակը խուժեցին . դժույն
դեմքերը սոսկացին — բազմությունը յետ քաշվեց : Քայլ առ-
քայլ դուրս պըծնելով ջարդված դռնից , բանվորները յետ
քաշվեցին միջանցքը :

Խավարը կլանում եր ճիչերը , ջղերը ձգվում եյին — ինչ-
պես պարաններ : Ընկած մոմից գորդն այրվում եր : Սողացող
բոցը լուսավորում եր ֆաշխտի հաղթական ծիծաղկոտ պրո-
ֆելը :

Բազմության միջից մեկը , ողովելով հարմար վայրկյա-
նից , մի բուռն վառող շպրտեց Փաշխտների աչքերը :

Այլ արեց Տոմի-տյանն «Դեղձանիկ» ուրախ ոեստորա-
նի սուբհանդակը :

Ծառայողներն ու Փաշխտները հաղում եյին ու աչքեր-
նին տրորում , անողնական կպչելով պատին :

Տոմի-տյանն աղմուկի ձայներ լսեց , յետ դարձավ և
սարսափով տեսավ , վոր բոլոր միջանցքներում ել բազմու-
թյունը յետ-յետ եյին հրում : Նա լսում եր անհամար սրերի
շաջյունը :

— Թակա՛րդ :

Հարկավոր եր լարել վերջին ուժերը . — «Զփախչել» : Հըր-
չելով նըանք վրա հասան մինչև գլխավոր սանդուխքը , բայց
այնտեղ նըանց սպասում եր ավելի ուժեղ թշնամի :

«Զփախչե՛լ» :

«Զփախչել այս ու այն կողմ , — բոլորդ միասին» :
Նըանք պաշտպանում եյին յուրոքանչյուր աստիճանը և
չեյին կամենում նահանջել :

Բոլոր մուտքերը փակված եյին յերկաթյա դռներում :
Բայց բանվորների մեծամասնությունը , Փարբիկայի վրա
գրոհողները՝ այստեղ եյին անցկացրել իրենց ամբողջ կյանքը .
Նըանց համար Փարբիկան գաղտնիք չուներ : Նըանք , ինչպես
քամիներ , թափանցեցին լուսամուտից , ողատար խողովակից
այլ անցքերից , ծլվեցին կաթսաների արհեստանոցը , ցա-
մաքարանը , քամող ցեխը և այն գահլիճները , ուր մամուլ-
ներն եյին :

Ֆարբիկան ոտար եր ու բարկացկոտ , — ինչպես այն կի-
նը , վորը վեճից հետո հեռանում ե տնից , — և թվում եր յերես
եր դարձրել նըանցից :

Լայն ու կոկ զաիչ խողովակները կախված եյին քնած
կաթսաների վրա , բարձրանում եյին յերբորդ հարկից ել
վեր :

— Ալլո՛ , մի յեկ այստեղ , — շնչաց բանվոքը և իր հար-
եանի թեից ըրունեց : Հանգարտ ձայնը խուլ կերպով անդրա-
դանում եր գատարկ ցեխում , բանվորները զգուշությամբ
առաջ եյին շարժվում : Նըանցից ամենափըքն ըստ յերեսույ-
թին առաջնորդ եր :

— Անք այստեղից պետք ե դուրս սողանք , — ասաց

փոքրը: Մի վոտքով նա արդեն կանգած եր յերկաթյա սանդուխքի վրա: Նրանք խարխափելով վերև բարձրացան. վոտքերի տակ յերկաթը ճրձում եր: Ահա և յերկրորդ հարկը այստեղ կանգնած եյին հսկայական ցիլինդրներ, յերկաթյա խողովակներն ոճապտույտ շրջապատել եյին նրանց: Խիմիկալի, թղթի զանդվածի և ցնցոտիների հոտը—քիթ եր ծոռկում:

— Հարկավոր ե ե՛լ ավելի բարձրանալ: Զգուշությամբ նրանք բարձրացան վերջին աստիճանները:

— Ո՞խ, կանգնի՞ր: Փոքրահասակը կանգ առավ նրա դուխը կպավ յրկաթյա տանիքին:

— Ի՞նչ բան ե, ի՞նչ կա, — հարցրեց իրեն մոտիկ սովորը:

— Գրո՛ղը տանի, վերեւում պահակ են կանգնեցրել:

Նրանք վախեցած լուցին. թշնամին թաք կացավ մթության մեջ և միայն առիթի յեր սպասում, վոր հարձակվի:

— Հուզ տո՛ւր, մի՛ վախենա: Մեծ, ուժեղ բավորը չըց նրան:

— Զի՛ կարելի, կտուրը փակված ե:

— Փոքրը լուսմ եր մոտեցող քայլերի ձայնը:

— Վա՛յր իջիր, շուտ, մեկը դալիս ե: Բայց այդ քայլերը կանգ առան հենց գլխի վերեւում: Ամենափոքրիկ շարժումն անգամ՝ կարող եր նրանց մատնել: Փոքրահասակը կախվեց, բռնելով կտրի տակի ձողերից մեկից:

Միենույն վայրկյանին վերելից յերեաց գրպանի լասերի սպիտակ լույսը. լույսը շատանում եր այն չափով, ինչ չափով բացվում եր կտուրը:

— Ո՞վ ե այնտեղ, — հարցրեց մի զգույշ ձայն վերեկի անցքից. լապտերի լույսն ընկավ գլխակը դրած բանվորի յերեսին:

— Իջիր, թե չե՛ կհրեմ, վայր կձեռմ: Պահակը մոտեցրեց լապտեր և քաշեց յերկաթե վայտը զարնելու համար: Հանկարծ փոքրահասակը ձեռքը ձեռք դեպի պահակը, բռնեց նրա թերից և բոլոր ուժովը մեկ ներքեւ քաշեց:

Լապտերն ընկավ հատակին, բոլորովին մթնեց: Պահակը կորցնելով հավասարակշռությունը—թափով ընկավ գլխարտելու վրած բանվորի վրա: Նրանք կպան իրար, սանդուխքից վայր թռան ու շարունակեցին կորիվը ներքեւում: Փոքրը շտապեց յերրորդ հարկը. նա գիտեր, վոր այնտեղ վոչ վոք չկա: Նա ձեռք ձգեց մի յերկաթի ձող և առաջ վաղեց: Զտիչ ցեխի ամենաարժեքավոր պարագաները յերրորդ հարկում եյին

դտնվում: Ողախտաչափը (մանոմետր), վայրկենաչափը (սեկունդամեր) և ելեքտրոմագնիտները: Մի հարվածով կարելի յե բոլորն ել ջարդել:

Նա իր ամբողջ ուժով թափահարում եր յերկաթե ձողը: Փխրուն, չափո՛ղ գործիքները՝ մթության մեջ պապղացող թվացույցերով՝ զինզարով այս ու այն կողմ թռան...

Նա քայլերի ձայն լսեց: Մեկը մոտենում եր նրան: Իշխամի՞ յե, թե բարեկամ:

Բայց նա առանց չորս կողմը նայելու, վարկեց մի անգամ ել, գարձյալ... Մետաղի զրնդոցը և ապակու չըխկոցն անգերադառնում եյին հսկայական ցեխում:

— Պատրաստ ե, — հարցրեց մոտ վազող ընկերը. Փոքրահասակը մինչև անգամ նրա անունն ել չգիտեր: Այստեղ միայն նա նկատեց, վոր ելեկտրականությունը նորեն վառվում անյակում, ցեխերում, ամենուրեք վառվում եյին լամպերը սենյակում, լուսավորում եյին կոփը: Բակում վոստիկ պայծառորեն լուսավորում եյին կոփը: Բակում վոստիկ կանեները բանվորներին նեղել եյին, դեմ եյին տվել պատին: Դրոշակներն արդեն չկային: Բայց միենույն բարձրության դրոշակները չկային զիայի լուսամուտների յետեռում բանվորվրա գրասենյակում շենքի լուսամուտների յետեռում եյին ները նրանց հետ ձեռնամարտի եյին բռնվել, չողջողում եյին դրոշակները և մունդիբները:

— Ի՞նչ, արդեն յետ և մղո՞ւմ: Կուրոփանի, աշակերտագատրման գործին մասնակցողներից մեկը, շուռ յեկավ լուսամուտից: Փոքրահասակը կլիներ 18—19 տարեկան. նա գլմին գդակ չուներ, այլ միայն շալվար ու կեղտոտ բաճկոն:

Նրանք կտրի անցքից իջան յերկրորդ հարկը. ներքենում բանվորները ցած թափելով սանդուխքից տակավին կովում եյին բռնուն վոստիկանների հետ:

— Այստեղ վտանգավո՞ր ե: Փոքրահասակը ճարպկորեն յետ թռավ, մի վազով կտրեց հարկի յերկայնությունը, բաց արավ այն լուսամուտը, վորտեղից կախված յերկաթյա ճանապարհը տանում եր գիմացի պահեստը. յերկու պարան ներից կախված եյին զամբյուղները: Փոքրահասակը մտավ զամբյուղը, քաշեց պարանից և ցած սողաց: Կուրոփան հետեւեց նրան:

Նրանց ներքենում հաղթանակող վոստիկանությունն առաջն արած քշում եր բանվորներին:

— Այս պատմվածքում հեղինակը ինչպե՞ս ե նկարագրում գեղերավելի պատմում ե՞ս, թե՞ գործողության միջոցով ցույց ե տալիս:

- Գործող անձինք անհատներն են, թե՞ մասսան եւ մասսայական շարժումներն ինչպես և նկարագրված :
- Ինչո՞ւ բանվորները հարձակվել եյին Փաբրիկայի վրա և ո՞վքեր եյին նրանց հակառակորդ-Փաշխտները :
- Համեմատել այս պատմվածքը «Միտինդ»-ի հետ :

ՄԱՅԻՍԻ ՄՈՒՏՔԸ

Հաղթով յեկար, կարմիր Մայիս,
յերեսդ վառ, ճակատդ բաց,
սիրտն ե թնդում քեզ տեսնելիս,
քեզ ենք սպասում մենք դրկաբաց:
Ճամպեդ կանաչ, ծաղկափթիթ
գլխիդ վերև անչափ ու խիտ
վառ զրոշակներ կամար-կամար՝
զարդարել են ճամբեդ համառ...
Հաղար թմբուկ, չեփոր-փողեր
վողջ աշխարհին ձեն են տալիս.
«Աշխատանքի հերոսը մեր
հաղթանակով մեզ ե դալիս»:
Հաղթով յեկար, կարմիր Մայիս,
յերեսդ վառ, ճակատդ բաց:
Սիրտն ե թնդում քեզ տեսնելիս,
քեզ ենք սպասում մենք դրկաբաց :

ՀԱՅՐՆ ՈՒ ՎՈՐԴԻՆ

1.

- Փականագործ Միխեյի տնակը լիքը մարդ ե:
- Անտոշկա, վարագույրը քաշիր, ամեն տեղ լրտեսները
լիքն են, — ասաց Միխեյին իր տղային:
- Անտոշկան արագ վեր թռավ տեղից, չթե վարագույրը
քաշեց ու նորից տեղագործից անկյունում, նստել ե, լսում,
աչք չի ճպապացնում.
- Մի յերիտասարդ բանվոր գրպանից մի կապոց թերթիկ-
ներ հանեց, ամենքը կռացան, սկսեցին կարդալ «Պրոլե-
տարներ բոլոր յերկրների, միացեք: Մայիսի 1-ը աշխա-
տանքի տոն ե, այդ որն ամբողջ աշխարհի բանվորները պի-
տարձը պահեն իրենց կարմիր դրոշը»:

- Անտոշկան լսում ե, բառ չի բաց թողնում:
- Վաղն առավոտյան ժամի 11-ին բոլորս կհանդիպենք
5-րդ արահետում:
- Ուրեմն, մեր նշանաբանն ե՝ «Բաղե»:
- Այս:
- Պահակները հուսալի՝ յեն, — հարցնում ե մի հին բան-
փոք:
- Հուսալի յեն: Առաջին պահակը նստած կլինի մեր
տղաներից, թերթը ձեռին:
- Կամացուկ խոսեցին ու ցըվեցին:
- 2.

Յերկար ժամանակ Անտոշկան չեր կարողանում քնել:

Մտածում եր՝ ինչպես տնի, վոր մասնակցի վաղվա-
ցույցին: Իսկ յերբ քնեց, յերազում տեսավ մեծ ամրութ, վորի
մեջ տեղը կանգնած եր ինքն Անտոշկան, կարմիր, մեծ դրոշը
ձեռքին:

Հանկարծ աղմուկից նա արթնացավ: Ինչ-վոր անծանոթ
մարդիկ խմբված, քրքրում եյին սնդուկը, դարակի վրայի
ամանեղեններն եյին տնտղում, նայում ամեն ծակուծուկ,
թափ տալիս անկողինը:

— Յեկել են, — գլխի ընկավ Անտոշկան:

Այդ ժամանակ հայրն անկատելի կերպով Անտոշկային
մի կապոց ալից: Նա գլխի ընկավ թե ինչ պետք ե անի. մկան
նման դուրս ծլկեց սենյակից:

Գարնանային զով գիշեր եր: Հեռվից թարմ կանաչի
հոտ եր գալիս:

Անտոշկան վաղեց դեպի մոտակա տան անկյունն ու այն-
տեղ պատի ու դարսած փայտերի մեջ թագցրեց կապոցը:

Յերբ նա վերադարձավ տուն, վոստիկանները գնացել
եյին:

Մայրը, լաց լինելով, հավաքում եր ցըված իրերը:

— Կապոցն ո՞ւր ե, — հարցրեց հայրը:

— Փայտերի յետեն եմ թագցրել:

— Կեցցես, ընկեր ջան, փրկեցիր, ծիծաղեց հայրը:

3.

Առառտ եր: Անտոշկան նոր շոերը հագած գնում ե 5-րդ
արահետը: Նստարանի վրա նստած եր մի յերիտասարդ բան-
փոք, ձեռքին թերթ:

Անտոշկան մոտեցավ նրան ու բարձր գոռաց. — «Բաղե»:

— Ի՞նչ ես գոռում, ո՞ւր ես գնում, ավարա:

— Հայրիկիս մոտ:

- Ի՞նչու:

- Ասել ե վոր թոռուցիկներ տանեմ, -ասում ե Անտոշկան: Բանվորը ճամպան ցույց տվեց:

Անտոշկան հասավ նշանակված տեղը:

Ամբոխի վրա, կանաչների մեջ, բարձր կրակե ծաղկի նման, ծածանվու մեր կարմիր դրոշը:

Բանվոր Ալեքսանդրն ասում եր.

- Դազգյաճների, կրակի մոտից, տանջիած՝ մենք յեկել ենք այստեղ, վոր բարձրացնենք մեր կարմիր դրոշը: Ամեն կողմից մեզ հետևում են մեր թշնամիները, թագավորի ու դործարանատերերի ծառաները, բայց հին աշխարհն արդեն տատանվում է, ու մոտ ե այն որը, յերբ մենք...

Բայց դեռ խոսքը չեր վերջացել, յերբ մեկը դուռաց:

- Կազակները:

Ու խոկույն ամեն ինչ խառնվեց իրար՝ թփերի ճարճատյունը ձիերի ամբակների տակ, խարազանների շաջյունը, կազակների գոռոցը...

Անտոշկան տեսավ՝ ինչպես Ալեքսանդրի դիմին իջավ խարազանը:

Ալեքսանդրը բոնեց ծառի ճյուղից ու հանկարծ բնկավ, իւ չերևադ... Դողդողալով, ծառերի յետեր թագնվելով, վազում եր Անտոշկան: Յերկար պատովեց, մինչև փողոց դուրս յեկավ: Հայրն արդեն տանն եր:

- Հայրիկ, վոնց եր, կազակներից չո դու եւ չիերա՞ր:

- Իսկ դու ի՞նչ գիտես:

- Վոնց չե. յս եւ եյի մասնակցում:

Հայրը նայեց նրան, ժապաց:

- Շատ ժիրն ես: Տես, գլխիդ փորձանք կդա:

Հետո շոյեց նրա մազերն ու քնքուշ ավելացրեց.

- Մեծացիր ու սովորիր պայքարել: Տես՝ եղ խարազանները չմոռանաս, հա՞:

— Անտոշկա, վարագույրը քաշիր...

— Ինչո՞ւ Անտոշկա բառը խոսքից բաժանված է սոսրակետով:

— Սահմանում. — Կոչական բառերը խոսքից բաժանվում են ստորակետով:

— Կազմեք դրավոր այնպիսի խոսքեր, վորոնց մեջ լինեն կոչական բառեր:

«Մայրը, լաց լինելով, հավաքում եր ցրված իրերը»:

— Ինչո՞ւ լաց լինելով բառերն առնված են ստորակետների մեջ:

— Սահմանում. — Միջամկյալ բառերն ու խոսքերն առնվում են ստորակետի մեջ:

— Կազմեք դրավոր մի քանի խոսքեր, վորոնց մեջ գործածվեն մերանկյալ բառեր և միջանկյալ խոսքեր:

— Ամփոփեք ստորակետի գործածության մասին իմացած ձեր բոլոր դիտելիքները:

— Այս պատմվածքի բովանդակությունը պատմեք և դրի առեք:

— Բնութագրեք Անտոշկայի տիպը:

ԿԵՑՑԵ ԼԵՆԻՆԸ¹

1.

Ֆլորենցիայի (Խոտալիայի մի քաղաք) մի ծայրաթաղում, փայտյա ցանկապատով պատված, փովել է գեղեցիկ պարտեզը:

Պարտիզում, ծառ ու ծաղիկների մեջ թաղված, լուցկու տուփերի նման, բնկել են միանման յերկու ցածր տներ:

Այստեղ վարձով ապրում եյին յերկու ընտանիք:

Տարիներ են անցել, ինչ նրանք միասին, կողք-կողքի ապրում են, ու գնալով այդ ընտանիքները կարծես միախառնվել, ձուլվել են իրար:

Կանայք միասին են լվացք անւմ, կարկատում:

Յերեխանները միասին խաղում:

Իսկ տղամարդիկ միասին են վճռում կյանքի խնդիրները:

Յերեկոններին՝ ընթրիքից հետո՝ նրանք իրար մոտ են հավաքվում:

Կանայք կողք-կողքի նստած կարում են:

Տղամարդիկ խոսում են գործարանի, պատրաստված գործադուլի, կուսակցության խնդիրների և շատ հաճախ՝ կենինի կմասին:

Փոքրիկ Ռեւարդոն ու Ռոմեոն, յերբեմն նստած հայրերի ծնկներին կամ կողքին, լսում են ուշագրավ խոսակցությունը և յերբեմն ել, մի պատի տակ քաշված, թև-թևի յերգում. —

Մենք բանվորի զավակ ենք,

Քաջ ու սրտոտ, անվախ ենք,

Կարմիր զարնան ծաղիկ ենք,

Կարմիր զարուն, արի, դե՛:

Կեցցե, կեցցե մեզ համար,

Լենին պապը մեզ համար...

Հայրերը յերբեմն խոսակցությունը թողած, մեծ հետաքրությամբ լսում են զավակների հետաքրքիր յերգը:

2.

Ռոմեոն և Ռեւարդոն նույն զասարանումն են:

Մեկ անգամ, մայրենի լեզվի զասին, ուսուցչուհին մի հետաքրքիր առաջարկ արեց:

— Ամեն մեկը թող գրատախտակի վրա գրի իր ամենասիրելի մարդու անունը, — հայտարարեց նա:

Ինչպես միշտ, այս անգամ նա դաս պատասխանելու առաջնությունը տվեց ուռած ու կարմիր թշերով Արքահամին: Նրա հայրը հարուստ գործարանատեր եր, վորին դասարանում տողած նուշ ելին ասում:

Արքահամը, գնդակի նման գլորվելով, գրատախտակի մոտ գնաց և հատիկ-հատիկ գրեց

Մուսուլինի:

Ապա մոտեցավ մեծ վաճառական Գլորիոսի վորդի Ռետոն և այդ անվան տակին ավելացրեց — Հիսուս Քրիստոս:

Յերրորդը —

Հայրիկ:

Ապա ձայն խնդրեցին Ռեարդոն ու Ռոմեոն:

— Մեզ թույլ տվեք միասին դրենք, — խնդրեցին նրանք:

Ուսուցչուհին դեմ չեր, վորովհետեւ գիտեր, վոր նրանք սովորություն ունեն միշտ միասին դրել, միասին կարդալ և միասին պատասխանել:

Զեռք-ձեռքի, նրանք գրատախտակի մոտ գնացին: Իրար յերես նայելով, ժպտացին խորամանկ կերպով, ապա թքելով գրատախտակին գրված անունների վրա, սրբեցին և արագ կերպով ամեն մեկը մի բառ գրեց այսուեղ:

Յերր ուսուցչուհին դեպի յետ դարձավ, գրատախտակի վրա ծուռումուռ գրված եր —

Կեցցե Լենինը:

Նուան ծաղիկների պես կարմրեց ուսուցչուհին, այլայլ վեց և գաղաղած վրա պրծավ.

— Փուչ անպիտան... յես ձեզ բանտ կուղարկեմ... սատանայի լակոտներ...

Ապա վորպես վարձատրություն գրած յերկու բառերի՝ Ռեվարդոն ու Ռոմեոն չորս լավ ապահով ստացան իրենց նիւհար այտերին:

Վողջ դասարանը սարսափե, եր:

Քիչ հետո ներս մտան միքանի ժանդարմներ:

Գրատախտակի գրությունը դիտելուց հետո, նրանք արձանագրություն կազմեցին և ապա՝ առաջներն արած վորքը կեղափոխականներին՝ տարան վոստիկանատուն:

Նրանց դատապարտեցին վեց ամսվա բանտարկության:

Յերկու ամիս անցել եր:

— Արք նամակներ գրենք, Ռոմեո:

— Ո՞ւմ:

— Հայրիկին, մայրիկին:

— Ժանդարմները չեն թողնում:

— Վոչինչ, կարմարեցնենք: Կաշառք կտանք:

— Լավ, գրենք:

— Լավ չի լինի, վոր մի նամակ ել ժանդարմի պետին գրենք:

— Գրենք:

— Մի լավ կատաղեցնենք:

— Են ել վո՞նց...

— Դե սկսենք:

«Պարոն ժանդարմի պետ!»

Բարեկ ձեղ: Մենք ենք գրում, բանտարկված Ռոմեոն ու Ռեվարդոն: Ի՞նչպես ե ձեր քեֆը: Մենք չատ լավ ենք այս-տեղ: Լավ-լավ յերգեր ենք ասում: Ուզում ես, մի որ գանք քեզ համար ել ասենք: Կամ ավելի լավ կլինի, հենց յերգը գրենք, դու յերգիր: Հեշտ յեղանակ ե, կսովորես: Գրում ենք, դե լսիր.

Մենք բանվորի զավակ ենք,

Բաջ ու սրտոտ, անվախ ենք,

Կարմիր գարնան ծաղիկ ենք,

Կարմիր գարուն, արի, դե':

Կեցցե, կեցցե մեզ համար,

Լենին պապը մեզ համար...

«Լավ յերգ ե, չե՞՞: Չնեղանաս, պարոն ժանդարմի պետ: Կեցցե Լենինը»:

Ո

ԹԵՎԱՐԴՈ, ՌՈՄԵՈ

Կարդացին գրածները:

Հոհուացին, թովուացին, թե թեկ գցեցին, նամակի յերգը բարձրածայն յերգեցին և ապա, —

Դեհ, հիմա գրենք Հայրիկին և մայրիկին:

«Սիրելի Հայրիկ և մայրիկ.

Հիմա մենք իսկական հեղափոխականներ ենք: Մեր մասին միք մտածի: Սիրելի մայրիկ, մի պնակ տաք կերաւուր վոր լիներ, լավ կուտեյինք հա՛:

Սիրելի Հայրիկ, թե Լենին պապին նամակ գրելու լինեք, մեղանից ել բարեկ գրեցեք: Ասեք, վոր Ռեվարդոն ու Ռոմեոն

բանտարկված են: Ասեք, վոր նրանք քեզ շատ են սիրում, լենին պապի:

«Մեր կողմից համբուրեցեք փոքրիկ Զեմիկի թշերը: Ասեք, վոր մենք լսկական հեղովոխականներ ենք:

«Մնաք բարի, սիրելի հայրիկ և մայրիկ:

Ինկարդո, Ռոմեո

3.

Նամակները տեղ հասան:

Մայրերն արտասվեցին:

Հայրերը հրճվեցին և ուրախացան:

Իսկ ժանդարմերիայի պետը, գաղաղած, և բաժան տվեց տասական մտրակ հասցնել նամակ գրողներից ամեն մեկին և նրանց հայրերին ել բանտարկել:

— Ո՞վեր եյին մելարդոն և Ռոմեոն:

— Ռւսուցուհին ի՞նչ վերաբերմունք ուներ դեպի ունեվորները և չունեվորները:

— Ի՞նչ գրեցին մելարդոն և Ռոմեոն:

— Ինչո՞ւ նրանք «Լենին» գրեցին:

— Ինչպե՞ս վարվեցին նրանց հետ:

ԿԱՐԴԱՑԵՔ ԱՅՍ ԽՈՍՔԵՐԸ:

— Արի նամակներ գրենք, Ռոմեո:

— Ո՞ւմ:

— Հայրիկին, մայրիկին:

— Ժանդարմերը չեն թողնում:

— Պատմվածքի այս հատվածում գրեք տողի սկզբում գծի գործածությունը:

— Յե՞րբ ե տողի սկզբում գիծ գործածվում, ձեր հանած կանոնը գրեք տետրակում:

ՊԱՐՄԱ ՔԱՂԱՔԻ ՅԵՐԵՒԱՆԵՐԸ

Իտալական Պարմա քաղաքի գործարանների բանվորները գործադուլ արին:

Նրանք չեյին ուզում աշխատել այն աշխատավարձու վոր տալիս եյին գործարանատերերը, այլ պահանջում եյին ավելի բարձր աշխատավարձ:

Գործարանի տերերը չցանկացան բանվորների պահանջը բավարել ու գործարանները փակեցին:

Բանվորներն ել վոչինչ չեյին ստանում ու ընկան շամանը պայմանների մեջ:

Նրանք քաղցած եյին, բայց տերերին զիջել չեյին ուզում:

Բոլորից շատ տանջվում եյին նրանց յերեխանները՝ նրանք քաղցից հիվանդանում եյին, մեռնում:

Այդ մասին իմացան Զենովա քաղաքի բանվորներն ու վորոշեցին ոգնել ընկերներին:

Նրանք մտածեցին գործադուլ անող բանվորների յերեխաններին բերել իրենց մոտ՝ Զենովա, բաժանել ընտանիքների մեջ և գործադուլի ամբողջ ընթացքում կերակրել ու խնամել նրանց:

Այսպիսով, Պարմայի բանվորները կկարողանային ավելի յերկար ժամանակ դիմագրել գործարանատերերին ու ըստիպված չեյին լինի փոքրիկ աշխատավարձով աշխատանքի անցնելու:

Այդպես ել արին:

Մի քանի ընկերներ ընտրեցին և ուղարկեցին Պարմայերեխաններին բերելու համար:

Պարմայի բանվորները, տեսնելով իրենց յերեխանների տանջանքներն ու մահը, ուզում եյին գործադուլը դադարեցնել, առանց իրենց պահանջների բավարարման, յերբ վրահասավ այս ընկերական ոգնությունը:

Բանվորներն ուրախությամբ համաձայնվեցին յերեխաններին ուղարկել Զենովա, վորպեսզի իրենք ազատորեն կառողանան շարունակել գործադուլը:

Յերեխանները վոր կուշտ լինեն, իրենք քաղցին ավելի յերկար կդիմանան, ու գուցե գործարանատերերը զիջեն և աշխատավարձը բարձրացնեն:

Նրանք հավաքեցին բոլոր յերեխաններին և ուղարկեցին Զենովա:

Մի ամբողջ գնացք լցվեց տարբեր հասակի յերեխաններով:

Զենովայում սպասում եյին այդ գնացքին:

Կայարանում հավաքվել եր բանվորների հսկայական բաղմություն: Ամեն մեկն ուզում եր գոնե մի յերեխա վերցնի իր մոտ: Բացի բանվորներից, կայարան եյին յեկել Զենովայի և այլ բնակիչներ: Ամենքն ուզում եյին դիմավորելուն մասնակցել: Զանազան կազմակերպություններ իրենց դրոշակներով եյին յեկել: Յեկել եր նաև մի յերաժշտախոսմբ: Յերեխաններն ել վազելով յեկել ու լցվել եյին կայարանը:

Առեւտուր անող կանայք լիք-լիք զամբյուղներով կայարան եյին բերել խմորելեն, կարկանդակ և նարինչ: Պատշաճամբներին, պատուհաններում հավաքվել եյին կանայք ծաղիկները ձեռներին: Ամբողջ քաղաքը զարդարված եր դրոշակներով, ինչպես մեծ տոնների որերին:

Ահա, լսվեց շոգեշարժի սուլոցը: Հնչեց զանգը, և գնացքը զանդաղ մոտեցավ կայարանին: Գնացքի պատուհաններից գուրս եյին նայում յերեխանների գունատ դեմքերը:

Բազմությունը լուս եր:

Գնացքը կանգ առավ: Հանկարծ լսվեց յերաժշտության ձայնը: Բազմությունը խուժեց գեղի վագոնները, յերեխաների մոտ: Փոքրերին դուրս եյին բերում ձեռքերի վրա, իսկ մեծերն իրենք եյին դուրս թռչկոտում:

Ամենքը նիհար եյին, գունատ, տխուր դեմքերով:

Բայց յերբ յերեխաները լսեցին նվազի ձայնը, տեսանգեղեցիկ դրոշակները, յերբ նրանց սկսեցին հյուրասիրել մրգերով, քաղցրավենիքով ու կարկանդակներով, նրանց դեմքերը պայծառացան, ու մանկական ծիծաղը հնչեց բազմության մեջ:

Յերեխաներին իսկույն սկսեցին բաժանել իրար մեջ:

Մի բանվորի ընտանիք վերցրեց յերկու յերեխայի: Մի ուրիշը պնդում եր, վոր անպայման աղջիկ տան իրեն: Ու հանգստացավ, մինչեւ չստացվ:

Մի յերիտասարդ կնոջ բոլորովին յերեխա չեր հասել: Նա վրդովված քայլում եր ու դիմում սրան-նրան, վոր մեկնել իրեն տան:

Կայարանում ամեն ինչ ուրախ եր: Յերաժշտությունը նվազում եր: Արևի տակ ծածանվում եյին վոսկեզրյա դրոշակները: Մարդիկ ուրախ խոսակցում եյին միմյանց հետ ու փայտայում յերեխաներին:

Վերջապես ճամպա ընկան:

Փոքրերին գրկած եյին տանում, կամ ուսերի վրա նստեցրած, իսկ մեծերի ձեռքերից բռնած:

Յերեխաները, մըգերն անուշ անելով, ուրախ-ուրախ խռում եյին, բարձրածայն ծիծաղում:

Յերբ բազմությունը յերեխաների հետ անցնում եր փողոցներով, պատշգամբներից, պատուհաններից թափկում եյին ծաղիկներ, յերեխաները յերկարում եյին իրենց թաթիկները և ծաղիկները բռնում:

— Հիանալի յե, — ասում եր մի բանվոր մյուսին. — յեթե միշտ այսպես անենք, գործարանատերերը մեզ չեն կարող հաղթել:

— Գործադուլը վո՞րտեղ պահածացավ:

— Ի՞նչն եր խանգարում գործադուլը շարունակելուն:

— Ո՞վ ոգնության հասավ և ինչպե՞ս:

— Ոգնության ել ի՞նչ ձեւ կարող եր լինել:

— Վերջին յերկու տողում տպված բանվորների խոսքերին հեռեցեք և բացատրեցեք թե ինչո՞ւ, յեթե միշտ այդպես անեն, տերեր չեն կարող հաղթել:

— Բայց մի՞թե չեւ կարելի այն, ի՞նչ վոր արեցին Ռուսաստանի ժամանվորները 1917 թ. հոկտեմբերին:

ԶՈՆՆԻ

(Ամերիկյան յերեխաների կյանքից)

I

Հեռու-հեռու շշակի զիլ ձայնը Զոննիին և մորը վոտքի կանգնեցրեց: Մայրը նայեց դարակի վրա դրված թիթեղյա ժամացույցին: Ժամը հինգ և կեսն եր: Գործարանի ծառայողները նոր են գարթնել:

— Մենք պիտի վազենք, — քրթմնջաց նա, իջեցնելով պատրույզը և հանգնելով լամպը:

Մայր ու վորդի խարխավիելով իջան սանդուխքներով: Յեղանակը պարզ եր և զով, այնպես, վոր Զոննին թարմ ու դից սկսեց դողալ: Աստղերը յերկնքում դեռ չեյին մարել, քաղաքում մութ եր, վորպես մի փոսի մեջ: Զոննին և նրա մայրը դժվարությամբ եյին շարժում իրենց վոտքերը. նրանց մկաններում այնքան ուժ չկար, վոր կարողանային վոտքերը գետնից վեր բարձրացնել:

Այդպես նրանք գնում եյին քառորդ ժամի չափ բոլորովին լուռ, յերբ մայրը դարձավ գեղի աջ:

— Տե՛ս, չուշանա՛ս, — ասաց նա իր վորդուն մթության միջից:

Զոննին վոչինչ չպատասխանեց և գնաց իր ճանապարհով: Բանվորական թարերում տների դռներն ամենուրեք բաց եյին: Շուտով Զոննին միացավ ամբոխին, վոր շտապ առաջանում եր կիսախավարի մեջ: Յերբ նա դործարանի դարպասից ներս մտավ, շակիլ նորից սուլում եր:

Զոննին նայեց գեղի արևելք: Քաղաքային տների տանիքների վրայից յերեռում եր գունատ արշալույսը: Յեվ դա յեր այն բոլորը, ինչ վոր նա տեսա՛յ դերեկվա լույսից վորովհետեւ նույն վայրկյանին նա յերևոր դարձրեց և սկսեց իր աշխատանքը:

Տղան գրավեց իր տեղն ընդարձակ արհեստանոցում, յերկայն շարքերով կանգնած մեքենաներից մեկի մոտ: Նրա հանգեղ, մի արկղի վրա, արագ պտտվում եյին ճախարակների պես մեծ կոճեր, վորոնց վրա նա փաթթաթում եր փոքր կոճերի թելը: Աշխատանքը պարզ եր և բացի արագությունից՝ ուրիշ վոչինչ չեր պահանջում: Փոքրիկ կոճերն արագ գատարկվում եյին, և նրանց փաթեթները հետ անող մեծ

կոճերն այնքան շատ եյին, վոր մի բոպե անգամ հանգիստ չեյին տալիս Զոննիին:

Նա աշխատում եր մեքենայորեն: Յերբ փոքրիկ կոճը դատարկվում եր, նա ձախ ձեռքով արդելք եր լինում գլանակի շարժումին, կանգնեցնում եր մեծ կոճը և նույն բոպեյին ցուցամատով բռնում եր թելի մասերի բաժանվող ծայրը, իսկ աջ ձեռքով խլում եր փոքր կոճից թելի նույնպիսի պղատ ծայրը:

Այս տարբեր շարժումները կատարվում եյին յերկու ձեռքով միաժամանակ և արագ: Տղայի մատները հաղիվ եյին յերեռում, ինչպես հաղիվ եր յերեռում անիվի ճաղերը պտտվելիս:

Որինակելի բանվորից Զոննին դարձավ որինակելի մեքենա: Յերբ նրա աշխատանքը լավ չեր դուրս գալիս, պատճառը միայն ապրանքի վատությունն եր: Յել այդտեղ վոչ մի զարմանալի բան չկար: Նա մի որ իսկ չեր հիշում իրեն առանց մեքենայի: Նա ծնվել եր մեքենայի մեջ և նրանց շրջանումն ել դաստիարակվել եր:

II

Տասներկու տարի առաջ նույն այդ ջուլհականոց-արհեստանոցում, հենց նույն գործարանում բանվորուհիների մեջ շփոթմունք առաջացավ: Զոննի մայրը հանկարծ ուշաթափվեց: Նրան պառկեցրին հատակի վրա շոնդացող մեքենաների մեջ. միքանի հասակավոր կանայք թողեցին իրենց գործը և մոտեցան նրան: Ավագ վարպետը նրանց ողնում եր: Մի քանի վայրկյանից հետո արհեստանոցում մի կենդանի եյակ ավելացավ: Դա Զոննին եր, վոր ծնվեց վորոտացող մեքենայի գոռոցի ու աղմուկի մեջ, և տաք ու խոնավ ողի առաջին ներշընչումով իր մեջ ընդունեց նաև բամբակի բարակ մասնիկներ: Նա իսկույնեթ հաղաց, վորպեսզի իր թոքերն աղատի այդ աղվամաղերի գրգռից, և այն ժամանակից սկսած, նույն պատճառով նա չի դադարել հաղալուց:

Զոննի հարեան տղան անուշադիր աշխատելու պատճառով մի լավ ծեծ եր կերել վերակացվից. հեկեկում եր և քիթը վեր քաշում: Նրա դեմքը ջղայնորեն դողդողում եր վերակացվի դեմ առաջացած ատելությունից, մինչ վերակացուն զայրացած հայացքով նրան եր նայում: Բայց այժմ ծեծ ված տղայի յուրաքանչյուր կոճն աշխատում եր կարգին, իսկ ինքը բարձրածայն սարսափելի անեծքներ եր թափում պտըստվող գլանների ուղղությամբ, լավ իմանալով, վոր նրանց աղմուկը տեղում խեղում եր և անլսելի դարձնում իր հայնոյանքը:

Զոննին ուշադրություն չեր դարձնում իր շուրջը տեղի ունեցող վոչ մի բանի վրա:

Անցավ յերկար առավոտը և ձանձրալի որը: Արդեն մըթնել եր, յերբ չչակը հաղորդեց աշխատանքի ավարտումը, և Զոննին դուրս եյկավ դործարանի դարպասից: Այդքան ժամանակամիջոցում արեգակն իր բարերար տաքությունը հաղորդելով հողին, վերջացնում եր իր յերկնային պտույտը և հետզհետե ցած էնելով, ծածկվում եր քաղաքային տների ուանիքների հորիզոնի յետեռում:

III

Հետեւյալ առավոտյան մայրը նորից նրան զարթեցրեց անուշ քնից: Հետո նույն աղքատիկ նախաճաշը, նույն ճառապարհությունը խավարի մեջ, նույն գունատ արշալույսը տների տանիքների յետեվից և նույն ծանր, դժվար աշխատանքն աղմկալի գործարանում:

Բայց վոչ... Զոննիի կյանքում կար և մի փոքրիկ բաղմագանություն: Դա տեղի ուներ այն ժամանակ, յերբ նա մի աշխատանքից մյուսն եր անցնում կամ հիվանդանում եր: Յերբ դեռ վեց տարեկան եր, Զոննին փոխարինում եր ունը ծնողներին: Յոթ տարեկան հասակում նա գործարան մտավ, կոճերի վրա թել փաթթաթելու գործով: Իսկ յերբ ութ տարին լրացավ, նա վարձվեց մի ուրիշ գործարանում: Նրա աշխատանքը զարմանալի կերպով միորինակ եր. նա պիտի նստեր՝ ձեռքին բռնած մի ճիպոտ և նրանով պիտի ուղղություն տար իր մոտով վազող մահութի հօսանքին, վոր մեքենայի խորքից դուրս պլծնելով, անցնում եր տաք գլանի մեջ և գնում դեպի հեռու: Իսկ Զոննին նստած եր միշտ միւնույն ուեղում, հեռու ցերեկվա լույսից:

Իննը տարեկան հասակում Զոննին հիվանդացավ կարմրուկով և այդ աշխատանքից զրկվեց: Առողջանալուն պես նա մտավ ապակու գործարան: Որավարձն այնտեղ ալիքի լավ եր, բայց գործը ճարպկություն և ունակություն եր պահանջում: Այդ աշխատանքը վարձատրվում եր հատով, և Զոննին վորքան ավելի ճարպկություն եր ցույց տալիս, այնքան ավելի ունիկ եր ձեռք բերում: Տարվելով վաստակություն ծառավով, նա աշխատում եր իր ունեցած ամբողջ յեռանդով կարձ միջոցում գործավ վորակյալ բանվոր: Նրա աշխատանքը բարդ չեր. ապակյա խցանները շերին անցկացնելու գործ եր:

Նրա գոտուց կախված եր լինում մի փունջ թել: Վորպեսզի յերկու ձեռքով աշխատել կալողանա, նա չիշը պահում եր յերկու վոտքի մեջ և նստած եր մնում առավոտից

մինչև իրիկուն, առանց ուղղվելու։ Ամեն որ նա այդ գրության մեջ մնում եր ճիշտ տասը ժամ, և նրա կուրծքը հետըդ հետեւ նեղանում եր և հիվանդոտ դառնում։ Դա վտանգավոր եր թոքերի համար, բայց դրա փոխարեն՝ որական նա պատրաստում եր յերեք հարյուր դյուժին շիշ։ Գործարանի վարչը շատ եր պարծենում Զոննիով և այցելուներին մատով ցույց եր տալիս նրան։ Հանաք բան չե, տասը ժամում յերեր հարյուր դյուժին շիշ։ Չե՞ դա նշանակում եր, վոր մարդը դարձել ե մեքենա, վոր վոչ մի ավելորդ շարժում չի անում, վորի յուրաքանչյուր մկանն աշխատում ե արագ և ստույգ։ Բայց այդ լարված աշխատանքի հետեւ վանքով Զոննին դարձավ սարսափելի զղային։ Գիշերը, քնի մեջ, նա շարունակ ցընցվում եր, իսկ յերեկը նա չեր կարողանում ուղղվել, միշտ կծկված եր։

Նա դարձավ շատ գունատ, և նրա հազը սաստկացավ։ Շուտով սուր բորբոքում առաջացավ հիվանդագին կրծքի վանդակի մեջ, նրա թույլ թոքերում, և նա կորցրեց իր տեղն ապակու գործարանում։

Զոննին ստիպված եր վերադառնալ այն գործարանը, ուր նա աշխատանքն սկսեց կոճի վրա թել փաթաթերով։

Խոսք, բառ, հնչյուն։

— Քանի՞ պարզ բաղադրիչ մասերի կարելի յե վերածել խոսքը։
— Սահմանում։ Խոսքը կաղմված ե բառերից, բառերը վանկերից, վանկերը հնչյուններից։

— Վանկ առվում են այն հնչյունները կամ հնչյունների կապակցությունները, վորոնք արտասանվում են մի շնչով։

— Նշանակություն ունեցող վանկերը, կամ վանկերի կապակցությունը կոչվում են բառ։

— Բառերն իրենց վանկերի թվին նայելով՝ լինում են միավանկ և բազմավանկ։

— Որինակ՝ գիր, տուն, լավ—միավանկ են. ա-սա-, ա-շա-կերու, ի-մաս-տուն—բազմավանկ են։

— Այս բառերի վանկերի բաժանումից յերեսում ե, վոր կան հնչյուններ, վորոնք մենակ վանկ են կաղմում, և կամ հնչյուններ, վորոնք մենակ վանկ կատրել չեն կարող։

— Ինքներդ վորոշեք. վո՞ր հնչյուններն են, վոր մենակ վանկ են կաղմում. ձայնավորները, թե՞ բաղաձայները։

— Կաղմեք մի խոսք, հետո պարզ բաղադրիչ մասերի վերածեք։

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՏԸ

Սաֆրոնովկայի գյուղացիներն աղքատ եյին ապրում։ Հողերը քիչ եր, համարյա անասուններ չեյին պահում, վորովհետեւ կեր չունեյին։ Բոլորը մինչեւ վերջին հատիկը, մինչեւ դարմանի վերջին ծիլն ուտում և ուտեցնում եյին մինչեւ նորը։ Մի կերպ տարեց-տարի քարչ եյին գալիս, բանում եյին աղայի համար, վողորմություն եյին խնդրում։

Կար ժամանակ, վոր Սաֆրոնովկան լավ եր ապրում. եղ են ժամանակն եր, յերբ գյուղացիները խոտհարք ունեյին։ Բայց աղան եղ խոտհարքը խլեց։ Ինչքան ել գյուղացիները վիճեցին, ինչքան ել դես-դեն ընկան, բան դուրս չեկավ։ Աղան ապրում ու հարստանում եր։ Իսկ Սաֆրոնովկան տարեց-տարի աղքատանում եր, հա աղքատանում։

Ամեն տարի գարնանը, յերբ մարդագետինը ծածկվում եր խոտով և տաք քամին գեպի Սաֆրոնովկա յեր տանում իր բուրավետ ալիքները, գյուղացիները՝ դուրս եյին գալիս իրենց ծխոտած ճյուղերից, մտածկոտ նայում եյին ծաղիկների խատուտիկ ծովին, նրանց ուռնզներն ուռչում եյին—աղահարար ներշնչելով խնձորածաղկի, առվույտի և դաշտային յերեքնուկի հոտը։

— Ախ, ինչ կլիներ մի թափ տայինք, խոտհարքն ելի մեր ձեռքը գցեյինք...

Ու ամեն անգամ նույն անջնջելի միտքը վառում եր գյուղացիներին։

Իսայ Շկվարնյովը վերադաբել եր զինվորական ծառայությունից։ Նա շատ եր սիրում իրենց գյուղը, ու ցավում եր, յերբ տեսնում եր գյուղի ցեխն ու աղքատությունը։

Նա գյուղացիներին համոզեց խոտհարքի վերաբերմամք, վոր մի անգամ ել բախտները փորձեն։ Իսայը գնաց քաղաք։ Յերկար ժամանակ ենտեղ ես ու են կողմ ընկավ։ Իսկ սկզբում ամեն բան լավ եր գնում։ Բանը դատարան հասավ։ Իսկ դատարանում թուղթ պահանջեցին, վոր իրոք մի ժամանակ Սաֆրոնովկան ե յեղել խոտհարքի տերը։ Եղալիսի թուղթ չերելվաց։ Յեկ բանը կրկին աղայի ոգտին վերջացավ։

— Խոտհարքը ձերն ե, խոսք չկա, —ասում եյին գյուղացիներին, — բայց միայն թե որենքով, առանց թղթի չի կարելի ձեզ տալ։

— Դե, յերբ վոր խոտհարքը մերն ե, են ե առանց թուղթ ել կհնձենք, — վորոշեցին իրենք գյուղացիները։ Ել չենք ու-

զում համբերել: Ամբողջ համայնքով կդնանք, կպառկենք գետնին ու կմեռնենք:

- ինչ կա վոր, -ասաց Խսայը, -յերբ համայնքը զօթոշեց, յես ել նրանց հետ: Թե փորձանք կդա, բոլորիս միասին կդա, թե կմեռնենք, միասին կմեռնենք:

Ամոան պայծառ առավոտ եր: Սաֆրոնովկայում եստեղ -ենտեղ իրար ձայն եյին տալիս ձմռան սովից ազատված սա-կավաթիվ աքաղաղները: Վորոշված եր եղ որը խոտհարքը Հնձել: Նախաճաշչից հետո գյուղացիներն իրար յետեվից, գե-րանդիներն ուսներին, խմբովին շարժվեցին դեպի խոտհար-քը: Կանայք ու յերեխաները վաղեցին նրանց յետեվից:

Առաջարքը զեռ ննջում եր. գիշերվա ցողի վրա արեվը
եստեղ-ենտեղ, խոտերի մեջ, կապույտ ու կարմիր կայծեր
եր վառում։ Առաջինն սկսեց իվան պապը, նրա յետեվից ի-
սայը, իսկ նրա յետեվից՝ յերկար շարքով-մյուսները։ Գե-
րանդիների համաշափ բզզոցի յեվ ընկնող խոտի գողացող
խշոցի ձայնը բռնեց ամբողջ գաշտը։ Մինչեվ կեսոր հնձե-
ցին։ Արեգակն այրում եր անասելի։ Հնձած խոտն արագ թա-
ռամում յեվ առատությամբ քաղցր բուրմունք եր տարա-
ծում։ Իսկ այդ ժամանակ զյուղի ճանապարհին մութ ու ա-
նորոշ փոշու ամպ բարձացավ։

— Տղերք, յեկող կա, —աղաղակեց մի կին, վոր ամենից առաջ եր նկատել:

— Թող գա, — ասաց իսայը

Մի հանրակառք յեվ յերկու ձիավոր ճանապարհից դեպի խոռհարքը ծովեցին:

- Վոստիկանապետն Ե, — ճշաղին կանալը

Հանրակառքը մոտեցավ հնձվորներին։ Ենտեղից դուրս թռան պրիստավն ու կառավարիչը։

— Եհեյ, լսեցեք, մի բան եմ ասում, —ասադ պրիստամկը, մոտենալով գյուղացիներին:

- Եղի ի՞նչ եք անում, ուրիշի խոտհարքն եք հնձո՞ւմ։
Գլուղաղիները լուռ, առան գինառ առնեւու։ Ասուն-

— Են կոռմո կաս, ձեռ առնվորթուն — Հան-իսր տա-

Օս զուրը զայց, ամրէ ազակություն, — հասդիստ Փասաց
Տրուշկան յեկ գերանդին պտտեց։ Վոստիկանապետը Հաղիվ
կարողացավ յետ թռչել, և գերանդին սուլելով — նրա վոտնե-
րի մոտ հյութալի խոտի մի լաս փոեց։

— Են կողմ կաց, ձերդ ազնվություն, — կրկնեց Հաջորդ գյուղացին ու մի նոր լսո փոեց վոստիկանապետի վոտների մոտ:

Նա բոլորովին շփոթվեց

— Ե՞ս ինչ ե: Եղակես հա, խառնակչություն: Անասուն-
ր, գեն զցեք գերանդիները: Զեզ եմ ասում, թե՞ չե:

Բայց գյուղացիները չարուսավուա սյրս չառալ:
տիկանապետի սիրտն ահ ընկավ: Նա դլխարկը վերցրեց,
ոշկինակով քրտինքը սրբեց: Աղմուկի վրա մոտ վազեցին
նայք:

- Հսեցեք, տղերք, -սկսեց խոսել կառավարիչը:

- Լավ բան չեք անում։ Ախր սա որը ցերեկով թալան եւ ձեզ վրա մտածեցեք. ի՞նչ կասեք, որինակի համար, թե ձեր բակը մտնեմ և ինչ վոր դուրս գա—վերցնեմ, տա-
ֆ։

— Գնա տար, — ճշաց Դարիա Հորաքույթը, — միենույն եւ նստեղ բան չես գտնի:

— Յես գիտեմ, թե եղ ով է ձեզ խառնում, — նորից աղակեց վոստիկանապետը, — եղ բոլորը իսայ Շկվարնյովն ենք: Յես մառուց եմ նրան աչքիս տակն առել:

— Են կողմը կաց, ձերդ ազնվություն, — ահոելի ձայնով
ուաց Լուկան և քիչ մնաց վոստիկանապետի վոտներն եւ

— Դե լավ, սպասեցեք դեմ, տեսեք յես ձեզ ինչ կամ, — զայրացած Փշշացրեց վոստիկանապետը և արագ դնաց ամի հանուակառըր:

- Վորտեղից յեկել ես, ելի դենք զնա, -աղաղակեց մեկը
ա հետեւից: Դրանից հետո յերեք որ ել հնձում եյին գյու-
ցիները: Նրանք համարյա չեյին հանգստանում, վոչ ու-
ռում եյին, վոչ խմում: Գիշերցերեկ դաշտումն եյին անց-
ացնում. իրենց մրոտ խրճիթները, ուր կյանքն այնքան դըժ-
ուր եր ու դաժան, մոռացել եյին: Նրանք կարծես հարբել
ին աշխատանքից, հյութալի խոտի առատ բուրմունքից, եղ-
ոլոր հարստությունից: Խսկ չորրորդ որը, կես որին, դաշ-
ում տարածվեց մի ահարեր ճիչ, —«զինվորները դալիս են»:
ործես խոտհարքը դողոցն ընկալ: Կանայք խոտ չուտ տալը
սպարեցրին. գյուղացիներն անհանգիստ նայում եյին ճա-
պարհին, փորտեց շարժվում եր մութ պատը:

Ամբողջովին կարմրած, շոգից չնշասպառ, գյուղացինեա-
առնե կանգնած եր նահանգապետը:

Նրանք ել չեյին հնձում, այլ լուռ ամբոխ դարձած՝ կանդ-
լ, մոայլ կերպով նայում եյին զինվորներին յեկ ճիպոտ-
ը բարձած սայլերին, վորոնց շուրջը գեսղեն եյին ընկ-
ում փոստիկանները:

— Ծունկի, — զաղաղած գոռում եր նահանգապետը. —

Օրիկաներ, խառնակիչներ։ Ծունկի, ասում եմ։

Ամբոխը մի թեթև տատանվեց, բայց վոչ վոք տեղից շշարժվեց։

— Կջարդեմ, ավազակներ, — նորից աղաղակեց նահանգապետը։

Ամբոխը նորից շարժվեց։ Առաջ դուրս յեկավ իսայր։

— Թույլ ավեք մի խոսք ասել, — սկսեց նա հարդանքով յեվ հաստատուն տոնով։ Մենք ավազակներ չենք, մենք մեր բարիքի համար ենք տանջվում։ Խոտհարքը շատ հնուց մերն եր, աղան անիրավ կերպով տիրացավ։ Դատեցեք մեզ, բայց որենքով։

— Լոիր, — ավազակներ նահանգապետը։ Եստեղ մոտ թուալ վոստիկանապետը և նրա ականջին ինչ-լոր փսփոաց։

— Հա... ուրեմն եղ դու յե՞ս իսայ Շկվարնյով։ Եղ դու յես դատ ուզում։ Այ քեզ դատարան, — զազազած դուաց նահանգապետը, ձեռքը յետ տարավ և ինչքան ուժ ուներ, խմբց Շկվարնյովի յերեսին։

Կարմիր, յերդ արյունը ներկեց գյուղացու մորուքն ու կուրծքը։ Նա կուցավ և արյան հետ թքեց յերկու անզամ։

— Ծեծել, բոլորին ծեծել, — ավազակում եր նահանգապետը։ Զինվորները շրջապատեցին գյուղացիներին։

Ծեծի տակ առաջինն իսայը պառկեց։ Սոսկալի, ուռած, կապտած զեմքով, առանց մի խոսք ասելու, նա մերկացավ յեվ զետին ընկավ։

— Սրիկա, — ատամների արանքից ասաց նահանգապետը։ — Հը, հիմա դատ ես ուզում, անասուն։ Այ, հիմի յես քեզ դատ ցույց կտամ, — թան ծամելուց կզցեմ քեզ... սկսել, — ավազակներ նա վոստիկաններին։

Ծեծողները յերկու վոստիկան եյին. ծեծում եյին ճաշակով, ծոր տալով, մի առանձին գաղտնային բավականությամբ։

Իսայը չեր ավազակում ու չեր հառաջում, միայն ամեն անզամ, յերբ գալար ճիպոտը խրվում եր նրա մարմնի մեջ, ցնցվում եր։ Վերջը նա չեր ել ցնցվում։

— Նա հալից ընկավ, ձերդ ազնվություն, — ասաց վոստիկանը հիմար ժպիտով։

— Դեն շպրտեցեք դրան... — հրամայեց նահանգապետը, — հետեւյալին բեր... այ, են յերկարամազ ծերունուն... .

Վոստիկանները բռնեցին իվան պապին։ Գյուղացիների ամբոխում հառաջանքի նման բան լսվեց։ Դեմենտիի զեմքը մուդ կապույտ գույն ստացավ, իսկ ներքեւի շրթունքը դուց։

— Բա պապին ինչո՞ւ համար, — բարձրաձայն ասաց նա։ — Եղպես որենք չկա, վոր ծերունիներին ծեծեն։ Մարդապաններ։

Վերջին խոսքերը նրա կոկորդում մնացին։ Վոստիկանները նրա բերանը փակեցին յեվ մի կողմ տարան։ Լություն տիրեց։ Բարձրահասակ, գեղեցիկ, սպիտակ միքուքը կրծքին փոված իվան պապը կանգնած եր նահանգապետի առջեվ յեվ նայում եր նրան իր պայծառ, հանգիստ աչքերով։

— Հիսուն հատ ահեղ հարված սրան, — ավազակնեց նահանգապետը։

Վոստիկաններն իրարով անցան, անկանոն կերպով պոկեցին նրա գոտին, ու նորից գաշտում տարածվեց հարվածների սուլոցը, իվան պապը չգիմացավ յեվ հառաջում եր։

— Հը, — չարախնդությամբ Փշշացնում եր նահանգապետը, — դուք չի գալիս... դե, հապա, ելի ավելացրեք։

Իվան պապն արդեն վոչ թե հառաջում, այլ ձայնով աղակում եր, յերեխայի նման հկեկում եր յեվ յեղունդներով հողը ճանկում։

Ծեծը շարունակվեց մինչև յերեկո, յեվ շատ քիչ Սաֆրոնովցիներ յեղան, վոր ծեծ չկերան։ Արդեն ուշ գիշեր եր, յեվ նահանգապապետը զնաց կարվածքում ճաշելու։

Գյուղացիներից յերեքին կիսամեռ գցեցին սայլը և պահակներով ուղղակի հիվանդանոց տարան, հնգին ծերբակալեցին և աքսորեցին, իսկ մյուսներին թողեցին տները զնալու։

Զինվորները գնացին, և դաշտը լաեց։ Դեղին վերջալույսը հանգչում եր յերկնքում։ Իսկ Սաֆրոնովկան թագնվեց իր զորչ խցերում, խուլ հառաչեց, գանգատվելով եր թշվառ վիճակից։

ՌՈՒՇԱՆԻ ՔԱՐԱՓԸ

Զաթնանց գերդաստանն անհուշ որերից Յեղել և գյուղում անվանի, հարուստ։

Նա զավթել և միշտ լավը հողերի։ Յորենն և փոել Զաթնանց ամբարում։

Աճել և ժամու ամողովանու տակ, Վորպես դարավոր մի ընկուղենի։

Փոելով գյուղում արմատներն անտառ, Ծծել և նրա հյութը վայրենի։

Իշխել և, գյուղում վորպես տանուտեր, Վորպես մի վայրի կառավարություն։ Յեվ կուչ և յեկել թշվառ գյուղացին

Զաթնանց գարավոր ընկուզենու տակ՝
 Աչքերը հառած ավելցուկ հացին,
 Իր վողորմելի բախտին անդիտակ:
 Իսկ Զաթնանց Սանթրոսն անողոք բահով
 Ճեղքել ե գլուխն աղքատ Ռուշանի,
 Հափշտակել ե ընտիր սեահողն
 Ու սովի մատնել մի տուն ընտանիք:
 Մեռել ե Ռուշանն եղ վերքից հետո
 Յեվ ման ե յեկել Սանթրոսն անպատիժ:
 Դատարան մտած հիսուն մանեթով
 Դարձել ե չհաս, չենթակա դատի:
 Զավթել են այսպես ու կերել, մարսել
 Զաթնանք Ռուշանի հողը բերքառատ:
 Բայց հին անունն ե վրան մնացել.
 Գյուղում ասում են «Ռուշանի քարափ»:

- Վո՞ր շրջանի գրվածք ե Ռուշանի քարափը:
- Ո՞վ եր Ռուշանը, ինչո՞ւ նրան սպանեց Զաթնանց Սանթրոսը:
- Հին գյուղում լավ հողերն ո՞ւմ եր պատկանում:

ԳԱՂՏՆԻ ԺՈՂՈՎ

I

Մութն ընկնում եր: Ա. գյուղի բոլոր բնակիչներին
 հայտնի յեր արդեն, վոր գետի մոտ գտնված ձորակներից
 Տեկում այդ գիշեր գյուղական ընդհանուր ժողով եր նշա-
 նակված:

Ծածուկ ու զգուշավոր բոլորը պատրաստվում եյին ներ-
 կա գտնվել այդ ժողովին: Այնքան եյին տարված ու վոգե-
 վորված ժողովով, վոր ամբողջ որվա աշխատանքից հոգ-
 նած գյուղացիության աչքին չեր գալիս ուտելիքը: Բոլորն
 ել ուզում եյին շուտ գնալ, բոլորն ել ուզում եյին ներկա լի-
 նել: Առանձնապես վոգերված եր գյուղի յերիտասարդու-
 թյունը:

Մութն արդեն պատել եր ամենուրեք, յերբ ժողովին
 մասնակցողների հոսանքն սկսեց տարածվել ժողովատեղի-
 ուղղությամբ:

Գնում եյին բոլորը՝ չար աչքից աննկատ մնալու հա-
 մար մեկ-մեկ, յերկու-յերկու:

Յերիտասարդները, գուրիխացիներին հատուկ տարազով
 գլխներին կոկիկ փաթաթած բաշլուղներով, վոմանք գաղ-
 թյունը:

Մուկ, վոմանք ել ակնհայտ, կրում եյին իրենց վրա տանն
 ունեցած զենքերը: Դաշտերով, արտերով շտապում եյին բո-
 լորը, կարճ ճանապարհներով չուտ հասնելու, «ազատու-
 թյան» հզոր կանչն ականջով լսելու:

Առաջը գալու ձորակի ծայրին, հրացանը ձեռքին, կանդ-
 նած եր մի պահակ: Նա Լևանի մտերիմ ընկեր Բեժանն եր,
 վոր ցույց եր տալիս յեկողներին ժողովատեղը՝ «Յերեք
 թփատակ» կոչված փոսում:

— «Յերեք թփատակի փոսը», ընկերներ, — կարճ ասում
 եր յեկողներին Բեժանը և ցույց տալիս ուղղությունը:

Շատերի ականջներին խորթ եր «ընկեր» անունը և այդ
 պատճառով հուզիչ տպավորություն եր անում նրանց վրա:
 Իսկ նրանք, վորոնք վարժված եյին «գաղտնի» ժողովների,
 նրանց համար անշուշտ անձանոթ չեր այդ սիրելի անունը:
 Մրանք գլխով համաձայնության նշան եյին անում և առաջ
 անցնում:

II

Կարճ ժամանակից արդեն հոծ բազմություն եր հավաք-
 ված:

Շշուկներն ու փսփսոցը քանի գնում ավելի և ավելի
 լսելի եյին դառնում: Տեղտեղ արդեն սկսել եյին խոսել
 բարձրաձայն:

Այլևս վոք զգուշավորության կարիք չեր զգում:

— Մեր վողջույնն ու բարելը Տարիելին, — ձայն տվին
 մի խումբ ժողովականներ և հետ քաշվեցին ու տեղ տվին
 նրան:

Տարիելը չորհակալություն հայտնեց իրեն վողջունող-
 ներին, խառնվեց բազմության մեջ և սրան ու նրան ձեռք-
 տալով ու բարեելով՝ հարցուփորձ եր անում առորյա կեն-
 ցաղի մասին:

— Ո՞ւր են մեր նոր կարգերի ջատագովները, — դարձավ
 Տարիելն իր շուրջը կանգնողներին և նայեց չորս կողմը:

— Թե մեղ ես ակնարկում, բոլորս այստեղ ենք, — ա-
 կանջին փսփսաց աննկատելի կերպով նրա կողքին տեղ ըըռ-
 նած Լևանը, վոր յերեսին քաշել եր բաշլուղը և մեջքին գցել
 յափնջին:

Տարիելը հաղիկ ճանաչեց վորդուն իր տարօրինակ հա-
 գուստում:

— Նախագահիր, ժողովը բանալու ժամանակ ե, — շա-
 րունակեց ծերունու ականջին Լևանը. հուզմունքից ձայնը
 դողում եր:

— Նախագահեմ, շատ լավ, — ասաց Տարիելն ու առաջ
 անցավ:

— Ընկերնե՛ր, յեղբայրնե՛ր, — դիմեց նախագահը ժողովին, — ժողովը հայտարարում եմ բացված։ Խոսք տանք մեր գյուղի ջահելներին, աւսնենք ի՞նչ են ասելու մեղ։ Համոզիչ ու խելք խոսքերն ընդունենք ու պինդ սեղմենք մեր կրծքին...

— Համաձայն ենք . . . — ձայնեցին ամեն կողմից, — դրա համար ել հավաքվել ենք։

Բոլորը լսում են։ Հազարավոր մարդկանց միջից ձայնապտուն չեր լսվում, լարված հետաքրքրությամբ լսում եյին «նոր խոսքին»։

Լեանը հանկարծ դեն շպրտեց յերեսին քաշված բաշլուղը, ուսից նետեց յափնջին, մեջքն ուղղեց և ճակատը բորձը պահած՝ խրոխտ ու վոգեռված կանչեց։

— Յեղբայրնե՛ր, ընկերնե՛ր . . .

Նա հետզհետե ձայնն ավելի ու ավելի ուժեղացնում եր և վստահ ու համարձակ տոն եր տալիս իր ճառին։

Խոսում եր պարզ ու հասկանալի լեզվով. ներկա յեղաղներին բացատրեց ժողովի նպատակը, նոր կարգերի եյությունն ու նշանակությունը, միության կարեռությունն ու անհրաժեշտությունը և կոչարավեռուրին, միանալ, մեջքմեջքի տալ այս ծանր որերում բոլոր դժվարություններին դիմագրելու համար։

Մտքերը հնչում եյին պարզ։ Խոսքերը դառնում եյին հատու և վճռական։ Վերջում նրա ճառն արդեն ընդունեց ազատության համար մարտնչող չարքաշ գյուղացիության դեկլարացիայի բնավորություն։

Յերբ հսկորը վերջացրեց իր ազգու ճառը, բազմությունը վոգեռված՝ միաձայն թնդաց։

— Կեցե՛ ազատությունը . . .

Վոգեռությունն ու հուզմունքը սահման չունեյին։ Կարծես ստրկության ծանր բեռն արդեն ընկել եր նրանց մեջքից։ Այդ վայրկյանին նրանք զգում եյին իրենց ազատ, վիճում, խոսում եյին այն բոլոր խնդիրների մասին, վորոնց արծարծել եր հսկորը։ Անմիջապես հարյուրապետներ ու հազարապետներ ընտրեցին՝ ապստամբության և նոր կարգերի կիրառման համար։ Իսկ սրանց գլխավոր ու ղեկավար կարգեցին Տարիել Գոլուային։

Մի գիշերվա ընթացքում Ա. գյուղում կատարվեց այն բոլորը, ինչ վոր այլ վայրերում ամիսների ու յերկար շարժների դործ ել լինում։

Ժողովականներն իրար ձեռք տալով՝ վողջունում են շարժումը, նոր կարգերն ու նոր կյանքը։

Բոլորի աչքերում ուրախություն եր փայլում։ Սրդենուշ գիշեր եր, բայց վոչ վոք հագնածություն չեր զգում և գյուղ գառնալու մասին չեյին մասածում։

Գաղտնի և զգուշավոր հավաքված ժողովը վերջացավ մեծ վոգեռությամբ և խանդակառ ցույցերով։ Անհամբեր ջահելները մինչեւ անդամ սկսեցին ողում ատրճանակներ պարպել և խումբ-խումբ յերգելով բռնեցին գյուղի ճանապարհը։

— Ո՞ւմ դեմ եր պայքարում գյուղացիությունը։

— Վո՞րտեղ եյին ժողով գումարել և ինչո՞ւ։

— Ի՞նչ եր ասում հեղափոխական ճառախոսը։

— Ի՞նչն եր գյուղացիներին այնքան վոգելորում։

— Նկարագրեցեք, ի՞նչ հետեւանք ունեցան գյուղացիական ապստամբությունները։

Պարզ, բարդ և ածանցավոր բառեր։

— Տուն, քար, մտաղբաղ, գրաստախտակ, անդորձ, զգուշավոր գիտեց այս բառերի կազմությունը։

— Բոտ կազմության բառերը քանի՞ տեսակ են լինում։

— Վո՞ր բառերն են կոչվում պարզ։

— Վո՞ր բառերն են կոչվում բարե։

— Վո՞ր բառերն են կոչվում ածանցավոր։

— Բարդ բառերը կազմվում են ա հողակապով (գաս-ա-զիրք)։

— Բարդ բառի յերկրորդ մասը ճայնավորով սկսելու դեղքում՝ և հողակապը չի դրվում (գաս-ընկեր)։

— Ինքներդ զանազան պարզ բառերից կազմեք բարդ բառեր և դրեք տեսրակում։

ՍԱՅԻԴԸ

Սայիդի հայրը մի գոմեշ ուներ, նրանով նա մշակում էր իր գաշտը։ Յերբ չըջանի պետը խլեց նրա գոմեշը, Սայիդի հայրն այնքան վշտացավ ու այնպես տիրեց, վոր որեր շարունակ խոսք չեր գուրս գալիս նրա բերանից։ Վարի ժամանակը մոտենում եր։ Յեթե հողը ժամանակին չվարեր ու չցաներ, ամբողջ տարին բրնձի յերես չեր տեսնի։

Սայիդի հայրը խիստ մտահոգված եր. չե՞ վոր բրինձ եւ հարկավոր թե՛ իրեն, թե՛ իր կնոջը, թե՛ Սայիդի համար. վոր գեռ յերեխա յեր, և թե՛ նրա փոքրիկ յեղբայրների ու քույրերի համար։ Բայց միայն այդ չեր Սայիդի հոր հոգը։ Նա վախենում եր, վոր շրջանի պետը գանգատվի գլխավոր.

պետին, թե ինքը տուրքը լրիվ չի տվել ու պետը պատժի իրեն, վորովհետև դրա համար պատժում են:

Սայիդի հայրը մի դաշույն ուներ. ճիշտ է, դաշույնն այնքան ել լավը չեր, բայց հայրը շատ եր գնահատում այդ դաշույնը, վորովհետև հիշատակ եր իր հորից. պատյանն արծաթապատ եր և արծաթե ողակներով զարդարած:

Այդ դաշույնը նա վաճառեց մի շինացի վաճառականի ու այդ փողով մի ուրիշ գոմեց զնեց:

Այդ ժամանակ Սայիդը յոթ տարեկան եր և նա շտապեց նոր գոմեշի հետ բարեկամություն հստատել: «Բարեկամություն» եմ ասում, վորովհետև այդ իրոք բարեկամություն եր: Այդ մեծ և ուժեղ կենդանին յերեխայի նշանի համաձայն հնազանդությամբ թեքում ե գլուխը դեպի աջ, դեպի ձախ կամ իջեցնում ե ցած: Նա ճանաչում ե իր փոքրիկ տիրոջը, նա աճում ե ու մեծանում նրա հետ, հասկանում ու սիրում ե նրան:

Սայիդի զվարթ, ուրախ մանկական ձայնից գոմեշը կարծես ավելի յեր ուժեղանում, ու նրա գութանը ճեղքելով ծանր կավահողը, խոր ակոսներ եր թողնում իր հետեւից: Հասնելով դաշտի ծայրին, գոմեշը հնազանդությամբ շուռ եր գալիս, և հին ակոսի մոտ ուղիղ գծով նոր հակոս եր շարվում:

Յերբ շրջանի պետը Սայիդի հորից խլեց և այս գոմեշը, Սայիդն իննը տարեկան եր:

Սայիդի հայրը շատ աղքատ եր: Նա վաճառեց այն արծաթե զարդերը, վոր նրա կինը ժառանգություն եր ստացել իր ծնողներից, ու այդ փողով մի նոր գոմեց զնեց:

Սայիդը սաստիկ վշտացած եր: Նա իմացավ, վոր գոմեշին քեւ են գլխավոր հրապարակը, ու հորը հարցրեց, թե արծաթե զարդերը վաճառելիս արդյոք չի՞ տեսել գոմեշին:

Հայրը վոչինչ չպատասխանեց, ու Սայիդը վախենում եր, թե իրենց գոմեշին ել տարել են սպանդանոց այն բոլոր գոմեշների հետ, վոր շրջանապետի հրամանով խլել ելին գյուղացիներից:

Սայիդը հիշեց ինդհ պառավ գոմեշին, վորի հետ ամբողջ յերկու տարի այնպես սերտ բարեկամ ելին յեղել, ու լաց յեղավ: Յեվ նա յերկար, շատ յերկար ժամանակ բերանը պատառ չեր կարողանում դնել. կարծես թե մի բան խեղդում եր նրան: Զե՞ վոր նա դեռ յերեխա յեր:

Նոր գոմեշը սովորեց Սայիդին, ու յերեխան շատ շուտով մոռացավ իր հին բարեկամին: Նոր գոմեշը նախորդից ավելի թույլ եր, բայց նույնպես հեղ եր և հնազանդ:

Մի անդամ Սայիդը քըում եր, քըում եր գոմեշին, իսկ

գոմեշը մեխվածի նման տեղից չեր շարժվում: Յերեխան այնքան զարմացավ նրա այդ անսովոր համառոթյան վրա, վոր նույնիսկ վատ հայհոյական խոսքեր ասաց նրան:

Սայիդը չեր ուղում վիրավորել իր բարեկամին: Նա միայն կրկնեց այն խոսքերը, վոր նա լսել եր մեծերից, յերբ նրանք բարկացած ժամանակ ասում են իրենց գոմեշներին: Բայց այդ հայհոյական խոսքն ել չոգնեց, գոմեշը տեղից չշարժվեց: Նա թափ եր տալիս գլուխը, կարծես ուղում եր ցած գցել իր լուծը, ծանր եր չնչում, դողում եր ու փնչացնում... Նրա կապույտ աչքերը վախ ելին արտահայտում, լողերը բացվել ելին:

— «Փախի՛ր, փախի՛ր,—աղաղակեցին հարեւանները. փախիր, Սայի՛դ, փախի՛ր, վա՛գբը...», ու բոլորն իրենց գոմեշների լծերը վայր գցեցին, թուան նրանց լայն մեջքերին և բրնձի արտերի, խոտհաբքների ու թվերի միջով գաշտերն ու համբաները կտրելով, սլացան...

Սայիդն ել իր ընկերների նման իր գոմեշի լուծը ցած գցեց, թուավ նրա մեջքին և սլացավ, բայց յերբ կենդանին հանկարծակի մի թոփչք արավ, նա հավասարակությունը կորցրեց և ցած ընկավ: Վագբը մոտիկ եր...

Գոմեշը մի շարժում արավ և կանգնեց Սայիդի մոտ, տանիքի նման ծածկեց նրան իր հսկայական մարմնով և յեղջյուրներն ուղղեց զեպի վագբը: Վագբը ցատկեց. դա նրա վերջին ցատկումն եր: Գոմեշը բարձրացրեց նրան յեղյուրներով, վագբն իր ճանկերը խրեց նրա վիզը և մի կտոր միս պոկեց: Բայց իսկույն պատռված փորոտիքով ընկավ գետեն: Սայիդը փրկվեց:

Յերբ Սայիդի հորից խլեցին այդ գոմեշն ել և սպանդանոց տարան, Սայիդը տասներկու տարեկան եր:

Նրա հայրը չկարողացավ հողի տուրքը տալ և շատ վախենում եր պատժից: Նա ել վո՛չ արծաթե պատյանով դաշույն ուներ, վո՛չ ել արծաթե զարդարանքներ, վոր կարողանար վաճառել ու իր համար նոր գոմեց զնել: Նա այլևս վոչինչ չուներ:

Վերջին գոմեշը կորցնելուց հետո նա ելի մի քանի տարի մի կերպ կառավարվեց ուրիշի մոտ աշխատելով: Բայց շատ ծանր աշխատանք եր այդ, մանավանդ նրա համար, ով առաջ իր գոմեշն եր բանեցնում:

Սայիդի մայրը վշտից մեռավ, իսկ հայրը հուսահատության ըստելին փախավ հայրենի գյուղից: Նա ուղում եր Բատավիա մեծ քաղաքի մոտ աշխատանք գտնել, բայց այնուեղ նրան պատժեցին, վար առանց անցագրի փախել ե, բանտ դրին, վորտեղ շատ չանցած՝ մեռավ:

Յերբ հայրը փախավ, Սայիդը 15 տարեկան եր: Նրա զվարում մեծ մտքեր կային: Նա լսել եր, վոր Բատավիայում հարուստ պարոններ են ապրում, և վոր այնտեղ հեշտ ե տեղ դառնելը: Գուցե նա յերեք տարում այնքան փող վաստակի, վոր կարողանա յերկու գոմեշ գնել: Այդ միտքն ուրախացնում եր նրան: Իր գործն իմացող և մեծ բան մտածած մարդու նման, Սայիդը հնոացավ հայրենի գյուղից:

Յերբ Բատավիա հասավ, մի պարոնի խնդրեց, վոր իրեն ծառա վերցնի: Այս մարդը համաձայնեց և Սայիդին ծառա վերցրեց:

Սայիդը ձիապան եր. բոլորը սիրում եյին նրան և յեթե նրա խելքին փչեց զվարութիւն ապահանի աղջկան ուզել, հավանական ե, վոր չեմին մերժիլ: Ինքը տերն այնքան գոհ եր Սայիդից, վոր շուտով իր տան ծառան դարձրեց. նրա ոռածիկն ավելացրեց և հաճախ նվերներ եյին տալիս:

Իսկ յերբ անցավ յերեք տարի, Սայիդը յեկավ տիրո՞շուու ու և ինդրեց արձակներ իրեն ու մի վկայական տալ, վոր ծառայիլ և լավ ու աղնիվ կերպով: Տերը չեր ուզում, վոր Սայիդը դնա, բայց չեր կարող նրա խնդրեց մերժել:

Սայիդն ուրախությամբ ճամբա ընկավ: Նա գնում եր և չեր նկատում, թե ինչ է կատարփում իր շուրջը, նրա հոգին բոլորովին այլ բաներով եր իի. նա մտածում եր տան մասին և հաշվում եր իր դանձը: Նա և՛ անցագիր ուներ, և՛ վկայական իր տիրոջից: Աւսից կախված եր նրա պայուսակը, վորտեղ գոնվում եյին նրա փողերը, այնքան փող, վոր կարելի յեր յերեք գոմեշ առնել: Բայց այդ բոլորը չեր: Նրա գոտուց կախված եր արծաթազարդ պատյանով մի դաշույն:

Նա ճանապարհներին համարյա կանգ չեր առնում:

Նա շտապում եր ժամ առաջ տեղ հասնել, տեսնել իր սիրով ուղարկը, իր բարեկամներին, հարեւաններին: Նրա սիրա մեծ եռ կազոտով դեպի ամբողջ Բաղուրը:

Վերջապես նա կամաց-կամաց մտավ իրենց գյուղը: Գյուղում տիրում եր ավել ու տիրություն: Զկային նրա սիրելի բարեկամները և հարեւանները: Նրա ծանոթ աները փրկած եյին, և նրանց մեջ այլիս վոչ վոք չեր ապրում: Յերկրի բնակիչները շնչալով եյին խոսում միմյանց հետ: Տերերը խլել եյին նրանց գոմեշները և նրանց խեղդում եյին ծանր տուրքերի տակ:

Ի՞նչ պիտի աներ Սայիդը: Նա իմացավ, վոր ծովափառյա շրջանում ապստամբություն ե ծաղել: Տիսուր և վշտացած նա թողեց իրենց գյուղը և գնաց դեպի ծով:

Ծովին հասնելով, նա մի ձկնորսական նավ առավ ու գնաց այն շրջանը, ուր յերկրի ապստամբած բնակիչները կովում եյին հոլլանդացիների դեմ:

Նա միացավ կովող խմբերին:

Մի անգամ, յերբ ապստամբ ճավացիները նորից պարտվեցին, նա թափառում եր այն գյուղի շուրջը, վոր բոցավառվում եր, և վորին հենց նոր տիրել եյին հոլլանդացիները: Սա յեղը գիտեր, վոր այստեղ կոտորված մի բուռը մարդեկ մեծ մասամբ իրենց գյուղացիներից են: Ուրվականի նման նա թափառում եր այրվող խճիթների մեջ: Այդտեղ գեմ վազեց մի քանի հոլլանդացի զինվորներին, վորոնք գեռ կենդանի մասցած կովողներին սվիններով քշում եյին: Նա բռնից լույս աշեղը սվինները, առաջ, շարժվեց, կուրծքը դեմ տվեց ու մի վերջին առաջի ճիգ գործ զնելով, յետ մղեց զինվորներին: Սակայն սվինն ուժեղ անցավ նրա մեջքից. և նա անշնչացած գետին գլորվեց: . . .

Ճավա կղղու գլխավոր քաղաք Բատավիայում բռնակալ տերերի համար մեծ ցնծություն եր: Բանակը թնդանոթներով ու զնդացիներով հաղթել եր գեղին խոռվարաներին, ճողոնք հանդգնել եյին ապստամբել: Նահանդապետն ուրախ լուր ուղարկեց Հոլլանդիա, թե խաղաղությունը վերականգնված ե, խոռվարաները ճնշված: Թագավորական իշխանությունը տեղացիներին կոտորող սպաններին ու զինվորներին բազմաթիվ չքանչաններ ու խաչեր շնորհեց. յեկեղեցիներում ել բոլոր քահանաները մաղթանքներ կատարեցին ու փառարանեցին իրենց աստծուն, վոր նա հաղթություն շնորհեց Հոլլանդացոց զենքին:

Բայց Ճավայի գյուղացիներն այս ծանր պարտությունից հետո ապստամբության դրոշակը վայր չդրին:

Սայիդն ընկավ, սակայն նրան հետեւեցին ուրիշ Սայիդներ:

— Վո՞րտեղ է կատարվել այս դեպքը:

— Ո՞վքեր եյին իշխում այստեղ:

— Ի՞նչու ըրջանի պետը շուտ-շուտ խլում եր Սայիդի նոր գոմեշները:

— Ի՞նչ դրության մեջ եր գյուղը, յերբ Սայիդը վերադարձավ Բատավիայից:

— Ի՞նչ պայմանների ազդեցության տակ Սայիդը միացավ կովող գյուղացիների շարքին:

— Աշխատավոր գյուղացիների ապստամբությունն ի՞նչ հետևանք ունեցավ:

ինչո՞ւ :

- Յեկեղեցին, կրոնը ո՞ւմ կողմն եր—ազքատ դյուզացիների՝, թէ՞ նրանց ճնշողների :
- Բնութաղբեցեք Սայեղին :

ՄԹՆԱՉՈՐ

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչեվ գարուն վոչ մի ժարդ վոաք չի դնում անտառներում :

Սակայն Մթնաձորում այժմ ել թավուտ անտառներ կան, ուր վոք չի յեղել: Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չորանի պես, վոռնում են գայլերը, գունչը լուսնյակին մեկնուծ, վարագները ժանիքով փորում են սև հողը, աշունքվա փտած կաղինները ժողովում:

Մթնաձորում մուգ-կանաչ մաշկով խլեղներ կտն, մարդու յերես չտեսած, մարդուց յերկյուղ չունեցող: Պառկում են քարերի վրա, արեգի տակ. ժամերով կարող եք նայել, թէ ինչպես ե գարեկում փորի մաշկը, թույլ յերակի պես կարող եք բռնել նրանց: Խլեղները Մթնաձորում մարդուց չեն փախչում:

Բարձր են Մթնաձորի սարերը. գրանից ե, վոր ամռան յերկար որերին ել արել մի քանի ժամ ե լույս տալիս Մըթնաձորի անտառներին: Յեղ, յերբ հեռավոր հարթավայրում արեգը նոր և թերքում արեգմուտք, Մթնաձորում սովերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար ե լինում, արջերը վորսի յեն դուրս գալիս, վարագներն իջնում են ջուր խմելու, իր վորջի առաջ զիւլ վոռնում ե գայլը, վոռնոցը հազարքեան արձագանդով զրնդում ե Մթնաձորում:

Գիշեր ե դառնում, յեղ գիշերվա հետ վորսի յեն յելնում Մթնաձորի բնիկները: Արջերը տանձ են ուտում, իրար թաթով են տալիս, թավալդլոր են լինում չոր տերկների վրա, դարան մտնում, հենց վոր զգում են վայրի խողերի մոտենալը: Արջը գիտե վարագի ժանիքի թափը, նախահարձակ չի լինում: Յեթե տկար մի խող յետ մնա մյուռներից, արջը թաթի մի հարվածով ճեղքում ե փափուկ վիզը, մի յերկու պատու լափում, լեշը ծածկում ե չոր ցախով ու տերեփներով, քար դնում վրան, փնթփնթալով հՀուանում մինչեվ լիշը հոտի:

Յեթե հանկարծ վարագները լսեն յետ մնացած խոզի

ճիչը... Սրածայր թրերի պես շողջողում են ժանիքները, անշնորհք շաբժումներով արջին մնում ե բարձրանալ կաղնու վրա: Կատաղի ճիչերի պես վարագները վրնջում են, ժանիքներով ակոսում կաղնու տակ, զարկում ծառերին: Մթնաձորի ծերունի անտառապահը մի զարունքի տեսել ե վարագի կմախքը, ժանիքը մինչեւ արմատը խրված ծառի բնում, ծառի ճյուղի արանքում արջի սատկած քոթոթին:

Վայրի վարագի պես եր անտառապահ Պանինը: Մի հրեշ եր նա, անտառապետի տարազով, կակարդով գլխարկը գըշտին: Անտառում հանկարծ կարեսը, փայտահատի կողքին կկանգներ, ինայեր, թէ ինչպես նա արագ կացնահար ե անում ծառը: Մեկ ել, թագստոցից դուրս կգար, կմռնչաքայնակա, վոր արջերն ել եյին քնից զարթնում և վորջերում մոմում: Լեղապատառ փայտահատին մնում եր կամ փախտել, կամ ոճի պես ծոմռատել Պանինի մտրակի հարվածներէ տակ:

Գյուղում Ավին լավ վորսորդի համբավ ուներ: Տան ապրուստի մի մասը նա Մթնաձորի խորքերից եր հոգում: Բացուտներում միրհավ եր վորսում, արտերի մոտ կաքավու լոր, թակարդ եր լարում աղվեսի համար, յերեմն ել Մթնաձորի խորքերն եր գնում, ժամերով նստում քարի քամակին մինչեւ վարագները ջրի դային:

Ավին նշանը ճիշտ եր բանում, բերդանի գնդակը վարագի ճարպոտ կողքին մեծ վերք եր բացում: Վարագը թավալդուր եր լինում, հետո խոռոցով գետին ընկնում:

Յեղ յեթե Պանինից յերկյուղ չեր անում, կամ տեղյակ եր լինում, վոր անտառապահը Մթնաձորում չի, չոր ցախերից ել մի շալակ եր անում, ծածուկ մի տեղ պահում՝ գիշերով առն տանելու համար:

Այդ որն ել նու վորսի յեր գնացել: Թարմ հետքեր կային ճյունի վրա: Ավին մի հետքով գնաց յեղ հենց վոր բլրակի վլուխը բարձրացավ, տեսավ յերկու աղվես: Մինչեւ կրակելն աղվեսները փախան: Այդ Ավու համար վատ նշան եր, վորսը հաջող չպիտի լիներ: Մի քիչ ել ման յեկավ, պարարայի հետք տեսավ, փնտուեց ու չպտավ: Յեղ, վորովհնետե այդ որը Պանինն անտառ չպիտի զար (նա լսել եր, վոր անտառապահը հիվանդ ե), Ավին գերազաս համարեց մի շամակ ցախ տանել տուն:

Իրիկնաղեմ եր արդեն, յերբ Ավին շալակի ցախը դրեց քարին, նստեց մի կոճղի՝ միքիչ շունչ տանելու:

Վորսի մի շուն յերեվաց, հոտոտեց Ավուն, տնցավ: Ավու

շունչը փորն ընկավ։ Յերեվաց յերկրորդ շունը, յերրորդը, չների հետեւից ել Պանինը, ասես գետնի տակից բռւսավ։

Մեկի դեմքը քաթան եր, մյուսինը՝ կարմիր ճակնդեղ։ Պանինը և քոտեց, վորպես Մթնաձորի արջ։ Յեզ, յերբ բարձրացրեց կնուաը, Ավին ել մեջքը ծռեց, գլուխը ձեռքերի մեջ սոսավ։

Ավու լնդուն կապ եր ընկել, չկարողացավ խոսել։ Յերբ ուշը յեկավ, Պանինն ել եր հեռացել, իր չներն ել։

Ավին նստեց քարի վրա։ Նոր միայն զգաց, թե ինչքան խիստ եյին Պանինի մտքակի հարվածները։ Մեջքի վրա ասես չիկացած շամփուրներով դաղել եյին, աչքատակը տաքացել էր, կակդել ուռած խմորի պես։

Միտք արեց Ավին և դոհ յեկավ, վոր Պանինը հրացանը չի տեսել, քարի արանքում ընկած։ Թե չե կտաներ, հետո կչարչարեր։

— Հեղինակի նկարագրումը վո՞ր չըջանից ե—հախահեղափոխակա՞ն, թե՞ հետհեղափոխական։

— Նկարադրեցեք Պանինին և Ավինին վորպես տարբեր դասակարգերի ներկայացուցիչների։

— Ինչո՞ւ Ավին չփորձեց պաշտպանվի։

ԻՎԱՆԵՆ

I

— Սիդո, ե՞յ Սիդո, —կանչում եր իվանեն իր կնոջը, վոր թոր քուն եր մտել, —ա՛ կնիկ, չե՞ս լսում։ Ես ինչ ծանր քուն ե յեկել վրան, —ինթվնինթնում եր ինքն իրեն իվանեն։

— Ի՞նչյեղավ, ի՞նչ ե պատահել, ա՛յ մարդ, ի՞նչ ես վեր կացել ես կես զիշերին ու ձայնդ գցել։ Զե՞ս թողնի, վոր զիշերները գոնե հանդիսատ քննենք։

— Ախր, հազար ու մի գործ ունեմ, ա՛յ կնիկ, շտապում եմ...

— Յերեկի միայն գործ ունեցողը գու յես, վոր ճայնդ գցել ես, ել ուրիշներն աշխատանք չունեն։ վոչ ինքդ ես հանդստանում ե վոչ ել ուրիշներին թողնում, վոր հանդըստանան, —ոժկամությամբ պատասխանեց Սիդոնան և ծանր տնքալով մի քանի անդամ հորանջեց։

— Ա՛յ տնաքանդ, ախր հազար ու մի գործ ունեմ։ Շատ կանուխ պիտի գործի լինեմ, վոր ծերը-ծերին հասցնենք, պառկելով ի՞նչ դուրս կգա։ Զրադացը ցորեն պիտի տանեմ

ազալու, արտերին ջուր պիտի հասցնեմ, արտերի անպետք խոտերը պիտի մաքրեմ։ Վո՞ր մեկն ասեմ։ Ես բոլորին պետք ե հասնե՞մ, թե՞ չե...»

— Հետո՞, յես ի՞նչ անեմ, ա՛յ մարդ։ ինչո՞վ ոգնեմ...

— Այս, վոր շուտ վեր կենաս, ժամանակին կերակուր դնես ոջախին, վոր յեփովի։ Յերեկվա ուզարդածդ կերակուրըն անյեփ եր...

— Ե՛կ, դռւ յել խոսելու նյութ չունես, ավելորդ բաների մասին ես խոսում, կարծես։

— Լա՛վ, լա՛վ. . . լոեց իվանեն և պատվիրեց կնոջը, վոր կերակուրը ժամանակին հասցնի։

Սիդոն վոտքի յելավ, պատուհանի վարագույրը յետ քաշեց, նայեց դուրս։

Դեռ մութն եր...

Գյուղն ամբողջովին քնած եր . . . վոչ մի չարժում . . . վոչ մի կենդանություն։ Գյուղի քար լսությունը խանդարգում եր միայն յերբեմնակի լսվող չների հաջոցով։

— «Ծուղրուղո՞ւ. . . զո՞ւ. . . », հեռու տեղից լսիեց աքաղաղի կանչը և անսպատասխան մնաց։

Գիշերվա մութը կտրծես կամաց-կամաց հրաժեշտ եր տալիս աշխարհին։

Իվանեն սկրալիր վողջույն տվեց կնոջը, պատից կախած հացի տոպրակը ձգեց ուսին և ուրախ որամադրությամբ դուրս յեկավ տնից։

II

Իվանեն դաշտային աշխատանքի մեջ եր, յերբ կինն անսպատելի կանգնեղ նրա առաջ և անհանդստությամբ առաջ։

— Տանուտերն ուզում ե քեզ տեսնել, սլրիստավից թուղթ ե յեկել։

— Տանուտե՞րը, —զարմացած պատասխանեց իվանեն և գունատվեց, —ինչ լարվել ես, ի՞նչ ե։ Ինչո՞ւ համար, վո՞ր մեղքիս համար։

— Յես, ասում ե, պարտավոր չեմ ամեն բան ասելու քո կարմիր-սոցիալիստ ամուսնուն. . . թող բարեհածի գնալ զրասենյակ և այստեղ իմանալ, թե նրան ինչու յեն կանչում։

— Տես եղ անիրավին, ինչպես թեկեր ե առնում։ Յերես ենք աշղացել, պարարտացել՝ խոզ ե կարել, ել ուրիշի վիճակի մեջ չի մտնում։ Մի հարցնող լինի, թե ինչո՞ւ համար ե եղ թշնամանքը. ո՞ւմ վիզն եմ կտրել, ո՞ւմ տունն եժ թալանել, վորի՞ն եմ վատություն արել, ո՞ւմից կաշառք վերցրել, ի՞նչ ե ուզում այդ անխիզն ինձանից։

— Այս, վոր լեզուդ կարճ չեյիր պահում և շարունակ խո-

սում եյիր նրա դեմ և թշնամացնում քեզ հետ։ Ախր ո՞վ ենք անդա ձեռքից պրծել, վոր գու պրծնեյիր։ Ամբողջ գյուղը ճանաչում է նրան, բոլորն ել նրա վատ արարմունքների մասին ևն խոսում, բայց ծածուկ, էրար մեջ և վոչ թե քեզ նման՝ յերեսովը տալիս ամեն ինչ։ Ախր շարունակ ասում եյի այ մարդ, լեզուդ քեզ քաշիր, վատ որեր կդան գվաներիս։ բայց ո՞վ եր լսում ինձ-յետ ասի, յես լսեցի. . . Տես . . . շուրջկ նայիր ու տես, թե ինչ են անում ուրիշները . . . պապանձվել, լրել են, վոչ վոք չի առարկում նրա դեմ ասում են՝ կառավարության մարդ ե, տանուտեր ե, ի՞նչ կարող ենք անել։

— Հերիք ե, այ կնիկ, գու ել մի կողմից ես օփրոս կրարատում։ ի՞նչ խրատների ժամանակ ե։ Բողոքն եմ և միշտ ել կրողոքեմ ամեն տեսակի անարդարությունների դեմ, — ասաց վճռական և շարունակեց իր աշխատանքը . . .

— Դու գիտես, Իվանե, բայց միտքդ պահիր, վոր այսոր պիտի ներկայանաս գըտանյակ, յետ չընկնես, մի նոր գործ ըրարդես դիմիդ։

— Ի՞նչ ես ասում, ա կնիկ, այսպիսի աշխատանքի լավ որն արտօ կիսատ թողած՝ զրասենյակ վաղե՞մ, ինչո՞ւ, ի՞նչ շտապ գործի համար։ Չե՛, չեմ գնա. ի՞նչ ուղում են՝ թող անեն։ Դու միամիտ մնա, ա կնիկ, լորաճաշդ պատրաստիր յերեկոյան համար, ամեն ինչ լավ կիբնի, — ասաց Իվանեն իր կնոջը, կարմիր թաշկինակը կապեց ճակատին, մանգաղն առավ ձեռքը և շարունակեց իր աշխատանքը։

Սիդոնան մտազբազ տուն վերագարձավ . . .
Արդեն կեսոր եր. . .

Կիզիչ արել կարծես կանդ եր առել յերկնակամարի վրա, իվանեյի գվանավերել և հանգիստ ու անտարբեր նայում եր ներքի կատարվող ժրաշան աշխատանքին . . .

— Ո՞Փ, ո՞Փ, ինչ շոդ ե, ո՞բարձբացրեց գլուխն Իվանեն, մեջքն ուղղեց և ճակատից սրբեց առատությամբ թափվող քրտինքը։ Աղա հրճվանքով նայեց իր արտին, լիառատ որտով ուրախ շունչ քաշեց և զու իր կատարած աշխատանքից՝ դանդաղ քայլերով անցավ զեպի դաշտում յերևացող կաղնուցուր։

Ոյս կաղնու տակ նոտեց մեր Իվանեն։

Տոպրակն ուսից վայր բերեց, կավե ամանով ջուրը դրեց մի կողմ, մանգաղն զղուշությամբ՝ մի ուրիշ տեղ, ծորացող քրտինքը սբբեց, թեք ընկտվ կանաչ խոտին։

Հանգստացավ . . . ապա վեր կացավ, ձեռքերը լվաց, տապրակից հանեց մախրազույն թաշկինակի կապոցը, որա միջից ել՝ խիստ չորացած հացը և սկսեց ծամմծել։

Հացի չոր փշրանքներն ընկնում եյին կոկորդը։ Թեև շուտ-շուտ ջրի ամանը մոտեցնում եր բերանին, բայց և այն-պես հացի պատառներն այնքան չոր եյին, վոր դժվարությամբ եյին կուլ գնում։

Այսպես, կես հացի չափ կարողացավ ուտել, ջրի ամանը դատարկեց և իր համեստ ճան ավարտած համարելով, խորն ա'ս հացեց, մնացորդ հացը նորից դրեց տոպրակում և մեջ-մի քաշեց, մնացորդ հացը նորից դրեց տոպրակում և մեջ-մի քիչ հանդստանալու։

III

— Բարի որ, — անժպիտ կանգնեց գյուղի տանուտեղը իվանեյի գլխին, ձիավոր գղիբների հնա միասին։

— Բարեւ, հազար բարի, — անբավականությամբ պատասխանեց աշխատավորը՝ հազիվ իր գլուխը բարձրացնելով։

— Այս տռավոտ կանչել եյի գրասենյակ, ինչո՞ւ չներկայացար։

— Այ մարդ, աշխատանքի այս յեռուն որերում ի՞նչպես արտօ կիսատ թողած՝ զրասենյակ զայի, չե՞ վոր ինքը ել գյուղացի յես և լավ գիտես մենակ աշխատավորի վիճակը։

— Դա իմ գործը չե. ինձ հրամայված ե, և յես պարտավոր եմ ճշտությամբ կատարելու հրամանը։

— Ի՞նչ ես ուղում, ասածդ ի՞նչ ե։

— Հենց այժմ պիտի պրիստավին ներկայացնեմ քեզ, — չոր-չոր պատասխանեց տանուտերը և նայեց գղիբներին։

— Ինչո՞ւ, վո՞ր հանցանքիս համար, չե՞ս կարող արդյոք առել։

— Ինչո՞ւ համար՝ չգիտեմ։ «Նաշանիկի» գրություննեւ՝ «գողտեղ պատահեք Իվանե կեթիլաշվիլուն, անմիջապես ձերբակալեք և ուղարկեք ինձ մոտ»։

— Այս բոլորը քո բաներն են, Փիթո, ուրիշ վոչ-վոքի, — ասաց վրդովված իվանեն։

— Ի՞նչպես, ուղում հանցանք ե՞լ ես բարդում վրաս։ Լավ, շատ լավ. ինչպես տեսնում եմ, առանց մտրակի գործը գլուխ չի գա։

— Ի՞նչպես, ուղում ես մտրակի՞ բաժին դարձնել ինձ։ Վո՞չ, այդ քեզ չի հաջողվի. Իվանեն դեռ ոյնքան չի ընկել, վոր այդ որին հտանի։

— Բավական ե, ա'սում եմ. յես չեմ յեկել այստեղ խոսք ու զրույց անելու. յեկել եմ ձերբակալելու, ձեռք ու վոտք կապելու և պրիստավին ուղարկելու։ Այդպես ե հրամայված։ Եեթե ըմբռատանատ և չուղենառ հնազանդվել, տեղն ու տեղը կարող ես սպանվել, ոսված ե հրամանի մեջ։

— Ինչո՞ւ, վո՞ր հանցանքիս համար, ավագակ հո չե՞մ,
ո՞ւմ ինչ վատություն եմ արել, այ մարդ...

— Ո՞ւմ ինչ վատություն ես արե՞լ... զու կարծում ես՝
մոռացվե՞ց այն բոլորը, վոր գյուղացիների ականջները
մտած՝ գիշեր-ցերեկ հուզում, ազմկում, գրգռում եյիր տղետ
գյուղացիներին իմ դեմ, կառավարության դեմ: Մոռացա՞ր
այդ բոլորը, հա՞՛, կարծում եյիր արժա՞ն կնստեր այդ: Կարձ
կարիք, վե՞ր կաց այս բոլեյիս, վե՞ր կաց, — զոռաց տանու-
տերը և քայով տվեց իվանեյի կողքին:

— Գոռալը բավական չե, քայի յե՞լ ես տալիս, շան տե՞ղ
ես դնում դու ինձ, հա՞...

— Զա՞յնդ, թե չե մարակս իիջնի մեջքիդ:

— Ի՞նչպես, դու համտրձակվում ես...

— Ա՛յ թե ինչպես... — շարժվեց մարակն ողի մեջ և
պինդ իջավ իվանեյի հոգնած մեջքին:

— Վա՞յ... — բուռնցքը կրծքին տալով զոռաց զայրա-
ցած իվանեն և ատամները կրծտացնելով առյուծի նման
վոտքի թռավ...

— Կապեցե՞ք ձեռքերը, — նորից լսվեց տանուտերի կա-
տաղած ձայնը, և յերկրորդ անգամ մտրակը խաղաց...

Դգիրներն իրար անցան...

— Տո քափթա՛ռ, ի՞նչ ես ուզում ինձնից, — համբերու-
թյունից գուրս դալով՝ զոռաց իվանեն, հարձակվեց, արևի
ճառագայթների տակ փայլվլող մանղաղը շողաց ողի մեջ,
և մի ակնթարթում գետին փովեց տանուտերը...

Դգիրները սարսափից դես ու դեն փախան, տուն վերա-
դարձան...

Իվանեն ուշքի դալով՝ նայեց իր շուրջը, տեսավ ինքն
իրեն միայնակ կանգնած տանուտերի անչչացած դիակի
առաջ...

— Անպիտաննե՛ր, գոնե դիակին տեր կանգնեյիք, —
վնթիվնթաց իվանեն գղիրների հետելց:

Մի բոսէ կանգ առավ... նայեց հեռուները... լիտոտ
թոքեցով աղատ շունչ քաշեց և գլուխը կախեց...

Այն որվանից իվանեն թողեց գաշտն ու մանգաղը և հրա-
ցանը ձեռքն առնելով գնաց միահալու ըմբոստ վոգիներին,
հեղափոխականներին:

— Վո՞ր ժողովրդի կյանքից և վերցրած այս պատմվածքը և ի՞նչ
ժամանակից:

— Գյուղացիության վո՞ր խավի ներկայացուցիչն եր իվանեն:
— Ինչո՞ւ հին իշխանությունը և տանուտերը հակառակորդ եյին
նրան:

— Ինչո՞ւ եյին ուղում նրան ձերբակալել:

— Իվանեն ինչո՞ւ սպանեց տանուտերին:

— Համեմատեցեք և խմբավորեցե՞ք գյուղի կյանքին վերաբերող
ձեր կարգացած հողվածների տիպերը:

— Հեղինակն ի՞նչորիսի վերաբերունք և ցույց տալիս դեպի իվա-
նեն:

ԾԻՐԱՆԻ ՏԱՓ

Թեկուղ անունը Ծիրանի տափի ե, բայց յեկ ծիրանի վոչ
մի ծառ չկա այնտեղ: Գետի ափին, քարածայտերի ճեղքե-
րում մացաներ կան, քրքրված ցախավելի պես դիք-դիք
ցցված: Ծիրանի տափի առավելությունը քամիներից պաշտ-
պանված լինեն և ջրի մոտիկությունը. մերում, յերբ գար-
նան սկզբին բորան և լինում, անձեւվախառն քամի, չորանը
վոչխարը գեպի ձորն և քշում և պատսպարան տալիս լիրկ
Ծիրանի տափի ժայռերի յետեւ: Այծերը մացաներ են կըր-
ծում: Վոչխարը՝ գլուխը իրար չեքի մեջ՝ վորոճում ե: Հոտի
մեջ և վոչ մի վոչխար բորան որերին գլուխը վեր չի հանի:

Ծիրանի տափը հիշատակելու արժանի վոչինչ չեր ունե-
նա, յեթե նա յերկու գյուղի, Միրի և Մրոցի միջև անվերջ
շարունակվող կոփների, խոսք ու զրուցի առարկա չդառ-
նար, յեթե նրանք մահակներով կոփկ չտային յերկու հարե-
վան գյուղերը՝ Մրոցն ու Միրը:

Յերկու գյուղերն ել գետի ձախ ափին են ընկած, Մրոցը՝
վերե, իսկ Միրը՝ ներքեւ:

Մրոցն ու Միրը հավասար ծիեր ունեն և առաջներում,
յերբ մահակներով կոփկ եյին տալիս Ծիրանի տափի համար,
այնպես եր պատահում, վոր մի տարի Մրոցն եր հաղթում,
հաջորդ տարին Միրը, կամ յերկուսն ել ջարդված վերադառ-
նում եյին, վորովհետեւ Ծիրանի տափի համար համարյա
հավասար մահակներ եյին զարկվում յերկուստեք:

Մրոցն ել եր այծ ու վոչխար պահում, Միրն ել, վերի
գյուղումն ել կար յեկեղեցի, ներքեվի գյուղումն ել: Շատ
անգամ միաժամանակ եյին բացվում ուշունցի պարկերը:
Վերեվի գյուղում, պատի տակ նստոտած ալեկորներից վո-
մանը հոնի կարմիր փայտերը մեկնում եյին Միրի կողմը,
հայնոյում:

— Միրն ել չենա՞ , վառես խանձահոտ չի գա: Մեր աղ-
բյուրումն են նրանք խմոր հունցում...

Դուցե հենց այդ ժամանակ Միքի ալեվորներն ել եյին անիծում վերի գյուղերին և ջահելների սրտում պապենական վոխը թեժ պահում:

Վոչ վոք չեր հիշում վոչ Մրոցում և վոչ ել Միքում, թե յերբ ծագեց առաջին թշնամությունը Ծիրանի տափի համար:

Յեթե Մրոցին եյին հարցնում, հազար ու մի պատմություն եյին անում, թե իրենցն է Ծիրանի տափը, «ինչիների» ձեռքով քաշած պլան ունեն, թղթեր կան:

— Ես ե, յես իմ ձեռքերով եմ ենտեղ կուրզանի քարերը սահմանի վրա շարել...

— Իմ միտս ե, վոր հորս վոչխարը գիշերն ել եր Ծիրանի տափում մնում:

— Միքի սահմանը Ծիրանի տափից ել շատ դեն ա... են մեր հայրական հողն ա...

Իհարկե, Մրոցը միայն այդ չեր ասում, յեվ յերբեք մեկի մեկ չեյին խոսում, յեթե մեկը հարցներ նրանց Ծիրանի տափի մասին: Վրա եյին տալիս, իրար հրմշտկում, ամեն մեկն աշխատում եր առաջ ընկնել և շինովնիկին պատմել իր մտքինը, իր լսածը՝ հաստատելու, վոր Ծիրանի տափը Մրոցինն ե: Շատերն այնքան եյին հեռու գնում, այնպես եյին հորինում, վոր մոտին կանգնած հարկանն ել չեր հավատում նրա ասածին, բայց լռում եր, մտքում ծիծաղում, զըլիսով անում, վոր չինովնիկը հավատա նրա ասածին: Չե՞ վոր խոսքը Ծիրանի տափի մասին եր, դետի ափին բուսած մաշառների, գյուղի սահմաններն ել ավելի լայնացնելու մասին:

Բայդ վեճը, շատ խոսելու և բարձր կանչելը, չեր վորոշում: Չինովնիկի դնարուց հետո Մրոցում շշուկով յեվ շատ ծածուկի իրար մեջ հավաքում եյին այն գումարը, վորի մասին գիշերովա կերուխումի ժամանակ ակնարկել եր քաղաքից յեկած «մեծավորը» և ավելացրել.

— Չեր ոգտի համար եմ ասում, գուք գիտեք, մենակ ինձ համար չեմ ուղում:

Չինովնիկը Միք ել եր գնում: Ներքի գյուղն աշխատում եր ավելի ճոխ բնդունել նրան, սրա-նրա տնից հավաքում եյին հարմար իրեր, մի տնից մաքուր բարձ, մյուսից՝ գյուղի միակ կարպետը, տունը զարդարում, հարսերի վրա բարկանում, վոր փոշի չանեն, ապա սենյակը սարքելուց,

Վոմանք յեկողների ձիերին եյին տեղավորում, դարի տալիս և խոնարհարար ոտքիկի խղձությամբ ժպտում մեծա-

վորի պահակի առաջ, նրան ել լավություն անում, մտածելով, վոր գուցե այդ ել ովնի Ծիրանի տափի տնվերջ վեճին:

Այսպես շատ տարիներ յեկել են, գնացել, յերկու գյուղից ել շատ յուղ ու պանիր, գորդ ու կարպետ են տարել հազար ու մի շինովնիկ և տարածի համեմատ ել հատկացրել Ծիրանի տափը՝ մերթ Միքին, մերթ Մրոցին, կոփլների աղբյուր ստեղծել, ամեն տարի մացառուտի կանաչ տերենները բացվելու հետ յերկու գյուղումն ել թեժացրել զայրույթը Ծիրանի տափի համար...

Մինչև Խորհրդային որերն յեկան:

— Ինչո՞ւ ժամանակի իշխանություններկայացուցիչները չեյին լուծում Մրոցի և Միքի վեճը:

— Ի՞նչ զեր եյին խաղում այն ժամանակի պետական չինովնիկները:

— Այսոր մեր գյուղում հնաբաժնո՞ր և նժան վեճեր, յեթե վոչ, ինչո՞ւ:

— Համեմատեցեք չին գյուղն այսորիք մեր նոր գյուղի հետ և պատմեցեք ի՞նչ տարբերություն կտ:

— Մեր նոր գյուղն ի՞նչ ուղղությամբ և պարզանում:

— Շարադրություն գրեցեք. «Հին և նոր գյուղի տարբերությունը» վերնադրով:

ԱՖԱՆՅԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

— Անզուսպ, տղետ, դժկույն, ապուչ, չհառ, նավակ, հորթուկ, հոտավետ, փոքրիկ՝ դիտեցեք այս բառերի կաղմությունը: Իրենց կաղմությամբ ի՞նչ տեսակ բառեր են:

— ՍԱՀՄԱՆՈՒՄ. — Սկզբից կամ վերջից ժամանիկ ունեցող բառերը կոչվում են ածանցական բառեր:

— Ածանցն առանձին վերցրած նշանակություն շրջնեցող մասնիկ ե, վոր գրվելով բառի վրա՝ նոր բառի նշանակություն և տալիս նրան: Որենակ՝ զործ բառից կազմվում են՝ զործել, զործիչ, զործավոր, անզորն և այլն:

— Վորոշեք թե ի՞նչ նշանակություն են տալիս բառերին հետեւյալ ածանցները.

ակ, իկ, ուկ, ային, եւն, վետ, ոց, անոց, արան, սրան, վոր, իչ, ոզ, ի, երորդ, բորդ, ություն, որդ, ոււի, ուն, բան, ըեն, ցի և ան, ոզ, ա, զժ նախածանցները:

— Այս ածանցներով ձեր կազմած բառերը դրեք ակտրակում:

ԶՈՐԲԱՆ

Տունը գյուղի ծայրին ե, ճանապարհի կողքին: Յեթե շտաղը ման դաք, ել ուրիշ ներկած գարպաս չեք ճարիք: Կուպույտ ներկ միայն նրա հաստ ու ամուր գարպասի վրա կա:

Յեկ յեթե բաց են դռները, փողոցից կարելի յետեսնել բակն ու տան սրահը:

Բակում բացոթյա մի արհեստանոց կա: Մեծ ու փոքր մուրճեր, սղոցներ, պայտառի գործիքներ, անիվների ողեր, սոնիներ, վոր չորանում են արևել տակ:

Ամեն որ մի ջանի բանվոր և աշխատեցնում: Մեկը ցեխապատ և անում, նոր գոմի պատերը շարում, մյուսը քար և տաշում, իսկ ինքն ել իր վորդիների հետ լուսաբացից մինչեվ արեվմուտ աշխատում է:

Իզուր չե, վոր գյուղում, յեթե մեկը լավ աշխատող է, ասում են.

— Զորբա Ռուեփի ճանկն ընկնի, մի շարաթ ել չի դիմանա:

Վարձը կալին և տալու ցորենով: Իսկ մինչ այդ, յեղածից բաժին ե հանում: Յեթե մի ծուռ գերան իրեն պետք չի, տալիս և արհեստավորին, առնի խանդարված կտուրի գերանը փոխի: Կալին հաշվից դուրս ե գալու:

Բակի անկյունում զինվորական մի խոհանոց կա՝ կաթսան ժանդոտած, խողովակը ծուռ:

Մորեխի տարին մի փութ կորեկով և առել: Մտքում գրել և կաթսան հարմարեցնել արագ քաշելու, իսկ մնացած յերկաթեղենը ծախել:

Խոհանոցի մոտ ընկած ե յերկանիվ մի սայլ, կոփվներից մնացած: Կարդի յե բերել, ներկել և գործ ե ածում, յերեմն ել քրենով տալիս:

Տան կից պարտեզն ե, գյուղի ամենալավ պարտեզը, ծառերը չարեշար, զանազան տեսակի, պատվաստած: Միայն նրա այդում կան պատվաստած ծառեր:

Պարտեզի մոտ բանջարանոցը, վորի մի անկյունում մեղուների տասնյերկու արկղ կա կարգով շարած:

Պարտեզն ու բանջարանոցը բարձր ցեխապատով և պարսպած, փողոցից միայն ծառի վերի ճյուղերն են յերեվում:

Յեթե մի հիվանդ մեղրն ուղի կամ ձմեռը թթու խնձոր, Ռուեփի ներկած դարպասն են ծեծելու:

— Չկա, —կասի, —ի՞նչ եր, մի քանի խնձոր—կամ—ճանճը ես տարի ողուտ չտվավ, —և յեթե լավ դին տաս, —սպասիր տեսնեմ, —կասի և մառանը կիշնի:

Ընդարձակ բակն ընկած և տան առաջ, վոր չորս լուսավոր սենյակ ունի, փեղկերով, ապակած: Սենյակներում դարձ ու կարպետ կա, պատերին խալի, յերկու լավ մահճակալ, սպիտակ պղնձից ինքնայեռ, ափսոներ ու բաժակներ: Ռուեփի առաջ խանության եր, գյուղումն եր առուծախս անում:

Այն ժամանակից ե պահել և պատերազմի տարիներում խալին ու սնդուկները լի՝ պինդ թագըրել մառանի մի անկյունում:

Մաղաղության հետ ամեն տարի նրա տունը լցվում է, պահած դուրս և հանում և ավելացնում անընդհատ:

Գյուղում նրան «քոռ գայլ» են ասում: Յեվ յեթե խոսքը վեր և գալիս Ռուեփի վրա, մի ջահել վրա յե բերում.

— Նրա ամբարում հայ ինչեր կա...

Իսկ իրեն վոր նայես, բամփես՝ տղի պես գետնին կը-կըպէի, լղար՝ գարմանով պահած ձիու պես, այտոսկըները դուրս ընկած: Նայում ես զեմքին, ասես վորդը կերած կարտոշկա լինի, աչքերը վորքիկ, բզով ծակած, ունքերը կատարյալ բեղ, փափախի մազերից չի ջոկվում:

Բայց զորբա յե: Զորս ծի ունի, սեփական գութան, վոր նոր և առել: Յեթե ուզենա, գութանը մենակ լծելու չափ յեզներ ունի... բայց մենակ չի լծում: Հարքաշ և անում, յեզանց մի ջուխտն ել գոմում պահում:

Չեռքից յեկածը չի խնայում: Չեռքափող և տալիս, տոկոս առնում կամ գարնան սերմացու տալիս, կալին մեկին յերկու ստանում: Յեթե գյուղում մեկը վորոշում և մի վոչխար մորթել միսը ծախելու և յեթե մենակ ուժը չի պատում, Ռուեփը միշտ ընկերանում ե, աժան պատահած վոչխարն առնում և մորթում:

Ականջին և հասնում, վոր գյուղում մեկը ծախու գերան ունի կամ քար և ծախում, ուժ չունի նոր չենք շինելու, Ռուեփը աչքերը ճակատագնելով գլխին կանգնած ե, գինը նաղդ և տալիս:

Ինչպես ել գիտե հարեանի թույլ կողմը: Մի ուռի տեսնի, կկանգնի, աչքի պոչով կնայի, մաքում կհաշվի, թե քանի տախտակ դուրս կդա և ծառի տիրոջ տեսնելիս կասի.

— Են մարագիս մի գերան ապակաս, ծառդ ծախիր առնեմ:

Ծառը գեռ արմատի վրա Ռուեփի սեփականն ե, մի տարի յել կմնա, յերկու տարի յել, վոչինչ, ավելի յե հարստանում:

— Վոր չըշանին և վերաբերվում հեղինակի նկարագրած պատմըլածքը:

— Ո՞վ եր զորբան:

— Բնութագրեք կուլակ Ռուեփին, հետեւելով թե ինչպես նա կարողության տեր դառավ:

— Ինչպիսի պայքար ենք մղում մենք կուլակության դեմ:

— Ինչո՞ւ և ինչպես և գրված կուլակության վերացման հարցը:

...Աշունն անցավ, բարբարոս ձմեռը նորից բռնացավ: Այս անդամ, սակայն, չքավոր Զատոյի ցավը միայն ձմեռվա խստությունը չեր, այլ այն, վոր իր այնքա՞ն սիրած, իր միակ հույս ու ապավեն Խնձոր յեղը ձեռից դնում եր:

— Վա՛շ, ելի՛ կապվեց բախտու, —ամեն անդամ դառնությամբ՝ հշում եր նա: Բայց այս դառնությունն ավելի թունավորվում եր պարտատիրոջ դժոխային պահանջով:

— Փո՛ղս, փողս. թե չե համ յեղդ կխլեմ, համ ուտելու հացդ, ու սոված կթողամ...

Յեվ, չնայելով Զատոյի ու կնոջ աղաչանքներին, մրմըն-ջալի պաղատանքներին, այնուամենայնիվ լսվում եր նույն անողորմ և աշաբեկող ձայնը, թե՝

— Փո՛ղս, փողս:

— Աղա ջա՛ն, աղաչում ենք, յերկու շաբաթ ել համբերի, բարեի մի տեղից ճարենք, տանք:

— Անկարե՛լի յա, փո՛ղս, եզուց ծեղին փո՛ղս...

Զատոն ու կինը հուսահատ, քաշվեցին իրեննց ավերակ խրճիթը, վորի մի անկյունում Խնձորն եր կապված: Այնտեղ նրանք մնացել եյին տրտմած ու քարացած:

Այսպիսի վայրկյաններից մեկում Զատոյի կինը, հանկարծ զգաստանալով քարացած դրությունից, աչքերը լցված, մոտեցավ Խնձորին, վորդու նման դրկեց նրան, պինդ փաթաթվեց և ջերմաջերմ համբույրներ տալով այտերին ու աչքերին, լուռ ու անվերջ արտավեց: Զատոն նույնպես լուռ եր ու լցված, բայց աշխատում եր մասսմբ թագցնել իր արցունքները և կնոջը քաջալերել:

— Լավ, Նարգիզ, յերեխա հո չե՞ս, ի՞նչ ես լաց լինում:

— Ե՛, ի՞նչ անեմ, ինչ սե հողը գլխիս տամ, վոր լսց շլինեմ: Ես ա՛, ե՛լի մեր կարողությունը. Ես ել եզուց պարտքատերը դալու յա, վոր տանի: Նրա՛ համար եմ բերանիս պատառը յետ քաշել ու սրան ուտեցրե՞լ, —արտասվահեղձ հեկեկանքով պատասխանում եր գեղջկուհին և նորից փաթաթվելով, հոմբույրներ տալիս սիրելի կենդանուն:

— Դե լավ, ե՛, ամոթ ա: Վա՛հ, զո՞րթ վոր յերեխա յես դառնում:

— Ինչի՞ դու չլսեցի՞ր, ինչ ասեց...

— Վոր լսեցի՞ ի՞նչ. նրա հերն ել անիծած: Շատ ել վա-

խեցնում եր, յեղո՞ւ: Կթողա՞մ, վոր տանի. իմ պարտքը 48 մանեթ ա, յեզս հարիր. վո՞նց կհամարձակվի, վո՞նց կտանի, են հո արինս շաղ կտամ, —ուժից վեր ակամա, կեղծ վստահությամբ, կնոջ առաջ պարձենում եր Զատոն:

— Հա՛, վայ դլիս, ե դեր պակաս: Միթամ թե աշխարհցոս լիացար, վոր արինդ ել շաղ տաս, —մարդու յերեսին նայելով հեկեկաց կինը:

II

Այս դառնությամբ Նարգիզը, մի առ ժամանակ հեկեկանքը զապելավ, նայում եր բոցոտվող կրակին և չեր հասկանում, թե ինչո՞ւ այս անիրավ աշխարհում մինը պետք է առատ ուտի, վոչ ցանի, վոչ հնձի, իսկ մյուսը քաղցած, ծարավ, ահը սրտումը, մահը մտքումը սրան, նրան դերի դառնա:

Իսկ Զատոն մերթ նայում եր սիրելի յեղբայր Խնձորի աչքերին, մերթ բախտից խոռված իր վշտադեմ Նարգիզին և ալեկոծվում գաղտնապես:

Նա տեսնում եր, վոր իր հազիվ կարկատած կամ նորոգած ծիծեռնակի բունը, այսինքն՝ իր հայրական անշուք և աղքատ խրճիթը նորից ուզում են ավերակ դարձնել և կտրել ու մարել ոջախի ծուելը:

— Վո՞հ, աստվա՛ծ, ինչո՞ւ ստեղծեցիր ինձ, տանջելո՞ւ համար, —մրմնջում եր նա:

— Ա՞խ, աստվա՛ծ, աստվա՛ծ, բախտից զրկո՛ղ աստված, —մորմոքվելով հառաջում եր կինը:

Ահա այս ցավերով համակված, մարդ ու կին ամբողջ գիշերն իրենց յեղբայր Խնձորին հրաժեշտի համբույրներ տալով, անքուն աչքերով լուսացրին ու չգիտեյին թե ի՞նչ պես պիտի բաժանվեյին նրանից: Վորովհետեւ բաժանվել Խնձորից՝ նշանակում եր գրկներից խլել իրենց յերեխան և աչքերի առաջ ջուրը նետել նրան:

Առավոտը լուսացավ: Տանուտերը, վաշխառուն և սրանց կամակատարները, մինը մտրակն առած, մյուսները՝ զագանեկները, ավազակների նման, գնում եյին դեպի ողան: Այն միջոցին Զատոն, ամենածանը մտածողության տակ, դուրս յեկավ նրանց առաջ և վշտից խեղջվող ու ընդհատվող ձայնով սիրա արավ մեկ ել խնդրել, վոր խղճան իրան և միքանի որ ժամանակ տան փողը ճարի: Բայց զո՞ւր դարձյալ: Յեղը խիստ դուրս եր յեկել աղային, նա վազուց եր ասել, թե «են յեզն ամենելին աղքատի յեզր չի, հարիր մանեթ նաղթ փող արժի, ճանկս եմ գցելու»: Ու մերժեց:

Զատոյի հույսի այս վերջին թելն ել կարվեց։ Այնու-
էետև աննկարագրելի յեր նրա վիշտը։ Ավազակախումբը
յերբ ներս մասմ յեղպ դուրս անելու, Զատոն ու կինն ամբող-
ջապես արտասուքի հեղեղ դարձած փաթաթվեցին իրենց յեղ-
բորը և համբույրներով հեղեղեցին նրան են։

Իսկ յեկողները թոկը յետ արին սյունից և յեղը դուրս
քաշեցին ողայից, բայց կենդանին խրտնեց հանկարծ և թե՛
տերտերին և թե՛ հափշտակողներին բավական տեղ քաշ տը-
վեց դուրսը։ Այստեղ Զատոն, համարյա ցնորսվելու չափ շը-
փոթված դրության մեջ, մի քանի վայրկյան կնոջ հետ միա-
սին անհավասար դիմադրության փորձ արավ։ Սակայն մըտ-
րակների և դադանակների հարվածները յետ մղեցին նրանց
և յեղը քշեցին, տարան։

Իսկ Զատոն ու կինը, յեղբայրը թաղած յեղբոր ու քրոջ
նման, կարծես գերեզմանատնից վերադարձան ողան, ուր
ամբողջ որը դառն հեկանքներով անմիտաթար սդի մատնվե-
քին։

— Այս պատմվածքն առնված ե հի՞ն գյուղից, թե՞ խորհրդային
դյուղի կյանքից։ Ի՞նչից եք իմանում։

— Ի՞նչ ե տանուտերը։ Ի՞նչ ե վաշխառուն։ Ի՞նչպես վարվեցին
Զատոյի հետ։

— Նկարագրեցեք Զատոյի և Նարդիկի հոդեկան դրությունը։ Ի՞նչ-
պիսի կապ կար նրանց և ինձոր յեզան միջն։

Ք Ո Չ Ը

Ահա դարնան հետ յեվ շարան-շարան
դաշտավայրերից դեպի զով սարեր,
ձգվեց սայլերի, ուղտերի քարվան-
փախչում են շոգից թե թուրք, թե հայեր։
Թնդում են ձորում զանգի հնչյուններ,
ձեւքի խրիխնջ, պայտերի դոփիյուն,
ժեկ-մեկի կցած անվերջ քարվաններ
քաշում ե նառը, ահեղ մոնչում։
Վորը տանում ե ալաջիկ քեչան,
կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան,
վոքն ել զարդարված գիր ու փնջերով՝
որորվում, անցնում լեռան լանջերով։
Բայց նառն ինքնագոհ քայլում ե հանդարտ։
Թոժոժ ու զանգեր զգին ու կրծքին,
և որորվելով կատերտներ ու դարդ,

գեղեցիկ հարսն ե տանում իր մեջքին.
մերթ բարկանալով կանգնում ե հպարտ,
մերթ փրփուր թափում կատղած բերանով,
մերթ յերկար շուրթը կախելով բարդ-բարդ,
նա պարծենում ե գեղեցիկ բեռով։
Բոնել ե ճամպեն խիստ իրարանցում։
դոփում են ձիեր, սանձերը կրծում-
ազնիվ մետաքսից վոսկեթել գործած,-
աղաջաբիներ թամքերին ձղած,
հուժկու կրծքերից կապած թալիսման,
արվելյան ճոխ արծաթն ու վոսկին,
ձերմակ դաթիպան, քողն ամպի նման
փոփուռմ են սիրուն հարսների դեմքին։

Լեռների տո՛նն ե. մաքը ու անտառն
ուրախ յերգելով դիմում են սարեր,
մոռնալով ձմռան քաշած վայնասուն,
ծաղիկ վնջելով անցնում են ձորեր։
Անցնում են արագ քոչ-քոչի միջով,
գարնան արեվից փայլում են զենքեր,
յեվ թարմ, կենսարույր թավիչ կանաչով
բացվում են, ժպտում սարվորի գեմքեր։
Փոքրիկ յերեխան պինդ մեջքին կապած՝
խեղճ հովվի կինն ել վաղում ե վոտքով,
ոգնում ե մարդուն գոհ և սրտաբաց,
բախտի վորոշած ծանր վիճակով։
Մայում են, բայում գառնուկն ու մաքին,
թնդում կովերի, հորթերի բառաչ.
իսկ տրտնդալով գոմեցը ձագին
կանչում ե զանդաղ՝ վազելով առաջ։
Վաղում են հողնած շները հոտի
յեվ լեզուն հանած թանչին են տալիս.
Էպուռմ ե հանկարծ ձայնը լակոտի,
վոր քոչից ընկած՝ կալանչ ե դալիս։
Քարվանի ծայրը սարերը հասավ,
հասավ ու ձուլեց թուխ ամպերի հետ.
Ջրան-վրանի յետեվից բսալ,
ծաղիկների մեջ գույն-գույն, սիղավետ.
ալաջուխ, դադա անվերջ վրաններ,
չրջան կազմելով սառն ազրբի ափին,
ինչպես ծեր արծվի կարկատած բներ,
չենվեցին մեկ-մեկ բարձր քարտին։

—Այստեղ նկարագրված քոչի պատկերը հին, թե նոր կյանքին և վերաբերում:

—Ի՞նչ սովորություններ են, վոր հանդես են գալիս «Լալվարի Վորուի» այս հատվածում;

—Ի՞նչ սովորություններ են, վոր այժմ վերացվում են. ինչո՞ւ:

ՀՆՉՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

— Զուր-ջրեր, շունչ-չնչում, նվեր-ճպիրել, —դիտել թե բառն աճեմ հնչյունական ի՞նչ փոփոխություններ են կատարվում:

ՍԱՀՄԱՆՈՒՄ — Հայերենում բառն աճելիս՝ տեղի յեւ ունենում վորոշայնավոր հնչյունների փոփոխություն:

1. Ուն դառնում ե ը (վոր չի գրվում), որինակ՝ զուր-ջրաղաց:
2. Են դառնում ե ի, որինակ՝ պարտեղ-պարտիզապան:
3. Ին դառնում ե ը (վոր չի գրվում) որինակ՝ թիվ-թվանշան կամ քվել:

4. Ույ դառնում ե ու, որինակ՝ լույս-լուսավոր և այլն:

5. Ին դառնում ե ն, որինակ՝ ընտանի-ընտանեկան, հոգի-հոգմոր:

— Գտեք հնչյունափոխության ուրիշ որինակներ և գրեք ձեր տեսում:

ԿԱՐՄԻՐ ՎԵԴԴԻՆԳ

Այս պատմվածքի մեջ մտածածին վոչինչ չկա: Այստեղ գրի յեն առնված Բեռլինի Վեղդինդ կոչված արվարձանի Կեղլիներշտրասսե փողոցում 1929 թ. մայիսի 1-ին տեղի ունեցած մի քանի գեղքերը:

1929 թվի մայիսի 1-ին ցուրտ առավոտ եր: Փողոցը կաս-կարմիր դրոշակների մի անտառ եր ներկայացնում իրենց: Բազմաթիվ տների պատուհաններից կախվել եյին մեծադիր կարմիր պլակատներ՝ «Կորչեն ցույցերի արգելումները», «Բացել փողոցները մայիս մեկյան ցույցերի համար»: Պլակատներից մեկի վրա նկարված եր մուրճ ու մանգաղ, իսկ ներքեւի մասում կար հետեւյալ մակադրությունը՝ «Կեցել Խորհրդային Միությունը. պայքարեցեք Խորհրդային Գերմանիայի համար»:

Ժամը 9-ից 10-ը ամբողջ փողոցներն ու թաղերը լցվեցին բանվորներով: «Կարմիր սոխակ» կոչված ճաշարանի տապաշամբոխն այնքան խիտ եր, վոր հաղիվ թե կարեվ վիներ անցնել:

Լովեց յերկու անդամ սուր ու կարճ սուլոց:

Ազգանշան եր այդ:

— Ցեղական մարդու մարդու մարդու:

Մի ակնթարթում վերջ տրվեց անկարգ իրարանցմանը: Սուլոցը, վորպես մի հմուտ ձեռք, սկսեց ղեկավարել: Այդտեղ հավաքվածներն իսկույն կանգնեցին շարքի, բաժանվեցին կարգերի և ամենայն ճշությամբ ամեն մեկը բռնեց իր տեղը, վորից հետո տիրեց անհամբեր, սպասողական մի դրություն: Բանվորները բարձաձայն վողջունեցին յերբորդ և չորրորդ շարքերի արանքից բարձրացող յեռանկյունի, կարմիր մարտական դրոշակը:

Բանվորները, հեղեղի նման, բռնեցին ամբողջ փողոցը: Գորչ ու գունատ գեմքերի ծովի մեջ, ցույցին մասնակցողների գլխավերեվը, կայծակի նման քայլում եր յեռանկյունի մարտական գրոշակը: Յերկու-յերեք հոգի սկսեցին և ամբողջ փողոցը ձայնակցեց՝ «Ցեղիր, ում կյանքն անիծել ե»..

Ուայնիկենդորֆետ փողոցի անկյունում քայլեցին զինվորական գլխարկներ և համազգեստի յերծայրա կոճակներ: Յեվ մի վայրկյանում յերթի յետելում հայտնվեցին կապույտ համազգեստներ: Դիմացի տան պատուհանից կանացի մի սուր ձայն գոչեց՝

— Վոս-տի-կանները:

Վայրագ, նենդամիտ հարձակում եր այդ: Վոսիկանները յերկու կողմից փակեցին նեղ ու կարճ փողոցը և բանվորական մասսան այլևս շարժվելու տեղ չուներ:

Ամբողջ փողոցը լցվեց ճիչ ու աղաղակով: Ուետինե մահակների հարվածներ եր, վոր սկսեցին անխնա իջնել ցույցին մասնակցողների գլխներին: Առաջին շարքերը նահանջեցին յետ, իսկ յետեները, հարվածներից պաշտպանելու նպատակով, փախուստ եյին տալիս գեպի առաջ: Փողոցի մի մայթով գնում եր ինչ վոր մի կին: Նա ձեռքերի մեջ պինդ բռնել ու կրծքին եր սեղմել մի յերեխա, վորը լաց եր լինում: Կինը յերեխան գրկած, համարյա հասել եր փողոցի ծայրին, յերը հանկարծ վազելով մոտեցավ նրան հաղիվ քսանուհինդ տարեկան մի վոստիկան. կինն սկզբում գունատվեց, սակայն յերեխային ամուր գրկած սկսեց հանդիսատ ու սառնասիրտ առաջ քայլել:

Կնոջ սառնասրությունը տեսնելով, յերիտասարդ վոստիկանն սկզբում չփոթվեց, կորցրեց իր մաքի հավասարակըշությունը: Ապա մի ցատկումով նա կտրեց կնոջ առաջը և նրա ուժեղ հարվածն իջավ կնոջ պատի նման սպիտակած յերեսին:

— Յետ կորի՛ր, կարմիր խոզ:— Գոռաց նա և յերկրորդ

Հարվածն իջեցրեց կնոջ յերեսին, վորն անզգալիութեն բարձրացրեց իր ձեռքը՝ պաշտպանվելու նպատակով:

Բնակիչները պատուհաններից սարսափով դիտում ենին այդ բոլորը:

— Ե՞ս, դու, շուն անիծված, նորից խմիր քո հարազատ մորը, — գոռաց վերևից ինչ վոր մի ծեր կին:

— Արյունարբու շուն:

— Խուլիգան անիծված:

Յեվ հանկարծ վերի պատուհանից բոռնցքի չափ մի քար ցած իջավ վոստիկանի արհամարորեն ժպտող դեմքին: Դրան է պատասխան լսվեցին ատրճանակների կրակոցներ:

Պաֆ... պաֆ... պաֆ...

Առաջին կրակոցները տների վրա...

— Փակել պատուհանները:

Պանկարասսեյի կողմից լսվեցին վոստիկանական ջոկատների ընդհատվող յերկու դեմքու սուլոցները: Դանդաղ, համարյա ակամայից, վոստիկաններն սկսեցին յետ քաշվել և մաքրել փողոցը:

Մի քանի բողեյից հետո փողոցը նորից լցվեց վրդովված բանվորական մասսայով: Արագ վազելով, բանվորները մայթի վրա 8-նյակներով կանգնեցին շարքի:

Հրապարակում պսպղացին վոստիկանների զինվորական գլխարկների յերծարյա աստղերը:

— Կորչի՛ մայիս մեկյան տոնակատարության արդեռումը...

— Կեցցե՛ կոմունիստական կուսակցությունը:

— Կորչի՛ սոցիալ-ֆաշիստական սովի կառավարությունը:

Համազգեստների փայլում կոճակների կայծերն այս անդամ այնքան ել չփոթության մեջ չձգեցին բանվորներին և չխառնվեց նրանց շարքերը:

Ցուցարարները հանդիսաւ կերպով անցան փողոցով և հասան հրապարակ, «ինտերնացիոնալ»-ի հնչյունները լցրեցին փողոցն ամբողջ լայնությամբ:

Հրապարակի մուտքի մոտ վոստիկանները չորս շարքի կանգնած սպասում եյին բանվորական յերթին:

Բանվորները հանգիստ և առանց տատանվելու անցնում եյին առաջ: Մի բարձր ձայն դոչեց—մաքրել փողոցը:

Միջին շարքերն առաջ եյին անցնում: Մի սուր ձայն նորից ինչ վոր մի հրաման արձակեց և ուետինե մահակների հարվածներն սկսեցին իջնել առաջին շարքերում կանգնած ցուցարարների վրա...

Վոստիկանությունն այս անգամ շփոթված եր: Թեև նրանք անխնա կերպով հարվածում եյին իրենց սոտեցող ցուցարարներին, բայց և այնպես նրանց չհաջողվեց յետ քշել բանվորներին: Ընդհակառակը, վոստիկանները քայլ առ քայլ սկսեցին յետ նահանջել խիտ շարքերով առաջ անցնող բանվորների առաջից: Բանվորները պաշտպանվում եյին վոստիկանների հարվածներից, վորքան կարողանում եյին, տիկանների հարվածներից: Հենց վոր, վորեւ տեղ սակայն փախուստի չեյին դիմում: Հենց վոր, վորեւ տեղ սակայն փախուստի չեյին նրանց, փոխում եյին իրենց ուղղությունը և անցնում առաջ:

Ժամը 3-ին Վեղինշտրասսեյի կողմից լսվեց ցուցարարների մի մեծ խմբի յերգի հուժկու ձայնը: Ցուցարարների առաջից գալիս եր մի յերիտասարդ կոմունիստ: Նրանք թեքվեցին դեպի կեղլիքներցտրասսեյի կողմը: Այդ կարմիր փողոցից բոլորը վազեցին ցուցարարներին ընդառաջ: Նորից փողոցից լսվեցին՝ «կարմիր ճարացվեցին պատուհաններն ու նորից լսվեցին՝ «կարմիր ճակատ»»:

Նորից ճոճվեցին կարմիր դրոշակները: Ցուցարարները շարժվում եյին զինվորական քայլվածքով և սեղմ շարքեցարժում եր նաև զինվորական քայլվածքով: Ամեն մի քայլվածքում միանում եյին նրանց նորանոր բանվորներ և յերեխաններ:

Աննան քայլում եր, կամ ավելի ճիշտ, վազում եր ցուցարարների կողքով: «Զարմանալի յե, — մտածում եր նա, — ինչպես ցույցը վայրկյանապես փոխում ե մարդկանց դեմքը: Զդային հուզմունքն անցավ և ահա ուրախությունից փայլում են բանվորների աչքերը»:

Նա ինքն ել, գնալով ցուցարարների հետ թե-թեկի, զգում եր սեփական արժանապատվությունը և հպարտ քայլվածքով անցնում եր առաջ:

Աննան զգում եր հոգեկան մի առանձին ջերմ բավականություն, վորից փայլում եյին նրա աչքերը: Զգում եր ներքին խորը բախտավորություն և ուրախությունից թույլ կերպով պտտվում եր նրա գլուխը:

— Ահա թե ինչու—շնչաց նա—այսպես փայլում են այն դորշ յերեսները:

Այստեղ բոլորն ընկերներ եյին և իր առաջից քայլով սպիտակահեր ծերունին, և այն կապույտ բլուզավոր յերետասարդ բանվորը, վորը քայլում ե ծերունու հետ, և իր յերետասարդ բանվորը, կողքից քայլողները, և նրանք, վորոնք իրենց հավասարանցնում են մայթով... բոլորը, բոլորն ընկերներ եյին, պրոլետարներ, և ինքը գնում եր նրանց հետ ու պատկանում եր այդ միաձույլ մասսային: Միայն այն ժամանակ, յերբ հանագիտ մասսային:

կարծ կտրվեց յերգի ձայնը և բոլոր կողմերից սկսեցին սուրբ ու բացականչել՝ «Կորչեն մարդասպանները, բանվոր դասակարգի թշնամիները», — Աննան տեսավ, վոր ցույցի առաջից փայլում են վոստիկանների զինվորական գլխարկները:

Բարձր տների պատուհաններից սկսեցին գոչել՝
— Արյունարբու շներ:

Յուցարաբների հետեւից լսվում եր վոստիկանների ավտոմոբիլի ուժեղ ազդանշան: Ինչ վոր հեռվից լսվեց մի ձայն:

— Զդույց! Կրակում ենք:

Աննայի առաջից գնացող յերիտասարդ բանվորը յետնայեց: Աննան նրա սև բլուզի վրա, կրծքին նկատեց մի կարմիր բիծ, վորը գնալով մեծանում եր:

Պաֆ...պաֆ...պաֆ...

Վոստիկանների կրակն ուղղված եր միջին շարքերի վրա, ճիշտ այստեղ, վորտեղ կանդնած եր Աննան:

— Ա՛հ, — գոչեց Աննայի առաջից գնացող յերիտասարդ բանվորը, ձեռքով բռնեց կուրծքը և ընկավ գետնին:

ՖՐԱՆՍԻԱՑԻ ԹԻՈՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ

Մի քանի որ առաջ մենք տոնեցինք Հոկտեմբերյան հեղափոխության տարեղարձը:

Բոլոր փողոցներում վոստիկաններ եյին կանդնած:

Նրանք մեզ չեյին ուղում թողնել, վոր փողոցով անցնենք, բայց մենք ասացինք, թե գնում ենք տուն:

Հանկարծ մենք տեսանք, վոր դալիս են Սիտրոեն, ավտոյի գործարանի բանվորները:

Նրանք ճեղքեցին վոստիկանների շղթան, մենք ել նրանց հետ միացանք և յերկար ժամանակ ման եյինք դալիս փողոցներում — կարմիր դրոշակներ և լենինի պատկերը բըռնած:

Յես մոռացա պատմել, թե ինչ արինք վաղ առավոտյան:

Մենք վորոշեցինք յեկեղեցու կտրի վրա կարմիր դրոշակ կախել:

Յես ու իմ ընկեր Ժակը մոտեցանք յեկեղեցուն, յերբ դեռ մուբն եր:

— Բա դրոշակը ձեռքներիս ինչպե՞ս բարձրացանք:

— Դրոշակը տուր ինձ, — ասացի յես:

Դրոշակն առա ու ծոցս դրի:

Մենք սանդուխքով բարձրացանք կտուրը, կարմիր դրոշակը կապեցինք խաչին, ցած իջանք և սպասում եյինք թե ինչ կլինի:

Տեսանք մի ձու ծախող մորաքույցը ե դալիս:
Խաչի վրա կապված կարմիր դրոշակը վոր տեսավ, վախից ձեռքի կողովը ցած ընկավ և ձվերը չարդվեցին:

Նա վազեց վոստիկանի մոտ:

— Ինչո՞ւ յես կանգնել, — զոչեց նա, — խաչի վրա կախված կարմիր դրոշակը չե՞ս տեսնում:

Ահագին ժողովուրդ հավաքվեց: Շատերը փորձեցին կարմիր դրոշակը վերցնել, բայց չկարողացան:
Վերջը կանչեցին հրշեներին, վորոնք դրոշակը ցած բերին:

Այ թե ինչպես ուրախ անցկացրինք Հոկտեմբերյան հեղափոխության տարեղարձը:

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ

Յես ապրում եմ Գերմանիայի մի փոքրիկ քաղաքում:

Յերեք ամիս առաջ մենք մի տղա ունեցանք:
Կնոջս հետ վորոշեցինք, վոր անունը դնենք Լենին:
Գնացի նոր ծնված յերեխաների հաշվառման բյուրոն:

— Յերեխայի անունն ի՞նչ եք ուղում դնել, — հարցրեց ծառայողը:

— Լենին, — պատասխանեցի յես:

Ծառայողը շատ զարմացավ ու ասաց.

— Այդպիսի անուն չկա. դրեք Յողան, Ֆրից, Ֆրանց...

— Զե՛, յես իմ յերեխայի անունն ուղում եմ Լենին դնեմ:

Յես գնացի բյուրոյի վարիչի մոտ: Նա յել ասաց, վոր չի կարելի:

Յես բարկացած գոչեցի.

— Յույց տվեք այսպիսի որենք, վորտեղ ասված լինի, թե յերեխայի անունը լենին դնել չի կարելի:

Վարիչը մի հաստ գիրք բերեց, վորի մեջ դրված եր. «Յերեխաներին անաստվածների և պետության թշնամիների անուններ տալն արզելվում ե»:

— Լենինի մասին որենքի մեջ վոչինչ չկա, — ասաց վարիչը, — բայց նա անաստված եր և հեղափոխություն առաջ բերեց: Ուրեմն նա մեր պետության թշնամին ե:

— Այ, հենց նրա համար, վոր նա անաստված եր և կապիտալիստների թշնամին, յես ուղում եմ իմ տղայի անունը լենին դնել: Յես ուղում եմ, վոր իմ վորդին ել լինի հեղափոխական անաստված:

— Մենք այդպիսի անուն մեր մատյանում չենք դրի, — ասաց վարիչը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

— Հա՛վ, պատասխանեցի յես, —այն ժամանակ դրեցեք
Վլադիմիր: Բայց մենք նրան լենին կկանչենք:
— Այդ ինձ չի վերաբերում, —ասաց վարիչը:
Նրանք իրենց գրքում գրեցին Վլադիմիր, և այժմ մեր
տղան յերկու անուն ունի —Վլադիմիր և Լենին:

	ԲԱԺԻՆ	ԵԶ
1. Կրուպսկայայի նամակը յերեխաներին	3	
2. Պապի հիշատակին	4	
3. Պատանի ռազմիկներ	6	
4. Մշուշապատ գաղաթների վրա	8	
5. Գնում ենք լազեր	12	
6. Դեպի կարմիր բանակը	13	
7. Հոկտեմբերի սերունդը	16	
8. Հաջի Քենդ	18	
9. Գարուն	20	
10. Իլիիչի մոտ	22	
11. Ուձո	24	
12. Ինչպես մենք ջերմոցներ պատրաստեցինք	28	
13. Ծառատունի	29	
14. Տեմպեր	33	

II ԲԱԺԻՆ

15. Յերբ թափալում եյին ջրերը	35	
16. Լուսաբացին	38	
17. Տրամվայ	39	
18. Գործարանում	40	
19. Աշխատանքի յերդը	43	
20. Չորրորդ հարվածը	44	
21. Հարվածայինների քայլերդը	45	
22. «Բուխտա Իլյիչա»	47	
23. Տոնելի ճամբին	48	
24. Չորագես	53	
25. Չորագեսում	55	
26. Միբիրում	56	
27. Հնդամյակի հետախույզները	57	
28. Լույսերը	59	
29. Առաջին քննությունը	62	
30. Հնձվորը	66	
31. Կոմբայն «գաշտերի նավ»	67	
32. Եքսկուրսիա	70	
33. Բայլշեկի և Շիրկանալը	72	
34. Մորեխի դեմ	74	
35. Թրթուրն ուտի զորանա, խեղճ բոստանչին չորանա	74	
36. Լեռան արծիկ	76	
37. Փոքրիկ Վալողյան	77	

	հ
38. Յերկու հանդիպում	79
39. Ուղիղ ժամը 4-ին	81
40. Հունվարի 9-ը	83
41. Աղստամբություն	86
42. Հոկտեմբեր	88
43. Հոկտեմբերը հունվարին	91
44. Կարմիր որ	94
45. Հայաստանի խորհրդայնացումը	96
46. Դարալազգաղի սարերում	98
47. Ստեփան Շահումյանի մասին	101
48. Վերջին խոսքը	104
49. Քսանվեցին	109
50. Ամուրի ափերը հրետանու ծխի մեջ	109
51. Լրտեսը	112
52. Հրաման	118
53. Նոտա Զինաստանին	125
54. «Հանցագործը»	126
55. Ինտերնացիոնալ	129
56. Ընկերները	130
57. Միտինդ	131
58. Կայծերը թռչում են	133
59. Կոիվը Փարբիկայում	135
60. Մայիսի մուտքը	139
61. Հայրն ու վորդին	140
62. Պարմա քաղաքի յերեխաները	146
63. Ջոնի	148
64. Գյուղացիների դատը	153
65. Բուշանի քարափը	157
66. Գաղտնի ժողով	158
67. Սայիդը	161
68. Մթնաձոր	166
69. Իվանեն	168
70. Ծիրանի տափ	173
71. Զորբան	171
72. Զատոյի բախտը	178
73. Քոչը	180
74. Կարմիր Վեդինդ	182
75. Ֆրանսիայի պիտոներների նամակը	186
76. Գերմանիայի բանվորների նամակը	187

Մրժութեցին, Տիգրան Ցերունի և նման Հարությունյան

Գետիքատի տղարան, Գտն. 1984, Դաշվիտ 7524 (Բ) Տիգրան 35000:

Հանձնված ե արտադրության 5/V 1932 թ. Մարտագրված ե սպագրելու 2/VIII 1932թ.



9097

ԳՐԱԴԱՐԱՆ 1 հ. 80 ԿՈՊ.

ՎԵՐ. 1

9077



ԱՎԱՆԳԱՐԴ
Учебник армянского языка

Госиздат ССР Армении